

ԷԶՄԻԱԾԻՆ




Թ
2018



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՑ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

2018
Ս. ԷԶՄԻԱՇՆԻ



ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«Էջմիածին»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխավոր խմբագիր՝

Գեորգ Մադոյեան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝

Տ. Անդրեաս արեղայ Եզեկեան

Խմբագիր՝

Արփինէ Չանթիկեան

Տեխնիկական խմբագիր՝

Գոռ Գրիգորեան

Խմբագրական խորհուրդ

**Տ. Եզնիկ արք. Պետրոսեան, Տ. Չաքարիա ծայրագոյն վարդապետ Բաղումեան,
Տ. Անդրեաս արեղայ Եզեկեան, Ազատ Բօզոյեան, Գեորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դերիկեան, Գոհար Աւագեան**



“Etchmiadzin”

Theological and Armenological Journal

Editorial staff

Editor-in-Chief - **Gevorg Madoyan**

Deputy Editor-in-Chief - **Rev. Fr. Andreas Yezekyan**

Editor

Arpine Chantikyan

Technical editor - **Gor Grigoryan**

Editorial Board

**Archbishop Yeznik Petrosyan, Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Rev. Fr. Andreas Yezekyan, Azat Bozoyan, Gevorg Ter-Vardanyan, Vardan Devrikyan,
Gohar Avagyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Главный редактор

Геворк Мадоян

Заместитель главного редактора

Иеромонах Андреас Езекиян

Редактор


Арпине Чантикян

Технический редактор

Гор Григорян

Редакционный совет

**Архиепископ Езник Петросян, протоархимандрит Закария Багумян,
иеромонах Андреас Езекиян, Азат Бозоян, Геворк Тер-Варданян, Вардан Деврикян,
Гоар Авакян**



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մարդ ոչ ուսնալ է կորուսնալ:

Գարեգին Բ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց


Լաղուց սեպտեմբերն ընկալում է իբրեւ ուսումնական տարուայ սկիզբ եւ նոր յոյսեր ու նոր յոյզեր արթնացնում, նոր սպասելիքներ ուրուագծում կրթութեան ոլորտի մշակների մտքերում ու սրտերում...

Գիտութեան եւ դպրութեան կարեւորութիւնը մեր նախնիները գիտակցել են դեռեւս անյիշելի ժամանակներում, իսկ արդէն Սահակ-Մեսրոպեան շարժման առաջին իսկ օրերից Հայերը կրթութիւնը դիտարկում էին որպէս ազգապահպանութեան ճանապարհ: Մեսրոպ Մաշտոցից ու Սահակ Պարթևից հարիւրաւոր տարիներ յետոյ, Գէորգեան հոգեւոր ճեմարանի առաջին տարեդարձը նշելիս՝ Գաբրիէլ արքեպս. Այվազեանցն առանձնակի շեշտում էր կրթութեան դերն ազգային դիմաստուները եւ ազգային կրօնը պահելու հարցում, նկատելով, որ եթէ կայ ու գործում է Գէորգեան ճեմարանը, այլեւս «ո՞ր այն իցէ այնուհետեւ Կղեմէս Գալանոս, որ կեծաւորութիւն յոյժ ի տգիտութիւն անձինն խառնեալ՝ ամբաստանութիւնս անյարիւս զանաւառ վարդապետութենէ հաւատոց մերոց կուտիցէ... Եւ բնաւ իսկ ո՞ր այն Տուայթ եւ Զարեմպա եւ Տի՛թրիխ եւ յաջորդ՝ նոցին համարձակեցին այնուհետեւ դսրովել լուտերաբար զգեղեցիկ գեղեցիկ կարգս աստուածապաշտութեան մերոյ»:

Մեր նախնիների յատուկ վերաբերմունքը կրթութեան հանդէպ գրաւել է օտարների ուշադրութիւնը: ԺԸ. դարավերջին լոյս տեսած «Արեւելեան Եկեղեցիներ» գրքի հեղինակ էրնսթ Սիլուանուս Էփլեսարդի տողերից կարելի է հասկանալ, թէ իր պատկերացմամբ, գուցէ նաեւ իրականում, ինչի շնորհիւ են հայերը խուսափել հաւատափոխութիւնից եւ ձուլումից.

«եկեղեցին ու դպրոցը մշտապես կառուցել են միաժամանակ ու միեւնոյն բակում»: Միջին դարերում, երբ ասենք Եւրոպայում կրթութեան լեզուն լատիներէնն էր, հայերն այն քիչ ժողովուրդներից էին, որ ազգային լեզուով ապահովում էին կրթութեան բարձր որակ: Այսօր յիշեալ ոլորտի տարբեր տրամաշափի պաշտօնեաներ են ժամանում Հայաստան եւ պարտադրում են այդ ասպարէզի «նորագոյն ձեռքերումները»: Իսկ մենք, առանց տարբերակելու դրականն ու բացասականը, կուրօրէն ընդունում ենք բոլոր առաջարկները, ասես ամենեւին կրողն ու ժառանգորդը չենք դարաւոր փորձի ու աւանդների: Հին ժամանակներում, օտարութեան մէջ նոր համայնք հիմնելով, մեր նախնիները կարճաժամ ժամկէտում կարողանում էին կրթական սահուն գործընթաց ապահովել նոր սերնդի համար: Իսկ հիմա, երբ օժանդակ միջոցները տասնապատիկ զարգացել են, երբեմն նոյնիսկ մերձաւոր Սփիւռքում չենք կարողանում լուծել դասագրքերի կամ ուսումնական ծրագրերի հարցերը, մոռանալով, որ հայեցի կրթութիւնից զրկելով՝ ազգային արմատներից ենք զրկում: Նորը, լաւն ու առաջադիմականը միշտ պէտք է ընդունել եւ ճանաչել, բայց ոչ երբեք սեփականի, ազգայինի հաշուին: Միշտ պէտք է յիշենք Նղիշէի խօսքերը, որ դպրութիւն մեզ շնորհել են այն նոյն ձեռքերը, որ հաստատեցին երկինքն ու երկիրը եւ փորագրեցին քարեղէն տախտակները, հետեւաբար պարզապէս պարտաւոր ենք սրբօրէն պահել այդ աստուածային ընծան: Ուստի ցանկանք, որ վաղուց իբրեւ ուսումնական տարուայ սկիզբ ընկալուող սեպտեմբերը, որ նոր յոյսեր ու նոր յոյզեր է արթնացնում կրթութեան ոլորտի մշակների մտքերում ու սրտերում, իրականացնի հայեցի կրթութեան ջատագովների սպասելիքները:





**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
«ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍՏԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿԱՆՆՅ ՀԱՄԱԽԱՐՈՒՄԻՆ»
ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

(Երևան, 7 սեպտեմբերի, 2018 թ.)

Գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապատիվ հայրեր,
Մեծազնիվ անդամուհիներ Բեյրութի «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր
Տիկնանց Համախմբումի»,

Սիրելի՛ զավակներ մեր Սուրբ Եկեղեցու,

Ողջունում ենք ձեզ հայոց հոգեւոր նվիրական կենտրոնում եւ Հայ-
րապետական Մեր օրհնությունն ու ջերմ բարեմաղթանքները բերում
ամենքիդ: Ուրախությամբ այսօր համախմբվել ենք այս հանդիսությա-
նը: Այն նվիրվում է Բեյրութի «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Հա-
մախմբումին»՝ վերստին արժեւորելու համար ազգային-եկեղեցական
մեր կյանքում նրանց որդիական սիրո եւ նվիրումի ոգին ու երախտար-
ժան վաստակը:

Միության անդամուհիները ժամանել են հայրենիք եւ Մայր Աթոռ՝
նորոգելու մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ ծառայանվիրումի իրենց ուխ-
տը, որով առաջնորդվել եւ զորացել են տասնամյակների եկեղեցյան-
պատ իրենց գործունեության մեջ:

«Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումը» հիմնվեց
1959 թվականին, երբ սառը պատերազմը իր ցավալի ներգործությունը
ունեցավ եկեղեցական մեր կյանքում՝ տազնապներ ստեղծելով Ամենայն
Հայոց Հայրապետության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հա-
րաբերություններում: Այդ դժվարին օրերին լիբանանահայ մի խումբ
քաջասիրտ հայուհիներ անմնացորդ սիրով ամուր պահեցին եւ վկայե-
ցին իրենց հավատարմությունն ու նախանձախնդրությունը հանդեպ

Քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածինը: Տասնամյակներ շարունակ ազնվահոգի հայուհիները իրենց առաքինի գործունեությամբ արժեւորել են ազգային-եկեղեցական մեր անդաստանում կանանց բարձրապատիվ դերն ու սպասավորությունը՝ նմանություն բերելով Սուրբ Եղիշե պատմիչի կողմից ներբողված հայոց աշխարհի փափկասուն տիկնանց: Բարեսիրական իրենց բեղուն գործունեությամբ նրանք անփոխարինելի ծառայություն են մատուցել եւ կարեւոր նպաստ բերել մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավետ պայծառությանը:

Սիրելի՛ անդամուհիներ «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի», ուրախություն է Մեզ համար, որ նվիրյալ հայուհիներդ՝ շարունակելով միության հիմնադիր երանյալ անդամուհիների, ձեր երախտարժան մայրերի բարի ավանդը, այսօր էլ մեր Սուրբ Եկեղեցու առաքելությունն առավել արդյունավորելու ազնվագույն տեսլականով հարստացնում եք ձեր վաստակը նորանոր իրագործումներով: Ձեր ջանքերով ու միջոցներով ստեղծված եկեղեցական զգեստներն ու սպասքը եւ եկեղեցու հարդարանքի այլ զեղեցկակար պարագաները շուրջ ու վայելչություն են հաղորդում եկեղեցական արարողություններին ու ծիսակատարություններին եւ նպաստում հոգեւոր-եկեղեցական կյանքի բարեգարդությանը: Ձեր եռանդն ու նվիրումը քաջալերում են նաեւ ձեր ամուսիններին՝ իրենց ջանքերով սատար ու զորակից լինելու ձեր բարի առաքելությանը: Գովարժան է նաեւ, որ միության շարքերում ներգրավում եք ձեր դուստրերին եւ երիտասարդ օրիորդաց, որպեսզի նրանք եւս ձեր հավատքի, բարեպաշտության ու աստվածահաճո բարեգործությունների վառ օրինակով իրենց ջանքերը բերեն հոգեւոր-եկեղեցական մեր անդաստանի բարեգարդման համար: Հիրավի, Եկեղեցին զորեղ ու պայծառ է իր զավակների ամուր հավատքով ու նվիրյալ գործերով: Այսօր եւս, երբ ազգովի կանգնած ենք նոր մարտահրավերների առջեւ, մեր Եկեղեցին ու երկիրը առավել չափով կարիքն ունեն իրենց զավակների աջակցության: Քրիստոնյայի համար անկարելի է մնալ դիտորդ, երբ Եկեղեցին ու հայրենիքը իր զորակցության անհրաժեշտությունն ունեն, երբ փորձեր են արվում քարկոծելու եւ վնասելու Եկեղեցին, նսեմացնելու հոգեւոր-բարոյական արժեքները, խարխուլելու մեր ինքնության հիմնասյուները՝ Եկեղեցին ու ընտանիքը: Եկեղեցու առջեւ ծառացող բոլոր մարտահրավերները հաղթահարելի են Եկեղեցու հետեւորդների՝ դավանված արժեքների հանդեպ հավատարմությամբ եւ հոգեւոր կյանքում ակտիվ ներգրավվածությամբ: Ձեզանից, ամեն մի հայ կնոջից է նաեւ



«Հավատավոր ու բարեպաշտ կանայք են հալ ընտանիքի սյուներ, հոգեւոր ու բարոյական արժեքների սնուցողը, գավակների նկարագրի կերտողը»:
(Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց)



մեծապես կախված մեր Եկեղեցու, մեր Ժողովրդի ու մեր երկրի ապագան, քանզի հավատավոր ու բարեպաշտ կանայք են հայ ընտանիքի սյուներ, հոգեւոր ու բարոյական արժեքների սնուցողը, զավակների նկարագրի կերտողը:

Սիրելիներ, այս մտածումներով վերստին Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում մեր Ժողովրդի երախտարժան դուստրերիդ եւ հորդորում, որ նույն կորովով ու եռանդով շարունակեք ձեր կարեւոր առաքելությունը՝ ի շինություն մեր հայրենիքի եւ Սուրբ Եկեղեցու, ի պայծառություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ի փառս Բարձրյալն Աստծո: Այս նվիրական պահին աղոթքով ենք հիշում «Սուրբ Էջմիածնի Կրօնասեր Տիկնանց Համախմբումի» լուսահոգի հիմնադիրներին, ատենապետուհիներ Արշալույս Այվազյանին եւ Անգինե Տանձիկյանին: Առանձնակի գոհունակությամբ Մեր գնահատանքը, սերն ու օրհնությունն ենք բերում Տիկնանց Համախմբումի պատվավոր ատենապետուհի Միմի Հարությունյանին եւ գործող ատենապետուհի Անահիտ Տանձիկյանին, ովքեր մեծ ավանդ ունեն Համախմբումի եկեղեցանպաստ ծառայության մեջ:

Մաղթում ենք ձեզ, սիրելի՛ անդամուհիներ, երջանկություն եւ եկեղեցաշահ գործոց նոր հաջողություններ: Հպարտ ենք ձեր հավատով եւ առ Եկեղեցին ձեր անխախտ սիրով: Թող Ամենակարող Աստծո օրհնությունն ու աջակցությունը միշտ ուղեկից լինեն ձեզ եւ համայն մեր Ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս: «Թող մեր Տեր Հիսուս Քրիստոս եւ մեր Հայրը՝ Աստված... մխիթարի եւ հաստատ պահի ձեր սրտերը ամեն բարի խոսքի եւ գործի մեջ» (Բ. Թեաաղ. Բ.15-16). ամեն:



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ՎԱՐԵՓԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹՈՎ**

(Երևան, 20 սեպտեմբերի, 2018 թ.)

*Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Մեծարգո Վարչապետ,
Մեծարգո Նախագահ Արցախի Հանրապետության,
Մեծարգո ԱԺ Նախագահ,
Հարգարժան պատգամավորներ, պետական այրեր,
Սիրելի ներկաներ,*

Ուրախ ենք այսօր միասնաբար մասնակցելու ՀՀ Խորհրդարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառմանը եւ բերելու ձեզ եւ Մեր ողջ բարեպաշտ ժողովրդին Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Մեկ դար առաջ՝ մեր պատմության վճռորոշ ժամանակաշրջանում ազգիս զավակների տեսիլքով, վճռակամությամբ եւ հերոսական պայքարով վերականգնվեց հայկական անկախ պետականությունը:

Երջանկահիշատակ Գեորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսի կոչով Արարատյան դաշտավայրի եկեղեցիներում ղողանջող զանգերի զորությունն էր, որ ոգեշնչեց ու գոտեպնդեց մեր ժողովրդին հաղթանակով պսակելու հայրենիքի պաշտպանության մարտերը եւ ամուր կանգնելու մեր հողի վրա: Արդարեւ, անցյալ դարասկիզբը եղավ փորձության, բայց եւ հերոսության ու անօրինակ խիզախ իրազործումների ժամանակաշրջան, երբ մեր ժողովուրդը, քաղաքական այրերը եւ Հայ Եկեղեցին լծվեցին անկախ պետականության կերտման նվիրական գործին: Հիմնվեց առաջին Խորհրդարանը, քայլեր ձեռնարկվեցին պետությունը զորացնելու, քաղաքացիական հասարակություն ձեւավորելու ուղղությամբ, ջանքեր գործադրվեցին ապահովելու խաղաղ ու անվտանգ կյանքը մեր ժողովրդի: Հայաստանի Առաջին Հանրապետության երախտավորների ազգային մտածողությունը, մեր դարավոր արժեքներին հավատարմությունը, հայրենանվիրումը եւ պետության զորացման համար ջանքերը մեկտեղելու բացառիկ նախանձախնդրությունը օրինակ են եւ այսօր ազգային, քաղաքական ու հասարակական մեր գործիչների համար:

Սիրելիներ, «Օրենքի իմացությունը մտքի բարիք է»,– ասում է Սուրբ Գիրքը (Առակ. 13.5)՝ կարեւորելով օրենքի դերը հասարակությունների կյանքում:

Հայաստանի Հանրապետության օրենսդիր բարձրագույն մարմնի՝ Ազգային ժողովի առաքելությունը բարիք արարելն է մեր պետության հզորացման, հայրենական կյանքի շենացման համար: Մեր ժողովրդի ակնկալիքն է, որ խորհրդարանը լինի արտահայտողը ժողովրդի սպասումների, մտահոգությունների եւ տեսիլքների, լինի մանրակերտը մեր հասարակության: Ազգային ժողովին ներկայիս նույնպես բաժին է ընկել մեծ պատասխանատվություն՝ օրենսդրական արդյունավոր գործունեությամբ նպաստել պետական-հասարակական կյանքի առաջընթացին: Օրենքի առջեւ բոլորի հավասարության, արդարության, հասարակական համերաշխության ժողովրդավարական սկզբունքներն իրագործելով, միմյանց հանդեպ քրիստոնեական սիրո ոգով ու ավետարանական պատգամներով է, որ կարողանալու ենք բարի արդյունքներ բերել մեր հայրենիքին ու ժողովրդին:

Մեծարգո պատգամավորներ, ձեր քաղաքական դիրքորոշումների ու հայացքների տարբերություններով հանդերձ՝ կոչված եք գործելու հանուն նույն նպատակի՝ հայրենիքի զորացման, պետականության ամրապնդման, մեր ինքնության անխաթար պահպանության եւ մեր ժողովրդի բարօրության ու առաջընթացի համար: Մեր ազգային միասնությունը ապահովելը եւ մեր ժողովրդի եռանդն ու կարողությունները դեպի հայրենիքի շենացում ու զարգացում առաջնորդելը այսօր բոլորիս ամենօրյա աշխատանքը պետք է լինի, բոլորիս բարձր պատասխանատվությունը: Այսպես պիտի կարողանանք հաղթահարել մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերներն ու խնդիրները, պաշտպանել մեր հայրենյաց սահմանները, մեր կյանքի խաղաղությունն ու անվտանգությունը:

Հայրապետական Մեր հորդորն է ձեզ, որ առ հայրենիքը սիրով եւ ազգանվիրումի ոգով շարունակեք արդյունավորել ձեր ծառայությունը մեր պետությանը եւ ժողովրդին՝ բարի գործակցությամբ ձեռքբերումներ արձանագրելով:

Աղոթում ենք, որ Ամենակարող Աստված խաղաղության մեջ պահի մեր հայրենիքը եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքո հավատքի, սիրո, միաբանության մեջ պահպանի մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս՝ այսօր եւ հավիտյանս, ամեն:

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՐԵՓԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ
ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Անկախության տոնի առիթով ողջույն ենք հղում եւ Հայրապետական Մեր օրհնությունը բերում մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:

Անկախության տոնի խորհրդով արժեւորում ենք հայրենի պետականությունը վերակերտելու մեր ժողովրդի պանծալի ուղին, որն անցել ենք հայրենիքում ազատ կյանք կառուցելու արդար հույսերով, հաղթահարելով բազում դժվարություններ եւ կրելով մեծ զոհողություններ: Մեր ձեռքբերումները եւ վերընթաց ուղին այսօր քաջալերանք են մեզ՝ հայրենիքով միասնական եւ համերաշխ ոգով իրագործելու մեր բոլոր իղձերը, արիության մը դիմագրավելու ներկա մարտահրավերները եւ նվիրումով ու սիրով շենացնելու մեր երկիրն ու ազգային կյանքը:


Այս տեսլականով մաղթում ենք մեր ժողովրդին հայրենյաց սիրո նորոգված ոգի, գործելու նորոգված եռանդ ու պատասխանատվություն եւ նոր հաղթանակներ:

Աղոթք ենք բարձրացնում երկիրք, որ Տերը Ամենախնամ Իր Սուրբ Աջի ներքո խաղաղության մեջ պահպանի հայրենի մեր երկիրը, հավատքով զորացյալ ու շնորհով լեցուն պահի մեր ժողովրդին՝ մարմնավորելու ազգային զարթոնքի իր բոլոր իղձերն ու տեսիլքները:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհները եւ խաղաղությունը թող լինեն մեզ հետ եւ բոլորի. ամեն:



ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ



Տ. ԱՂԱՆ ԱՐԵՂԱ ԵՐՆՃԱԿՅԱՆԻ ՔԱՐՈՉՐ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱՍՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
Ս. ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՏՏՎԱԾԱԾՆԻ ԾՆԵՂՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(8 սեպտեմբերի 2018 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

Այսօր Սուրբ Աստվածածնի ծննդյան տոնն է, Հայ Եկեղեցին այն տոնում է անշարժ կերպով ամեն տարի սեպտեմբերի ութին: Մենք այսօր փորձելու ենք վերստին խորհրդածել Սրբուհի Մարիամ Աստվածածնի կերպարի մասին ու մեզ համար կյանքի կարեւոր պատգամներ քաղել նրանից:

Սուրբ Աստվածածնի խորհուրդը հակասությունների, մարդկային մտքին ու տրամաբանությանը չենթարկվող երեւոյթների, բայց եւ պատմական իրականությունների մի շղթա է՝ ամուլ ծնողներ ու զավակի ծնունդ, առաջացած տարիք եւ երեխայի ծննդյան բերկրանք, Տիրոջ կողմից խոստման զավակ եւ աղջիկ ծնունդ: Թեւ Ս. Գրքում շատ ենք հանդիպում խոստման զավակների, սակայն բոլորն արու զավակներ են, ինչպես օրինակ՝ Սողոմոնը, Սամուելը, Սամսոնը: Շարունակելով այս ընթացքը՝ Աստվածածինը մայր է եւ կույս, մարդկային եւ աստվածային բնությունների հանդիպում, երկնքի ու երկրի միախառնում մեկ անձի մեջ, մահ եւ վերամիոխում... Երկար ու անվերջ կարելի է շարունակել այս թվարկումը. այսպիսին է Աստվածամայրը, այսպիսիներին է ընտրում Տերը եւ այսպես են բոլոր սուրբերը՝ տարօրինակ եւ գերմարդկային, Աստծուն իրենց մեջ կրող, ուրախ ու կյանքով լեցուն... Որոգիներեսն ասում է. «Սրբերն են, որ իրենց մեջ կյանք ունեն եւ իրենց մեջ կյանք ունեցողներն են սրբերը»:

Սիրելի՛ հավատացյալներ, մեզանից երկու հազարամյակ եւ մի քիչ ավելի տարիներ առաջ Հրեաստանում ապրում էր մի պարզ զույգ՝ Ս. Հովակիմն ու Սրբուհի Աննան։ Նրանք առաջացած տարիքում էին, սակայն զավակ չունեին, երկար սպասել էին Տիրոջ օրհնությանը, հարատեւ աղոթքի մեջ էին։ Ահա մի օր Ս. Հովակիմը Տաճար է գնում՝ սովորության համաձայն իր ընծաները մատուցելու, բայց Ռուփոս անունով քահանան նախատում է նրան ասելով, որ Տերը նրան չի օրհնել ու ամուլ է թողել, ուստի պետք է գնա ու երկար աղոթի Տիրոջը՝ այդ ամոթը իրենից հեռացնելու համար։ Բայց ինչպես ասվում է՝ մարդկանց առաջ անիրավը հաճախ Տիրոջ համար սուրբ կարող է լինել։ Ս. Հովակիմը վշտացած առանձնանում է, սկսում է պահքով ու աղոթքով զավակ խնդրել Տիրոջից, նույնն է անում նաեւ Սրբուհի Աննան։ Եւ շուտով Աստծուց ավետիս են ստանում ու ծնվում է զավակը, որին կոչում են՝ Մարիամ։

Նշանավոր հեղինակներից մեկն ասում է. «Մեր կյանքն ունի երկու կարեւոր հանգրվաններ եւ օրեր, մեկը՝ որում ծնվում ենք եւ երկրորդը՝ որում հասկանում ենք, թե ինչու ենք ծնվել»։ Այսօր մենք բոլորս Աստվածամոր ծննդյանն ու նրա կերպարին նայում ենք Ավետման խորհրդի եւ Հիսուս Քրիստոսի ծննդյան իրողությունների հիմքով։

Աստվածածինը մարդկության պատասխանն է Աստծու սիրուն։ Աստվածամայրը ցույց տվեց, թե ինչպես կարելի է արձագանքել իրական ու ճշմարիտ սիրուն՝ կատարյալ հնազանդությամբ։

Մի պատմություն կա. մի մարդ փոքրիկ մոմ է վերցնում, սկսում է երկար ու ոլորածեւ աստիճաններով բարձրանալ վեր։ Մոմը հարցնում է մարդուն՝ «Ո՛ր ենք գնում»։ Մարդն ասում է, որ բարձրանում են վերեւ, որպեսզի այնտեղից լուսավորեն տասնյակ մղոններ հեռավորության վրա գտնվող նավերին ու մարդկանց։ Մոմն ասում է, որ ինքը շատ փոքր է, փոքր է նաեւ իր լույսը, ինչպե՞ս կարող է այդքան ուժեղ լուսավորել։ Մարդը պատասխանում է ասելով՝ «Շարունակիր վառվել ու լուսավորել նույն կերպ եւ ամեն ինչ պարզ կլինի։ Հասնում են մի սենյակ, որի կենտրոնում դրված է լինում մեծ կանթեղ։ Մարդը մոմը մոտեցնելով վառում է կանթեղն ու դրա ետեւում դրված մեծ հայելիները լույսը տարածում են տասնյակ մղոններ։

Սիրելի՛ հավատացյալներ, փոքրիկ մոմը Աստվածամայրն է, որից Հիսուս մարմին առավ։ Հայելիներն էլ առաքյալներն են, ովքեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան եւ Հարության ավետիսն ու լույսը տարածեցին աշխարհում։

Բոլոր ժամանակներում եւ այսօր էլ Տերը կամենում է մարմին առնել ու մարմնանալ, աշխարհ գալ մեր խոսքերի ու մեր գործերի միջոցով: Այսօր Քրիստոսի Ս. Եկեղեցին Ս. Մարիամ Աստվածամոր ծննդյան խորհրդի միջոցով մեզ պատգամում է կատարյալ հավատքով, հնազանդությամբ, հարատեւ աղոթքով սպասել Տիրոջ այցելությանը, ինչպես որ Հովակիմն ու Աննան սպասեցին, որովհետեւ «Տերը չի ուշանա՝ կգա»:

Սիրելիներ, Աստծու կամքն է ամեն ժամ գնալ դեպի Իր համար այնքան սիրելի մարդը, մարմին առնել մարդու միջոցով աշխարհի համար: Աստված կամենում է, որ մենք բոլորս աստվածածին լինենք, որ Հիսուս Փրկիչը միշտ մեր խոսքերում ու գործերում լինի:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ամենեւեանս. ամէն:



**Տ. ՍՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԽԱՉՎԵՐԱՅԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**

(16 սեպտեմբերի 2018 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

*«Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով,
քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով»*
(Գաղ. Զ. 14):

Սիրելի՛ բարեպաշտ քույրեր եւ եղբայրներ,
Վերստին սիրող Հայրը համախմբեց մեր քրիստոնեական մեծ ընտա-
նիքը Իր տան սուրբ կամարների ներքո, որպեսզի եւս մեկ անգամ հիշա-
տակենք մեր փրկությունը հանդիսացող Ս. Խաչի ամենակարող զորու-
թյունը Տիրոջով եւ մեր աղոթքներն ուղղենք առ Հայր՝ ամեն ինչում ապա-
վինելով անհաղթ Ս. Խաչի նշանին:

Անսահման խնդությամբ շնորհավորում եմ ամենքիս այս սքանչե-
լի տոնի՝ Խաչվերացի կապակցությամբ, որ տոնում են աշխարհի բոլոր
քրիստոնյա եկեղեցիները: Վստահ եմ ամենքիդ էլ հայտնի է տոնի նա-
խապատմությունը, երբ է. դարում Տիրոջ Խաչափայտը գերեվարվեց
Պարսկաստան եւ չնայած անձեռնմխելի վիճակին՝ տասնչորս տարի
մնաց գերության մեջ: Եւ միայն 628 թ. Հերակլ հունաց կայսրը կարողա-
ցավ ազատագրել քրիստոնեության մեծագույն մասունքն ու վերադարձ-
նել Երուսաղեմ: Տիրոջ Խաչափայտի ճանապարհն անցավ նաեւ մեր Հա-
յաստան աշխարհով՝ Հիսուս Քրիստոսի օրհնությունը մեկ անգամ եւս
սփռելով մեր սուրբ հողի ու ժողովրդի վրա: Փա՛ղք Աստուծո, պարծանք
եւ ուրախություն ամենքիս, որ այդ հզոր զենքն ու պատվարն ունենք
ի պաշտպանություն երեւելի ու աներեւույթ թշնամիներից, եւ այդ լու-
սապայծառ փարոսը քրիստոնյաների համար, որպես ուղեցույց՝ կյանքի
այս ալեկոծ ծովում:

Այո՛ այսօր տոն է, տոն, որ մշտապես պետք է նշվի յուրաքանչյուր
քրիստոնյայի առօրեական կյանքում, քանի որ ինչպես Ս. Դավիթ

Անհաղթն է ասում. «Խաչի ձեւը մահ է հիշեցնում, իսկ զորութիւնը՝ կյանք»:

Մինչ մեր Տիրոջ խաչ բարձրանալը, մեղսագործության պատճառով մարդկութիւնը հեռացել էր երկնավոր Հորից, եւ միակ փրկագինը Աստծո մարդեղացումն էր, մեր մեղքերի դիմաց Իր սրբագույն արյան հեղումն ու մեռելներից հարութիւն առնելը՝ «Նա ներեց մեզ մեր բոլոր հանցանքները եւ ոչնչացրեց հրամաններով հաստատված այն պարտամուրհակը, որ մեր դեմ էր, վերացրեց այն մեջտեղից եւ մեխեց խաչափայտին» (Կող. Բ. 14): Եւ հենց որ խաչի վրա մարեց Աստվածորդու վերջին շունչը՝ այդ պահին ծնվեց մարդու փրկութիւնը: Ծնվեց Արարչի մեծագույն սիրուց: Խաչալ Քրիստոսից ճառագեց կենաց եւ սիրո այն հզոր լույսը, որ սփռվեց համայն աշխարհի վրա: Քրիստոս Իր կյանքը տվեց, որպեսզի մենք՝ մեղքի մեջ կորածներս, կյանք ունենանք: Այդ պահից սկսյալ Քրիստոսի խաչը դարձավ դեպի Երկինք տանող միակ ճանապարհը, դեպի Աստված վերադարձի ճանապարհը՝ «Ինչպես որ Մովսեսը անապատում բարձրացրեց օձը, այնպես էլ մարդու Որդին պետք է բարձրանա, որպեսզի, ով նրան հավատում է, հավիտենական կյանքն ընդունի, քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ. 14-16):

Ահա՛, այս գիտակցումն է պատճառը, որ նման երկյուղածությամբ ենք մոտենում խաչին եւ այն իրավամբ համարում քրիստոնեութեան մեծագույն խորհրդանիշը: Մի հարց է ծագում, սակայն, եթե իրապես այդքան արժեւորում ենք Աստծո այդ անգին զոհաբերութիւնը, որ մեզ համար կատարեց, ապա ինչո՞ւ ենք անտեսում Նրա այն կարեւորագույն խոսքերը, թե՛ «Ով որ իր խաչը չի վերցնում եւ ինձ չի հետեւում, արժանի չէ ինձ» (Մատթ. Ժ. 38): Պատվիրանը ամենեւին էլ տրտնջալով ու գանգատվելով մեր խաչը կրելու մասին չէ, սիրելիներ: Այլ քրիստոնեական ուրախությամբ, խիզախությամբ, պատվով կրելու եւ կյանքի յուրաքանչյուր հանգրվանում Աստծուն փառաբանելու մասին է՝ «Քանզի քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (հմմտ. Գաղ. 2. 14):

Վստահ եմ չեք առարկի, եթե ասեմ, որ փորձութեան պահին, ամենքս էլ հաճախ նմանվում ենք հայտնի առակի այն մարդուն, որն Աստծո մոտ է գնում գանգատվելու իր խաչի անտանելի մեծութիւնից, եւ երբ Տերը

նրան հնարավորություն է տալիս խաչերի միջից ընտրելու իր ուզածը, նա մոտենում եւ վերցնում է ամենափոքր խաչը: Աստված ասում է նրան, որ հենց դա էլ իր խաչն էր, որ այդքան ծանր էր թվում իրեն:

Այո՛, սա է մարդկային տկար բնությունը: Մենք սովորել ենք մեզ տրվող բարիքներն ընդունել այնպես, կարծես հենց այդպես էլ պետք է լիներ, իսկ նվազագույն փորձության դեպքում՝ տրտնջում եւ դժգոհում ենք մեզ բաժին հասածից: Այսինքն, մենք շարունակում ենք Քրիստոսի հետեւորդները լինել խոսքով միայն, իսկ գործերով մնում ենք աշխարհին կառչած: Ինչ օգուտ նրանից, որ մեր շուրթերը Քրիստոս են մրմնջում, իսկ մենք մեր սրտերը ամուր փակած մնում ենք համր ու խուլ: Կարծում եմ, որ մեր խնդիրը անհիմն վախի, Աստծո հանդեպ ունեցած անվստահության, թերահավատության եւ մեր եսասիրության մեջ է: Երբ գալիս է խաչը վերցնելու եւ Քրիստոսին հետեւելու վճռորոշ պահը, մենք այնքան ենք դողում մեր սեփական կյանքի համար, որ վախենում ենք մի փոքր նեղությունից անգամ: Չենք հավատում, որ Աստված մեր ուժերից վեր փորձություն մեզ չի տալիս, եւ որ ամենասիրող Հայրը մշտապես հոգ է տանում մեր մասին եւ անպայման կօգնի դժվարին պահին: Մենք մոռանում ենք, որ խաչի ճանապարհին միայնակ չենք, այլ մեր Տեր Հիսուս Քրիստոս այն անցնում է մեզ հետ, մեր կողքին՝ օգնելով ու քաջալերելով մեզ եւ շատ հաճախ Ինքն է իր ուսերին վերցնում, թե՛ մեզ եւ թե՛ մեր խաչը:

Արդ, մաղթում եմ, որ հենց այս պահից սկսյալ, յուրաքանչյուրիս վերաբերմունքն իր խաչի նկատմամբ արմատապես փոխվի: Մեր կյանքից ներս այդ խաչը թող լինի մեր կրքերի դեմ մղվող անձանձիր պայքարի տեսքով, վճռական պահին Աստծո կամքը նախընտրելու եւ արտաքինապես միգուցե ոչինչ չշահելու տեսքով, իսկ կյանքից դուրս թող լինի մեր մերձավորին օգնելու տեսքով եւ դեռ ավելին հայրենի մեր երկրին, Մայր եկեղեցուն մեր օգտակարությունը բերելու պատրաստակամությամբ: Սակայն ինչ էլ որ լինի, աղաչենք Տիրոջը, որպեսզի ամրացնի մեզ մեր հավատքի մեջ, իր հանդեպ ունեցած մեր սերն ավելացնի, օգնի վճռական ու անվախ լինել, որպեսզի սրտի ուրախությամբ եւ մեծ սիրով մեր խաչը վերցնենք ու քայլենք նրա հետեւից: Ուրախությամբ համբերենք նեղություններին, քանզի գիտենք, որ մեր Տերը մահացած չմնաց խաչի վրա, այլ փառապանծ հաղթանակ տանելով չարի ու մահվան հանդեպ՝ հարություն առավ եւ հավիտյանս Կենդանի Աստված է: Ուրեմն ամեն ինչ անենք, որպեսզի մենք էլ կենդանանանք Տիրոջով, թույլ տանք Նրան

մեզ հարույթյուն տալու մեղքի մահվանից եւ մեկընդմիշտ դրոշմենք մեր սրտերում, որ չկա դեպի փրկություն տանող մեկ այլ ճանապարհ, քան խաչի ճանապարհն է:

Հին կտակարանում սիրելի հավատացյալներ, ֆիզիկական բնաջնջումից Տիրոջ ընտրյալ ժողովուրդը փրկվում էր Նրա իսկ կողմից ցույց տրված նշանի միջոցով: Մարգարեները տեսիլքներ էին տեսնում, որ այդ նշանը պիտի փրկի նրանց: Տերը, երբ պատվիրեց Մովսեսին առաջնորդելու Իր ժողովրդին, նրանց դռների սեմերին նշան դրվեց եւ դա փրկեց իսրայելացիներին մահից: Իսկ այսօր սիրելիներ, մենք մեզ համար ունենք Հիսուս Քրիստոսի խաչը, որի վրա Նա Իր անարատ բազուկները պարզեց, խաչի վրա Իր արյամբ նշան դրեց եւ մեզ, Իրեն ճշմարիտ Դուռ դավանողներին, հոգեւոր փրկություն պարգեւեց եւ այդ խաչով է, որ մենք պիտի փրկություն ունենանք:

Ամեն անգամ խաչակնքումը, թող ամենքիս հիշեցում լինի Երկնային բազումողորմ Տիրոջ մեծագույն սիրո եւ մեզ պարգեւած փրկության մասին: Թող լինի ոչ թե ինքնաբերաբար արվող մի նշան, այլ քարոզ՝ գործողության մեջ: Թող այն երկյուղածությամբ լցնի մեր սրտերը, որպեսզի գոնե չնչին չափով արժանանանք այն անգին Արյանը, որը թափվեց մեզանից յուրաքանչյուրի համար: Թող սովորեցնի մեզ սիրել իրական, մաքուր եւ անշահախնդիր սիրով: Ինչպես Պողոս առաքյալն է ասում՝ «Ձեզանից յուրաքանչյուրը թող խորհի այն, ինչ որ կա Քրիստոս Հիսուսի մեջ, որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով եւ մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն՝ հնազանդ լինելով մինչեւ մահ եւ այն էլ մահվան՝ խաչի վրա: Դրա համար էլ Աստուած նրան առավել բարձրացրեց եւ նրան շնորհեց մի անուն, որ վեր է, քան ամեն անուն» (Փիլ. Բ. 5-10):

Եւ մենք նույնությամբ խոնարհեցնենք մեր անձերը եւ որպես քրիստոնյա ապրենք մեր կյանքը խոնարհության մեջ եւ ասենք՝ «Խաչ քո եղեցի մեզ ապաւէն, Տէր Յիսուս» եւ այդ խաչի բերած խաղաղությունը թող լինի ամենքիս հետ. այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:



**Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(23 սեպտեմբերի 2018 թ.)

«Յամուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»

*«Փառք են առն խոտորել ի հայհոյութեանց,
իսկ ամենայն անգգամ ընդ այնպիսիսն շաղի»
(Առակ. Ի. 3):*

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, ահա՛ վասիկ, դեռ դարեր առաջ Սողոմոն Իմաստունը պատգամում եւ խորհուրդ է տալիս ամենքիս հեռու մնալ հայհոյանքից, հետեւաբար նաեւ՝ հայհոյելուց, քանզի միայն անպարկեշտ մարդիկ են, ըստ նրա, խառնվում եւ մասնակից լինում այդպիսի բաների: Չնայած այս խոսքերն Իմաստունի բերանից հնչել են շատ վաղուց, բայց այսօր եւս չեն կորցրել իրենց այժմեականությունն ու թարմությունը, որովհետեւ առօրյա կյանքում կամա թե ակամա, գիտություն մեզ անգիտություն մեզանից շատերն ընկնում են հենց այս մեղքի մեջ՝ երբեմն չանդրադառնալով դրան:

Յավոք, հայհոյանքի պատճառով բազմաթիվ սպանություններ են տեղի ունենում մեր հասարակության մեջ եւ անգամ ազգային բանակում, երբ հայը հայի վրա ձեռք է բարձրացնում, գժտությունն ու չարությունն են պատում շատերին՝ խաթարելով սիրո, հանդուրժողականության եւ համերաշխության ոգին: Տխրեցնողն այն է, որ շատ մարդկանց գիտակցության մեջ հաճախ հայհոյելը մեղք չի համարվում, ավելին՝ նույնիսկ չեն ցանկանում ուշադրություն դարձնել այս նողկալի եւ քրիստոնյաներիս նկարագրին անհարիր երեւույթին՝ այն չնչին մի բան համարելով, կամ՝ լավագույն դեպքում, եթե անդրադառնում էլ են, ապա անվարան, առանց դուշն-ինչ տատանման, ամեն կերպ աշխատում են արդարացնել

իրենց՝ ասելով, որ հայհոյելն ուղղակի պահից գրգռված էր կամ որեւէ դիտավորություն չպետք է դրա մեջ տեսնել ու փնտրել:

Սիրելիներ, երեւի գաղտնիք բացահայտած չեմ լինի, եթե ասեմ, որ մեզանից շատերն իրենց ամենօրյա խոսքում երբեմն հայհոյանքներ են գործածում, իսկ ոմանց համար նմանատիպ խոսելաձեւը դարձել է անգամ կենսակերպ: Այդպիսի մարդիկ չեն կարողանում իրենց կյանքը պատկերացնել առանց այդ «գեղեցիկ խոսքերի»: Ոմանք էլ սխալաբար կարծում են, որ հայհոյելով իրենց արիությունն ու առավելությունն են ցույց տալիս մյուսների նկատմամբ: Ամեն դեպքում վստահ եմ, որ ոչ ոքի համար հաճելի չէ քայլել փողոցով, երթեկեկել հանրային փոխադրամիջոցներով կամ պարզապես զրուցել ինչ-որ մեկի հետ՝ ականջալուր լինելով գոեհիկ եւ անպատշաճ արտահայտությունների կամ բառերի:

Անկասկած, հայհոյելը կամ չհայհոյելը նախեւառաջ խոսում է տվյալ անձի բարեկրթության եւ դաստիարակության մասին: Զէ՛ որ իր հոգին ու միտքը կրթած մարդը, անկախ իր հավատացյալ կամ անհավատ լինելուց, սոցիալական դիրքից եւ ստանձնած պաշտոնից, սեռից ու տարիքից, երբեք չի հայհոյում, անվայել խոսքեր չի բարբառում, իսկ նրա արտաբերած յուրաքանչյուր խոսքն ու արտահայտությունը չափված ու ձեւված են լինում: Միով բանիվ՝ այդպիսի մարդն արժեւորում է իր խոսքն ու տեղ կանգնում դրան: Հայհոյելուն նպաստում կամ արատավոր այս երեւույթից մարդուն ետ են պահում նաեւ նրա շրջապատն ու ընկերակիցները, որոնք կարող են եւ բարերար ազդեցություն ունենալ, եւ հակառակը: Ուստի, մարդու կյանքում շատ կարեւոր է այն միջավայրը, որում մեծանում եւ կրթվում է: Անհատի ձեւավորման գործում մեծ եւ կանխորոշիչ դեր ունի, անշուշտ, նաեւ ընտանեկան դաստիարակությունը, քանզի մարդիկ շատ անգամ լավ կամ վատ սովորությունները ձեռք են բերում հենց այս միջավայրում: Ընտանեկան ճիշտ դաստիարակության բովով անցած մարդը երբեք չի հայհոյում՝ անկախ իր դավանած հայացքներից, տարիքից եւ սեռից:

Սուրբ Գրքի համաձայն՝ մեր Տերն իր երկրային կյանքի ընթացքում բազմիցս անտեղի հանդիմանվում էր փարիսեցիների կողմից՝ նախնիների ավանդությունը չպահելու եւ օրենքը խախտելու համար: Վերջիններս այդպիսի քայլերով ամեն կերպ ցանկանում էին ժողովրդին հրահրել Տիրոջ դեմ ու վարկաբեկել նրան: Եւ ահա նման դեպքերից մեկի ժամանակ, երբ Աստվածօրդուն մեղադրում են, թե ինչո՞ւ են նրա աշակերտներն

անվաճ ձեռքերով հաց ուտում, Հիսուս կրկին հանդիմանում է փարիսեցիներին՝ ասելով, որ նրանք Աստծո խոսքն արհամարհում են իրենց ավանդույթյան պատճառով: Բայց Տերը սրանով չի բավարարվում, այլ իր մոտ է կանչում ժողովրդին եւ ասում. «Լսեցե՛ք եւ իմացե՛ք. ոչ թե ինչ բերանով է մտնում, այն է պղծում մարդուն, այլ ինչ ելնում է բերանից, այն է պղծում մարդուն» (Մատթ. ԺԵ. 10-11): Այսինքն՝ Քրիստոս ուզում էր հասկացնել հավաքվածներին, որ ուտելիքը կամ անվաճ ձեռքերով ուտելը չեն պղծում մարդուն, այլ այն ամենը, ինչ դուրս է գալիս մարդու բերանից, այլ կերպ՝ սրտից: Ուստի, Տերը շարունակում է իր միտքն ավելի սուր կերպով եւ ասում. «Քանի որ սրտից է, որ ելնում են շար խորհուրդներ՝ սպանություններ, շնույթություններ, պոռնկություններ, գողություններ, սուտ վկայություններ, հայհոյանքներ» (Մատթ. ԺԵ. 19): Ավետարանական այս դրվագից պարզ է դառնում, որ Տերը, ի շարս այլ մեղքերի, հայհոյանքը եւս համարում է զազրելի մի մեղք, որ պղծում եւ ապականում է մարդուն՝ հեռացնելով արարածին իր Արարչից: Իսկ եթե այն մեղք է, ապա պետք է խորշել դրանից ու հեռու մնալ:

Աստվածախոս Պողոս առաքյալն իր թղթերում պատվիրում է, որ թոթափենք մեր բերաններից բարկությունը, զայրույթը, չարությունը, հայհոյությունը, քանգի այս ամենը հատուկ է միայն հին մարդուն, եւ որպես Աստծո ընտրյալներ՝ հագնենք նորը՝ զինվելով քրիստոնեական ճշմարիտ ու ազնիվ առաքինություններով, որոնք մարդուն կատարելության են տանում (հմմտ. Կող. Գ. 8-15): Իսկ Հակոբոս առաքյալն իր Ընդհանրական թղթի Գ. գլխում բազմապիսի դատողություններ է կատարում լեզվի մասին՝ հորդորելով հնազանդեցնել այն. «Լեզուն էլ կրակ է, մի աշխարհ անիրավության. մեր անդամների մեջ է հաստատված, որ ապականում է ամբողջ մարմինը եւ կրակով վառում մեր ամբողջ կյանքը՝ բորբոքված գեհենի կրակով»:

Երբ ծանոթանում ենք արարչագործության պատմությանը, տեսնում ենք, որ մարդն Աստծո կողմից կատարյալ ստեղծվեց: Հետեւաբար՝ աստվածային նախախնամությանմբ եւ դրվածքով ադամորդու մարմնի յուրաքանչյուր մաս ունի իր բնախոսական (ֆիզիոլոգիական) եւ հոգեւոր գործառույթները, որոնցով եւ ապահովվում է մեր բնականոն կենսագործունեությունը: Այսպես՝ բնախոսական առումով սիրտն արյունատար համակարգի կենտրոնական օրգանն է, որն արյունը մղում է զարկերակային համակարգ եւ ապահովում նրա շարժումն անոթներով: Իսկ հոգեւոր

առումով, ըստ Տիրոջ վերոգրյալ խոսքի, դրանից են դուրս գալիս բազմաթիվ ախտեր, որոնք էլ ավելի են պղծում մարդ արարածին: Այլ խոսքով՝ սիրտը խորհուրդների բնակավայրն է, ուստի բոլորիս պարտքն է մաքուր եւ անարատ պահել այն: Չէ՞ որ, ըստ Ավետարանի, սրտով մաքուրներն Աստծուն պիտի տեսնեն (հմմտ. Մատթ. Ե. 8): Մեր լեզուն եւ բերանը, բացի Աստծուց տրված բնախոսական գործառույթից, ունեն նաեւ հոգեւոր գործառույթ: Իսկ վերջինս ոչ այլ ինչ է, եթե ոչ Աստծուն օրհնաբանելն ու փառաբանելը, նրան որպես Տեր եւ Փրկիչ խոստովանելը եւ նրա ամենասուրբ կամքին հնազանդվելը: Բացի այդ՝ չպետք է մոռանալ, որ այդ նույն բերանով ենք ճաշակում Տիրոջ փրկարար ու քավչարար մարմինն ու արյունը, այսինքն՝ Ս. Հաղորդություն ենք ընդունում, եւ այդ նույն բերանով՝ հայհոյում եւ այլ մեղքեր գործում: Արդյո՞ք համատեղելի են այս երկուսը: Ահա հարց, որ յուրաքանչյուրիս խորհելու տեղիք պետք է տա...

Ամեն քրիստոնյայի պարտականությունն է սրբության եւ կատարելության ձգտումը, այսինքն՝ մաքուր լինել թե՛ մտքով, թե՛ սրտով, թե՛ խոսքով եւ թե՛ գործով: Եւ ամենքիս կյանքում գալիս է մի պահ, երբ ուխտ ենք կնքում մեր Արարչի հետ՝ խոստանալով փոխել մեր նախկին ընթացքն ու Քրիստոսով նոր մարդը հագնել՝ ապրելով աստվածահաճո կյանքով: Եւ այդ ուխտելու պահը Ս. Մկրտության սրբազան խորհուրդն է, որով սրբվում ենք մեղքերից եւ զինվորագրվում Քրիստոսի անպարտելի բանակին: Խորհրդակատար հոգեւորականը սրբալույս մյուռոնով օծում է նաեւ մեր բերանը՝ ասելով. «Հիսուս Քրիստոսի անունով այս կնիքը թող քեզ լինի բերանի պահպանություն եւ ամուր դուռ շուրթերիդ»: Այսինքն՝ խնդրում ենք ամենակալ Տիրոջից, որ հետապնդ մարդն իր բերանով այլեւս պիղծ եւ հայհոյական խոսքեր չարտաբերի, այլ ամեն ժամ օրհնի Աստծուն ու բարին գործի: Բոլորս էլ գիտենք, որ Ս. Մկրտությամբ կենդանի Աստծո տաճար ենք դառնում՝ զարգարվելով Ս. Հոգու շնորհների լույսով: Եւ մեր ողջ գիտակցական կյանքում պարտավորվում ենք արթուն պահել եւ մեր մեջ երբեք չթմրեցնել այդ լույսը, որի առհավատչյան ինքը՝ Սուրբ Հոգին է: Բայց երբ հայհոյում ենք, սիրելիներ, մեր մեջ մարում է Ս. Հոգու վառած այդ կենդանարար լույսը, իսկ մեր հոգին՝ խավարում: Այդ պատճառով պետք է զգուշանալ այս ահավոր ախտից, որը օտարում է մեզ Արարչից՝ եւս մեկ քայլ հեռացնելով հավիտենական փրկությունից: Մեզ համար օգուտ կամ շահ չէ բերանով ասել՝ «Ես քրիստոնյա եմ», կամ՝ Ս. Հաղորդություն ընդունել, եւ այդ նույն բերանից

արտաբերված հայհոյանքի պատճառով ինքներս մեզ զրկել քրիստոնյա կոչվելու շնորհից:

Անտարակույս, ամեն մի շարախոսություն կամ հայհոյանք իր մեջ կործանարար վտանգ ունի, որն առաջին հերթին վնասում է հենց մեզ: Բերանից դուրս եկած խոսքը լոկ խոսք չէ, այլ այն զորություն եւ ուժ ունի, որն այլեւս հնարավոր չէ ետ առնել: Իսկ այդ խոսքը շատ անգամ կարող է նաեւ ճակատագրական լինել, վնասել մեկ ուրիշի կամ նրան փրկել վտանգից, անհուսությունից եւ անորոշությունից:

Ս. Պատարագին մասնակից սիրելի՛ հավատացյալներ, քարոզիս վերջում ուզում եմ անդրադառնալ անընդունելի մեկ երեւույթի եւս, որը կարծես գերիշխող է դարձել հայկական ընտանիքներում: Խոսքս մանուկներին հայհոյանք սովորեցնելու մասին է: Երբ մեր տուն ազգականներից, մտերիմներից կամ պարզապես ինչ-որ հյուր է գալիս, առաջին հերթին ուրախանում եւ պարծենում ենք, որ երեխան կարող է հայհոյել ոչ միայն բերանով, այլ նաեւ ձեռքերի շարժումներով: Եւ այդ ժամանակ երեխային կանչում ենք, խնդրում, որ հայհոյի դիմացինին՝ խոստանալով այս կամ այն պարգևը, իսկ հետո բոլորս ծիծաղում ենք դրա վրա եւ գոհանում մեզանից՝ ասես քաջագործություն ենք արել կամ բարիք գործել: Երբեմն էլ հայհոյելու համար երեխային պարգևատրում ենք քաղցրավենիքով կամ այլ քաղցրավենիքով: Փոխանակ երեխային խրատենք ու բարի բաներ սովորեցնենք, ուրախանում ենք նրա հայհոյանք տալուց: Ինչ լավ կլիներ, որ այդ երեխայի բերանից աղոթք եւ օրհնություն դուրս գար, գեղեցիկ ու իմաստալից մի բանաստեղծություն կամ պարզապես մի բարի խոսք: Ահա այս դեպքում իրապես արժե ուրախանալ եւ ցնծալ:

Ուստի, եկե՛ք ազատագրենք ինքներս մեզ այս ահավոր ախտից եւ սրբության ու կատարելության ճամփան բռնենք՝ միշտ ի մտի ունենալով Սուրբ Գրքի հետեւյալ աստվածաշունչ խոսքը. «Քո խոսքերով պիտի արդարանաս եւ քո խոսքերով պիտի դատապարտվես» (Մատթ. ԺԲ. 37):





ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԺՈՂՈՎ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐՂ (Ըստ առաքելական հայրերի գրվածքների)

Ἐκκλησία՝ Եկեղեցի. «Հաւատամք եւ ի մի միայն, ընդհանրական եւ առաքելական սուրբ Եկեղեցի» նախադասութիւնը, լինելով Հավատո հանգանակի մաս, սրբազան Պատարագի ժամանակ հռչակվում է Եկեղեցու Ս. Խորանից: Եկեղեցու վերաբերյալ այս հաստատումը, իհարկե, ամենօրյա փորձառութեան ակնհայտ առարկա չէ. մարդը պարզապէս իր զգայարաններով չի կարող դա ճշտել: Հավատո հանգանակի այս բանաձեւումը նկատել է տալիս, որ Եկեղեցին նախ եւ առաջ հավատքի առարկա է: Մինչեւ Նիկիայի առաջին տիեզերաժողովը (325 թ.), որտեղ վերջնականապէս հաստատվել է այս ձեւակերպումը, եկեղեցական միտքը փորձառութեան երկար ճանապարհ է անցել եւ տարբեր տեսանկյուններից է ընկալել «Եկեղեցի» հասկացութիւնը: Փորձառութիւն ենք ասում, քանի որ ուղղափառութիւնը կամ ուղղադավանութիւնը տեսական ձեւակերպումների համառ պնդում չէ. տեսական ձեւակերպումները հիմնականում առաջանում են հերետիկոսութիւնների կամ թյուրըմբռնումների պատճառով, որոնց դեպքում Եկեղեցին ստիպված է լինում որոշակի բանաձեւումներով արձանագրել դավանաբանական սկզբունքները: Այսինքն՝ գործնական կողմը միշտ նախորդում է տեսականին, իսկ ձեւակերպումներն արդեն իսկ ապրված փորձառութեան եւ մտայնութեան արտահայտումն են:

«Եկեղեցի» եզրը, որ հունարեն ἔκκλησία-ի տառադարձութիւնն է, գործածվել է եւ հունական դասական մշակույթում, եւ Հին ու Նոր Կտակարաններում:

Հին Հունաստանում Սոլոնի կատարած բարեփոխումների արդյունքում (Ք. ա. 593 թ.) ստեղծվել է «չորս հարյուրի խորհուրդը»՝

Բուլե (հուն.՝ βουλή), որը պետք է հետեւեր պետական կարեւոր գործերին, կարգուկանոնի պահպանմանը, դատապարտեր նրանց, որոնք դավեր կնյութեին ժողովրդավարական համակարգի դեմ եւ այլն: Ըստ այդմ՝ այս շրջանում կարեւոր դեր է ստանում ազգային ժողովը, որ կոչվում էր էկկլեսիա (հուն.՝ ἐκκλησία): Երբ որեւէ խնդիր դուրս էր Բուլեի իրավասությունների շրջանակից, հավաքվում էին քաղաքացիները, եւ տեղի էր ունենում քվեարկություն, այսինքն՝ որոշ իմաստով ժողովուրդն էր համարվում պետության գերագույն մարմինը, իսկ պետական իշխանության գերագույն ատյանի գործը, ի թիվս այլոց, նաեւ «եկեղեցին հավաքելն» էր¹: Այս իմաստով ἐκκλησία բառը սերում է ἐκ καλέω (դուրս կանչել ինչ-որ տեղից) կամ ἐκκαλεῖν բայից, քանի որ հույների մոտ «եկեղեցու» անդամները կանչվում էին մունետիկների կողմից²:

Ἐκκλησία բառն ամփոփում էր ոչ միայն հոգեւոր կամ վերացական, այլ նաեւ մարմնական մասնակցության իմաստ: Վերջինը հիմնավորելու համար Աթենքի կյանքից բավարար փաստեր են հայտնի. օրինակ՝ ով ժողովին չէր ներկայանում, պետք է տուգանք վճարեր, կամ՝ քաղաքացիական որեւէ պայքարի ժամանակ, եթե քաղաքացին զենքը ձեռքին չէր մասնակցում հօգուտ որեւէ կողմի, ապա զրկվում էր իր իրավունքներից³: Ինչպես կտեսնենք՝ այս ընկալումը փոխանցվել է նաեւ քրիստոնեական մշակույթին, որտեղ հոգեւոր Եկեղեցի չի կարող լինել առանց մարմնապես մասնակցության:

Ἐκκλησία-ն հասկացվում է նաեւ որպես մարդկանց ընդհանրություն՝ «համայնական ազգ» իմաստով: Ով ἐκκλησία-ի անդամ չէ, πολίτης, այսինքն՝ քաղաքացի չէ: Եւ այս առումով քրիստոնյաները, որպես Եկեղեցու անդամներ, «քաղաքակիցք սրբոց» են համարվում արդեն իսկ առաքելական ժամանակներից (հմմտ. Եփ. Բ. 19): Այսպիսով, Քրիստոսի անունով հիմնված Եկեղեցին բնույթով ընդհանրական է⁴ եւ ներառում է բոլոր անդամներին՝ առանց խտրականության, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Զի ոչ գոյ

¹ ΣΚΥ ARISTOTLE, The Athenian Constitution, ed. by T. Page, E. Capps, H. Rouse, Cambridge, 1935, էջ 31-33:

² ΣΚΥ В. БОЛОТОВ, Лекции по истории древней церкви, том 1, Москва, 1994, էջ 11:

³ ΣΚΥ ARISTOTLE, The Athenian Constitution, էջ 31:

⁴ Այստեղ «ընդհանրական» եզրը գործածված է բոլորի՝ հավասար անդամակցության իմաստով, սակայն այն առավելապես ունի Քրիստոսի՝ Հաղորդության ժամանակ ամբողջական ներկայության շեշտադրում (Բզնատիոս Անտիոքացի), որի համաձայն՝ յուրաքանչյուր ծուխ, որ հավաքված է Ս. Հաղորդության համար, լիարժեք ընդհանրական Եկեղեցի է:

խտիր հրէի եւ հեթանոսի, քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական ամենեսին ոյ՛մ կարդան առ նա» (Հռոմ. Ժ. 12): Քրիստոնեական Եկեղեցին, սակայն, առավել ժողովրդական է, որտեղ առկա չէ դասակարգային պատկանելության խտրություն, ինչն առկա էր հին հունական βουλή -ում:

Սուրբ Գրքի Յոթանասնից բնագրում եւս հունական այս եզրույթը վերաբերում է Աստծո «ընտրյալ ժողովրդի» ամբողջությանը: Ինչ-որ իմաստով «եկեղեցի» հասկացության համար ակունք է Աստծո կողմից Աբրահամի ընտրությունը եւ Իսրայելի ձեւավորումը՝ որպէս Աստծո ժողովուրդ: Իսրայելը ձեւավորվեց Աբրահամի սերնդից՝ հատուկ նպատակով՝ որպէսզի «...օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի» (Մենդ. ԺԲ. 3): Այս ազգը դարձավ Մեսիայի եւ նրա վախճանաբանական համայնքի համար աղբյուր, առաջին քրիստոնյաները, Իսրայել ազգի ձեւավորումը համարելով Եկեղեցու ծագում, իրենց կանչն ընկալում էին որպէս «Նոր Իսրայելի», նոր ընտրյալ ազգի ստեղծում⁵: Այս առումով քրիստոնյաների համայնքը մատնանշելու համար հանդիպում են բազմաթիվ արտահայտություններ՝ «Այլ դուք ազգ է՛ք ընտիր, թագաւորութիւն, քաղաքութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական» (Ա. Պետ. Բ. 9):

Ավետարաններում Քրիստոս «եկեղեցի» բառը գործածում է երեք անգամ՝ «...ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ» (Մատթ. ԺԶ. 18), «...իսկ եթէ եւ նոցա ոչ լուիցէ, ասասչիր յեկեղեցւոյ, ապա թէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն եւ զմաքաւոր» (Մատթ. ԺԷ. 17)⁶:

Պողոս առաքյալը «եկեղեցի» եզրը երկու իմաստով է գործածում՝ որպէս որոշակի վայրերի հավատացյալների միություն, օրինակ՝ Երուսաղեմի, Գաղատիայի, Թեսաղոնիկեի (հմմտ. Գործք. Բ. 47, Գաղ. Ա. 2, Ա. Թես. Ա. 1), եւ ամբողջ աշխարհի հավատացյալների հավաք (հմմտ. Ա. Կորնթ. ԺԲ. 28): Փաստորեն միեւնույն եզրույթը գործածվում է թե՛ տեղական, թե՛ ընդհանրական իմաստով. Ա. դարից սկսած՝ Եկեղեցու հայրերը շարունակեցին նշալ եզրույթը կիրառել այս երկու իմաստով⁷:

Քրիստոնեական առաջին համայնքների ձեւավորմանը զուգահեռ՝ ἑκκλησία էր անվանվում նաեւ քրիստոնյա հավատացյալների հավաքը:

⁵ Տե՛ս J. D. ZIZIOULAS, Lectures in Christian Dogmatics, London, 2008, էջ 126:

⁶ Տե՛ս Շ. ԱՐՔ. ԳԱՍՊԱՐԵԱՆ, Տեսական աստուածաբանություն, Անթիլիաս-Լիբանան, 2000, էջ 308:

⁷ Տե՛ս ԳԱՐԵԳԻՆ Ա. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Տեսական աստուածաբանություն, Կանադա, 2005, էջ 145. նույն հեղինակի՝ «Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնն ըստ հայ շարականներու», Կանադա, 2003, էջ 261:

Քրիստոնյաներին սկսեցին կոչել «կանչված»: Պողոս առաքյալը քրիստոնյաներին դիմում է որպես կանչված սրբեր (հուն.՝ κλητοίς ἀγίοις, հմմտ. Հռոմ. Ա. 7), իսկ իր մասին ասում է՝ «կանչուած առաքեալ» (հուն.՝ κλητός απόστολος, Հռոմ. Ա. 1): Քրիստոնյայի կարգավիճակն արտահայտելու համար ձեւավորվում է կղից՝ «կոչում» հասկացությունը՝ «... առժամի գնալ կոչմանն յոր կոչեցաւոմ» (Եփես. Դ. 1): Պողոս առաքյալի նամակներում բազմաթիվ են նման տեղիները, որոնցում Աստված կամ Քրիստոս է կանչում: Դրանք ունեն աստվածաբանական նշանակություն՝ Հիսուս կանչում է աշակերտության (հմմտ. Մատթ. Դ. 21), կանչում է արդարներին ու մեղավորներին (հմմտ. Մարկ. Բ. 17, Ղուկ. Ե. 32): Այսինքն՝ Աստծո Որդին, որ մարմնացել է մարդուն փրկելու համար, կանչում է դեպի այդ փրկությունը⁸:

Ստեփանոս Նախավկան դիմում է իրեն դատող հրեաներին, խոսում է Մովսեսի մարգարեության մասին, ապա՝ ավելացնում. «Սա է, որ եղել յեկեղեցւոյն յանապատին ընդ հրեշտակին, որ խօսեցաւ ընդ մնա ի լերինն Սինայ» (Գործք. է. 38): Այստեղ տեսնում ենք, որ Իսրայելն ընկալվում է որպես «եկեղեցի». Աստծո ժողովուրդը դուրս է կանչվում Եգիպտոսից դեպի Ավետյաց երկիր՝ առ Աստված⁹: Սակայն էքκղիսիա-ն՝ հավաքված ժողովուրդը, որ իրեն Եկեղեցի է կոչում, սերտորեն կապված է նաեւ Բ. Օրինաց ԻԳ. 2-9 տեղիների հետ: Յոթամասնից թարգմանության մեջ եբրայերեն «քահալ» բառը երբեմն թարգմանված է էքկղիսիա, երբեմն՝ συναγωγή: Հրեա քրիստոնյաներն ընտրեցին էքկղիսիա բառը ոչ թե συναγωγή բառից խուսափելու միջոցով իրենց տարբերելու այն հրեաներից, որոնք չէին հավատում Հիսուսին, այլ որ ընդգծեն ժողովվելու յուրահատկությունն այն հրեաների, որոնք հավատացել էին Փրկչին¹⁰: Այսպես՝ հստակ է, որ այս հավաքները թեեւ ունեին որոշ ընդհանրություններ հրեական հավաքների հետ, սակայն, որպես ժողով, տարբերվում էին իրենց բովանդակությամբ: Եւ այս ընկալումն է, որ ստիպում է վերաբերելու Աստծո ժողովրդի՝ մի տեղում հավաքվելու իմաստն ու առանձնահատկությունը:

⁸ S^{ku} K. L. SCHMIDT, Καλεω in "Theological Dictionary of the New Testament", ed. by G. Kittel, vol. 3, Michigan, 1995, էջ 487-491: Հետաքրքիր է, որ հայ մատենագրության մեջ, որպես Եկեղեցին մատնանշող բառ, հանդիպում է նաեւ «կոչարան» եզրույթը: Թեոդորոս Քոթենավորը Հովհան Մայրագոմեցու դեմ ուղղված ճառում ասում է. «...ի սրբումն կոչաւանին ընթեռնուլ թուղթս զաստուածաբարոզ առաքելոյն Պաւղոսի». տես «Երանելոյն Թէոդորոսի ընդդէմ Մայրագոմեցոյն», «Մատենագիրք Հայոց», հտ. Ե., Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1247:

⁹ S^{ku} E. S. WILLIAMS, Systematic Theology, vol. 3, Missouri, 1981, էջ 91-92:

¹⁰ S^{ku} E. SCHILLEBEECKX, Church: The Human Story of God, New York, 1993, էջ 146:

Զիզիուլասն ընդգծում է, որ «եկեղեցի» բառին միշտ նախորդում է սեռական հոլովով դրված հատկացուցիչ. ե՛ւ Պողոս առաքյալը, ե՛ւ նրան հաջորդող եկեղեցական հայրերը «եկեղեցի» բառը գործածում են մի կողմից որպես Աստծո կամ Քրիստոսի եկեղեցի, մյուս կողմից՝ որոշակի վայրի եկեղեցի իմաստով¹¹: Ս. Իգնատիոս Անտիոքացին իր բոլոր նամակները հենց այդպես է սկսում. օրինակ՝ «Իգնատիոսը, որն Աստուածազգեսց է՝ Զմիւռնիա քաղաքի եկեղեցու Պողիկարպոս եպիսկոպոսին»¹²: Այսինքն՝ եկեղեցին ընկալվում է Աստծո կամ Քրիստոսի, որոշակի վայրի կամ իրեն շրջապատող աշխարհի հարաբերությամբ¹³: Այս առումով եկեղեցին վերաբերում է միաժամանակ ե՛ւ բոլոր քրիստոնյաներին՝ միասին վերցրած, ընդհանրականության մեջ, ե՛ւ առանձնապես՝ մեկ վայրում ապրող որոշակի համայնքին: Օրինակ՝ Իգնատիոս Անտիոքացին գրում է եկեղեցուն, որը Եփեսոսում է (հմմտ. Եփես. 1). եկեղեցու ինքնությունը բխում է Աստծո հետ հարաբերությունից: Պողոս առաքյալը, Իգնատիոս Անտիոքացին եւ Պողիկարպոս Զմյուռնացին հիմնականում շեշտում են, որ տվյալ նամակը գրվում է Աստծո եկեղեցուն, որն այս կամ այն վայրում է գտնվում, հետեւաբար, անկախ վայրից, բոլորն էլ Աստծո եկեղեցին են կազմում, եւ նրանց միությունը բխում է Տիրոջից: Աստված կամ Քրիստոս է այն կապող օղակը, որ միավորում է տարբեր վայրերի եկեղեցիները՝ կազմելով մեկ եկեղեցի:

Այն հատվածը, որտեղ Քրիստոս ներկայացված է իբրեւ գլուխ, իսկ եկեղեցին իբրեւ մարմին, կարող ենք հասկանալ հենց այս լույսի ներքո. Քրիստոս գլուխն է, որովհետեւ նա է մյուս անդամներին միմյանց միացնողը: Այս իմաստով տեղական եկեղեցիները հավասար պատիվ ունեն, եւ նրանցից որեւէ մեկը չի կարող զբաղեցնել «գլխի» տեղը, քանի որ այդ դեպքում եկեղեցու ինքնությունը պետք է բխեցնել ոչ թե Աստծուց կամ Քրիստոսից, այլ՝ տեղական եկեղեցիներից որեւէ մեկից, իսկ դա հակասում է Պողոս առաքյալի եւ առաքելական հայրերի այն պնդմանը, որ եկեղեցին Աստծո կամ Քրիստոսի եկեղեցին է: Ընդ որում, առաքելական հայրերի երկերում կիրառված հունարեն παροικειω բայից (նշանակում է

¹¹ Sёu J. D. ZIZIOULAS, The One and the Many, California, 2010, էջ 52:

¹² Թ. ԱԲՂ. ԶԻԲԻԿՅԱՆՑ, Սուրբ Իգնատիոս Անտիոքացի (վրդ. թեզ, անտիպ), Ս. էջմիածին, 1994, էջ 146: Հայերեն աշխարհաբար թարգմանությունը կատարվել է Կ. Պոլսի 1783 թ. տպագրությունից զուգահեռաբար համեմատելով Պ. Պրեոբրաժենսկու 1902 թ. ուսերեն եւ Զ. Բ. Լալթֆուլթի 1926 թ. անգլերեն թարգմանությունների հետ:

¹³ Sёu J. D. ZIZIOULAS, The One and the Many, California, 2010, էջ 52:

ապրել որպես օտարական) ծագում է παροικιά (ծուխ) բառը՝ թափառող կամ անտուն, հուշում է, որ բնակության վայրերը ժամանակավոր են: Ըստ այս ընկալման՝ քրիստոնյաների, առավել ճիշտ՝ Եկեղեցու ճշմարիտ «տունը», «հայրենիքը» եւ «բնակվելու մշտական վայրը» երկնային Երուսաղեմն է:

Սակայն Աստծո եւ միմյանց հետ հարաբերության հաստատման համար անհրաժեշտ է, որ Եկեղեցու անդամները մեկտեղվեն եւ լինեն միաբան՝ «...համբերեմք ձեռ համաձայնության եւ միաբան աղոթքների մեջ»¹⁴: Միության եւ միաբանության գաղափարը կարելու է Եկեղեցու՝ քրիստոնեական համայնքի աստվածաբանական ընկալման առումով: Վերջինիս մեկնաբանման համար հիմք կարող է ծառայել Քրիստոսի խոսքը, որ տեղ է գտել Հովհաննեսի ավետարանում. «Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ եւ վասն ամենայն հաւատացելոց բանին նոցա յիս. Զի ամենեքին մի՛ իցեմ, որպէս դու, Հայր, յիս, եւ ես ի քեզ, զի եւ նոքա ի մեզ իցեմ. զի եւ աշխարհ հաւատացէ եթէ դու առաքելոց զիս» (Յովհ. Ժէ. 20-21): Հիսուս չի խոսում աշակերտների հետ, այլ աղոթում է Հորը, որ մեկ լինեն, եւ այդ միությունը վկայություն լինի աշխարհին: Իհարկե, տեսակետ կա, որ Հովհաննեսի նշած միությունը էականորեն տարբեր է Պողոս առաքյալի միության ընկալումից¹⁵: Վերը նշյալ հատվածում առանձնացվում է միության երկու տարբերակ՝ ա. միություն (այսինքն՝ մեկություն, oneness) ու համաձայնություն, որը Հոր եւ Որդու միջեւ է, բ. համայնքի ներսում փոխհամաձայնություն, որը կախված է աստվածային միությունից¹⁶: Ինչ էլ լինի՝ մեկը մյուսին չի հակասում, եւ եթե նույնիսկ որոշ նրբերանգներ տարբեր են նկատվում, ապա դրանք կարող են փոխլրացնել միմյանց:

Վաղքրիստոնեական Եկեղեցու ժողովի եւ միության ընկալումը քննելիս առավել նպատակահարմար է այն համեմատական պատկերը, ըստ որի՝ Եկեղեցին կոչվում է Քրիստոսի մարմին, իսկ առանձին հավատացյալները՝ այդ մարմնի անդամներ: Ընդ որում, մարմնի ընկալումը կրկին երկակի է. այն վերաբերում է ոչ միայն բոլոր քրիստոնյաների միությանը, այլ նաեւ տեղական որոշակի համայնքներին: Անտիոքի քրիստոնյաների համար խաղաղության վերականգնման առնչությամբ Ս. Իգնատիոսը գրում է զմյուռնացիներին՝ լավ կլինի, որ նրանք իրենց

¹⁴ Տէս IGNATIUS OF ANTIOCH, To the Trallians, "Ancient Christian Writers", N 1, New York, 1946, 12, էջ 78:

¹⁵ Տէս J. FERREIRA, Johannine Ecclesiology, Sheffield, 1998, էջ 134:

¹⁶ Անդ:

միջից շնորհալի որեւէ մեկին որպէս դեսպան ուղարկեն՝ շնորհավորելու խաղաղության վերահաստատման առիթով, եւ «վերականգնվեց նրանց փոքր մարմինը»¹⁷: Իսկ Պողիկարպոսը նախկին երեց Վալենտինի եւ նրա կնոջ մասին փիլիպեցիներին գրում է. «...նրանց թշնամի մի՛ համարեք, այլ ջանացէք ուղղել նրանց՝ որպէս համայնքի տառապած ու մոլորուած անդամների, որպէսզի փրկէք ձեր ամբողջական մարմինը»¹⁸:

Այսպիսով, վաղբրիստոնեական Եկեղեցին՝ հավաքը, պարզապէս մարդկանց խումբ չէր: Այդ մարդիկ մշտագո միության մեջ էին եւ մասնակցում էին եկեղեցական կյանքին որպէս «քույրեր» ու «եղբայրներ»՝ Եկեղեցին ունենալով որպէս իրենց մայր. նրանք մեկ կենդանի մարմնի անդամներն էին¹⁹:

Ժողովը որպէս մեկ մարմին. Առաքելական հայրերի շրջանին բնորոշ էր «Քրիստոսի մարմին» եզրույթը գործածել միաժամանակ մի քանի իմաստով: Նախ՝ քրիստոսաբանական իմաստով, որ նկատի ունի հենց Քրիստոսի մարմինը (հատկապէս՝ հարուցյալ), «քանզի Տէրը հանդուրժեց Իր մարմինը մահուան ենթարկել»²⁰: Ապա՝ եկեղեցաբանական իմաստով, որ դիտարկում է Եկեղեցին որպէս Քրիստոսի մարմին՝ «...թող մեր ողջ մարմինն առողջ լինի Յիսուս Քրիստոսով, եւ իւրաքանչիւրը թող հնազանդուի իր մերձաւորին ըստ այն աստիճանի, որին նա նշանակուած է Նրա շնորհով»²¹: Վերջապէս՝ հաղորդութեանական իմաստով, երբ Քրիստոսի մարմինը Ս. Պատարագի ժամանակ բեկվում եւ բաժանվում է հավատացյալներին, եւ վերջիններս հաղորդվում են Տիրոջ մարմնին՝ «...հացն զոր բեկանեմք ո՞չ ապաքին հաղորդութիւն է մարմնոյ Քրիստոսի, զի մի հաց՝ մի մարմին եմք բազումք, զի ամենեմք ի միոջէ հացէ անտի վայելեմք» (Ա. Կորնթ. Ժ. 16-17): Իգնատիոս Անտիոքացի շնորհապետներին ուղղված նամակում ասում է. «Աստուծո հացն եմ փնտրում, որը Հիսուս

¹⁷ Տէ՛ւ ՏՎ. ИГНАТИЙ АНТИОХИЙСКИЙ, Послание к смирнянам, «Писания мужей Апостоальских», Москва, 2008, էջ 368: Այս հատվածը հայերեն թարգմանվել է «...կատարումն անձանց իւրեանց». տէ՛ւ Թ. ԱԲՂ. ԶԻՐԻԿՅԱՆՅ, Սուրբ Իգնատիոս Անտիոքացի, էջ 20, այստեղ զետեղված է Կ. Պոլսի 1783 թ. տպագիր բնագիրը:

¹⁸ Տէ՛ւ «Զմիւռնիայի եպիսկոպոս եւ սուրբ նահատակ Սուրբ Պողիկարպոսի նամակը փիլիպեցիներին», յուն. թարգմ.՝ Ս. Գրքաշարեան, առաջ. եւ ծանօթ.՝ Մ. Ծ. վրդ. Աջապահեան, «Գանձասար», 2002, Երեւան, էջ 175:

¹⁹ Տէ՛ւ CH. YANNARAS, Elements of Faith, Edinburgh, 1991, էջ 121:

²⁰ «Բառնաբասի նամակը», յուն. թարգմ.՝ Ս. Գրքաշարեան, առաջ. եւ ծանօթ.՝ Մ. Ծ. վրդ. Աջապահեան, «Գանձասար», 2010, Լ., գլ. Լ., էջ 180-181:

²¹ «Կղեմէսի առաջին նամակը Կորնթացիներին», յուն. թարգմ.՝ Ս. Գրքաշարեան, ներած. եւ ծանօթ.՝ Մ. Ծ. վրդ. Աջապահեան, «Գանձասար», 1996, Զ., գլ. ԼԸ., էջ 208:

Քրիստոսի մարմինն է»²²: Իսկ Կղեմես Հռոմեացուն վերագրվող՝ Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակի հեղինակը, խոսելով փրկության մասին, ասում է. «Ձեմ կարծում, որ դուք անգիտանում եք, որ կենդանի Եկեղեցին Քրիստոսի մարմինն է»²³:

Բառնաբասի թղթում հանդիպող դրվագում հեղինակը հինկտակաբանյան երինջի զոհաբերությունը ներկայացնում է որպես Քրիստոսի զոհաբերության նախատիպ: Այդ ծիսակատարության ընթացքում երեխաները կարմիր բուրդն ու զոպան²⁴ փաթաթում էին փայտին եւ ցողում ժողովրդին, որ սրբվեն մեղքերից: Այնուհետեւ հեղինակը բացատրում է, թե այդ ամենն ինչ է խորհրդանշում, եւ հասնելով բրդին ու զոպային՝ ասում է, որ «...հիվանդ մարմինը զոպայի անմաքրությամբ է բուժվում»:
Այս հատվածի վերաբերյալ առկա են տարաբնույթ կարծիքներ, սակայն էականն այն է, որ մի կողմից ունենք ժողովուրդ, որ պետք է սրբվի մեղքերից, մյուս կողմից՝ ժողովրդի մեղքերից ազատումը ներկայացվում է որպես մարմնի բժշկություն:

Այս մասին առաքելական հայրերը, ինչպես նաեւ նրանցից առաջ Պողոս առաքյալը գրում են այնպես, ասես դա բավականին տրամաբանական է եւ մի նշանակությունից մյուսին անցնում են առանց որեւէ մանրամասն բացատրության: Այս երեք իմաստի միասնական ընկալումը պահպանվում է մինչեւ ԺԳ. դար: Արդեն այս շրջանում սքոլաստները «Քրիստոսի խորհրդավոր մարմին» արտահայտությունն սկսում են կիրառել բացառապես Եկեղեցու համար եւ, այդպիսով, սահմանափակում են «Քրիստոսի մարմին» եզրույթի եռակի ընկալումը. դրանք դառնում են միմյանցից անկախ: Եւ միայն Ի. դարում, որոշ նշանավոր աստվածաբանների շնորհիվ, շեշտադրվում է այդ երեք իմաստների փոխկապակցվածության անհրաժեշտությունը²⁵:

Քրիստոսի մարմինն առանց Հոգեգալստի եւ մեր անձնական մարմնացման չի կարող Եկեղեցի լինել: Այսինքն՝ մի կողմից Քրիստոսի մարմինը ներկայացվում է որպես համայնք, մյուս կողմից՝ հավատացյալները, միատեղ ու միախորհուրդ հավաքվելով, ի մի գալով, կազմում են մեկ

²² IGNATIUS OF ANTIOCH, To the Romans, "Ancient Christian Writers", N 1, New York, 1946, 7, էջ 83:

²³ «Հռոմի եպիսկոպոս Սուրբ Կղեմէսի Բ. նամակը Կորնթացիներին», յուն. թարգմ.՝ Ս. Գրքաշարեան, ներած. եւ ծանօթ.՝ Մ. Մ. վրդ. Աջապահեան, «Գանձասար», 2010, Ը., էջ 223:

²⁴ Ձոպան մանրատերեւ ու մանրածաղիկ խոտաբույս է, որի ցողուններից պատրաստում էին ջուր ցողելու համար նախատեսված մշտիկը:

²⁵ S. J. D. ZIZIOULAS, Communion and Otherness, London, 2006, էջ 289-291:

ամբողջական մարմին, որ է՝ Եկեղեցին: Երբ Պողոս առաքյալը Ա. Կորնթացիներին ժԲ. գլխում խոսում է Քրիստոսի մարմնի մասին, ընդգծում է, որ Նրա մարմնի անդամները հավատացյալներն են, եւ Սուրբ Հոգին է վերջիններիս կանչել եւ ի մի բերել: Իսկ «Տասներկու առաքյալների վարդապետության» մեջ հայտնի գոհաբանական աղոթքի մի հատվածում նկարագրվում է, թե ինչպես նշխարը սփռվեց լեռների վրա եւ ժողովելով՝ դարձավ մեկ, այդպես եւ Տիրոջ Եկեղեցին աշխարհի ծագերից թող ժողովվի Նրա արքայության մեջ²⁶: Հետեւաբար՝ Քրիստոսի մարմնի անդամները ոչ միայն մարմնական վերջույթներ են, այլ միավորված են՝ կազմելով մեկ ամբողջություն²⁷:

Եկեղեցու այս տեսակ միությունն անհրաժեշտությունը երեւում է նաեւ մեկ այլ պատկերում, որ հանդիպում է Կղեմես Հռոմեացու՝ Կորնթացիներին ուղղված նամակում: Այստեղ Եկեղեցին ներկայացված է որպես կազմակերպված ժողով՝ կազմված բազմաթիվ անդամներից, որոնք էական են մեկը մյուսի համար, ինչպես մարմնի անդամները՝ ամբողջ մարմնի համար: Սա լավ պատկերացնելու համար հեղինակը մատնացույց է անում ռազմիկներին, որոնք կարգապահության, ջանասիրության ու հնազանդության հրամանները: Ոչ բոլորն են եպարքոսներ, հազարապետներ կամ հարյուրապետներ, սակայն յուրաքանչյուրն իր տեղում կատարում է թագավորի եւ զորավարի հրամանները: Մեծերն առանց փոքրերի, իսկ փոքրերն առանց մեծերի չեն կարող գործել. նրանց փոխադարձ կապվածությունն ու միությունն է օգուտ բերում²⁸:

Եկեղեցու միության վերաբերյալ մեկ այլ պատկեր է առկա Հերմասի «Հովիվը» երկում: Այստեղ Եկեղեցին ներկայացվում է որպես մի շինություն, որը թեեւ բազմաթիվ քարերից է բաղկացած, սակայն թվում է, թե մեկ ամբողջական քար է: Այս քարը խորհրդանշում է բոլոր հավատացյալներին, որոնք, Տիրոջը հավատալով, Որդու միջոցով պետք է լինեն մեկ հոգի եւ մեկ մարմին²⁹: Վերջինս կարող է հիշեցնել ամուսնության խորհուրդը՝ այդ ու կին են, բայց մեկ մարմին, կամ՝ Քրիստոսի բնությունները՝ աստվածային եւ մարդկային, բայց մեկ միասնական բնություն, կամ՝ Սուրբ Երրորդության խորհուրդը՝ երեք անձ, բայց մեկ Աստված:

²⁶ Տե՛ս «Տասներկու առաքեալների վարդապետությունը», յուն. թարգմ.՝ Ս. Գրքաշարեան, առաջ. եւ ծանոթ.՝ Մ. Մ. վրդ. Աջապահեան, «Գանձասար», 2002, է., էջ 149:

²⁷ Տե՛ս J. D. ZIZIOULAS, Lectures in Christian Dogmatics, London, 2008, էջ 126-127:

²⁸ Տե՛ս «Կղեմէսի առաջին նամակը Կորնթացիներին», գլ. Լէ., էջ 207-208:

²⁹ Տե՛ս «Հերմասի Հովիվը», ռուս. թարգմ.՝ Մ. Բաբաջանյան, Երեւան, 1999, էջ 67:

Այդպես եւ Եկեղեցու խորհուրդն է՝ բաղկացած է տարբեր անդամներից, բայց այդ հավաքը մեկ մարմին է:

Հերմասի «Հովիվը» երկի մասին խոսելիս հարկ է նշել մեկ առանձնահատկություն, որով մարմնի վերաբերյալ նրա պատկերացումը էականորեն տարբերվում է առաքելական մյուս հայրերի ընկալումներից: Այստեղ Հերմասը շեշտում է, որ Աստծո Եկեղեցին կդառնա մեկ մարմին, մեկ հոգի, մեկ միտք միայն այն դեպքում, երբ նրանից կհեռացվեն չարերը, կեղծավորները, Աստծուն հայհոյողները, երկմիտները ու բոլոր նրանք, որոնք տարբեր անօրինություններ են գործում³⁰: Ի տարբերություն Հերմասի՝ Պողիկարպոս Զմյուռնացին ասում է. «...նրանց թշնամի մի՛ համարէք, այլ ջանացէք ուղղել նրանց՝ որպէս համայնքի տառապած ու մոլորուած անդամների, որպէսզի փրկէք ձեր ամբողջական մարմինը»³¹: Այսպես՝ «ամբողջական մարմնի» մեջ ի սկզբանե ընդգրկված են նաեւ մեղավորներն ու դատապարտվածները, ինչն առավել հարազատ է ավետարանական ոգուն՝ «...գարեգալկն իւր ծագէ ի վերայ չարաց եւ բարեաց, եւ ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց» (Մատթ. Ե. 45), կամ՝ «...զի ոչ եկի կոչել զարդարս, այլ՝ զմեղաւորս...» (Մատթ. Թ. 13): Հետեւաբար՝ մարդու մեղանշական լինելը ոչ թե վնասում է Եկեղեցուն՝ նրան պղծելու իմաստով, այլ Եկեղեցում է, որ հավատացյալը կարող է ձերբազատվել մեղքերից: Եկեղեցին սուրբ է, չնայած ունի նաեւ մեղավոր անդամներ: Այստեղ տարբեր են երկու հեղինակների տեսանկյունները: Իհարկե, ճիշտ է, որ մեղքը խանգարում է մարդուն՝ հաղորդվելու Աստծո եւ իր նմանի հետ: Սակայն մյուս կողմից՝ Աստծո հետ հաղորդությունն է, որ վերացնում է մեղքը: Երբ ոսկին կրակի միջով է անցնում, մաքրվում է, իսկ երբ կրակի միջով փայտն է անցնում, վառվում է:

Հաշվի առնելով այս շրջանի աստվածաբանության գործնական բնույթը՝ կարող ենք ենթադրել, որ հեղինակները, ամենայն հավանականությամբ, ճանաչում էին եւ որոշակիորեն գիտեին, թե ում մասին են գրում. նրանք, որ ունեին ոսկու ազնվություն, սակայն հանգամանքների բերումով մեղք էին գործել, բնական է, Եկեղեցուց դուրս չէին հանվում. վերջիններս այդ մեկ մարմնի անդամներն էին: Իսկ նրանք, որ մտել էին Եկեղեցի՝ նրան ներսից վնասելու նպատակով, պետք է հեռացվեին:

³⁰ Տե՛ս «Հերմասի Հովիվը», էջ 71:

³¹ Տե՛ս «Զմիւռնիայի եպիսկոպոս եւ սուրբ նահատակ Սուրբ Պողիկարպոսի նամակը Փիլիպեցիներին», էջ 175:

Իգնատիոս Անտիոքացին ժողովրդի ու նրա առաջնորդ եպիսկոպոսի միջեւ միության եւ համաձայնության հաստատման համար պահանջում է, որ բոլորը երգեն միաձայն, ասել է թե՛ կազմեն մեկ երգչախումբ³²: Այդ համաձայնությունը չի կրում մարդկային բնույթ, այլ բխում է այն ամենի շնորհատու բնույթից, ինչ կատարվում է Եկեղեցում: Ժողովուրդը, այդ թվում եւ եպիսկոպոսը, Եկեղեցում հավասարապես ծառայում են Աստծուն ու կատարում են Նրա կամքը: Վաղ Եկեղեցում ամեն ինչ սկսում եւ վերջանում էր հավատացյալների ժողովով: Աստված բոլոր ժամանակների համար տալիս է Եկեղեցուն՝ մարմնի միության պատկերը, որտեղ բոլոր անդամները միասին են, եւ ապրելով առանձին՝ չեն գործում սեփական կամքով, այլ՝ Աստծո կամքով³³:

Պաշտամունքի համայնական բնույթը. Համայնքի մեկտեղ հավաքվելն ի սկզբանե ունի ծիսական հենք: Նշենք, որ քրիստոնյան չի կարող միայնակ լինել նաեւ ծեսի ժամանակ: Ըստ Տերտուղիանոսի՝ «*Unus Christianus nullus Christianus*»՝ «մեկ քրիստոնյան քրիստոնյա չէ»: Այս իմաստով հետաքրքիր է Կղեմես Հռոմեացու կողմից «Երեքսրբեանի» մեջբերումը՝ «Քանզի Սուրբ Գիրքն ասում է. «Բյուր բյուրերով կանգնած էին նրա առջեւ եւ հազար հազարներով ծառայում էին Նրան, եւ գոչում էին՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ եւ Տեր Սաբաովթ, ողջ արարչությունը լի է Նրա փառքով»: Այնպես եւ մենք, միախորհուրդ հավաքվելով միատեղ, կարծես թե մեկ բերանից անդադար աղաղակենք նրան, որպեսզի դառնանք Նրա մեծ ու փառավոր խոստումների մասնակիցը»³⁴:

Աղոթքն ու պաշտամունքը նախ եւ առաջ համայնքային արարողություններ են: Տերունական աղոթքով Հիսուս իր աշակերտներին սովորեցնում է դիմել Հորը՝ ոչ անհատապես, այլ միասնաբար՝ «Հայր մե՛ր, որ յերկինս ես»: Միայն Հիսուս կարող էր ասել «Հայր իմ», քանզի միայն Նա է իրապես Աստծո միածին Որդին՝ Հոր նույն էությունից: Իսկ մենք կարող ենք ասել՝ «Հայր մեր», քանզի միայն Հիսուս Քրիստոսի հետ հաղորդությունը ենք իսկապես դառնում «Աստծո որդիներ»: Ուստի, «մենք» բառը որոշակիորեն պարտավորեցնող է. պահանջում է, որ դուրս գանք մեր «եւս»-ի փակ շրջանակից եւ մտնենք Աստծո որդիների համայնք: Այսպիսով, Տերունական

³² S^cus IGNATIUS OF ANTIOCH, To the Ephesians, "Ancient Christian Writers", N 1, New York, 1946, 4, էջ 61-62:

³³ S^cus ПРОТ. А. НИКОЛАЙ, Церковь Духа Святого, Париж, 1971, էջ 66:

³⁴ Մ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ, Սուրբ Կղեմես եպիսկոպոս Հռոմեացի (ծայրագույն վրդ. թեզ, անտիպ), Ս. էջմիածին, 1994, էջ 84:

աղոթքը, ինչպես նաեւ մյուս աղոթքները, լինելով խիստ անձնական, միեւնույն ժամանակ լիովին ընդհանրական են: Թեեւ յուրաքանչյուրն աղոթում է իր սրտով, բայց աղոթում է Աստծո բովանդակ ընտանիքի հետ հաղորդություն՝ ապրողների ու ննջեցյալների, ցանկացած ռասայի, մշակույթի, սոցիալական խավի պատկանող մարդկանց հետ:

Վաղբրիստոնեական Եկեղեցու ծեսում արտահայտված առանձնահատուկ կողմերից էր նաեւ առավել չափով շեշտադրված միասնական սպասումը: Եկեղեցին ապրում է պատմության մեջ, բայց նրա իրական ինքնությունն ապագայում է՝ «ի հանդերձեալն»: Քրիստոնեական առաջին համայնքները հարություն առած Քրիստոսի եւ Նրա երկրորդ գալստյան սպասումով էին ապրում: Նրանց հայացքն ուղղված էր դեպի պատմության վերջնակետը, եւ «Մարան աթա» (հմմտ. Ա. Կորնթ. ԺԶ. 22) արտահայտությամբ նրանց այս սպասումը դարձավ Ս. Պատարագի մաս³⁵: Արամբերեն «Մարան աթա» նշանակում է «Տերը եկել է», մինչդեռ «Մարանա թա» թարգմանվում է «Տէր, եկ»: Մի կողմից՝ Տիրոջը կանչելը ներդաշնակ է նրա գալստյան սպասմանը, որն արտահայտված է նաեւ Հայտնության մեջ³⁶, մյուս կողմից՝ Քրիստոս արդեն իսկ ներկա է Ս. Հաղորդության ժամանակ, երբ որպէս խորհրդավոր պատարագ մատուցվում է հավատացյալներին: Դիդախեում առավել ակնհայտ է այն շարակարգը, որտեղ գործածվում է «Մարան աթա» արտահայտությունը: Այստեղ ճաշակումից հետո գոհաբանական աղոթքի վերջում ասվում է. «Յիշիր, Տէր, Քո Եկեղեցուն, եւ փրկիր նրան ամէն շաբաթ եւ նրան կատարեալ դարձրու Քո սիրոյ մէջ, եւ նրան՝ սրբացածին, չորս հողմերից ժողովիր Քո արքայութեան մէջ, որը պատրաստել ես նրա համար... Ով սուրբ է, թող գայ, իսկ ով ոչ թող ապաշխարի, Մարան աթա. ամէն»³⁷:

Այսպիսով, նույն տառերն ունեցող, բայց տարբեր ընդհատումով արտասանվող այս երկու արտահայտությունները ներքին խորհրդով միահյուսում են Քրիստոսի՝ միաժամանակ ներկա լինելու եւ ապագայում գալու իրողությունները: Ստացվում է հետեւյալ պատկերը. համայնքը, որ ի մի հավաքված սպասում է Քրիստոսի երկրորդ գալստյանը, մեկ մարմին՝ Եկեղեցի կարող է լինել միայն այն դեպքում, եթե Քրիստոս ներկա է նրա մեջ: Ըստ այդմ՝ կարելի է ասել՝ «արդեն իսկ, բայց ոչ դեռեւս», այսինքն՝

³⁵ Տէս J. D. ZIZIOULAS, Lectures in Christian Dogmatics, էջ 127:

³⁶ «Ասաց որ վկայեացն զայս. Գամ ես վաղվաղակի. ամէն: Եկն Տէր Յիսուս Քրիստոս» (Յայտն. ԻԲ. 20):

³⁷ Տէս «Տասներկու առաքեալների վարդապետութիւնը», էջ 150-151:

Աստծո արքայությունն արդեն իսկ եկել է, բայց սպասում ենք վախճանին, երբ Աստված կիջնի եւ կլինի ամեն ինչ՝ ամեն ինչի մեջ:

Կարող ենք եզրակացնել՝ առաքելական հայրերի ընկալումը Եկեղեցու՝ որպես ժողովի վերաբերյալ, տրամաբանական շարունակության մեջ է Ավետարանի եւ Պողոս առաքյալի աստվածաբանության հետ: Ժողովի հիմնական նպատակը նախ միությունն է, որով պետք է վկա լինեն աշխարհին, բայց, որ ավելի կարեւոր է, այդ միությունը անհրաժեշտ է Քրիստոսի հետ հաղորդության համար: Այսինքն՝ մարդիկ, հաղորդ լինելով միմյանց, կազմում են մեկ մարմին, եւ վերջինս իր հերթին, որպես մեկ ամբողջություն, հաղորդվում է Քրիստոսին՝ կազմելով Աստծո ընտանիքը՝ Եկեղեցին: Այսպիսով, առաքելական հայրերն իրենց հատուկ ձեռով գրում են ժողովված համայնքի միության անհրաժեշտության մասին:

Եկեղեցին որպես շինություն. Վաղ քրիստոնեության եկեղեցաբանությունն առավել գործնական էր, քան՝ վերացական եւ տեսական: Նոր Կտակարանում մոտ 80 տեղիներից 57-ում ἐκκλησία բառը գործածված է որոշակի տեղում ժողովի իմաստով: Զիզիուլասը փորձել է խմբավորել այդ հատվածները հետեւյալ կերպ՝ ա. տեղիներ, որ մատնանշում են որոշակի քաղաքի եկեղեցի (եզակի), բ. որոնք մատնանշում են եկեղեցիներ (հոգնակի), որ քաղաքից առավել ընդարձակ տարածք են ընդգրկում կամ առանց տեղայնացման են, գ. տեղիներ, որոնք ընդգրկում են «Եկեղեցի» կամ «Աստծո Եկեղեցի» եզրույթները առանց որոշակի տեղայնացման, դ. որոնք բովանդակում են «առտնին եկեղեցի» արտահայտությունը³⁸: Այս վերջինի պարագայում էական է, որ տունը Եկեղեցի է կոչվում նրա համար, որ այդտեղ մատուցվում է Ս. Պատարագ: Եկեղեցական մյուս գործողությունները կարող են կատարվել քրիստոնեական տներից դուրս: Օրինակ՝ քարոզչությունը կարող էր լինել սինագոգում, հրեական շինություններում կարող էր պաշտամունք մատուցվել (հմմտ. Գործք. Բ. 46): Սակայն կար մի բան, որը Եկեղեցին քրիստոնեական տնից դուրս երբեք չէր անում, եւ դա Ս. Հաղորդությունն էր. «Հանապազօր կանխեալ միաբանութեամբ ի տաճարն, եւ առնին բեկանէին զհացն, եւ առնուին կերակուր ուրախութեամբ եւ միամտութեամբ սրտի օրհնէին զԱստուած» (Գործք. Բ. 46): Այն տները, որտեղ սովորաբար հավաքվում էին Ս. Հաղորդության համար, կոչվում էին իրենց տերերի անունով, իսկ հետագայում՝ Գ. դարակեսերից, երբ քրիստոնյաները հասարակական շինություններն սկսում են բացահայտորեն

³⁸ S. J. D. ZIZIULAS, Eucharist, Bishop, Church, Brookline, 2001, էջ 45:

վերածել հավաքատեղիների կամ կառուցում են նորերը, «տուն Եկեղեցու» հասկացությունն ընկալվում է նաեւ շինության իմաստով³⁹:

Սակայն առաքելական եւ հետառաքելական շրջանում «շինությունը» կամ «տունը» ընկալվում են միայն որպես պատկեր՝ այնպես, ինչպես «Քրիստոսի մարմին» կամ «Քրիստոսի հարս» պատկերները: Եւ ինչպես «Քրիստոսի մարմին» ընկալումը չենք կարող բաժանել Եկեղեցու հաղորդութենական փորձառությունից, այնպես եւ՝ «շինությունը» կամ «տունը»: Վերջիններս չեն ընկալվում որպես անշունչ, նյութական կառույցներ, այլ՝ որպես մարմին, որ ապրում, աճում եւ հասունանում է (հմմտ. Ա. Կորնթ. ԺԴ. 4, Ա. Թես. Ե. 11):

Այս հոգեւոր իմաստով շինությունն առհասարակ կարող է վերաբերել ինչպես համայնքին, այնպես էլ անհատին: Բառնաբասի նամակում ասվում է. «Լինենք հոգեւոր, լինենք Աստծոյ կատարեալ տաճարը»⁴⁰: Սակայն այստեղ խոսքն այն մասին չէ, որ յուրաքանչյուրը պետք է առանձնանա՝ իբրեւ արդարություն հասած ամփոփվելով իր մեջ, այլ այս տաճարը հնարավոր կլինի կառուցել միատեղ հավաքվելով⁴¹: Իգնատիոս Անտիոքացին ասում է, որ եփեսացիները, լինելով Հոր տաճարի քարերը եւ պատրաստված լինելով Հայր Աստծո շինություն համար, շնորհունեցին սուտ ուսուցիչներին⁴²:

Մյուս կողմից՝ Բառնաբասի նամակում առկա է այն միտքը, որ յուրաքանչյուր քրիստոնյա եւս ընկալվում է որպես տաճար: Տաճարի եւ մարդու կերտվածքը նույն տրամաբանությունն ունի: Ինչպես հրեական տաճարում առանձնացված էր Սրբություն Սրբոցը, որ Աստծո տեղն էր, այնպես եւ մարդու մեջ սիրտն է Աստծո տեղը: Դրա համար Բառնաբասը, մեկնելով Եզեկիել ԼՁ. 26-ը⁴³, ասում է, որ մեր սիրտը Աստծո տաճար է եւ բնակության վայր⁴⁴: Ինչպես նաեւ հակադրելով քարեղեն ու հոգեւոր տաճարները՝ հակադրում է նաեւ հրեաներին եւ քրիստոնյաներին՝ ասելով, թե հրեից տաճարը, որ կործանվեց թշնամիների կողմից, այժմ վերականգնվում է այդ թշնամիների հպատակների (քրիստոնյաների) կողմից:

³⁹ Տէս Ն. ՂԱՐԻՅԱՆ, «Եկեղեցի» եզրի հոլովույթը գաղափարից դեպի շինություն, «Հանդէս Ամսօրեալ», Թիւ 125, 2011, էջ 561-580:

⁴⁰ «Բառնաբասի նամակը», գլ. Դ., էջ 169:

⁴¹ Անդ:

⁴² Տէս IGNATIUS OF ANTIOCH, To the Ephesians, "Ancient Christian Writers", N 1, New York, 1946, 9, էջ 63:

⁴³ «Տաց ձեզ սիրտ նոր, եւ ոգի նոր նորոգեցից ի ձեզ, եւ հանից զսիրտն քարեղէն ի մարմնոց ձերոց, եւ տաց ձեզ սիրտ մարմնեղէն» (Եզեկ. ԼՁ. 26):

⁴⁴ «Բառնաբասի նամակը», գլ. Զ., էջ 176:

Բայց այդ տաճարն արդեն իսկ գոյություն ունի, քանի որ Աստված բնակվում է քրիստոնյաների մեջ: Նա Ինքն է, որ մեր մեջ բնակվելով, խոսում, ուսուցանում եւ մարգարեանում է (Բառնաբաս ԺԶ.)⁴⁵:

Հերմասը հիմնականում շեշտադրել է բարոյագիտական կողմը: Նա ասում է, որ հոյակապ շինություններ ու ոչ պիտանի կացարաններ կառուցողը չի մտածում իր հայրենիք վերադառնալու մասին (հմմտ. Առակ Ա.), իսկ Թ. առակում բավական պատկերավոր նկարագրում է տաճարի (աշտարակ) շինարարությունը: Այն կառուցված է վեմի եւ դռան վրա, որն Աստծո Որդին է (հմմտ. Առակ Թ. 12), իսկ քարերը նրանք են, որոնք ընդունել են Աստծո Որդու անունը: Սակայն կան քարեր, որոնք թեեւ ընդունել են Աստծո Որդու անունը, սակայն համապատասխան հանգերձանք (առաքինություններ) չունեն, ուստի նրանք չեն կարող շինության մեջ լինել եւ մի կողմ են շարտվում⁴⁶:

Այստեղ, թվում է՝ Հերմասը չափազանց խիստ է արտահայտվում, քանզի հայտնի է՝ Եկեղեցին նաեւ մեղավորների համար է, որ փրկվեն իրենց մեղքերից ու մահից: Եկեղեցուց դուրս այլընտրանքային փրկություն չկա, հետեւաբար մեղավորին հեռացնելն անտրամաբանական է: Սակայն սրանով Հերմասը մեր ուշադրությունը հրավիրում է մի շատ կարեւոր խնդրի վրա, որ է՝ Եկեղեցու միությունը: Երբ շինության մեջ մնում են նրանք, որոնք համակված են Տիրոջ զորության, ամբողջ աշտարակը երեւում է ասես մեկ քարից կերտված⁴⁷: Իրականում Եկեղեցու բաժանումը հակասական եւ անտրամաբանական իրողություն է⁴⁸: Այսպես՝ «անօրինություններ գործողները, չարերը, Աստված հայհոյողները, երկմիտները», լինելով այդպիսին, իրենք են իրենց դուրս դնում Եկեղեցուց: Այդ պատճառով «շինարարության դադար եղավ»⁴⁹, որ նրանք ապաշխարեն եւ մտնեն աշտարակ»⁵⁰:

⁴⁵ Անդ, գլ. ԺԶ., էջ 201-203:

⁴⁶ Տէս «Пастырь» Ерма, «Писания мужей апостольских», изд. совет Русской Православной Церкви, 2008, էջ 295:

⁴⁷ Տէս անդ:

⁴⁸ Տէս ПРОТ. Г. ФЛОРОВСКИЙ, О границах Церкви, «Путь», 1934, № 44, էջ 15-26:

⁴⁹ Այստեղ շինարարության ավարտը վախճանաբանական նշանակություն ունի: Այսինքն՝ Տիրոջ մոտալուտ գալստյան սպասումը կար, սակայն աստիճանաբար նկատում ենք, որ Եկեղեցին սկսում է ընկալվել ոչ թե որպես աշխարհից առանձին մի փոքրիկ համայնք, այլ որպես համայնք, որ պատրաստվում է ողջ աշխարհը գրավել. աշտարակի շինարարությունը դադարեցվել է, այսինքն՝ երկրորդ գալուստը «հետաձգվել» է, որովհետեւ բոլոր քարերն էլ հնարավորություն ունեն տեղ գտնելու աշտարակի շինության մեջ, եթե ապաշխարեն:

⁵⁰ Տէս «Пастырь» Ерма, «Писания мужей апостольских», էջ 296:

Այսպիսով, առաքելական հայրերի գրվածքներից տեսնում ենք, որ Եկեղեցուն՝ որպես շինություն գաղափարն ընկալվում է միայն հոգեւոր եւ այլաբանական իմաստներով: Կարելի է առանձնացնել «շինության» ընկալման երեք մակարդակ՝ անձնական, համայնական եւ վախճանաբանական: Այստեղ բացարձակապես խոսք չի կարող լինել նյութական, քարից կամ փայտից կառուցված շինության մասին, որն ընկալվում է որպես աստվածաբանական ստորոգություն, որպես եկեղեցաբանության առանձին բաժին:

РЕЗЮМЕ

Апостольскими отцами церковь не воспринимается сама по себе, отдельно, а в соотношении с другим явлением или событием, например, Богом, конкретной местностью или окружающим ее миром. В этом смысле церковь касается как всех христиан в общем, так и отдельно взятых верующих, проживающих в конкретной общине. С другой стороны, сущность церкви исходит от ее связи с Богом. Иными словами, если нет этой двусторонней встречи или какой-либо из этих сторон, то не может быть и церкви.

Каждый из апостольских отцов свойственным ему способом и образами («тело», «хор», «возведенная из одного камня церковь» и «армия») подчеркивает необходимость органического единения церкви, ибо люди, общаясь друг с другом, должны составить одно тело, и приход, будучи одним целым, должны приобщиться ко Христу, дабы составить церковь — Божью семью. Из трудов апостольских отцов становится ясно, что идея «церковного здания» воспринимается только в духовном и аллегорическом смысле.

Можно выделить три уровня восприятия здания: личное, общинное и апокалиптическое. Здесь не может идти речи только о материальном, построенном из камня и дерева здании, которое будет восприниматься как богословская категория, как отдельный раздел экклесиологии.

SUMMARY

According to the Apostolic Fathers, the Church is not understood by herself, but rather by the relationship with another reality or phenomenon, such as God, a

specific location or the world around her. In this regard, the Church refers to all the Christians together in general, as well as to a specific community living in one place. On the other hand, the identity of the Church stems from the relationship with God. In other words, if this bilateral meeting or any of the parties is non-existent, there cannot be a Church either.

Each of the Apostolic Fathers stresses the need for organic unity of the Church in a special way and with the pictures of “body,” “chorus,” “monolith church,” and “army”, because people, by communion with each other, should form one body, and that community as a whole should be in communion with Christ in order to make the family of God, i.e. the Church.

Writings of the Apostolic Fathers make it clear that the idea of “church building” is perceived only in spiritual and allegorical sense. One can distinguish three levels of perception of the word “building”: personal, communal and eschatological. This in no way refers to the material building made of stone and wood, which will be perceived as a theological category, as a separate section of ecclesiology.



ՆԵՐՔՈՂԵԱՆ Ի ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ԱՄԵՆԱԻՐՅՆԵԱԼ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ԱՍԱՅԵԱԼ Ի ՆԵՐՍԵՍԷ, ՏՆԱԻՂԱՅ ԽՈՍՏԱՄԱՐ ՆՄԻՆ ԸՆԶԱՅԵԱԼ ՏԱՌԱՅԷ

Սկիզբն է համարում

Եւ ապա զինչ ետես զինքն ի յուսոյն
վրիպեալ,
Քանզի կապեցին, գանեցին,
նախատեցին,
Անարգեցին եւ ի լրումն ամենայնի ի
խաչն¹ բարձրացուցին,
Եւ նա կայր մերձ առ² խաչին
Եւ զայսոսիկ զմտաւ ածեալ հեծեծէր,
Քանզի ոչ գիտէր զխորհրդոյն
զարուրթին,
Զի թէ ծանուցեալ էր, անկար էր նմա
Զբանն Աստուծոյ որպէս զՈրդի
դաստիարակել,
Այլ մարմնով ակն ունէր թագաւորել:
Եւ այս ի վախճան եկն խաչին,
Եւ նա կայր առ խաչն³,
Հայէր ի խաչն եւ ի բանս հրեշտակին
Եւ մրրկաւ անյուսութեան ծփէր,
Եւ հեզիկ զառուս արտասուացն
իջուցեալ ընդ⁴ ծնաւտան՝
Պշուցեալ ի շարշարանս Որդւոյն
փղծկէր⁵:
Այլեւ բնական գութն, մայրական
աղէտն,
Մննդեան սէրն, աշխատութեամբ
դիեցուցանելն,
Յեգիպտոս փախչելն, ի Հերովդիէ
պարուրելն⁶,
Ամենայն⁷ առաջի աշացն
Կերպարանէր ընդ խաչին եւ ասէր.
«Զինչ աւգտեցայ ի փախչելոյն,
Զինչ ի խնամաւք պահելոյն,

¹ Ժ, Ժ, Ժ, Ժ

² Ժ, Ժ, Ժ, Ժ

³ Ժ, Ժ, Ժ, Ժ

⁴ Ժ, Ժ, Ժ, Ժ

⁵ Ժ, Ժ, Ժ, Ժ

⁶ Ժ, Ժ, Ժ, Ժ

⁷ Ժ, Ժ, Ժ, Ժ

Զի ահա զպտուղ երկանց⁸ իմոց⁹
Տեսանեմ ի խաչդ¹⁰ տարապարտ
տարածեալ:
Ընդէր¹¹ յորժամ այդ կայր առաջի,
Ոչ թոյլ ետ հրեշտակն Հերովդէի
Ի ստնդիայ¹² հասակն¹³ զքեզ խողխողել,
Զի թերեւս յայնժամ ունէի յայնժամ¹⁴
մխիթարութիւն:
Իսկ այժմ սնար, զարգացար¹⁵,
Երկնից արքայութեան աւետարանիչ
եղեր,
Զհիւանդս բժշկեցեր, զկոյրս
լուսաւորեցեր,
Հացիւ զապերախտ ազգս յագեցուցեր,
Զջուրն ի գինի նոցին փոխեցեր,
Աշակերտս աշակերտս ժողովեցեր:
Եւ այժմ ամենայն երախտագործութիւն
քո ունայնացաւ,
Աշակերտքն փախեան,
Բժշկեալքն ի քէն ապտակեցին,
Կերողքն զհաց¹⁶ քո ընդ երեսդ թքին,
Եւ գինւոյն ըմպողքն կատակեցին,
Եւ միայնակ ի խաչդ բարձրացուցին,
Եւ զիս այսպիսի տեսոյս սրովն
խոցոտեցին»:
Յայս կիրս եւ յերր տարակուսի
Եւ յեւ¹⁷ առաւել իմա՛ կացեալ առ խաչին
Յիսուսի զմայրն նորին,
Եւ այս սգոյս¹⁸ մխիթար ի սաստիկ վշտէն
Զբարբառ Որդւոյն, որ ասաց.
«Կին դու, ահա՛ Որդի քո»,

⁸ Ժ, Ժ, Ժ, Ժ

⁹ Ժ, Ժ, Ժ, Ժ

¹⁰ Ժ, Ժ, Ժ, Ժ

¹¹ Ժ, Ժ, Ժ, Ժ

¹² Ժ, Ժ, Ժ, Ժ

¹³ Ժ, Ժ, Ժ, Ժ

¹⁴ Ժ, Ժ, Ժ, Ժ

¹⁵ Ժ, Ժ, Ժ, Ժ

¹⁶ Ժ, Ժ, Ժ, Ժ

¹⁷ Ժ, Ժ, Ժ, Ժ

¹⁸ Ժ, Ժ, Ժ, Ժ

Եւ ցաշակերտն՝ «Ահա՛ մայր քո»¹,
 Եւ այժմ գովացումն սրտի,
 Ոչ ի բանիս² զաւրութենէն,
 Այլ ի միածնին³ ձայնէն:
 Զի այսու յայտ արար, թէ՛
 «Ես գնամ, փոխիմ յաշխարհէ, յերկինս
 Եւանեմ,
 Մեռանիմ, թաղիմ, այլ ի քէն ոչ⁴
 տեսանիմ,
 Ոչ եւս այլ քեզ սպասաւորեմ,
 Եւ վասն այսորիկ դա քո որդի իմ
 փոխան»,
 Տեսանէս, զի ոչ էր բանս
 մխիթարութեան,
 Այլ եւս յուսահատութեան,
 Այլ ձայնն սփոփեաց, ձայնն գովացոյց
 Զպասքումն ի սէրն եւ ի գութ Միածնին:
 «Զի միայն զքո ձայնդ,– ասէ,– ես⁵ լուայ
 եւ մխիթարիմ,
 Զի խոցոտեցայ, զի միայն դու
 ակնարկեցեր յիս, Յիսուս,
 Եւ սփոփանս է⁶ ինձ բաւական»:
 Այսպէս կացեալ մերձ⁷ խաչին,
 Լուաւ զծարաւի ասելն Միածնին:
 Եւ վերստին խռովեալ վշտացեալ⁸,
 Զաւձեացն⁹ հարեալ կործանեալ անկաւ,
 Զի կաթ ի¹⁰ մի շուր տալ կարաւտացաւ:
 Ապա խոնարհեալ զգլուխն տեսաւ
 Եւ ի կենցաղոյս, զի վճարեցաւ,
 Եկեալ համարձակ ի խաչն մերձեցաւ
 Եւ զձեռն¹¹ արեամբն ներկեալ յինքն¹²
 ընկալաւ:
 Կարկառ բերանոյն հանդէպ մերձեցոյց,
 Զառուս արտասուաց ի նոյն կաթեցոյց,
 Եւ զայս ասելով զնոյն համբուրեաց:

¹ Ըմմտ. Յով. Ժ. 26–27

² Ժ, Ժ Բանէս

³ Ժ միածնին, Ժ միածնի

⁴ Ժ, Ժ շրջ. ի քէն ոչ

⁵ Ե եւս

⁶ Ժ, Ժ չիք է

⁷ Ժ, Ժ + Ի

⁸ Ժ, Ժ վշտացաւ

⁹ Ժ, Ժ եւ զաւձեացն

¹⁰ Ժ, Ժ չիք ի

¹¹ Ժ, Ժ չիք համարձակ ի խաչն մերձեցաւ եւ
 զձեռն

¹² Ժ, Ժ ինքն

«Որդեակ իմ Յիսուս, այս ձեռն է,
 Որ ի կաւոյ զաշս¹³ կուրին գոյացոյց,
 Էմմանուէլ¹⁴, անդրանիկ իմ,
 Այս մատունք¹⁵ է, որ զհինգ նկանակ
 բազմացոյց,
 Եւ զհինգ հազար թիւն յագեցոյց:
 Միածին Կուսի քո մաւրս այս մարմինն,
 Որ յարգանդս¹⁶ իմ անսերմն յղացաւ¹⁷
 Եւ անցաւ կուսութեամբ ծնաւ,
 Եւ սրբութեամբ սնեալ ծաղկեցաւ,
 Եւ տգեղութեան մեղաց վերոյ
 փայլեցաւ,
 Եւ գեղեցիկ քան զորդիս¹⁸ մարդկան¹⁹
 գտաւ:
 Վասն է՛ր այժմ անպարտ մեռար²⁰,
 Կամ ընդէ՛ր յարեան²¹ քո ներկէր,
 Կամ զիարդ գքեզ փրկել չկամեցար,
 Կամ ընդէ՛ր մաւրս չողորմեցար²²,
 Եւ նախ քան զայս յերկրէ զիս տարար»:
 Արդ, այսպիսի ողբովք հանդերձ
 Յոհաննու²³,
 Եւ աստուածասէր Յովսէփաւ եւ
 Նիկողեմոսիւ²⁴
 Իջուցեալ զԱստուածն մարմնացեալ
 Պատեալ եղին ի գերեզմանին²⁵ ^{26ա}:
 Եւ յապա²⁷ հովացեալ այնուհետեւ
 Աստուածածին Կոյսն,
 Եւ առ ինքն եկեալ հանդերձ բարեշնորհ
 կանամբքն,
 Կրկին յաճախէր զաշխարհանսն շուրջ
 զգերեզմանաւն:
 Մոռացեալ զերկիւղ հրէիցն²⁸,

¹³ Է աշս

¹⁴ Է Էմմանուէլ

¹⁵ Է + քո

¹⁶ Ժ, Ժ յարգանդիս

¹⁷ Ժ յղացար

¹⁸ Ժ, Ժ չիք քան զորդիս

¹⁹ Ժ, Ժ + քան զոր

²⁰ Ժ, Ժ մեռանէր

²¹ Ժ յարին

²² Ժ չիք կամ ընդէ՛ր մաւրս չողորմեցար

²³ Ժ Յոհաննու

²⁴ Ժ, Ժ Նիկողեմոսիւ

²⁵ Ժ գերեզմանն

^{26ա} Ըմմտ. Յով. 19:38–42

²⁷ Ժ, Ժ ապա

²⁸ Ժ, Ժ հրէից

Անտես արարեալ զմախանս
 քահանայիցն,
 Արհամարհեալ¹ զսուր զինուորացն,
 Ողբայր պարկեշտ կանամբքն,
 Որք կոծէին զտարապարտ,
 Եւ զանիրաւ դատաւճիռ մահուն:
 Զոր Զաքարիաս ասաց յառաջագոյն, թէ.
 «Յաւուր² յայնմիկ սաստկասցի կոծ
 յերուաղէմ,
 Իբրեւ զկոծ որդւոցն Ամովսայ.
 Եւ զկոծ նոնենեաց³ կոտորելոց ի⁴
 դաշտի,
 Եւ կոծեսցին իբրեւ ի վերայ
 անդրանկան սիրելւոյ,
 Արք նոցա առանձինն,
 Եւ կանայք նոցա առանձինն⁵»^{6բ}:
 Եւ յայպէս երջանիկ կանամբքն
 Նստէր շուրջ զգերեզմանան⁷ յողբս
 Յերեկոյէ ուրբաթուն մինչ յարշալոյս⁸
 միաշաբաթին՝
 Սպասեալ յուսոյ յարութեանն,
 Ըստ անսուտ ի Գալիլեա նորին Տեառն
 խոստմանն^{9գ}:
 Անց ուրբաթն եւ նոքա ողբովք
 երթեւեկութեամբ ի նոյն կանխէին,
 Եկն շաբաթն, եւ անդ նստեալ
 դեգերէին:
 Եւ յերեկոյի շաբաթուն
 Ի խոր գիշերոյն ի բացեալ¹⁰ ի
 պահապանացն¹¹,
 Յակճիռս գոլով նոցա տքնութեամբ¹²
 նայէին ի տապանն:
 Եւ հաշ շարժումն երկրի, դղրդումն
 վայրացն,

Պատառումն¹³ վիմացն, տատանումն
 յատակին,
 Փայլուն¹⁴ երկնաւոր զաւրացն¹⁵,
 Շողացումն անմարմին բանակացն¹⁶,
 Պար զուարթնոցն զաւրաց շուրջ
 զգերեզմանան¹⁷,
 Յորոց յահէն խոռվեցան պահապանքն,
 Եւ եղեն իբրեւ զմեռեալս^{18 19ա}:
 Պատասխանի ետ հրեշտակն երջանիկ
 կանանցն.
 «Դուք մի՛ երկնչիք, ձեզ աւետիս²⁰ է եւ ոչ
 երկիւղ:
 Յիսուս²¹, որպէս յուսայք, յարեալ,
 Խաչեալն կենդանացաւ:
 Նազաւրացի սաղարթ ի ծոցոյ
 գաւազանէդ, որ Յեսսեայ,
 Ո՛վ կոյս Մարիամ, անթառամ
 ծաղկեցաւ^{22բ},
 Վարդն կարմրեփեան թփոյդ²³
 ցնծութեան անմահ փթթեցաւ,
 Պտուղն արհնեալ ճոռոյդ արհնութեան
 ահա խայծեցաւ:
 Մի՛ երկնչիք, այլ ցնծացէ՛ք,
 Յիսուս՝ զոր խնդրէքն, յարեալ,
 Տեղիս թափուր է կտաւաւքն»^{24գ}:
 Զայս լուեալ սրբոց կանանցն
 Փութացան աւետարանել աշակերտացն
 Ըստ բանի հրեշտակին,
 Որոց եւ պատահեաց Տէրն^{25ա}:
 Իսկ Կոյսն Աստուածածին դանդաղեալ
 Մերձ նստաւ գերեզմանին՝ ասելով.
 «Ինձ զինչ մխիթար աւետեաց
 յարութեանդ,
 Յորժամ ոչ տեսանեմ զյարուցեալն, եւ
 փափագեմ,

¹ **Ժ, Ժ** արհամարհեալ

² **Ժ** յաւուրն

³ **Ժ, Ժ** նոնենեացն

⁴ **Ժ, Ժ** ի

⁵ **Ժ** ի Ժ եւ կանայք նոցա առանձինն:

^{6բ} Հմմտ. ԶԱՔ. 12:11-14

⁷ **Ժ** գերեզմանաւ

⁸ **Ժ, Ժ** յարշալոյսն

^{9գ} Հմմտ. ՄԱՐԿ. 10:33-34, ՄԱՏԹ. 27:63

¹⁰ **Ժ** բացեալ

¹¹ **Ժ** պահապանաց

¹² **Ժ, Ժ** տաքնապութեամբ

¹³ **Ժ, Ժ** եւ պատառումն

¹⁴ **Ժ, Ժ** փայլուն

¹⁵ **Ժ** զօրաց

¹⁶ **Ժ, Ժ** բանակաց

¹⁷ **Ժ** զգերեզմանաւ

¹⁸ **Ժ, Ժ** զմեռեալ

^{19ա} Հմմտ. ՄԱՏԹ. 28:4

²⁰ **Ժ, Ժ** աւետարան

²¹ **Ժ, Ժ** Քրիստոս

^{22բ} Հմմտ. ԵՍ. 11:1

²³ **Ժ, Ժ** փթոյթ

^{24գ} Հմմտ. ՄԱՏԹ. 28:5-7

^{25ա} Հմմտ. ՄԱՏԹ. 28:8

Զի զոր մեռեալ ընդգրկեալ եղի
արտասուաւք ի տապանդ,
Յարուցեալ տեսից եւ ողջագործեալ
զուարճացայց:
Յորժամ ոչ տեսանեմ զորդեակն, թէ եւ
յարուցեալ է,
Ինձ որպէս մեռեալ համարեալ»:
Զայս ասելով ողբայր արտասուաւք¹,
Եւ յունայն գերեզմանն նայելով լայր եւ
ասէր.
«Որդեակ, ոմանք գողացեալ զքեզ
համբաւեն,
Եւ այլք՝ յարուցեալ,
Եւ ես յայս² տարակուսանացս միջի
երերեալ:
Յոյց զճշարտութիւն խորհրդոյս,
Յիսուսն»³:
Եւ մինչ դեռ զայս ասելով լայր՝
խոնարհեցաւ ի գերեզմանն,
Եւ տեսանէ դարձեալ երկուս հրեշտակս,
Զի նստին մի ի սնարից եւ մի յանոտից,
Ուր կայր մարմինն Յիսուսի⁴,
Որք եւ հարցին զնա զպատճառս
արտասուաց:
Ասէ ցնոսա. «Յիս⁵ հարցանէք,
Թէ զի լաս ի գերեզմանդ նստեալ:
Զմիաճինն իմ սպանեալ այդր թաղեցին,
Եւ այժմ գողացեալ ոչ գիտեմ ո՞ր եղին
եւ զիմոր դադարիմ ի լալոյ»:
Զայս ասելով եւ ի խոնարհ ի
հրեշտակսն նայելով,
Ետես զնոսին զարհուրեալս,
Եւ վաղվաղակի երկիւղիւ յարուցեալս,
Կարծեալ թէ ոք ի հրէիցն⁶ եկն ի թիկանց
կոյս նայեցաւ⁷,
Եւ ետես զնոյն ինքն գժրիստոս իւր առ
ընթեր,
Եւ ոչ ծանեալ պատրուակեալ
զաւրութեամբն,

Որ եւ նա հարցանէր. «Կին դու, զի լաս,
զո՞ խնդրես»:
Իսկ նա, աւելորդ համարեալ զմիանգամ
ասացեալն երկրորդել, ասէ.
«Ո՛վ պարտիզպան, եթէ դու բարձեր
զնա, ասա ինձ՝ զի առից:
Միաճին⁸ իմ էր, եւ ոչ գոյ, այլ մխիթար
մարս զկնի նորին,
Թերեւս մեռեալ մարմնովն, փոքր ինչ
մխիթարեցայց ի սգոյս»:
Ասէ ցնա Յիսուս «Մարիամ»,
Եւ ընդ բանին զուարճացոյց ճանաչել
զանձն,
Թէ նոյն ինքն է իւր Որդին,
Իսկ նա սկսաւ ձայնել ցնծութեամբ՝
«Րաբունի»,
Զի յետ կրկին ծննդեանն⁹ յարգանդէ
կոյս գերեզմանին,
Պատկառէր կոչել իւր¹⁰ որդի,
Այլ հասարակաց Տէր եւ վարդապետ
Եւ նոյն ժամայն ծնաւդական¹¹ գթովն
Ողջագործել կամեցաւ զՄիաճինն:
Առ որ յաւել. «Մի՛ մերձենար յիս,
Զի չեւ եւս ելեալ եմ ես առ Հայրն իմ¹²»:
Յորժամ ի քէն ծնայ¹³ ըստ երկրային
կենցաղոյս,
Քոյով ձեռաւքդ շաւշափեալ գգուեցայ
որպէս երկրածին մարմին¹⁴,
Իսկ վերստին ծնեալ ի կոյս վիմէդ,
Երկնային Հաւոր երկնայնոյ¹⁵ տուր տեղի
գգուանաց ձեռին,
Զի առցէ զերախայրիս պատարագի
անդրանիկս»:
Զայս ասելով ազդեաց նմա¹⁶ զպատիւ
աստուածութեանն իմանալ,
Թէ Բանն Աստուծոյ է առ¹⁷ ի նմանէ
Ծնեալ երկնային աթոռոյն ժառանգ,
Եւ ոչ միայն յինքենէ, մարմին երկրային

¹ d, t արտասուաւ² t յայս³ e ձեռագրի՝ մեզ հասանելի թվային տարբերակում բացակայում են 266 եւ 267 էջերը (...երկրային կենցաղոյս)⁴ Հմմտ. Յով. 20:12⁵ t յիս⁶ t հրէից⁷ t հայեցաւ⁸ t Միաճինն⁹ t ծննդեան¹⁰ t շրջ. իւր կոչել¹¹ d ծնողական¹² Հմմտ. Յով. 20:11-17¹³ t շրջ. ծնայ ի քէն¹⁴ d, t մանուկ¹⁵ t երկնայնոյն¹⁶ t զնա¹⁷ d էառ

Ի սերմանէ հաւրն Դաւթի,
 Զայս ասելով առաքեաց զնա առ
 աշակերտսն,
 Ուր¹ յետ իջանելոյն ի Հաւրէ
 Ի ձեռացն Թովմայի շաւշափի^{2ա}։
 Եւ եկն աստուածընկալ Կոյսն³ առ դասս
 առաքելոցն,
 Հանդերձ Մագդաղենացեան⁴
 Մարիամաւ,
 Որ պատմեաց նոցա,
 Թէ այսպէս ետես նա⁵ զՏէրն⁶ եւ
 խաւսեցաւ^{7բ}։
 Եւ ընդ նոսա էր Սրբուհին
 Յորժամ⁸ դրաւքն փակելովք յառաջին
 միաշաբաթն⁹
 Եւ յերկրորդն Տէրն նոցին յայտնեցաւ^{10դ}։
 Այլ եւ ի քառասնաւրեա¹¹ աւուրց
 երեւմունսն¹² տեսանէր զնա^{13դ}
 Եւ մխիթարէր¹⁴, որպէս ասաց ինքն Տէրն.
 «Դարձեալ տեսից զձեզ եւ ուրախ լիցին
 սիրտք ձեր,
 Եւ զուրախութիւն ձեր ոչ որ հանէ ի
 ձէնջ^{15ե}։
 Զի արդարեւ որպէս անկար էր ումէք¹⁶
 Այնուհետեւ զյարուցեալն ի մահ խաչին
 ածեալ¹⁷,
 Այսպէս եւ զսփոփեալսն ի տրտմութենէ¹⁸
 Խաչին տեսեամբ յարութեանն

¹ Ժ, Ժ որ^{2ա} Հմմտ. Յով. 20:27-28³ Ժ, Ժ չիք Կոյսն⁴ Ժ Մագդաղենացեան, Ե Մակդաղէնացեան⁵ Ժ, Ժ զնա⁶ Ժ, Ժ Տէր^{7բ} Հմմտ. Յով. 20:18⁸ Ժ, Ժ չիք յորժամ⁹ Ժ, Ժ միաշաբաթին^{10դ} Հմմտ. 20:19, 26¹¹ Ժ քառասնօրեայ¹² Ժ, Ժ երեւմունս^{13դ} Հմմտ. Գործք. 1:3¹⁴ Ժ, Ժ մխիթարիւր^{15ե} Հմմտ. Յով. 16:22¹⁶ Ժ ումէք¹⁷ Ժ ածեալ, Ժ ածել¹⁸ Ժ տրտմութենէն

Անկար էր անճառ ուրախութենէն¹⁹
 Որ²⁰ ի փառս յարուցելոյն կողոպտել։
 Իսկ ի լրումն եկեալ աւուրցն քառասնից
 Զուել կամեցաւ իջեալն²¹ յերկնից,
 Բանն մարմնովն իւրով ի գաւառն
 հայրենի,
 Առ զՄայրն դասուք աշակերտացն եւ ել
 ի Բեթանիա^{22ա}։
 «Եկայք,- ասէ,- ի տեղին, ուստի
 կապեալ ի խաչն,
 Կամաւ իմ ածայ, տեսէք զփառսն,
 Զոր խաչելութեամբն ստացայ,
 Ի լեռնէն Զիթենեաց, ուր սուսերաւք
 Եւ բրաւք միայն ես ըմբռնեցայ²³,
 Անտի ականարկէք վերացեալ զիս
 յաթոռն
 Ուստի եկեալ ձեզ ցուցայ։
 Եւ դու, Մայր իմ Մարիամ,
 Որ²⁴ ի շարշարանսն սրով սիրոյ իմ
 խոցոտեցար,
 Հայեաց եւ տես Միածնիս քո զպատին
 չքնաղ
 Ի վեր քան զոր յուսացար,
 Որ թագաւոր զիս ունել յաթոռն Դաւթի
 ըղձացար,
 Այսաւր ահա²⁵ ականարկես ի Հաւր
 Աստուծոյ
 Կառս քառակերպեան զորդիս²⁶ քո
 բազմեալ^{27բ}։
 Եւ որ ի²⁸ լսեն զովսանայ մանկանցն^{29դ},
 Կարծելով զիս թագաւորեալ³⁰
 բերկրեցար,
 Լսես ի բոցանիւթ լեզուաց³¹ զաւրաց³²
 հրեղինաց

¹⁹ Ժ ուրախութիւն²⁰ Ժ ոչ²¹ Ժ իջանելն^{22ա} Հմմտ. Ղով. 24:50²³ Ժ ըմբռնեցայ²⁴ Ժ, Ժ զոր²⁵ Ժ, Ժ շրջ. ահա այսաւր²⁶ Ժ զորդիս^{27բ} Հմմտ. Եզ. 1:1-28²⁸ Ժ չիք ի^{29դ} Հմմտ. ՄԱՏԹ. 21:15³⁰ Ժ թագաւորիլ³¹ Ժ, Ժ լեզուացն³² Ժ, Ժ զաւրացն

Փառս երկրպագութեամբ ինձ տուեալ»:
 Զայս ասելով մինչ դեռ հայէին՝ վերացաւ
 եւ քայլելով ընդ աւդս վերին
 բարձրացաւ:
 Եւ չուեալ¹ վերոյ ամպոյդ² սլացաւ,
 եւ մտեալ յերկինս յերկնից ի ծոցն³ Հաւր
 եւ յաթոռ փառացն հանգեալ^{4ա}:
 Յայնժամ Մայր նորին Մարիամ տեսեալ
 զչուելն նորա⁵
 Ընդ երկինս անաւզնական միայնակ,
 Սորջացաւ յանձն եւ ասէ.
 «Արդարացար Գաբրիէլ, ի վեր քան զոր
 խաւեցար,
 Փառս Որդւոյ իմոյ այսաւր տեսանեմ,
 Դու զաթոռն Դաւթի ասացեր նմա տալ,
 եւ ես յաթոռն Աստուծոյ տեսանեմ զդա
 վերացեալ:
 Հաստատեցաւ սիրտ իմ,
 Ընդարձակեցաւ լեզու իմ
 Ի շնորհակալութիւն Հաւր իւր եւ
 Աստուծոյ:
 Մեծ, ասացեր ինձ⁶, ո՛վ Գաբրիէլ, լինել⁷
 Որդւոյդ^{8բ},
 եւ ահա տեսանեմ պատիւ եւ մեծութիւն
 դմա ի վեր քան զոյս,
 Զի ամենայն արարածոց վերոյ անցեալ⁹
 բարձրացաւ¹⁰:
 Այսաւր ուրախ լինիմ,
 Այսաւր եմ¹¹ բերկրեալ տիրապէս, քան
 յայնմ աւուր,
 Յոր խրախոյս տայիր ինձ ուրախանալ,
 Յորում զելս խորհրդոյ բանից քոց¹²
 ծանեայ:
 Որդի Աստուծոյ ասացեր ինձ ծնանելով,
 զուարթուն,

¹ Ժ չուել² Ե ամբոյդ³ Ժ, Ժ ի ծոց^{4ա} Հմմտ. ԳՈՐԾՔ 1:9-11⁵ Ժ նորին⁶ Ժ, Ժ չիք ինձ⁷ Ժ լինիլ^{8բ} Հմմտ. ՂՈՒԿ. 1:32⁹ Ժ, Ժ չիք անցեալ¹⁰ Ե բարձրացեալ¹¹ Ժ, Ժ չիք եմ¹² Ժ քո

Եւ ես պահելով զբանս քո¹³ խելամուտ
 լինէի ի սրտի,
 Եւ ոչ ստուգիւ զնոյն գիտէի:
 Ահա այժմ ծանեայ, թէ Բանն Աստուծոյ
 յինէն մարմնացաւ,
 Այսաւր հաւատացեալ զիս Աստուծոյ
 հարսնացեալ
 Եւ աստուածածին խանդակաթ ոգւով
 Գոհութիւն ի բարձունս առաքեմ եւ
 ասեմ.
 Ո՛վ Հաւր Աստուծոյ ծոցոյ¹⁴ ծաղիկ,
 Եւ Մաւրս կուսի¹⁵ Միածին անդրանիկ,
 Մի մոռանար զաղախին քո եւ զմայր,
 Ած զիս յերկինսդ¹⁶ ընդ գրաւական ի
 մարմնոյդ
 Զոր յինէն¹⁷ առեալ վերացար:
 Զի ի տեսիլ փառաց քոց զուարճացեալ,
 Հայեցայց զքեզ յաթոռ Հաւր քո նստեալ,
 Մի թողուր զիս իսպառ աստ ի ստորին
 վայրս¹⁸ պանդխտեալ,
 Ուր նստիմ ի սուգ վշտացեալ,
 Եւ միշտ առ քեզ գալն փութացեալ»:
 Զայս ասելով երկիր պագեալ¹⁹
 Դարձաւ յԵրուսաղէմ ընդ դասս
 առաքելոցն^{20ա},
 Ունելով ի պաշտաւն իւր զտուեալն
 յԱնդրանկէն
 Զորդեակն երկրորդ Յոհաննէս²¹:
 Եւ անդ կալով ընդ նոսա ի վերնատունն
 Հաղորդեցաւ²² հրաշալի յիշման²³ Հոգւոյն
 ի յաշխարհ^{24բ}:
 Ծանեաւ զի իւր միջնորդութեամբն²⁵
 Տնարինեցաւ այս խորհուրդ,
 Քանզի ինքն Աստուածածին Կոյսն

¹³ Ժ, Ժ չիք քո¹⁴ Ե չիք ծոցոյ¹⁵ Ժ, Ժ կուսիս¹⁶ Ժ յերկինս¹⁷ Ժ չիք ընդ գրաւական ի մարմնոյդ՝ զոր յինէն¹⁸ Ժ, Ժ վայր¹⁹ Ժ, Ժ երկրպագեալ^{20ա} Հմմտ. ՂՈՒԿ. 24:52²¹ Ժ, Ժ Յովհաննէս²² Ժ + ընդ²³ Ժ, Ժ յիշման^{24բ} Հմմտ. ԳՈՐԾՔ Ա. 14, Բ. 1-4²⁵ Ժ, Ժ միջնորդութեամբ

Ետ մարմին ընծայ¹ ի յերկինս,
 Եւ առ աշխարհ առհաստէայ նորին
 Զհեղեալ Հոգին ի յերկիր²,
 Որով ի նշանս եւ ի³ սքանչելիս
 զաւրացեալ⁴
 Զեռք առաքելոցն յանուն Որդւոյն իւրոյ:
 Ո՞ր ցնծութիւն էր, որ ոչ տիրէր
 պարկեշտ եւ հեզն հոգւոյ,
 Յորժամ ասաց Պետրոս առ կաղն.
 «Յանուն Յիսուսի Քրիստոսի,
 Որ ի Մարիամայ⁵ ծնաւ՝ արի՛ եւ գնայ»⁶,
 Մարիամ լուեալ զնոյն,
 Եւ տեսեալ զվազեալն զդէմս⁷ ի յերկիր
 Եղեալ գոհութիւն Աստուծոյ եւ⁸ Հաւր
 յերկինս առաքէր^{9ա}:
 Առ սա մերձ աստուածընկալ կուսիս
 ժողովեցան այրիքն,
 Զորս պաշտէին առաքեալքն¹⁰, սմա եւ
 որոց ընդ ինքեան կարգեցաւ.
 Ստեփաննոս եւ իւրքն ի պաշտան
 սարկաւագութեան^{11բ},
 Եւ յորժամ յանաւրէն յերբայեցւոցն¹²
 ածաւ
 Վկայն անդրանիկ ի կործանումն¹³
 քարանց
 Եւ նա¹⁴ հայեցեալ յերկինս ետես զՅիսուս
 Փառաւք նստեալ ընդ աջմէ Աստուծոյ^{15գ},
 Անճառ տիրեաց կուսին ցնծութիւն ի
 լուր աւետեացս,

¹ **Ժ**, **Է** ընծայ² **Ժ**, **Է** յերկրի³ **Ժ** չիք ի⁴ **Ժ** զաւրացեալք⁵ **Է** Մարիամայ⁶ **Է** գնա⁷ **Է** զդէմս⁸ **Ժ**, **Է** չիք եւ^{9ա} Հմմտ. Գործք. 3:6-8¹⁰ **Է** առաքեալք^{11բ} Հմմտ. Գործք. 6:1-6¹² **Ժ** երբայեցւոցն¹³ **Ժ** կործումն¹⁴ **Է** ահա^{15գ} Հմմտ. Գործք. 7:55-59

Զի զիւր Անդրանիկն¹⁶ ոչ միայն
 երկնաւորք,
 Այլ եւ ի յերկրէս բիրք կորովիք արժանի
 եղեն նկատել¹⁷
 Բազմեալ ի փառս Աստուծոյ:
 Պետրոս եւ Պաւղոս յորժամ բաժանեցին
 զաշխարհս¹⁸ ի քարոզութիւն,
 Զսորա¹⁹ պատին եւ զպաշտանն անքակ
 պահեցին ի միասին:
 Նա ի թլփատութեանն²⁰ ասէ.
 «Եւ ես ի հեթանոսս, բայց միայն զի
 զաղքատսն յիշեսցուք»^{21դ}:
 Եւ աղքատ էր Աստուածածին Կոյսս
 բազմութեամբ այրեացն,
 Որ ընդ իւր կարաւորք պաշտաման
 առաքելոցն,
 Քանզի աստ, ուր Որդին իւր խաչեալ,
 Եւ նմա աղքատ անուն վերադրեալ:
 Յակոբոս²² եղբայր Տեառն եւ Յոհաննէս²³
 Սիրեցեալ աշակերտն ի սորա պատիւ²⁴,
 Եւ վասն²⁵ սորին պաշտաման մնացին
 յԵրուսաղէմ,
 Եւ ոչ շրջեցան ընդ հեթանոսս,
 Մինչ ի կէտ²⁶ փոխման տիրուհւոյն,
 Որպէս ասէ առաքեալն.
 «Յետ երեքտասան ամաց ելի
 յԵրուսաղէմ
 Եւ տեսի զՊետրոս եւ զՅակոբոս»²⁷

¹⁶ **Է** չիք ի կործումն քարանց //Եւ նա
 հայեցեալ յերկինս ետես զՅիսուս //Փառաւք
 նստեալ ընդ աջմէ Աստուծոյ //Անճառ
 տիրեաց կուսին ցնծութիւն ի լուր աւետեացս
 //Զի զիւր Անդրանիկն

¹⁷ **Ժ** նկատեալ¹⁸ **Ժ** զաշխարհ¹⁹ **Ժ**, **Է** զոր²⁰ **Ժ**, **Է** թլփատութիւնն^{21դ} Հմմտ. Գալ. 2:10²² **Ժ**, **Է** Յակոբոս²³ **Ժ**, **Է** Յոհաննէս²⁴ **Ժ**, **Է** պատիւն²⁵ **Ժ**, **Է** չիք վասն²⁶ **Ժ**, **Է** + կոչման կամ²⁷ **Ժ**, **Է** Յակոբոս

Եւ զՅոհաննէս¹, զսիւնքն կարծեալ»^{2ա},
 Եւ ուր ետես, եթէ ոչ սրբոյ Կուսին ի
 պաշտան:
 Յակոբոս իբրեւ զնախընդել³
 պաշտանեայ ի տանն Յովսեփայ^{4բ}
 Եւ Յոհաննէս որպէս ի Քրիստոսէ⁵ որդի
 փոխան իւր տուեալ^{6գ}:
 Իսկ Պետրոս իբրեւ զգլուխ⁷
 դասուն Մարն գնդին Յիսուսի
 հպատակեալ^{8 9դ},
 Զի յորժամ զմտաւ ածէին առաքեալքն
 զՏեառն
 Իւրեանց Մարն Կուսի
 զհնազանդութիւնն,
 Զոր պատուէր, զոր ոչ նոքա
 պատկառանաւք նմին առնէին¹⁰:
 Իսկ նա՝ հեզութեան աղբիւրն,
 պարկեշտութեան մայրն,
 Անաղտ մարգարիտն միշտ
 խոնարհութեամբ ընդ նոսին ճգնէր,
 Եւ ի գործ Աւետարանին քաջալերէր,
 Եւ զվշտացեալսն մխիթարէր,
 Եւ ի հալածանսն¹¹ յուսով փառաց¹²
 սփոփէր
 Եւ ինքն յաղաւթս անդադար
 կանկնէր¹³,
 Եւ զտեղիս¹⁴ շարշարանաց¹⁵ Միածնին իւր
 պատուէր
 Եւ ի նոսին խնկաւք եւ լապտերաւք յար
 շրջէր,
 Եւ ի հրէիցն նախատինս բազումս
 ընդունէր,

¹ **Ժ, Է** զՅովհաննէս^{2ա} **Հմմտ.** ԳԱՂ. 2:9³ **Ժ, Է** զնախընտել^{4բ} **Հմմտ.** ԳԱՂ. 1:19⁵ **Է** Քրիստոսի^{6գ} **Հմմտ.** ՅՈՎՀ. 19:26⁷ **Ժ, Է** գլուխ⁸ **Ժ** հպատակեալք^{9դ} **Հմմտ.** ՄԱՏԹ. 16:18, ՂՈՒԿ. 22:32, ՅՈՎՀ.

21:15–17

¹⁰ **Ժ, Է** ոռնէին¹¹ **Է** հալածանս¹² **Ժ, Է** փառացն¹³ **Ժ, Է** կանխէր¹⁴ **Ժ, Է** զտեղի¹⁵ **Է** շարշարանացն

Քանզի արգելուին¹⁶ զնա աղաւթել
 Ի տեղիս շարշարանաց Փրկչին,
 Եւ հալածանս, եւ նեղութիւնս բազումս¹⁷
 Սուրբ Կուսին յարուցին:
 Այլ զի հոռոմոց¹⁸ էր իշխանութիւնն
 Ոչ էին¹⁹ ձեռնհաս անձամբ անձին ինչ
 վճարել,
 Նահանջէին ի շարն²⁰ թունից²¹:
 Եւ Սուրբ Կոյսն մնաց յերուսաղէմ
 Պաշտպանեալ ի Յակոբայ եւ ի
 Յոհաննէ²²,
 Մինչեւ ի կէտն²³ փոխման
 ամենաւրհնեալ Կուսիս,
 Եւ որ ընդ սմա բազմութեանն²⁴ ժողովէր
 Պաւղոս զպտուղ հեթանոսացն
 հաւատացելոց
 Եւ²⁵ ամ ըստ ամէ²⁶ առաքէր,
 Որպէս եւ յայտ է յամենայն թողթսն,
 Քանզի յորժամ լսես թէ. «Հաճոյ թուեցաւ
 Մակեդոնացւոցն²⁷
 Եւ Աքայեցւոցն հաղորդութիւն առնել
 Ընդ աղքատս²⁸ սրբոցն յերուսաղէմ,
 Զի եւ պարտապան իսկ են»^{29 30ա}
 Աստուածածին Կուսին³¹ իմա
 զպաշտանն,
 Զի նմա³² էին տիրապէս պարտապան³³,

¹⁶ **Ժ, Է** արգիլուին¹⁷ **Ժ, Է** բազում¹⁸ **Ժ, Է** հոռոմացւոց¹⁹ **Ժ, Է** եւ էին²⁰ **Է** շար²¹ **Ժ** թիւնից²² **Ա, Բ, Ժ** Յովհաննէ²³ **Ա, Բ** կէտ²⁴ **Ա, Բ** սմա՝ եւ որ ընդ ամենաւրհնեալ
 (Բ ամենաւրհնեալ) Կուսին բազմութեանն
 փխ. ամենօրհնեալ Կուսիս, եւ որ ընդ սմա
 բազմութեանն²⁵ **Է** չիք եւ²⁶ **Ա** ամբարտամէ, **Ժ** յամէ²⁷ **Ա, Բ, Մ** ակեդոնացւոցն²⁸ **Ա, Բ** յաղքատս²⁹ **Ժ + Է**^{30ա} **Հմմտ.** ՀՌՈՄ. 15:26–27³¹ **Ժ** Կուսիս³² **Բ** նմայ³³ **Է** պարտական

Ուստի եւ զկենաց հոգւոց զպտուղն
կերան:
Եւ ինքն Պաւղոս ամ ըստ ամէ ի
քարոզութենէն¹ սմա
Յերկրպագութիւն փութացեալ
հասանէր² ամենայն առաքելովքն³:
Զի մեծ էր յոյս եւ մխիթարութիւն,
Զոր ունէին ի սրբոյ Կուսին տեսանելն⁴:
Այսպէս պաշտեցին զսա⁵ մինչեւ ի ժամ
վերափոխմանն,
Եւ այսպէս մնաց նա յաշխարհ,
Եւ ետես⁶ զսա⁷ ծաղկեալ հաւատով
Աւետարանի իւրոյն Միածնի:
Զի թէպետեւ⁸ ցցանկալն⁹ ելանել
Եւ ընդ Քրիստոսի լինել¹⁰
Լաւ համարէր Սուրբ Կոյսն,
Սակայն ոչ եմուտ անդր¹¹ ձրի,
Ալ ճգնութեամբ կացեալ ի մարմնի,
Եւ հալածանաւքն¹² բազմադիմի
Հաղորդեցաւ խաչին Յիսուսի¹³:
Յետ որոյ հրաւեր եկն¹⁴ նմա կոչման,
Մինչ¹⁵ կային շուրջ զնովաւ¹⁶ գունդն
երկոտասան,
Փոխել¹⁷ ի խոստացեալ տեղին
հանգստեան,
Ի յանպատմելի¹⁸ փառացն աւթարան¹⁹.
Եւ սուգ մեծ պատեաց զգունդ
առաքելոցն,

¹ a, b չիք ի քարոզութենէն
² d հասան
³ t առաքեալքն
⁴ d տեսանել
⁵ b զսայ
⁶ d տեսին
⁷ b զսայ, t զնա
⁸ b պէտ եւ փխ. թէպետեւ, t թէ որպէս եւ
փխ. թէպետեւ
⁹ a, b ցանկալք, d ցանկալն
¹⁰ d լինիլ
¹¹ a, b անդ
¹² d հալածանաւք
¹³ a, b, d Քրիստոսի
¹⁴ a, b եկ
¹⁵ d մինչեւ
¹⁶ a, b շրջ. զնովաւ շուրջ
¹⁷ a, b փոխեալ
¹⁸ d իսկ պատմել ի
¹⁹ d չիք աւթարան

Որք ժողովեցան աստուածային
ազգմամբ
Ի պաշտաւն փառաց²⁰ այսր
խորհրդեան²¹:
Անդ էր²² աստուածեղբայրն Յակոբոս²³
Եւ անաւթն ընտրութեան Պաւղոս,
Եւ մեծ իմաստն Յռեթէոս²⁴,
Որպէս պատմէ աշակերտ նոցին
Դիոնէսիոս²⁵:
Պետրոս Մեծն ի Հռովմայ²⁶,
Եւ Թովմաս ի Յեթովպիայ²⁷:
Ի Հայոց Թադէոս եւ Բարթողոմէոս²⁸.
Եւ ժողովեալ նոցա ի միասին
Ազգմամբ Հոգւոյն²⁹ Սրբոյ կոչողին
Տարակուսեալ զպատճառն հարցին
ցՅոհաննէս³⁰ որդի Սուրբ Կուսին:
Նա³¹ պատասխանի արար սուրբ գնդին
Հրաւեր փոխման եկն³² Աստուածածնին,
Մտանել ի պատրաստեալ³³ հանգիստն³⁴,
որ³⁵ յերկին³⁶:
«Եւ դուք եկիք ի պատիւ նորին.
Պատուել զաւր մեծի հանգիսին»:
Յայնժամ սքանչացեալ պակեան³⁷
տրտմութեամբ
Եւ յարտասուս հարան³⁸ դողութեամբ:
Մտեալ ի յողջոյն գունդն ի միասին,
Աստուածածնին երկրպագէին³⁹:

²⁰ a, b, d, t չիք փառաց
²¹ a, b, d, t խորհրդոյ:
²² d, t չիք էր
²³ a, b, c Յակովբոս
²⁴ a, b, c զՅռեթէոս, d Ռէթէոս
²⁵ t Դիոնէսիոս
²⁶ t Հռովմայ
²⁷ a յեթովպիայ, b յեթովպիայ
²⁸ d Բարթողոմէոս, t Բարթողոմէոս
²⁹ b Հոգւոյն
³⁰ a, b ցովհաննէս, d ցՅոհաննէս
³¹ b նա
³² d եկ, t + սուրբ
³³ d պատրաստել
³⁴ d, t հանգիստ
³⁵ t + ի
³⁶ b երկին, d յերկնային t յերկինս
³⁷ a, b պակեն, d, t պակեալ
³⁸ a, b հարեալ
³⁹ d, t երկրպագանէին

զ Յոեթէոս¹ յառաջ կացուցին,
 Որ աշակերտէր² ճեմարանին:
 Եւ լի հոգովն³ նա աստուածային,
 Խաւսել զպատշաճն⁴ աւուրն⁵ հանդիսին,
 Ի պատիւ Սուրբ Կուսին, ի լուր⁶ ամենին:
 Ի մէջ կացեալ այրն աստուածագգեստ⁷,
 Արտաքս ելեալ բնութեանս մարմնոյ,
 Խաւսեցաւ զճառ⁸ անճառ խորհրդոյ
 Աստուծոյ բանին մարմին լինելոյ,
 Ի Սուրբ Կուսէն մեզ երեւելոյ,
 Ընդ որ հիացեալ դասք⁹ առաքելոցն¹⁰
 Ետուն¹¹ փառք¹² յերկինս Աստուծոյ:
 Զահս լուցին դասք կուսանացն¹³,
 Եւ զբոլորմունս անուշ¹⁴ կնդրկաց.
 Ի սպաս Կուսին փոխմանն¹⁵ փառաց¹⁶,
 Որ¹⁷ յեկեղեցի վերինն¹⁸ անդրանկաց,
 Ո՛վ սքանչելի եւ աստուածայինն¹⁹
 հանդէս,
 Ո՛վ սխրալի եւ ամենապայծառն²⁰ ժողով,
 Ո՛վ երկնայնոցն²¹ եւ երկրայնոցս
 պարակցութիւն,
 Սփռեալքն²² ընդ տիեզերս
 երկոտասանքն
 Ի միասին եկեալ²³ խառնեցան²⁴:

¹ a, b, e զՅոեթէոս, d Ռէթէոս

² b աշակերտ

³ b հոգով, d հոգւով

⁴ t պատշաճ

⁵ d յաւուր

⁶ a, b լրումն

⁷ a աստուածասգեստ

⁸ a, b զճառսն

⁹ a, b դասքն

¹⁰ t առաքելոց

¹¹ b + ի

¹² a, b, t փառս

¹³ d կուսանաց

¹⁴ a անուշ, d անուշ2

¹⁵ t փոխման

¹⁶ b չիք ի սպաս Կուսին փոխմանն փառաց

¹⁷ b յոր

¹⁸ d վերին

¹⁹ d, t աստուածալին

²⁰ t ամենապայծառ

²¹ d երկնայնոցն

²² d, t սփռեալք

²³ d ելեալ, t եղեալ

²⁴ a, b խառնեցան,

Եւ գունդք բոցանիւթք անմարմին
 երկնայինն զաւրաց
 Ի պար նոցա իջեալ խառնեցան²⁵:
 Ոմանց հարսն ընդունել, եւ ոմանց
 առաքել²⁶,
 Երկնայինքն²⁷ կառս ածին²⁸ լուսեղէն
 զԱստուածամայրն
 Ի գաւառն²⁹ իւրեանց վերածել:
 Եւ³⁰ երկրաւորքս ջահս լուցեալ
 Եւ կնդրուկ ածեալ³¹,
 Զտապանակն Աստուծոյ ամփոփել³²:
 Սոքա³³ ի յուղարկելն ի սուգ
 մեծ թախծեալ³⁴
 Զնովաւ ակումբ³⁵ առեալ³⁶ ողբային:
 Եւ նոքա³⁷ յընդունելն պատրաստեալ³⁸
 զբազուկս,
 Եւ խնճոյս ուրախութեան հարեալ
 կայթէին³⁹:
 Պետրոս երգէր ողբալով.
 «Եւս⁴⁰ եզ ի մտի իւրում Աստուածամայրս
 մեր⁴¹
 Ի հովտէս տրտմութեան ի տեղւոջն
 յորում ուխտեաց:
 Եկայք փոխեսցուք զսա⁴² ի հանգիստ»:
 Եւ Գաբրիէլ հնչէր ցնծալով.
 «Եկ ի Լիբանանէ հարսն, եկ ի
 Լիբանանէ,

²⁵ d, t չիք Եւ գունդք բոցանիւթք անմարմին
 երկնայինն զաւրաց // Ի պար նոցա իջեալ
 խառնեցան

²⁶ a, b առաքեալ

²⁷ b երկնային

²⁸ d կուսածին

²⁹ t գաւառսն

³⁰ t իսկ

³¹ a, b ածել

³² a, b անփոփել, d, t ամփոփեալ

³³ d նոքա

³⁴ a թախծել, b թաղծել

³⁵ a, b, d ակումբ

³⁶ a, b կացեալ

³⁷ t սոքա

³⁸ d պատրաստել

³⁹ d, t կայթին

⁴⁰ d ել

⁴¹ d, t չիք մեր:

⁴² b զսալ

Եկեսցես եւ անցցես ի սկզբան¹
հաւատոյ,
Ի գլխոյ Սանիրա² եւ Հերմովնի³
Ի մորեաց⁴ առիծուց եւ ի լերանց
ինծուց⁵ ^{6ա}.
Եւ ելցես յերկնաւորն Երուսաղէմ,
Ի մէջ բիրաւորն⁷ հրեշտակաց հանգչել
քեզ փառաւք»:
Յոհաննէս⁸ հեզոթեան արտասուաւք
բարբառէր.
«Նուագեաց⁹ սիրտ իմ եւ մարմին իմ,
Ո՛վ Սուրբ Կոյս՝ բաժին իմ
Եւ Մայր տուար յաւիտեանս¹⁰
Եւ այժմ հեռի մնամ ի քէն ի ստորինս¹¹
գաւառ»:
Եւ Միքայէլ պարէր աւետեաւք¹² եւ ասէր.
«Սրտացուցեր զմեզ քոյր իմ հարսն,
Սրտացուցեր զմեզ¹³ միով ականք քով¹⁴,
Եւ միով քառամանեկաւ պարանոցի քո¹⁵:
Զի գեղեցկացան ստինք քո քոյր իմ
հարսն,
Զի գեղեցկացան ստինք քո¹⁶ ի գինւոյ¹⁷,
Եւ հոտ հանդերձից քոց քան¹⁸ զամենայն
խունգս¹⁹»^{20բ}:
Պաւղոս ու՛մ ասէր.
«Սպասաւորեմ հեթանոսաց ընծայիւք,

¹ Եւ սկզբանն² Եւ Սանիրայ³ Եւ, Բ, Դ, Ե Հերմովնի, Ե, Բ, Ե + Եւ⁴ Եւ մորենեաց⁵ Եւ, Բ ընծուց, Ե ինծուց^{6ա} Հմմտ. Եր 4:8⁷ Եւ բիրաւոր⁸ Եւ, Բ, Ե Յոհաննէս,⁹ Եւ նուագեաց¹⁰ Եւ, Ե յաւիտեանս¹¹ Եւ ստորին¹² Եւ աւետաւք¹³ Եւ, Ե չիք քոյր իմ հարսն սրտացուցեր զմեզ¹⁴ Եւ չիք քով¹⁵ Եւ, Ե չիք քո¹⁶ Եւ, Ե չիք իմ հարսն, Գի գեղեցկացան ստինք քո¹⁷ Եւ, Ե գինւոյ¹⁸ Եւ, Ե չիք քան¹⁹ Եւ, Բ, Դ, Ե խունգս^{20բ} Հմմտ. Եր 4:9-10

Զի պաշտեցեալդ ի մէնջ²¹ ընտրեցեր,
Ի տան Աստուծոյ զգնալն,
Քան զբնակել²² յարկս²³ մեղաւորաց:
Իսկ պարք²⁴ Քերովբէիցն²⁵, եւ գունդք²⁶
Սերովբէիցն²⁷

Տեսեալ զհամբառնալ Սուրբ Կուսին,
Երանէին նմա²⁸ ասելով.

«Ո՛վ է սա²⁹, որ ելեալս է իբրեւ

զառաւաւտ³⁰,

Գեղեցիկ որպէս զլուսին³¹,

Ընտիր³² իբրեւ զարեգակն,

Իբրեւ զհիացումն³³ կարգեալ»^{34ա}:

Յակոբոս³⁵ Տեառն եղբայր³⁶

Իբր նախընդել սպասաւոր³⁷

Շուրջ զնովաւ ի պաշտելն մոնչէր
հեծելով³⁸.

«Զայն գուժեաց ի միջի մեր³⁹,

Այսաւր⁴⁰ լալումն, ողբումն⁴¹ եւ

աշխարումն⁴² յոյժ^{43բ}:

Եւ զհարկ բերցուք զորոշելս⁴⁴ ի քէն,
Մարիամ»:

²¹ Եւ գիմեն փխ. ի մէնջ²² Եւ զբնակելն²³ Եւ ի յարկս փխ. յարկս²⁴ Եւ չիք պարք²⁵ Եւ, Ե Քերովբէիցն²⁶ Եւ գունդ²⁷ Եւ Սերովբէիցն²⁸ Եւ նմայ²⁹ Եւ սա³⁰ Եւ, Ե զառաւաւտս³¹ Եւ, Բ, Ե լուսին³² Եւ, Ե ընդիր³³ Եւ զհիացումն^{34ա} Հմմտ. Եր 6:9³⁵ Եւ, Ե Յակոբոս³⁶ Եւ տեսնեղբայր³⁷ Եւ Տեքստը շարունակվում է այստեղից:³⁸ Եւ, Ե հեծեծելով³⁹ Եւ, Ե մերում⁴⁰ Եւ, Ե չիք այսաւր⁴¹ Եւ, Ե ողբումն եւ լալումն փխ. լալումն, ողբումն⁴² Եւ աշխարհումն^{43բ} Հմմտ. ՄԱՏԹ. 2:18⁴⁴ Եւ, Ե զորոշեալս

Եւ իշխանութիւնք եւ պետութիւնք
վերինք¹ ասէին հիացմամբ.
«Ո՛վ է սա², որ ելանէ³
Սպիտակացեալ, յեցեալ յորդեակն⁴
իւր^{5ա}:
Ով է սա⁶, որ ելանէ յանապատէ⁷
Իբրեւ զստեղն⁸ խնկոյ⁹ ծխեալ,
Զմուռս եւ կնդրուկ յամենայն փոշեաց¹⁰
եղեփեցեաց^{11»} 12բ:
Մեծն Յոնէթէոս¹³ ի մէջ անցեալ խաւսէր¹⁴
հրաշապէս
Եւ զտնտեսութիւնն, որ ի Կոյսն
խորհրդոյն Աստուծոյ,
Աստուածաբանեալ¹⁵ ներբողէր եւ
հիացումն
Մեծի¹⁶ հանդիսին սքանչելի խորհրդոյն¹⁷
Պատմութեամբն ի վերայ տարածէր,
Մինչեւ երկրորդ եղեւ ի միտս¹⁸ նոցա
փոխմանն¹⁹ խորհուրդ,
Առ տնտեսութեանն²⁰ հիացումն,
Զոր մատոյց Աստուածամայր Կոյսն²¹
Աստուածութեանն:
Քանզի պատմեաց, թէ որպէ՛ս Աստուած
յայտ տաճար հանգեալ,
Զիւրդ հուրն ընդ այս հող խառնեցաւ,

Որպէս նկարագիրն²² Հաւր ի սմանէ
մարմին առեալ ձեւացաւ,
Զիւրդ լոյսն փառաց ի սմանէ²³ մարդ
յայտնեալ ծանուցաւ,
Որպէ՛ս կերակրողն²⁴ տիեզերաց ի
ստեանց²⁵ սորա²⁶ ճմլեալ²⁷ կաթն
յագեցաւ,
Եւ զիւրդ կրողն²⁸ բանիւ²⁹ զարարածս ի
բազուկ³⁰ սորա գգուիլ հաճեցաւ,
Որպէ՛ս տիրողն³¹ վերնոց եւ ներքնոց
սմա հնազանդ որդեակ ծանուցաւ,
Եւ զիւրդ իմաստութիւն³² Հաւր
հրամանաւ
Սորա³³ ի սքանչելի գործսն
համարձակեցաւ:
Որպէ՛ս³⁴ ամենակար խնամքն³⁵
Ի շարշարանս խաշին մաւրս վշտակեցաւ
Աշակերտին զսա³⁶ աւանդեաց³⁷,
Եւ որոյ³⁸ աղագաւ այսաւր
Հրաւէր առաքեալ ի յերկինս կոչեաց:
Զայսքան սքանչելի խորհրդոց
յայտնութիւն ի փառս Սուրբ Կուսին
Յոնէթէոս³⁹ յայտնաբանէր⁴⁰ առաքելոցն
գնդին
Մինչդեռ աստուածընկալ
քահանայապետքն

¹ **a, b** վերին զաւրացն փխ. վերինք² **b** սայ³ **a, b** + յանապատէ, **c** + իբրեւ⁴ **c, d, t** յորդեակ^{5ա} Հմմտ. երգ. 8:5⁶ **b** սայ⁷ **a, b** չիք յանապատէ⁸ **b** զստեղծ, **c, d** զաստեղն⁹ **a** խնկոյ¹⁰ **t** + եւ¹¹ **c, d** իւղեփեցեաց, **t** եւղեփեցեաց^{12բ} Հմմտ. երգ. 3:6¹³ **a, b, e** Յեռեթէոս¹⁴ **c** խաւսեր¹⁵ **c, d, t** աստուածաբանէր¹⁶ **c** մէծի¹⁷ **c, t** խորհրդոյն¹⁸ **a, b** սիրտս¹⁹ **c, d** փոփոխմանն **t** վերափոխմանն²⁰ **b** տնտեսութիւն²¹ **a, b** Կոյս²² **c, d, t** նկարագիր²³ **t** նմանէ²⁴ **c, t** կերակրաւոյն²⁵ **d** ստեան, **e** ստանց²⁶ **b** սորայ²⁷ **a, b** ճմլել, **c** ճմեալ²⁸ **c, t** կրաւոյն²⁹ **t** բանին³⁰ **t** բազուկս³¹ **c** տիրաւոյն³² **d** իմաստութիւնն³³ **b** սորայ³⁴ **c, d, t** + ամենակատար³⁵ **c, d, t** խնամօքն³⁶ **b** զսայ³⁷ **a** յաւանդեաց³⁸ **c, d, t** որով³⁹ **a, b** Յեռեթէոս, **e** Յեռոթէոս⁴⁰ **c, d** յատենաբանէր

Շուրջ¹ կային զաստուածակիր²
մարմնովն,
Քանզի միահամուռ դասք առաքելոցն
Անդր³ եկին⁴ գումարեալ որպէս
ասացաւ⁵.
«Անդ էր աստուածեղբայրն Յակոբոս⁶,
եւ Պետրոս գլխաւորն,
եւ աստուածաբանն Յոնաննէս⁷:
եւ յետ իւրաքանչիւրոցն⁸ խաւսելոյ⁹ առ
Սուրբ Կոյսն
Զվայելչականն¹⁰ հզաւրագոյնն¹¹ բանիւ
փրկիսոփայական¹² ճարտարութեամբ
եւ իմաստունն գիտութեամբ Հոգւոյն¹⁴
շնորհացն ներգործութեամբ
Աստուածաբանն Յռէթէոս¹⁵ ի մէջ¹⁶
կացեալ
եւ զսքանչելի խորհուրդս յայտնեալ առ
յամենեցունց¹⁷, որք լուանն,
Աստուածընկալ եւ աստուածային¹⁸
աւրհնաբանող¹⁹ կոչեցաւ.
Որք ապա²⁰ եւս հաստատեալ ի պատիւ
Իսկուհւոյն²¹
Յաստուածաբանող²² բանից իմաստնոյն

¹ c շուր² a, b զաստուածընկալն³ c, d, t անդէն⁴ a եկեալ⁵ a, b ասացաք⁶ a, b, e Յակովբոս⁷ d Յօնաննէս, e Յովհաննէս⁸ t իւրաքանչիւրոյն⁹ c խոսելոյ¹⁰ a զվայելչականն¹¹ c հզորագոյնն¹² a փրկիսոփայականն, b փրկիսոփայականն¹³ e չիք հզաւրագոյնն բանիւ

փրկիսոփայական

¹⁴ b Հոգւոյն, c յոգւոյն¹⁵ a Յեռէթիոս, b Յրռէթէոս, e Յեռոթէոս¹⁶ c մէջ¹⁷ t յամենայնս¹⁸ c, d Աստուծոյ¹⁹ c աւրհնաբանաւղ, t Աստուածաւրհնա-
բանաւղ փխ. աստուածային աւրհնաբանող²⁰ b ապա²¹ a, b Սրբուհւոյն, e Իսկուհւոյն²² c աստուածաբանաւղ, t յաստուածա-
բանաւղ

Մատուցեալ առաջի²³ Սուրբ Կուսին
Առհաւատչեայ²⁴ մաղթէին թողուլ
յաշխարհի²⁵,
Զկենդանագիր ամենասուրբ²⁶ եւ մաքուր
իւրոյն պատկերի:
Որ եւ²⁷ ընկալեալ զմաղթանս առաքելոցն
գնդի,
եւ առեալ ի ձեռս զկենդանագրեալ տիպ
իւրոյն պատկերի,
Յեռեալ պնդեաց²⁸ ընդ շքեղաշուք²⁹
դէմսն³⁰ կենդանի,
եւ ցաւղով արտասուաց³¹ կաթեցոյց³² ի
նա շնորհս սքանչելի:
Ո՛վ մեծ եւ անբաւ ձիր այս պարգեւացս,
Որ տիեզերաց³³ ի նմանէ շնորհեցաւ:
Տուողն³⁴ Աստուծոյ մարմին նիւթական,
Այսար պարգեւեաց³⁵ մարդկան
Զպատկեր իւրոյն³⁶ իսկութեան:
եւ սքանչելի խառնմանն³⁷ ոսկին³⁸
խառնարան,
Այսար զշնորհս³⁹ իւր խառնեաց ընդ
որակս եղական:
եւ յորմէ⁴⁰ ծագեաց Քրիստոս մեզ⁴¹ յոյս
փրկութեան,
Այսար տուաւ ի նմանէ պատկերս
շնորհալից դեղ բժշկութեան,
Տիպ, որ ունի յինքեան
զնախագաղափարին փառս
քանակեալ⁴²,

²³ c առաջի²⁴ c առհաւատչեաց, t առ հաւատչեայ:²⁵ c, d, t աշխարհի²⁶ c ամենասուրբ²⁷ a, b չիք եւ²⁸ c պնդեաց²⁹ c շքեղաշուք³⁰ a, t դէմսն³¹ c արտասուաց³² c կաթեցոյց³³ b տիեզերացս³⁴ c Տուաւողն³⁵ b, t պարգեւաց³⁶ a, b իւրն³⁷ c խառնարանն³⁸ b ոսկին³⁹ a, b շնորհ, c, d, t շնորհս⁴⁰ b որմէ⁴¹ a, b մեզ Քրիստոս փխ. Քրիստոս մեզ⁴² c քանդակեալ

Եւ կենդանագիր, որ կենդանոյն¹
 հոգւով² գտաւ զարացեալ
 Զեւ, որ միշտ ականերեւ լինի Տիրամայրն
 մեր³ արկեալ⁴:
 Եւ պատկեր, յորմէ⁵ Աստուածածնին⁶
 շնորհն⁷ եղեւ արտաքս ցայթեալ⁸,
 Զոր ընկալեալ գունդ առաքելոցն եւ
 մխիթարեալ,
 Եւ ողջագուրելով ի միմեանս⁹
 փոփոխեալ¹⁰:
 Եւ մինչդեռ յայս¹¹ պարգեւ ի¹²
 վերասխարացեալ¹³
 Եւ Սուրբ Կոյսն զձեռս յաղաւթս¹⁴
 յերկինս¹⁵ համբարձեալ
 Յելաւ երկին¹⁶, անշրպետեցաւ
 հաստատութիւնդ
 Պատառեցաւ աւդդ¹⁷, փայլատակեաց
 հուր,
 Ծագեաց ճառագայթ, թաւթափեցան
 հրեշտակք,
 Ստորահեղան զուարթունք,
 գումարեցան անմարմինք,
 Իշին սերովբէք¹⁸, խոնարհեցան
 քերովբէք¹⁹
 Եւ ի մէջ²⁰ նոցա²¹ ամոռք չորեքկերպեան^{22ա}

¹ **a, b, c** կենդանոյն² **b** հոգով³ **a, c, d, t** չիք մեր⁴ **a, b, c, d, t** ականարկեալ⁵ **t** + եղեւ⁶ **a** աստուածային, **c, d, t** Աստուածածինն⁷ **a, b** + շնորհն⁸ **d** ցայթել, **t** ցայտեալ⁹ **t** միմեանս¹⁰ **a, b** փոփոխել¹¹ **b** այս¹² **c, d, t** չիք ի¹³ **a, b, c** վերայ սխարացեալ¹⁴ **c** աղաւթս¹⁵ **a, b** շրջ. յերկինս յաղաւթս,¹⁶ **b** երկինս, **c** երկիրն¹⁷ **a, b, e** աւդտ, **c, d, t** յաւդդ¹⁸ **c, d, t** սերոբէք, **e** սէրովբէք¹⁹ **c, d, t** քերոբէք, **e** քէրովբէք²⁰ **c** մէջ²¹ **c, d** չիք նոցա^{22ա} Հմմտ. եջ. 1:1-28

Ած ի²³ սուրբ վերնատունն²⁴ զՄիածինն²⁵
 Որդի Սուրբ Կուսին:
 Ծածկեաց լոյսն²⁶ անապական,
 Զլուցեալ ջահնն առաքելական.
 Եւ հոտն²⁷ անմարմնական²⁸,
 Զծուխ կնդրկին նիւթական:
 Յաղթեաց ձայն²⁹ արհնութեան
 Զուարթնոցն ձայնի³⁰ ողբոց առաքելոցն,
 Եւ պայծառ փայլատակումն
 սերովբէքն³¹
 Զհասագեստեալ Սուրբ Կուսիցն
 Անցեալ փառաց Որդւոյն եկաց
 առնթեր ծնաւդին
 Եւ կոչէր զնա ի գաւառն հայրենի
 Տեսեալ ծնաւդին զմենածինն անդրանիկ
 Դառնայր յառաքելոցն դասս
 աւետարանէր նոցա
 Զնորայն գալուստ ասելով.
 «Զայն որդեկի իմոյ³²
 Ահաւասիկ³³ սա եկն վազելով³⁴ ի վերայ
 լերանց
 Խաչտալով ի վերայ բլրոց»^{35բ},
 Ահաւասիկ սա³⁶ եկաց յառագաստ
 բնակութեան³⁷ իւրոյ վերստին:
 Պատասխանի տայ³⁸ ինձ Որդեակս իմ եւ
 ասէ.

²³ **c** Աստուած ի, **t** ածին ի²⁴ **a, b** վերնատանն²⁵ **c** զՄիածին²⁶ **c, d, t** լոյս²⁷ **c, d, t** հոտն²⁸ **c** անմահական²⁹ **a, b** չիք ձայն³⁰ **c, d** ձայն, **t** զձայն³¹ **a, b, t** սերոբէքն, **e** սէրովբէքն³² **a, b, c, d, t** չիք Զհասագեստեալ Սուրբ Կուսիցն//Անցեալ փառաց Որդւոյն եկաց առնթեր ծնաւդին//Եւ կոչէր զնա ի գաւառն հայրենի//Տեսեալ ծնաւդին զմենածինն անդրանիկ//Դառնայր յառաքելոցն դասս աւետարանէր նոցա//Զնորայն գալուստ ասելով// Զայն որդեկի իմոյ³³ **a** հաւ, **b** հայ³⁴ **c** վազելով^{35բ} Հմմտ. երգ 2:8³⁶ **b** սալ³⁷ **b** բնակութիւն³⁸ **b** մնայ փխ. տայ

«Արի՛ եկ Մայր իմ, գեղեցիկ իմ, աղանի
 իմ,
 Եկ ի գաւառն հայրենի,
 Հանգիր ի չքնաղակերտն խորանս»^{1ա}։
 «Արդ ո՛վ դասք առաքելոց, արիորդք
 իմոյս հարսնութեան,
 Մուծէք զիս ի տուն գինոյ²,
 Կարգեցէք ի վերայ իմ զսէրն,
 Հաստատեցէք զիս իւղովք,
 Հաւաքեցէք յիս խնձորս³,
 Վասն զի խանդակաթեմ⁴ ես սիրով⁵
 Միածնիս իմոյ,
 Ահեակ նորա ի վերայ գլխոյ իմոյ⁶
 Եւ աչ նորա պատեսցի⁷ զինեւ^{8բ}.
 Եւ առեալ զիս թռուցեալ ամբարձցի⁹
 յերկինս»։
 Հարցանեն ապա¹⁰ առաքեալքն վասն
 գալստեան Միածնի¹¹ իւր,
 Եւ պատասխանեն Սրբոյ Կուսին¹².
 «Զի՛նչ է որդեակն քո¹³ յորդիս գեղեցիկդ
 ի կանայս,
 Ընդ որ փութաս ամբառնալ։
 Զի՛նչ է որդեակն քո յորդիս,
 Զի այդպէս փափագմամբ¹⁴ ընդ նա¹⁵
 ուղերձին^{16 17գ},
 Ո՛ր գնաս ընդ Որդւոյ քո, գեղեցիկդ ի
 կանայս։
 Ո՛ր պատրաստեսցուք առաքել զքեզ
 ընդ նմա¹⁸»^{19ա}։

^{1ա} Հմմտ. Երգ 2:10

² a, b, c, e գինոյ

³ d խնձորս

⁴ d, խանթակաթեմ, c խանդակաթեմ

⁵ c, d, t ի սէր

⁶ b չիք ահեակ նորա ի վերայ գլխոյ իմոյ

⁷ c, d, t պատեսցէ

^{8բ} Հմմտ. Երգ 2:6

⁹ c, d ամբարձ e ամբարցի, t ամբարձցէ

¹⁰ b ապալ

¹¹ a, b, c, d, t Միածնին

¹² a, b շրջ. Կուսին Սրբոյ պատասխանեն

¹³ t քոյ

¹⁴ c, e փափագմամբ

¹⁵ b նայ, t նմա

¹⁶ b ուղերձին

^{17գ} Հմմտ. Երգ 5:9

¹⁸ a չիք նմա, b նմալ

^{19ա} Հմմտ. Երգ 5:17

Յայնժամ պատասխանի տուեալ
 Միածնին²⁰, ասէ առ Մայր իւր.
 «Արի՛ եկ Մայր իմ, գեղեցիկ իմ, աղանի
 իմ,
 Վասն զի ձմեռն անց²¹, եւ ծաղիկք
 երեւեցան յերկրի.
 Արի՛ եկ ի²² գաւառն հայրենի ընդ
 հովանեաւ Հաւրն²³,
 Վասն զի ձայն քո քաղցր է ինձ²⁴, եւ
 դէմք²⁵ քո գեղեցիկ^{26բ},
 Եւ դիր զիս իբրեւ զկնիք²⁷ ի վերայ սրտի²⁸
 քո,
 Եւ²⁹ իբրեւ զմատանի ի վերայ բազկի քո,
 Վասն զի հզար է³⁰ իբրեւ զմահ սէր³¹ քո
 առ իս,
 Եւ ջուրք³² բազումք ոչ կարեն շիջուցանել
 զնա³³»^{34գ}։
 Զայս ասելով առեալ զնա յերկինս
 Չուեաց անմարմնոցն³⁵ պարուք։
 Եւ զմարմինն աստուածընկալ առեալ³⁶
 առաքելոցն
 Ամփոփէին ի սնդոնի³⁷ մաքուր եւ սուրբ
 կտաւոց
 Եւ բարձեալ ի յուսս արհնութեամբ եւ
 երգովք³⁸
 իջուցանեն³⁹ ի Գեթսեմանի⁴⁰,

²⁰ t Միածնին

²¹ c, d, t էանց

²² d չիք ի

²³ a, b չիք ընդ հովանեաւ Հաւրն

²⁴ a, b նոցա

²⁵ c դէմք

^{26բ} Հմմտ. Երգ 2:10-14

²⁷ t կնիք

²⁸ c որդի

²⁹ a, c, d չիք եւ

³⁰ c չիք իբրեւ զմատանի ի վերայ բազկի քո,
 վասն զի հզար է

³¹ c սէր

³² c ջուրք

³³ b զնալ

^{34գ} Հմմտ. Երգ 8:6

³⁵ c, d, t անմարմնոց

³⁶ c, d, t չիք առեալ

³⁷ c, d, t սնդոնէ

³⁸ a, b + հոգեւորաւք եւ

³⁹ c, d, t իջուցանէին

⁴⁰ a, b Գեթսեմանի, c Գեթսեմանի

Դնել ի տապանի¹ զգանձն
անկողնպտելի²:
Զայս տեսեալ խաղմարար ազգ³ հրէիցն
խռովին⁴,
Եւ սովորական շարութեամբն
ամբոխին⁵,
Եւ ոմն բուն հարեալ ի դիրսն⁶
նախատանաւք,
Եւ⁷ եթող անդ զյանդգնող⁸ ձեռսն
պատկառանաւք,
Եւ այլքն⁹ հարան կուրութեամբ:
Ասեն առաքեալքն¹⁰.
«Ո՛վ անմիտ¹¹ հերբայեցիք¹², որքան
յաճախէք լնուլ զչափ մեղաց ձերոց,
Որք զՏէրն սպանիք¹³ եւ զառաքեալսն
հալածեցիք¹⁴,
Եւ Աստուծոյ¹⁵ յաշաց¹⁶ ելիք¹⁷, եւ ամենայն
մարդկան ատելի եղէք¹⁸,
Եւ այժմ ի պարկեշտող յանդգնեալ¹⁹
ժպրհեցալք²⁰
Լնուլ զպակասութիւն նեղութեանցն
Քրիստոսի
Յամբիծ²¹ Մաւր նորին ի²² մարմին»:

¹ **a, b** տապան² **e** անկողնապտելի³ **a, b** ազգն⁴ **a, b, t** խռովէին⁵ **a, b, t** ամբոխէին⁶ **a, b, c** դիրսն⁷ **a, b, e** չիք եւ⁸ **t** զյանդգնաւղ⁹ **a, b, c, d, t** այլք¹⁰ **a, b չիք եւ այլք հարան կուրութեամբ**//
Ասեն առաքեալքն¹¹ **c** անմիտք¹² **d** երբայեցիք¹³ **t** սպանէք¹⁴ **t** հալածեցէք¹⁵ **a, b յԱստուծոյ**¹⁶ **b, c** աշաց¹⁷ **e** ելէք¹⁸ **a, b** եղէք ատելիք **փխ. ատելի եղէք**¹⁹ **a, b չիք յանդգնեալ**²⁰ **a, b** ժպրհեցէք, **c** ժպրհեցաք²¹ **a** յանբիծ²² **a, c, d, t** չիք ի

Իսկ²³ նոքա ստրջացեալք ի շարեացն
անագան²⁴
Ուրեմն գտին զլուսաւորութիւն²⁵ աշաց
իւրեանց,
Եւ զբժշկութիւն²⁶ առնն²⁷ հատեալ²⁸
ձեռացն²⁹:
Իսկ առաքեալքն եղեալ ի տապանի³⁰
զաստուածամուխն³¹ մարմին³²
Լսէին շուրջ³³ զնովաւ գերիս աւուրս
Զերգս հրեշտակաց³⁴, որք եղանակաւ³⁵
պարէին:
Եւ Տէր Քրիստոս վերացուցեալ զոգի
Ըստ³⁶ մարմնոյ իւր³⁷ ծնաւդին³⁸ ած
ցնծութեամբ եւ ուրախութեամբ,
Եւ տարաւ³⁹ հանգոյց ի տաճար Հար
իւրոյ⁴⁰ երկնաւորն թագաւորի⁴¹:
Անդ՝ ուր յաւէր⁴² ցնծութիւն է, եւ
զուրաճացելոցն գեղապարութիւն:
Անդ՝ ուր ակումբ սերովբէիցն⁴³ է⁴⁴, եւ
պար⁴⁵ քերովբէիցն⁴⁶:

²³ **a, b** այլ²⁴ **c** անհաւգան²⁵ **a** զբժշկութիւն կուրութեան, **b** զբժշկու-
թեան կուրութեան, **c, t** լուսաւորութիւն²⁶ **a, b չիք զբժշկութիւն**²⁷ **a, b +** այն²⁸ **a, b** հատեալն²⁹ **a, b** ի ձեռաց³⁰ **a, b** տապան³¹ **a, b** զաստուածընկալ³² **a, b** մարմինն, **a, b +** եւ³³ **c** շուրջ³⁴ **c, d, t** հրեշտակացն³⁵ **c, d, t չիք եղանակաւ**³⁶ **t** ընդ³⁷ **c, d** իւրոյ³⁸ **d** ծնողին, **t** շրջ. ծնողին իւրոյ³⁹ **c** տարու⁴⁰ **a, b** իւր⁴¹ **a, b** թագաւորին⁴² **c, d, t** յաւեժ⁴³ **a, b** սերովբէիցն, **e** սերովբէիցն⁴⁴ **b չիք է**⁴⁵ **a, b, c** պարք⁴⁶ **c** քերովբէից, **e** քերովբէիցն

Անդ՝ ուր բիրք¹ հրեշտակաց² են³ եւ
 եկեղեցի⁴ անդրանկացն⁵։
 Անդ՝ ուր երկնաւորքն երգեն.
 «Սու՛րբ, սու՛րբ, սու՛րբ Տէր
 զաւրութեանց,
 Լի են⁶ ամենայն երկիր⁷ փառաւք
 նորա»^{8ա},
 Եւ երկրաւորքն⁹ ընդ նոսա.
 «փրկութիւն Աստուծոյ մերոյ,
 Որ նստի¹⁰ յաթոռ¹¹ եւ գառիւնն»^{12բ}։
 Սա¹³ Աստուածամայրս¹⁴,
 Որ ցանկայր տեսանել զՈրդի իւր¹⁵
 յաթոռն Դաւթի,
 Ետես այսաւր զնա¹⁶ յաթոռն քառադիմի,
 Եւ յանուն¹⁷ նորա կրկնեալ¹⁸
 Զծունը¹⁹ երկնաւորացն²⁰ եւ երկրաւորացս
 սեռի²¹ 22ա։
 Սա²³ Աստուածածինս, որ
 յուսահատութեան²⁴ սրով²⁵ խոցեցաւ²⁶

¹ **բ** բուրք² **ա, b, t** հրեշտակացն³ **ա, b** է⁴ **d** եկեղեցիք, **c** եկեղեծիկք⁵ **t** անդրանկանցն⁶ **ա, b** է⁷ **c, d, t** երկիրք եւ երկիր **փիւ**. ամենայն
 երկիր^{8ա} Հմմտ. Եւ. 6:3⁹ **ա, b, c, d**, երկրաւորքն¹⁰ **c** սնտի¹¹ **c, d** յաթոռն, **t** + Հաւրն^{12բ} Հմմտ. ՅԱՅՏՆ. 4:8–11¹³ **b** սայ¹⁴ **d** Աստուածամայր¹⁵ **c, d, t** զՈրդի իւր տեսանել **փիւ**. տեսանել
 զՈրդի իւր¹⁶ **b** զնայ, **c, d** + **ի, t** չիք յաթոռն դաւթի,
 ետես այսաւր զնա¹⁷ **b** յանունն¹⁸ **c, d** կրկնել¹⁹ **c** զծնունը²⁰ **ա, b** երկնաւորաց²¹ **c** սէռի^{22ա} Հմմտ. Փիւ. 2:10²³ **b** սայ²⁴ **b** յուսահատութեամբ²⁵ **c** որով²⁶ **ա, b** խոցոտեցաւ, **t** խոցոցաւ

ի տարածել Միածնին իւրոյ զբազուկս²⁷
 ի խաչին.

Ետես այսաւր²⁸ զնա²⁹ գլուխ³⁰
 իշխանութեանց եւ պետութեանց
 երկնաւորաց

Եւ նստեալ ընդ աջմէ Հաւր
 քահանայապետ եկեղեցւոյ³¹
 քաւութեան։

Սա³² Սուրբ Կոյսս, որ մեծամեծ վշտաւք
 նեղեցաւ յանաւրէն հրէիցն
 Յաղաւթելն³³ ի տեղիս չարչարանաց
 Միածնին իւրոյ³⁴,

Այսաւր պատուեալ պաշտեցաւ
 ի հրանիւթ բանակաց
 Եւ գովեցաւ ի լեզուաց հրեղինաց,
 Եւ բազմեալ հանգեաւ ի խորանս,
 Որոյ գեղեցկութիւնն³⁵ անճառ է բանի
 նիւթեղէնս³⁶ լեզուի³⁷։

Այսաւր պարառեալ³⁸ շուրջ³⁹ զսովաւ
 Թեւասքաւեալ⁴⁰ սերովբէքն⁴¹ աղաղակեն
 ասելով.

«Աւրհնեալ ես ամենաւրհնեալդ ի
 կանայս»։

Այսաւր բարձեալ զսա ի վերայ բազկաց
 իւրեանց

Քերովբէքն⁴² փառաց⁴³ հնչեն⁴⁴
 ցնծութեամբ,

Աւրհնեալ են փառք Տեառն

²⁷ **c, d, t, e** չիք զբազուկս²⁸ **b** զայս ար փիւ. այսաւր²⁹ **c, d, t** չիք զնա³⁰ **ա, c, d, t** զգլուխ³¹ **b** եկեղեցոյ³² **b** սայ³³ **c** յաղաւթելն³⁴ **c, d, t** շուրջ. իւրոյ Միածնին³⁵ **ա, b** գեղն, **c** գեղեցկութիւն³⁶ **c** նիւթեղէնս, **t** նիւթեղէն³⁷ **ա, b** լեզուաց, **c** լեզուիւն³⁸ **ա, b, c, t** պար առեալ³⁹ **c** շուրջ⁴⁰ **ա, b** թեւասքողեալն⁴¹ **ա** սերովբէք, **b** սերովբէք, **c, t** սերովբէքն,**d** սերովբէքն⁴² **e** քերովբիմքն **t** քերովբիմքն⁴³ **c** փառաց⁴⁴ **c** հնչեն

Ի¹ տեղեղջ հանգստեան իւրոյ ի տաճարս
նիւթեղէնս^{2 3ա};
Այսաւր ընդ առաջ⁴ եկեալ⁵ սորա⁶
Գունդք հրեշտակաց⁷ երգեն⁸
աւրհնութեամբ,
«Փառք ի բարձունս Աստուծոյ
Եւ յերկիր⁹ խաղաղութիւն եւ¹⁰ ի մարդիկ
հաճութիւն¹¹»^{12բ};
Այսաւր Գաբրիէլ զաւրաք իւրով¹³
Սպասաւորեալ Սուրբ Կուսիս
Ածէ¹⁴ ի¹⁵ գաւառն երկնից եւ ասէ.
«Ուրախ լեր բերկրեալ^{16գ},
ի պատրաստեալդ հանգիստ
Եւ ի փառս Միածնի քո»:
Այսաւր ամփոփեալ քերովբէն¹⁷ զսուրն
հրեղէն¹⁸,
Ճանապարհ առնէ Սուրբ Կուսիս հպել ի
ծառն կենաց^{19 20ա};
Այսաւր նախահայրն²¹ Ադամ նայեցեալ²²
Ընդ գեղապանծ վայելչութիւն դստեր
իւր եւ ասէ.

¹ Էջմիածին

² ա, Ե նիւթեղէն, Ե նիւթեղէնս, ա, Ե +
Այսաւր ամփոփեալ քերովբէն (Ե քերովբէն)
զսուրն հրեղէն ճանապարհ առնէ Սուրբ Կու-
սիս հպել ի ծառն կենաց:

^{3ա} Հմմտ. Եզ. 3:12-13, Դան. 3:53

⁴ ա, Ե յառաջ

⁵ ա, Ե, Ե ելեալ

⁶ Է սուրբ

⁷ Է Էջմիածին հրեշտակաց

⁸ ա, Ե հնչեն

⁹ ա, Ե, Ե, Է երկիր

¹⁰ Ե, Ե, Է Էջմիածին

¹¹ Ե յաճութիւն, Ե հաճութեան

^{12բ} Հմմտ. Ղուկ. 2:14

¹³ Ե իւրով

¹⁴ Ե, Ե ած

¹⁵ Է Էջմիածին

^{16գ} Հմմտ. Ղուկ. 1:28

¹⁷ Ե, Ե, Է քերովբէն, Է քերովբէն

¹⁸ Է հրեղէն

¹⁹ ա, Ե Էջմիածին Այսօր ամփոփեալ քերովբէն
զսուրն հրեղէն, ճանապարհ առնէ Սուրբ Կու-
սիս հպել ի ծառն կենաց

^{20ա} Հմմտ. Մատթ. 3:24

²¹ Է նախահայրն

²² Է նայեցեալ

«Սա²³ է²⁴ մայր ամենայն կենդանեաց»:
Այսաւր նախամայրն Եւայ ողջագութիւն
զգուստր իւր,
Որ եղեւ սահման եւ նահանջիչ²⁵ երկանց
եւ տրամութեան նորա²⁶;
Այսաւր Աբրահամ եւ Սառայ գան ի
համբոյր նորա,
Յորոյ զաւակն արհնեցան ազգք²⁷
ծննդոցն նոցա^{28 29բ};
Այսաւր ականարկեալ Մովսէս ի
Սրբուհիս,
Եւ բարձեալ զձայն իւր³⁰ ասէ.
«Ահա³¹ Կոյսն, զոր ոսկի սափորն իմ
նշանակէր»^{32գ};
Այսաւր ընթացից սորա³³ առաջի Դաւիթ
սաղմոսարանան հնչէ.
«Կացցես զշխոյ ընդ աշմէ թագաւորին
Ի հանդերձս յոսկեհուռս զարդարեալ եւ
պաճուճեալ³⁴»^{35գ};
Այսաւր Սողոմոն³⁶ խրախոյս տուեալ
արիորդաց անմարմնոցն,
Ուսուցանէ ասել³⁷ առ հարսնացեալս
Աստուծոյ,
«Նմանութիւն ոսկոյ³⁸ արասցուք քեզ
հանդերձ կիտուածովք արծաթոյ,
Մինչեւ արքայ³⁹ ի գիրկս իւր ընկալցի
զքեզ»^{40ե};
Այսաւր Եւայի բարձրաբարբառ⁴¹ հնչէ
հանդէպ Սրբուհոյս⁴².

²³ Ե, Ե սայ

²⁴ Է Էջմիածին

²⁵ Է նահանջիչ

²⁶ Ե նորայ

²⁷ ա, Ե ազգ

²⁸ ա, Ե, Ե նորա

^{29բ} Հմմտ. Մատթ. 22:18

³⁰ Է Էջմիածին

³¹ Ե, Ե ահա

^{32գ} Հմմտ. Եւ. 16:33

³³ Ե սորայ

³⁴ Ե, Ե, Է Էջմիածին պաճուճեալ

^{35գ} Հմմտ. Սաղմ. 44:10

³⁶ Է Սողոմոն, Է Սողոմոն

³⁷ Է ասէ

³⁸ ա, Ե, Է ոսկոյ

³⁹ ա, Ե արքայ

^{40ե} Հմմտ. Եւ. 1:10-11

⁴¹ Է բարձրաբարբառ

⁴² ա, Ե, Ե Սրբուհոյս

«Դու ես¹ ծաղիկն ելեալ ի գաւազանէն²
 Յեսսեայ^{3 4ա},
 Եւ կոյսն՝ որ զէմմանուէլն⁵ ծնար»^{6բ}:
 Այսաւր Եղեկիէլ տեսեալ զընթացս⁷
 սորա⁸
 Ընդ երկինս սլացեալ նկատէ եւ ասէ.
 «Այս է⁹ դուռն փակեալ, ընդ որ եմուտ
 Տէր Աստուածն Իսրայէլի¹⁰,
 Եւ յայտնեցաւ ի յերկրի»^{11դ}:
 Այսաւր Զաքարիա¹² ամբարձեալ զաշս
 իւր
 Եւ տեսեալ¹³ զԶքեղազարդ¹⁴ Կոյսս՝
 ցուցանէ.
 «Սա¹⁵ է ձոյլ¹⁶ ոսկի աշտանակն¹⁷,
 Զոր երբեմն ես տեսի¹⁸ բարձող¹⁹
 եւթնարփեան²⁰ շնորհաց»^{21դ}:
 Այսաւր Ամլորդիին ընդ առաջ²² եկեալ²³
 իւր²⁴ ազգականին
 Ի ձայն բարձր աղաղակէ զերգս
 մայրենի եւ ասէ.
 «Աւրհնեալ ես դու ի կանայս, եւ
 արհնեալ է պտուղ որովայնի քո,
 Մայր Տեառն իմոյ եկեալ առ մեզ ի
 յերկինս»^{25ե}:

¹ a, c, d, t չիք ես² d գաւազանէ³ c Յեսսէայ^{4ա} Հմմտ. Ես. 11:1⁵ a, t զէմմանուէլ^{6բ} Հմմտ. Ես. 7:14⁷ c զնթացս⁸ b սորայ⁹ c չիք այս է¹⁰ a, b Իսրայէլի^{11դ} Հմմտ. Եզ. 44:2¹² a, b, c, t Զաքարիայ¹³ c տեսեալ¹⁴ d Զքեղազարդ¹⁵ b սայ¹⁶ c ցոյլ¹⁷ c աշտարակն¹⁸ c տեսի¹⁹ c, t բարձաւ²⁰ d, t եօթնարփեան^{21դ} Հմմտ. Զաք. 4:2²² a յառաջ²³ c չիք եկեալ²⁴ b ուր^{25ե} Հմմտ. Գով. 1:42-43

Այսաւր երկոտասան գունդք
 առաքելոցն²⁶,
 Շուրջ զաստուածընկալ մարմնովն
 եղանակեն եւ ասեն.
 «Արի Տէր ի հանգիստ քո դու եւ
 տապանակս այս ամբիծ»²⁷
 Բնակարան սրբութեան²⁸
 աստուածութեան քո»^{29ա}:
 Այսաւր կոյսքն³⁰ իմաստունք
 սպասաւորք³¹ վերափոխման կուսին,
 Փարին³² զտապանակաւ³³ մարմնոյն եւ
 ասեն.
 «Երանի»³⁴ քեզ երանեալդ ի յազգաց»³⁵,^{36բ}:
 Այսաւր եկեղեցիք Քրիստոսի ընդ
 տիեզերս
 Հանդէս գումարեալ ի պատիւ աւուրս
 մեծի,
 Երանի տան Աստուածածնիս ի
 զանազան շրթունս խաւսից»³⁷:
 Այսաւր երկնայինք³⁸ եւ երկրաւորք ի մի³⁹
 հանդէս պարու
 Վերաւրհնեն զծնաւդս⁴⁰ Աստուծոյ:
 Այսաւր եւ մեք⁴¹ ի պատիւ փոխման
 տիրուհոյ կուսիս⁴²
 Խրախոյս ցնծութեան տացուք մերս
 ժողովոյ⁴³:
 Այսաւր ժողովեալքս ի տաճար անուան⁴⁴
 մաւր տեառն իսկուհոյ⁴⁵

²⁶ a, c, d, t առաքելոց²⁷ a անբիծ²⁸ c + եւ^{29ա} Հմմտ. Բ Մնթ. 6:41, Սաղ. 131:8³⁰ c, d, t կոյսք³¹ a, b սպասաւոր, a + լինի, b + լինին³² c, d փարեն³³ c, d, t զտապանակաւ³⁴ a, b + է³⁵ c յասգաց^{36բ} Հմմտ. Գով. 1:48³⁷ c, d խաւսիս³⁸ c, d, t երկնայինքն³⁹ t չիք մի⁴⁰ a, b, c, t զծնողս⁴¹ c, d մեք⁴² a, b կուսիս տիրուհոյ փխ. տիրուհոյ
 կուսիս⁴³ a, b մերա ժողովոյ փխ. մերս ժողովոյ⁴⁴ c, d, t չիք անուան⁴⁵ a, b, c, e իսկուհոյ

Երկրպագութեամբ կալցուք զնա¹
միջնորդ փրկութեան մերոյ:
Այսար եղեալ ապաստան յարս
պատուական
Կացցուք մաղթանալքս Աստուածածնին
Սրբոյ յանդիման:
Ո՛վ մայր Աստուծոյ², Աստուածածին
Մարիամ,
Հեզ եւ քաղցրալուր, որոց³ առ քեզն⁴
յուսան⁵,
Ո՛վ պարծանք կուսից եւ փառք
հրեշտակաց,
Որ⁶ միայն ես համարձակ բարեխաւս առ
Տէր վասն⁷ աշխարհի:
Ո՛վ շտեմարան բարեաց⁸, եւ աղբիւր⁹
ողորմութեան¹⁰,
Որոց հաւատով զսուրբ ոտից քո¹¹
կանխեցան¹²:
Քեզ սպասէ ժողովեալ այս¹³ հանդէս¹⁴
եւ առաջի քո¹⁵ անկեալ զգթութիւնս¹⁶
հայցէ¹⁷:
Դու՛, Սուրբ Կոյս, որ կացեր յայսար
հուպ երրորդութեանդ,
Խնդրեա՛ եկեղեցւոյ¹⁸ զխաղաղութիւն,
եւ անձանց մերոց զփրկութիւն:
Դու՛, Տիրուհի, որ համարձակդ¹⁹ ես,
Առ միածին քո որդի աղաչեա՛²⁰ վասն
արեամբ գնեալս իւր հատի

Պահել²¹ ամբողջ զանդամս զանազան²²
Ի լրումն մարմնոյ իւր²³ հասակի^{24ա}:
Զայցելուս յառաջնորդե²⁵,
Զքահանայս ի քաւել,
Զպաշտանեայս յուսուցանել²⁶,
Զժառանգաւորս ի դաստիարակել:
Զժողովուրդս ունկնդրութեամբ սոցին²⁷
հետեւել:
Քեզ մաղթէ եկեղեցիս եւ անկեալ
առաջի աղերսէ.
Խոնարհեա՛ յաղաչել²⁸ զմիածին²⁹ որդի³¹ քո
Վասն թագաւորաց հանդարտութեան,
Իշխանաց զուարթութեան³²,
Զինուորաց³³ պատսպարութեան,
Քաղաքաց պահպանութեան,
Եւ որոց ի նոսա զանազան հասակաց³⁴
խնամակալութեան:
Որպէս զի միաձայն³⁵ երգով³⁶ ի մի
հանդէս պարու
Տաւնեսցուք քեզ աստ եւ յանդրանկացդ³⁷
խորան,
Ի փառս Ամենասուրբ Երրորդութեանդ
Հաւր եւ Որդւոյ³⁸
Եւ Հոգւոյդ Սրբոյ³⁹, այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

¹ d զսա² t չիք Աստուծոյ³ b յորոց⁴ a, b քեզ⁵ c ուսան⁶ t չիք որ⁷ a, b, c, d, t չիք առ Տէր վասն⁸ c փարեաց⁹ c ողբիւր¹⁰ a, b ողորմութեանց¹¹ a, b քո ոտից փխ. ոտից քո¹² a, b, c, d, t կանխեցան¹³ c, d, t չիք այս¹⁴ t հանդէսս¹⁵ c, d, t չիք քո¹⁶ c, d, t + քո¹⁷ c յայցէ¹⁸ b, e եկեղեցւոյ¹⁹ t համարձակ²⁰ b աղաչեալ²¹ a, b պահեալ²² c զանազանս²³ c իւրոյ^{24ա} Հմմտ. Եփ. 4:13²⁵ a, b, t առաջնորդել²⁶ a, c ուսուցանել²⁷ t նոցին²⁸ a, b խոնարհեա²⁹ c, d, t աղաչեա³⁰ b զմիածինն³¹ a, b որդիտ³² a, b զարուրթեան, c զուարթութեան³³ a, b զինուարաց³⁴ a, b հասակաց զանազան փխ. զանազան

հասակաց

³⁵ e միայն³⁶ t երգովք³⁷ a, b յանդրանկաց³⁸ b Որդոյ³⁹ a, b Սուրբ Հոգւոյն փխ. Հոգւոյդ Սրբոյ

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու

Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, ԳՀՃ

ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ՍՐԲԵՐԸ ՀԱՅՈՑ «ՅԱՅՍՄԱՆՈՒՐՔ»-ՈՒՄ

«Յասմաուրք»-ը Հայ Եկեղեցու ծիսական գրքերից է, որը բովանդակում է սրբերի վարքերն ու վկայաբանությունները՝ հաստատված յուրաքանչյուր օրվա համար: Այս բնագրերն ընթերցվում են եկեղեցիներում երեկոյան ժամերգությունից առաջ կամ հետո՝ համաձայն տեղական ավանդույթի:

«Յասմաուրք» բառն առաջացել է գրաբարյան «յասմ»՝ «այս» եւ «աուր»՝ «օր» բառերից. վարքերը կամ վկայաբանություններն սկսվում են այս բառերով, օրինակ՝ «Յասմ աուր վկայաբանութիւն սուրբ կուսին Եփրոսինեայ...»:

Հայոց «Յասմաուրք»-ը, որպես ամբողջական ժողովածու, ի հայտ է եկել Ժ.-ԺԱ. դարերից հետո: 991-992 թթ. Հովսեփ Կոստանդնուպոլսեցին հունարենից հայերեն է թարգմանել մի «Յասմաուրք», որի հիշատակարանում նշել է, թե այդ ժամանակ Կ. Պոլսում բազմաթիվ «Յասմաուրքներ» կային, բայց ինքը հայերեն թարգմանելու համար ընտրել է այդ մեկը: Ուշագրավ է, որ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած «Յասմաուրք»-ի հունարեն բնօրինակը չի պահպանվել, եւ ձեռագրի հայերեն տարբերակը կարելի է վկայություն է Ժ. դարում Կ. Պոլսում եղած «Յասմաուրքների» կազմության ու կանոնի ավանդույթյան վերաբերյալ: Հովսեփ Կոստանդնուպոլսեցու «Յասմաուրք»-ը պահպանվել է երկու ձեռագրով՝ Վիեննա Հ^մ 1048 (1302 թ. Սեբաստիա) եւ Վլաս Հ^մ 15 (1238 թ. Արգելա):

Հետագայում Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած «Յասմաուրք»-ի հիման վրա ստեղծվեցին Հայոց «Յասմաուրքների» խմբագրությունները, որոնց կազմողները՝ Հայ Եկեղեցու հոգևոր հայրերը (Տեր Իսրայել, Կիրակոս Արեւելցի, Գրիգոր Անավարզեցի, Գրիգոր Ծերենց), հիմք ընդունելով հիմնական բնագիրը՝ այն լրացրին եւ

հարստացրին հայկական սրբախոսական նյութերով, ինչպես նաև թարգմանեցին այլ բնագրեր հունարենից ու լատիներենից:

Նշենք, որ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած «Յայսմաուրք»-ում կան սրբեր, որոնք գործել են հետքաղկեդոնյան շրջանում: Հետագայում, երբ այս «Յայսմաուրք»-ի հիման վրա առաջացան նաև մյուս խմբագրությունները, հետքաղկեդոնյան շրջանի սրբերը ոչ միայն դուրս չմնացին Հայոց «Յայսմաուրքներից», այլև նրանց ցանկը հարստացվեց նոր անուններով:

Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, թե ինչու են Հայ Եկեղեցու «Յայսմաուրքները» բովանդակել «հետքաղկեդոնյան սրբերի» վարքերն ու վկայաբանությունները, կամ՝ գուցե կարծվի, թե դա պատահական բնույթ է կրել: Հետքաղկեդոնյան շրջանի սրբերին վերաբերող բնագրերը, որոնք ներառվել են Հայոց «Յայսմաուրքներում», արդյունք են Հայ Եկեղեցու հայրերի համակարգված ու երկարատև ջանքերի¹: Ավելին՝ հետքաղկեդոնյան շրջանի սրբերի վերաբերյալ վկայությունների հանդիպում ենք նաև Հեթում թագավորի (1213–1270 թթ.) Ճաշոցում, որտեղ առկա են Ս. Հովհաննես Կամավոր Աղքատի (460 թ., հունվարի 25) եւ Ս. Մարիամ Եգիպտացու (Չ. դար, ապրիլի 1) անունները, ինչպես նաև նրանց պատկերները՝ ձեռագրի լուսանցքում: Նշալներից զատ, այդ շրջանի սրբերի մանրանկարների հանդիպում ենք նաև «Յայսմաուրք»-ի Մորգան Հ^մր 622 ձեռագրում՝ Ս. Հովհաննես Կամավոր Աղքատ (460 թ.), Հռոմի հոգեւոր պետ Գրիգոր (590–604 թթ.), Գեւորգ Խոստովանող (716 թ.), Կ. Պոլսի պատրիարք Գերմանոս (715–730 թթ.) եւ այլն: Հատկապես ուշագրավ են այդ սրբերից շատերի՝ Հակոբ Հովնաթանի վրձնին պատկանող պատկերները՝ «Յայսմաուրք»-ի Հ^մր 1533 ձեռագրում (1729–1730 թթ.):

Ուշագրավ է նաև հայ իրականության մեջ հետքաղկեդոնյան սրբերից ոմանց պատվին եկեղեցիների կառուցումը. դրանք են՝

ա. 1338 թ. Կիլիկիայի Ադանա քաղաքում Ս. Ռոմանոս Երգեցողի պատվին կառուցված վանքը².

բ. Ս. Օքսենտիոսի պատվին կառուցված երկու եկեղեցիները՝ մեկը Արեւմտյան Հայաստանի Երզնկայում՝ Կարմիր գյուղում, որ կառուցվել է

¹ Այս մասին տե՛ս Մ. ԱՊՐԵՍՅԱՆ, Οι μεταχालκιδόνοιοι άγιοι στα Αρμενικά Συναξάρια (Հետքաղկեդոնյան սրբերը Հայոց Հայսմավուրքներում), դոկտ. աշխ., Թեսաղոնիկե, 2014:

² Տե՛ս M. THIERRY, Répertoire des monastères Arméniens, Brepols-Turnhout, 1993, էջ 7:

ԺԱ.-ԺԲ. դդ. եւ գործել է մինչեւ ԺԸ. դարը: Այս եկեղեցին ունեցել է երկու մատուռ, հետագայում այս եկեղեցու ավերակները դարձել են ծպտյալ հայ քրիստոնյաների պաշտամունքի վայր³:

Ս. Օքսենտիոսին նվիրված երկրորդ եկեղեցին կառուցվել է Ղրիմի Թեոդոսիա քաղաքում եւ հայտնի է որպես Կաֆայի Ս. Օքսենտի տաճար (ԺԴ. դ.)⁴:

Հայոց «Յայսմաուրքներում» հիշատակվում են սրբախոսական 48 բնագրեր, որոնք վերաբերում են 451 թ. Քաղկեդոնի տիեզերաժողովից հետո ի Քրիստոս ննջած կամ նահատակված սրբերին:

Հայոց «Յայսմաուրքներում» կան սրբեր, որոնց վարքը ժողովածուում ներառվել է ուշ շրջանի հայսմավուրքագիրների կողմից: Սրբախոսական բնագրերը տարբեր ժամանակներում դասակարգվել են Հովսեփ Կոստանդնուպոլսեցու «Յայսմաուրք»-ի առաջին՝ հիմնական սրբերին հիշատակող բնագրերից հետո, որոնք եւ համարվում են հետագա հավելումներ: Սլավոնական սրբերից հիշատակվում են Դավիթը եւ Ռոմանոսը (Բորիս ու Գլեբ), Ստեփանոս Սուղակեցին:

Ինչպես են սլավոնական սրբերը մտել Հայոց «Յայսմաուրք» հարցին պատասխանելուց առաջ փորձենք համառոտ ներկայացնել այդ սրբերին.

1. «Պատմութիւն սուրբ եւ փառաւորեալ վկայիցն Քրիստոսի՝ Ռոմանոսի եւ Դաւթի, որք ի յՌուսի նահատակեցան յանաւրէն եղբարէն իւրեանց» (ԺԱ. դարի կես):

Ս. Ռոմանոսն ու Դավիթը Հայոց «Յայսմաուրքներում» հիշատակվում են մայիսի 5-ին⁵, հուլիսի 7-ին եւ 24-ին⁶:

Սրբախոսական այս բնագիրը հանդիպում է հետեւյալ ձեռագրերում՝

Մայիսի 5-ին տոնվող – ՄՄ Հ^{մր} 1339, 230բ–232ա, ՄՄ Հ^{մր} 7530, 152ա–153ա, Փարիզ Հ^{մր} 180, 248բ–250բ, Վենետիկ Հ^{մր} 189, 388ա–390բ, Վիեննա Հ^{մր} 7, 483ա–485բ, Քափուչինների Հ^{մր} 1, 554ա–558ա:

Հուլիսի 7-ին տոնվող – Անթիլիաս Հ^{մր} 2, 513ա–515ա:

Հուլիսի 24-ին տոնվող – ՄՄ Հ^{մր} 2695, 196բ–198բ, ՄՄ Հ^{մր} 4873, 198ա–200ա, ՄՄ Հ^{մր} 4737, 230բ–233ա, ՄՄ Հ^{մր} 4741, 362ա–364ա, Վենետիկ Հ^{մր} 631, 294ա–295ա, ՄՄ Հ^{մր} 6283, 243ա–244բ, ՄՄ Հ^{մր} 7433, 403բ–405բ,

³ Տէս Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Երզնկա. հին դարերից մինչեւ այսօր, Երեւան, 2005, էջ 221:

⁴ Տէս MICHEL THIERRY, նշվ. աշխ., էջ 163:

⁵ Տէս «Համաբարբառ Յայսմաուրք», Ե., Մայիս, Ս. էջմիածին, 2010, էջ 60–61:

⁶ Տէս «Համաբարբառ Յայսմաուրք», է., Յուլիս, Ս. էջմիածին, 2011, էջ 260–271:

Անթրիլիա Զ^մ 1, 682ա-686բ, Վենետիկ Զ^մ 710, 577ա-579բ, Վենետիկ Զ^մ 402, 474ա-476ա, ՄՄ Զ^մ 7361, 171բ-173բ, Մորգան Զ^մ 622, 429-434:

Հուլիսի 24-ին տոնվող համառոտ հիշատակություն⁷ - ՄՄ Զ^մ 4683, 578բ, ՄՄ Զ^մ 4684, 508ա:

Բյուզանդիայի Ալեքսիոս Կոմնինոս կայսեր օրոք Ռուսիայում գահակալում էր Վլադիմիրը, որն ընդունեց քրիստոնեական հավատն ու մկրտվեց:

Նախքան քրիստոնյա դառնալը՝ Վլադիմիր (ըստ հայերեն բնագրի՝ Փռամենոս) արքան տարբեր կանանցից 12 զավակ ուներ, որոնց միջեւ բաժանել էր իր թագավորությունը: Դավիթն ու Ռոմանոսը նույն մորից՝ Բյուզանդիայի կայսր Բարսեղ Բ.-ի քույր Աննայից ծնված եղբայրներ էին, որոնք փայլում էին իրենց առաքինությամբ, առ Աստված սիրով ու երկյուղածությամբ, որի համար հայրը՝ Վլադիմիրը, նրանց ավելի շատ էր սիրում: Արքայի այս կրտսեր որդիները Ռոմանոս եւ Դավիթ անուններն ստացել էին քրիստոնեություն ընդունելուց հետո՝ նախքան մկրտությունը նրանք հայտնի էին Բորիս եւ Գլբեր անուններով: Երբ Վլադիմիրը հիվանդությունից մահանում է, թագավորական գահ է բարձրանում նրա ավագ որդին՝ Սվյատոպոլկը (ըստ հայերեն բնագրի՝ Նւստապալկաս), որը սկսում է հալածել իր եղբայրներ Ռոմանոսին ու Դավիթին, քանզի նախանձում էր նրանց եւ չէր ցանկանում, որ վերջիններս որեւէ իշխանություն ունենան: Նենգ ու չարամիտ եղբայրը միջոցներ էր փնտրում նրանց ոչնչացնելու համար: Երբ Ռոմանոսը Կիեւի եկեղեցում Ս. Պատարագին էր մասնակցում, Սվյատոպոլկը զորք է ուղարկում՝ նրան սպանելու. զինվորները ժողովրդի աչքի առջեւ սպանում են աղոթող Ռոմանոսին: Նրա հետ նահատակվում է նաեւ Գեորգ անունով մի սպասավոր: Այնուհետեւ Սվյատոպոլկն իր մոտ է կանչում Դավիթին. վերջինս եղբոր մոտ գալու ճանապարհին տեղեկանում է Ռոմանոսի մահվան մասին: Տեղ հասնելուն պես նրան բռնում են թագավորի զինվորները, գլխատում են, իսկ մարմինը նետում են քարքարոտ ամալի մի վայր:

Դավիթի նահատակության վայրում հայտնվում է լույսի սյուն, եւ լսվում է հրեշտակների սաղմոսերգությունը, որը հովիվները լսելով՝ գալիս եւ գտնում են Դավիթի նշխարները: Համաձայն սրբախոսական բնագրի՝ սուրբ եղբայրների համար բռնակալ Սվյատոպոլկից վրեժխնդիր է լինում նրանց բարեպաշտ եղբայրներից Յարոսլավը (ըստ հայերեն

⁷ Տե՛ս «Համաբարբառ Յայսմաւորք», է., Յուլիս, Ս. էջմիածին, 2011, էջ 275:

բնագրի՝ Ռաւստաւուա), որը զորք է հավաքում, ներխուժում է արքայանիստ եւ սպանում թագավորին: Այնուհետեւ Յարոսլավը գտնում է եղբայրների նշխարները եւ մեծ հանդիսավորութեամբ ու սաղմոսասացութեամբ դրանք ամփոփում Ս. Բարսեղի եկեղեցում: Որոշ ժամանակ անց Ս. Բարսեղի եկեղեցին այրվում է, իսկ սրբերի նշխարներն անվնաս են մնում: Այդ ժամանակ Հովհաննէս եպիսկոպոսն ու Յարոսլավ թագավորը սրբերի նշխարները Ս. Բարսեղի եկեղեցուց տեղափոխում եւ ամփոփում են եկեղեցուն կից մատուռում: Այնուհետեւ Հովհաննէս եպիսկոպոսը կառուցում է հինգ գմբեթ ունեցող մի մեծ տաճար՝ ի պատիվ սրբերի, եւ նրանց նշխարները տեղափոխում է այնտեղ: Հովհաննէս եպիսկոպոսի կարգադրութեամբ՝ Ռոմանոս եւ Դավիթ սրբերի տոներ նշվել է հուլիսի 24-ին:

Աստված սուրբ զորությունն է շնորհում եղբայրների նշխարներին, ու նրանց գերեզմանի վրա կատարվում են բազմաթիվ հրաշքներ եւ սուրբ նշաններ, որոնց մասին մանրամասն հիշատակվում է Հայոց «Յայսմաւուրք»-ում: Հայերեն բնագրի վերջում առկա է մի ուշագրավ վկայություն. «Եւ եւ այլ սփանչելիք սրբոցս գրեալ ի կատարեալ պատմութեան, եւ կատարեն զնշանս մինչեւ ցայսաւր, որոյ բազումք ի մեռոյ աշխարհէս տեսողք եղեալ պատմեն մեզ...»:

Սրբախոսական այս բնագիրը, ամենայն հավանականութեամբ, հայերեն է թարգմանվել ոչ թե հունարենից, ինչպես գերակշռող դեպքերում, այլ՝ ռուսերենից:

Ռոմանոս եւ Դավիթ եղբայրների վկայաբանությունը բովանդակող երկու ձեռագիր է գրվել 1074–1113 թթ.: Դրանցից առաջինը գրել է Իակով Զեռնորիզեցը⁸, իսկ երկրորդը՝ Նեստոր Տարեգիրը⁹:

⁸ Իակով Զեռնորիզեց (Иаков Черноризец)՝ Ուղղափառ եկեղեցու վանական: Ըստ Մակարիոս մետրոպոլիտի եւ Մ. Պ. Պոգոդինի՝ ԺԱ. դարի այս վանականին են վերագրվում որոշ աշխատություններ՝ «Сказание о святых страстотерпцах Борисе и Глебе», «Житие блаж. кн. Владимира», «Послание к Божию слуге Дмитрию»: Ուսումնասիրողներից ոմանք այս հեղինակին են վերագրում նաեւ «Правила молитвы Иоанна» աշխատության սլավոներեն թարգմանությունը:

⁹ Նեստոր Տարեգիր (Нестор Летописец, Нестор Печерский, Нестор Киевский)՝ ռուս տարեգիր, ԺԱ. դարավերջի – ԺԲ. դարասկզբի վարքագիր, Կիեւ-Պեչերյան վանքի վանական: Համաձայն ավանդության նա է համարվում հեղինակը «Повести временных лет» աշխատության, որը, Կոզմա Պրագացու (Козьма Пращский) «Чешская хроника» եւ Գալլ Անանունի (Галл Аноним) «Хроника и деяния князей или правителей польских» աշխատությունների շարքը դասվելով, հիմնարար նշանակություն ունի սլավոնական մշակույթի համար: Ռուս Ուղղափառ եկեղեցին սրբադասել է Նեստոր Տարեգիրին:

Իսկով Չեռնորիզեցի բնագիրն առավել շատ մանրամասներ է բովանդակում, քան մյուս հեղինակինը, որի հիմամբ էլ կարծիք է ձևավորվել, թե սրբախոսական այս բնագիրը նրա ձեռագրից է հայերեն թարգմանվել. այստեղ առկա են ուշագրավ վկայություններ հրաշքների մասին¹⁰, իսկ դրանից զատ, հայերեն բնագիրն անդրադարձել է հիմնականում Ռոմանոսի եւ Դավիթի նահատակությունից հետո կատարված հրաշքներին, ինչպես որ հուշում է բնագրի վերնագիրը՝ «Պատմութիւն սուրբ եւ փառատրեալ վկայիցն Քրիստոսի՝ Ռոմանոսի եւ Դավթի, որք յ յիմում նահատակեցան յանաւրէն եղբարէն իւրեանց»։ Հարկ է նշել, որ Կիրակոս Արեւելցու «Յայսմաւուրք»-ի ՄՄ Հ^մ 7433 ձեռագրում այս վարքը հանդիպում է հետեւյալ վերնագրով՝ «Ի սմին ատու տաւն է սուրբ եւ փառատրեալ վկայիցն Քրիստոսի Դավթի եւ Ռոմանոսի, որ յիմում նահատակեցան յանաւրէն եղբարէն իւրեանց, որ կոչի Պաւրիս Հլէպ»։ Հիմք ընդունելով բնագրի վերջի մեջբերումը՝ կարող ենք ասել՝ հնարավոր է, որ այս պատմությունը մեզ է փոխանցել միջնադարում Կիւս այցելած հայորդիներից մեկը, քանի որ նշվում է՝ «...եւ կատարեն զմշանս մինչեւ ցայսաւր, որոյ բազումք ի մերոյ աշխարհէս տեսողք եղեալ պատմեն մեզ»։ Ինչպես հայտնի է՝ միջնադարում հայերը Կիւսյան Ռուսիա են մեկնել հիմնականում առեւտրական կապեր ստեղծելու նպատակով. վերջիններս, հայրենիք վերադառնալով, իրենց հետ բերել են նաեւ տվյալ երկրի հոգեւոր ու նյութական մշակույթի տարրեր, որի լավագույն օրինակը նաեւ սլավոնական սրբերի ներմուծումն է Հայոց «Յայսմաւուրք»-ում։

2. Դեկտեմբեր ԻՆ. - Յայսմ ատու վարք սրբոյն Ստեփաննոսի արհեպիսկոպոսի Սուղտայի (Սուղակ) մայրաբաղա՛հի¹¹ (Ը. դար)։

Սրբախոսական այս բնագիրը հանդիպում է Կիրակոս Արեւելցու հետեւյալ ձեռագրերում՝ ՄՄ Հ^մ 7433, 166բ-170ա, ՄՄ Հ^մ 7529, 88ա (համառոտ)։

Ս. Ստեփանոսը ծնվել է Կապադոկիայում՝ բարեպաշտ ընտանիքում։ 18 տարեկանում գնում է Կ. Պոլիս եւ Գերմանոս պատրիարքի (715-740 թթ.) կողմից ձեռնադրվում սարկավագ։ Երբ Սուղտայի եպիսկոպոսը մահանում է, Գերմանոս պատրիարքը Ստեփանոսին ձեռնադրում է եպիսկոպոս (նա այդ ժամանակ 35 տարեկան էր) եւ այդ քաղաքի իշխանների խնդրանքի համաձայն՝ նրան ուղարկում է ժողովրդին

¹⁰ Տե՛ս Н. Эмин, Переводы и статьи по духовной армянской литературе (за 1859-1882 гг.): апокрифы, жития, слова и др., Москва, «Этнографический фонд имени Н. О. Эмина» при Лазаревском Институте Восточных языков, выпуск III, 1897, էջ 154։

¹¹ Տե՛ս «Համաբարբառ Յայսմաւուրք», ԺԲ., Դեկտեմբեր, Ս. էջմիածին, 2010, էջ 199-203։

հովվելու, քանզի այդ վայրը հեթանոսական մոլորություն մեջ էր: Ս. Ստեփանոսն այնտեղ ձերբակալվում եւ խիստ տանջանքների է ենթարկվում պատկերամարտ կայսր Լեոն Իսավրացու կողմից: Լեոն Իսավրացու մահից հետո նրան հաջորդած Կոստանդինոս կայսրն ամուսնանում է Իրինայի (էրինի) հետ, որը ծնունդով Կերչ քաղաքից էր: Իրինան բազմիցս լսել էր Ստեփանոսի հրաշագործությունների մասին, ուստի խնդրում է կայսերը ազատ արձակել սրբին: Ստեփանոսը վերադառնում է Սուղտա քաղաք եւ հովվում իր ժողովրդին մինչեւ 70 տարեկանը, որից հետո խաղաղությամբ ննջում է ի Տեր :

Ս. Ստեփանոսը բազմաթիվ հրաշքներ է գործել ինչպես իր կենդանության օրոք, այնպես եւ մահից հետո, որոնց մասին մանրամասն նկարագրված է նրա վարքում:

Ս. Ստեփանոսի վարքն ավարտվում է հետեւյալ ուշագրավ տողերով. «Եւ այլ բազում նշանս եւ սքանչելիս արար սուրբն Ստեփաննոս եւ առնէ, բայց զայս ի բազմէն զսակաւն գրեցաք վասն չճանճարանալոյ լսողացդ»:

Ս. Ստեփանոսի վարքը հանդիպում է Կիրակոս Արեւելցու խմբագրության միայն ՄՄ Հ^{մր} 7433 ձեռագրում, մյուս ձեռագրում (ՄՄ Հ^{մր} 7529) այն համառոտ հիշատակություն է՝ «Յայսմ աւուր վարք Ստեփաննոսի, եպիսկոպոսի Սուղտայի»¹²:

Ս. Ստեփանոս Սուղակեցու վարքի ընդգրկումը Կիրակոս Արեւելցու խմբագրության «Յայսմաւուրք»-ի ՄՄ Հ^{մր} 7433 ձեռագրում պատահական բնույթ չի կրում: Այս ձեռագիրը գրվել է 1467 թ. Կաֆայում (Թեոդոսիա), իսկ Կաֆայում 1316 թ. գործել է հայկական երեք եկեղեցի: 1449 թ. Կանոնագրքում առկա է հատուկ գլուխ՝ սեւծովյան գաղութի վերաբերյալ, նշյալ գլխում խոսվում է Կաֆայի հայ եւ այլ ազգի եպիսկոպոսների սահմանափակումների վերացման մասին՝ «*De molestiis per dominum Episcopum Caphe illatis Grecis, Ermenis, Iudeis, et allis cismaticis removendis*»¹³: Կիրակոս Արեւելցու խմբագրության «Յայսմաւուրք»-ն ընդօրինակվել է նաեւ Ղրիմում 1316 թ.՝ Փարիզ Հ^{մր} 180 ձեռագիր¹⁴: Ղրիմի տարածաշրջանի Կաֆա եւ Սուղակ քաղաքներում հայկական համայնքի,

¹² ՄՄ Հ^{մր} 7529, 88ա. այս ձեռագիրը պատկանում է «Յայսմաւուրք»-ի Անանուն Բ.՝ համառոտված խմբագրությանը:

¹³ Հմմտ. Г. АВГАРЯН, К проблеме предполагаемой греческой версии «Сказания о Борисе и Глебе», «Русская и армянская средневековые литературы», Ленинград, 1982, էջ 238:

¹⁴ Տե՛ս «Manuscripts arméniens de la Bibliothèque Nationale de France», Catalogue, Paris, 1998, էջ 609-651 (հեղ.՝ Ռ. Գեւորգյան, Ա. Տեր-Ստեփանյան):

հայ հոգեւորականների առկայությունն ու գործունեությունը նկատելի ազդեցություն են ունեցել ոչ միայն «Յայսմաւուրք»-ի ձեռագրի ընդօրինակման, այլ նաեւ Սուղակի պաշտելի սրբի՝ Ստեփանոսի վարքի՝ այդ ձեռագրում ներմուծման առումով: Այսպիսով, ձեռագրի գրիչը Ստեփանոս Սուղակեցուն դարձրել է Հայ Եկեղեցու՝ տվյալ ժամանակաշրջանի ծիսական ու պաշտամունքային կյանքի մասը, իսկ որ ամենակարեւորն է՝ մեզ է փոխանցվել սրբախոսական մի գոհար եւս:

Հարկ է նշել, որ Սուղակում հայերի հոգեւոր կյանքի մասին է վկայում այնտեղ գրված հունարեն մի ձեռագիր եւս, որի առնչությամբ տեսակետ կա, թե Ռոմանոս եւ Դավիթ սուրբ նահատակների վերաբերյալ պատմությունը՝ գրված այդ ձեռագրում, հունարեն է թարգմանվել բնագրի հայերեն տարբերակից¹⁵: Այդ ձեռագրում, բացի Ռոմանոս եւ Դավիթ սրբերի վերաբերյալ բնագրից, առկա են Սուղակում հայերի գոյության ու գործունեության մասին վկայող՝ հունարենով գրված տեղեկություններ: Օրինակ՝

1. Այս օրը (փետրվարի 11) ննջեց Աստծու ծառա Էրնիցուն՝ հայ Սամաթի կինը (1306 թ.):

2. 1242 թ. փետրվարի 12-ին, չորեքշաբթի ննջեց Աստծու ծառա Դավիթը՝ Սմբատի որդին եւ այլն¹⁶:

3. Այս օրը՝ 1292 թ..... քրիստոնեական Զատիկն էր, բայց հայերը տոնեցին նույն ամսվա 16-ին:

Այսպիսով, հայերի՝ Զատիկը տոնելու մասին վկայությունը ցույց է տալիս, որ Սուղակում գործել է նաեւ հայկական եկեղեցի, գոյություն է ունեցել հայկական համայնք. ըստ նշյալ հիշատակության՝ հայերը Ս. Զատիկը տոնել են համաձայն Հայ Եկեղեցու ավանդության: Ավելին՝ որոշ ուսումնասիրողների կարծիքով, երբ Ֆլամանդացի ճանապարհորդ, ուղեգրող, Ֆրանցիսկյան միաբանության անդամ Վ. Ռուբրուքը 1253 թ. եղել է Սուղակում, նրան ընդունել է տեղի հայ եպիսկոպոսը¹⁷:

Վերլուծելով Հայոց «Յայսմաւուրք»-ում առկա սլավոնական սրբերի վերաբերյալ երկու սրբախոսական բնագրերը՝ կարծում ենք, որ հայերի միջնադարում սկիզբ առած ներթափանցումը՝ նախ Կիււյան Ռուսիա (առեւտրական նպատակներով), ապա՝ պատմաքաղաքական

¹⁵ Տէս Դ. АБГАРЯН, նշվ. աշխ., էջ 237:

¹⁶ Տէս անդ:

¹⁷ Տէս В. РУБРУК, Путешествие в восточные страны. СПб., 1911, էջ 66-67:

իրադարձությունների հետեւանքով՝ Ղրիմի տարածաշրջան, ժամանակի ընթացքում իրենց գործուն ազդեցությունն են թողել հայկական նյութական ու հոգեւոր մշակույթի եւ ժառանգության վրա: Հետագայում երկու ժողովուրդների շփման եւ սերտ հարաբերությունների հաստատման արդյունքում՝ ԺԲ. դարավերջին եւ ԺԳ. դարասկզբին սկզբնավորվեցին հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունները, որի մասին են վկայում Հայ Եկեղեցու հայրերի նամակները՝ ուղղված ռուս պատրիարքներին ու հոգեւորականներին¹⁸: Անշուշտ, այս հարաբերությունների արդյունք են նաեւ սրբախոսական բնագրերի եւ եկեղեցական գրականության թարգմանությունն ու տարածումը:

РЕЗЮМЕ

Статья посвящена славянским святым, которые упомянуты в Армянских Синаксариях. Появление агиологических текстов славянских святых в ритуальной книге Армянской Церкви порождает ряд вопросов. Подробное и многоуровневое исследование агиологических текстов показывает, что перевод жития и мученичества славянских святых на армянский язык и их включение в ритуальный сборник — почерк поздних времен армянских синаксаристов. Эти тексты были вставлены после основных текстов почитаемых святых дня, поэтому считаются дополнениями поздних времен к агиологическому тексту.

В статье рассматривается мученичество славянских святых Давида и Романа (Бориса и Глеба) (половина XI века), а также жития Стефана Сурожского (архиепископ Сугдеи (ныне Судак в Крыму), VIII век). Анализ агиологических текстов показывает, что в данном случае перевод и распространение славянских агиологических текстов и церковной литературы в средние века связан с проникновением армян в Киевскую Русь в коммерческих целях, а также с деятельностью армянской общины, сформированной в Крымском регионе в результате историко-политических событий. В результате установления общения и тесных связей между двумя народами армяно-российские церковные

¹⁸ Տե՛ս Н. Розов, К изучению русско-армянских связей древнего периода (Метрополит Иларион и Католикос Нерсес Шнорали), «Литературные связи», том I, Ереван, 1973, էջ 71. Կ. Айвазян, Армения и Русь (XI–XVI вв.), Ереван, 2003, էջ 301. նույն հեղինակի՝ «История отношений русской и армянской церквей в средние века», Ереван, 1989:

отношения начались в конце XII и начале XIII веков, о чем свидетельствуют письма отцов Армянской Церкви, адресованные русским патриархам и священнослужителям.

SUMMARY

The article introduces the Slavonic saints mentioned in the Armenian Synaxaries, whose inclusion into the ritual books of the Armenian Church raises questions. A detailed and multilevel observation of hagiological texts shows that the translation of the lives of Slavonic saints and their inclusion in the hagiological collection is connected with the Armenian Synaxary writers of later periods. These hagiological texts have been inserted after the texts of main Saints of the day, which are considered to be further additions to the sacred text.

The article reflects on the martyrdom of Slavonic saints David and Romanos (Boris and Gleb) (mid- 11th century), as well as the life of Stepanos of Sudak (8th century). The analysis in terms of an article shows that in this case the translation and dissemination of Slavonic hagiological texts and church literature are connected with the entrance of the Armenians in Kievan Rus in the Middle Ages with commercial purposes, as well as the activity of the Armenian community established in the Crimean region because of the historical-political complicated situation. As a result of the establishment of warm and close relations between the two peoples, the Armenian-Russian Church relations began to develop in the late 12th and early 13th centuries, as evidenced by the letters of the Armenian Church Fathers addressed to Russian patriarchs and clergymen.



ՆՈՐԱՅՐ ՊՕԴՈՍԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԿԱՐԱՊԵՏ ՊԱՏՐԻԱՐԲ ՊԱԼԱՏԵՑՈՒ «ՏԱՐԵԿԱՆ ՔԱՐՈՉԳԻՐՔԸ»

Աշխարհով մէկ սփռուած հայերն իրենց հետ տանում եւ տարբեր ծագերում սփռում են նաեւ գրաւոր աղբիւրներն ու գանձերը: Դրանց մէջ ԻԱ. դարում անգամ շարունակում են ասպարէզ հանուել նոր բնագրեր, ձեռագրեր, ստեղծագործութիւններ: Նոր այնքանով, որ գիտական, ընթերցողական շրջանակներին մինչ այժմ ծանօթ չեն եղել եւ շրջանառութեան մէջ են դրում առաջին անգամ:

Նման մի բնագրի առնչուեցիմք ԱՄՆ Արեւմտեան թեմի պահոցներում: Թեմիս առաջնորդ Գերաշնորհ Յովնան Արք. Տէրտէրեանի յանձնարարութեամբ առաջնորդարանի ինչ-ինչ ձեռագրեր, գրաւոր պատառիկներ դիտարկելիս ի յայտ եկաւ մեծադիր էջերով մի գիրք՝ ընդօրինակուած 1891 թ. Երուսաղէմում, ինչպէս տիտղոսաթերթն է ծանուցում, որ պարունակում է Կարապետ Պատրիարք Պալատեցու ֆարոգների ժողովածուն՝ «Տարեկան Քարոզք» անուամբ: Այն գրուած է մեր եկեղեցու տօնացոյցին համապատասխան՝ ամէն մի ֆարոզ նուիրելով այս կամ այն տօնին ու սուրբին:

Մաշտոցեան Մատենադարանում պահում են Կարապետ Արք. Պալատացու «Քարոզգրի» 4 այլ ձեռագրեր, որոնցից երկուսի՝ 1838 թ. հրիսուսւոյում գրուած թ. 5359 ձեռագրի եւ 1847 թ. նոյն հրիսուսւոյում գրուած թ. 4917 ձեռագրի գրիչը իմքն է՝ հեղինակ Կարապետ Արք.-ը: Քարոզգրերից միւսները՝ թ. 5445 եւ թ. 4510 («Քարոզգրի կիրակէից» վերնագրով) գրուել են Կ. Պոլսում համապատասխանաբար 1847 եւ 1860 թթ.¹: Եւ ահա Հայաստանից եւ հեղինակի ապրած վայրերից բաւականին հեռու՝ Ամերիկեան եզերքում ի յայտ է գալիս Կարապետ Պալատեցու «Քարոզգրի» մէկ այլ ձեռագիր, «Տարեկան ֆարոզգիր» խորագրով:

Նախ՝ հեղինակի մասին համառօտ ծանուցում: Կարապետ Պատրիարք Պալատեցու մասին կենսագրական տուեալներ շատ չեն պահպանուել: Ծնուել է 1783 թ., մանուկ հասակից հոգեւոր կեանքի կոչուելով՝ աշակերտել է Պօղոս Պատրիարք Ալեքսանդրեցուն (Էտիրնեցի): Ուսումնառութեան մի շրջան

¹ Տե՛ս «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Ա-Բ, Երեւան, 1965-1979:

է ունեցել ժԹ. դարի սկզբներին բացուած՝ Արմաշի Բարթողիմեան ուսումնական կենտրոնում, որի սերունդից էին իր ժամանակի յայտնի հոգեւորականներ Գէորգ Փոխամորդը, Պօղոս Զէնկիլեցին, Յովհաննէս Գասպարեանը եւ ուրիշներ: Տարբեր տարիների եղել է նուիրակ Վանում, առաջնորդ Ամասիայի, Մարգուանի: 1823–31 թթ. ընտրուել է եւ մօտ մէկ տասնամեակ պաշտօնավարել Կ. Պոլսի պատրիարք:

Պատմութիւնը պահպանել է Կարապետ Պալատեցու պատրիարքութեան շրջանի յատկապէս շինարարական մի քանի նախաձեռնումներ: 1826-ին Կ. Պոլսում պատահած հրդեհի հետեւանալով Ս. Աստուածածին արքունիստ Մայր եկեղեցին եւ պատրիարհարանը ամբողջովին հրոյ ճարակ եղան: Յարութիւն Ամիրա Պէգեւանը, Սուլթան Մահմուտ Բ.-ի հրովարտակով, ճարտարապետ Գրիգոր Ամիրա Պալեանի ու Կարապետ Տէօվլէթեանի պատրաստած յատակագծերով կառուցել է Բարաշէն եկեղեցին, որի բացումը լինում է 1828-ին:

Կարապետ Պալատեցու պաշտօնավարման շրջանում անուանի շատ հայեր կային օսմանեան արժանիքով: Այդ ընթացքում եւ նրանց աջակցութեամբ պատրիարքը վերանորոգում է Կ. Պոլսի Սկիւտարի Ս. Խաչ հայոց եկեղեցին: Աւելի ընդարձակ հողի վրայ բծախնդիր յատակագծով եւ Յովհաննէս Ամիրա Սէրվէրեանի ճարտարապետութեամբ կառուցում է Բարաշէն նոր եկեղեցին: 1830-ի այս շինութեանն աջակցութիւն են բերում արժանի ճարտարապետ Գրիգոր Ամիրա Պալեանը, Գազազ Յարութիւն Ամիրա Պեգեւանը, Յարութիւն Ամիրա Նորատունկեանը, Միքայէլ Ամիրա Փիշմիշեանը եւ ուրիշներ:

Կարապետ Պալատեցին վախճանուել է 1850-ին եւ թաղուել Սկիւտարի գերեզմանատանը:

Կ. Պոլսի ստեղծագործող մեր այս պատրիարքից յայտնի է «Լապտեր հոգւոյ» խորագրով երկասիրութիւնը, որ փիստոնէական պարզ ուսուցում է հարց ու պատասխանի ձեւով²: Հեղինակի մէկ այլ երկ՝ աշխարհաբարի փոխադրուած, «Ծանուցում ֆահանաներին՝ ապաշխարութեան խորհրդի վերաբերեալ» խորագրով տպագրուել է վերջերս³:

* * *

² ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ., *Լապտեր հոգւոյ*, Կ. Պոլիս, 1826, 57 էջ:

³ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔ. ՊԱԼԱՏԵՑՈՒ, *Ծանուցում քահանաներին՝ ապաշխարութեան խորհրդի վերաբերեալ, թարգմ. եւ ընդ. խմբ.*՝ Ա. Դիւանյան, Ս. Էջմիածին, 2012:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Արեւմտեան թեմի Առաջնորդարանում պահպանուած ձեռագիրը: Այն հաստ կազմով թղթեայ գիրք է, 323 համարակալած եւ 32 շհամարակալած էջերով, չափսը՝ 32x25: Ընդօրինակուել է 1891 թ. Երուսաղէմում, ինչպէս 318-րդ էջի յիշատակարան-ծանուցումից ենք իմանում՝ Սարկաւագ Պօղոս վարդապետ Դամասկոսցու կողմից:

«Յաջողութեամբն Աշոյն անեղին Աստուծոյ եւ օգնականութեամբ նորին Սր. Հոգւոյն ամենալրացուցչի, ձեռնամուխ եղէ յայս Գիրք տարեկան ֆարոգութեանց, եւ ի միջոցի տասն հինգ ատուր աւարտեցաւ յԵրուսաղէմ 1891, փետրուարի 2: Ծառայ Տեառն Սարկաւագ Պօղոս վարդապետին Դամասկոսցի: Սոյն «Տարեկան ֆարոգ» կոչուած գրքիս ընդօրինակութիւնը Արժ. Տ. Մեսրովք վարդապետի անձնական ձեռագիր գրէն է, որոյ շնորհիւ պիտի վայելեմ մաղթելով նորին սրբութեան աստ կեանս երկարս, եւ միանգամայն ի հանդերձելումն երկնից արքայութեան փառացն մասնակցութիւն. Ամէն»:

Կարապետ Պալատեցու «Տարեկան ֆարոգգիրքն» ընդգրկում է ձեռագրի մեծագոյն մասը՝ 318 մեծադիր էջ, գրուած է մանր շղագրով: Ամբողջական տիտղոսաթերթն է՝ «Տարեկան Քարոզգիրք, հաւաքեալ ի Սուրբ Գրոց եւ ի մատենից Սուրբ իմաստուն վարդապետաց: Հատոր Առաջին: Աշխատասիրութեամբ Պօլսեցի Տեառն Կարապետի Արեւալիսկոպոսի եւ պատրիարքի Կոստանդնուպոլսեցոյ: Յամի Տեառն 1834 եւ մերոյս ՌՄՁԳ»: 319-322 էջերին բովանդակութեան ցանկն է:

Առանց էջահամարի վերջին էջերին ընդօրինակուած են Կարապետ Պալատացու այլ երկեր՝ «Քարոզ մասնաւոր իշխանութեան: Գաւազան վարդապետի» (6 էջ), «Առաջաբանութիւն առ նրբանկատ ընթերցասէր արամազնէից» հառը (15 էջ), «Ծանուցումն ի վերայ Գլխադրի» (12 էջ) մանր երկերը: Վերջինը Ս. Եղուսաղէմի հայկական մի ֆանի կարետուր սրբավայրերի համառօտ եւ ուշագրաւ նկարագրութիւն է:

Էջ Ա-Բ «Առաջաբանութիւնը» պարզաբանում է ֆարոգգրքի նպատակները եւ մասնաւորապէս գրում. «Այսու բանիւ ուսումն լռելեայն ընկալցի մեզ յառաքելոց սրբոց, իբր զի անհաւատք եւ հաւատացեալք մի օրինակ պէտս ունին ֆարոգութեան, անհաւատք զի գալ մարթասցին ի յոյս աստուածգիտութեան, եւ հաւատացեալք՝ զմնալ զօրեսցին հաստատութեամբ ի հաւատս, յոր կոչեցան առաջնոյն ֆարոգիչ»:

Ապա յաջորդող էջերին տուում են առանձին ֆարոգներ, համապատասխան մեր Եկեղեցու տօնացոյցի, թուով 115 ֆարոգ: Առանձնապէս մանրակրկիտ են ներկայացուած Մեծ պահքի օրերի ֆարոգները՝ թուով 32, որոնցից

խրաֆանչիւրը նուիրուած է այլեւայլ բարոյական-կրօնական խնդիրների, ինչպէս՝ «Փոյթ ի բարեգործութիւնս», «Կոշումն ապաշխարութեան», «զգուշութիւն ի մեղաց» եւ այլն:

Ոչ ընդարձակ այս դիտարկումները, համոզուած ենք, բաւարար են վստահ ասելու, որ մեր ձեռքի տակ է շատ առումներով օգտական ու արժէքաւոր ստեղծագործութիւն: Կարապետ Արք. Պալատեցու Քարոզգրքի մասին առաւել մանրամասն խօսելու եւ, ինչու չէ՝ բնագիրն ամբողջութեամբ հրատարակելու նախաձեռնութիւնը թողնելով յետագային՝ ընթերցողներին ենք ներկայացնում մի հատուած նրա հեղինակած Քարոզգրքից՝ հաշվերացի տօնին նուիրուած ֆարոզը: Այն գրուած է գրաբարով, սակայն համեմատաբար յաղթահարելի է, լեզուն օժտուած է կանոնաւորութեամբ, ունի կոտ տրամաբանութիւն, միաժամանակ պատկերաւորման միջոցներն էլ սակաւաթիւ չեն: Վստահ ենք՝ Կարապետ Արք. Պալատեցին իր կարեւոր տեղը պիտի ունենայ հայ հոգեւոր գրականութեան, ֆարոզխօսութեան անդաստաններում:

ԿԱՐԱՊԵՏ ՊԱՏՐԻԱՐԺ ՊԱԼԱՏԵՑԻ

ՃԱՆԱՊԱՐԶ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԼՆ
«Ճանապարհի բարեպաշտից ուղիղ են» (Ես. ԻԵ. 7)

Ա. Ի ճանապարհի եղաւ մարդ յայս աշխարհ ո՛չ միայն զի ի ծննդենէ ի մահ երթացէ, այլ մանաւանդ յերկրէ յերկինս ելանիցէ, քանզի զայս ամենայնից վախճան մարդոյ ամենաբարի արարիչն Աստուած է: Իսկ մարդ զի՛նչ, յարբունս համեալ՝ տեսանէ առաջի իւր զկրկին ճանապարհս. մին զառ ի վեր յերկինս հանէ զմարդ, եւ միւսն զառ ի վայր իջուցանէ, այսինքն՝ մին Արքայութիւն, եւ միւսն հեշտութիւն:

Այն է առաքինութիւն ի վեր յերկինս հանէ, որ այս դժուարին է տեսլեամբ, զի ըստ ասածին՝ ոտք առաքինութեան քրտամբք եւ աշխատութեամբ բուսանին: Իսկ հեշտութիւն ի դժոխս իջուցանէ, այլ ի վերին երեսս փափկութեամբ կերպարանեալ՝ դիւրին զինքն երեւցուցանէ:

Աստանօր զի՛նչ արասցէ մարդ ճանապարհորդ, ընդ ո՞ր ճանապարհ գնասցէ, ընդ դժուարին, եթէ ընդ դիւրին: Ապաքէն ամենայն ոք ընդ դիւրին կամին ընթանալ, այլք, որք միտս ունին եւ լուսաւորեալք եւս են ի Սուրբ Գրոց, ո՛չ յարտաքինսն հային կերպարան ճանապարհորդացս, այլ ի ներքինսն հային եւ նպատակ նոցա այնպէս ընտրեն զիւրեանց ճանապարհ եւ գնան: Յայս իսկ սուրբ մարգարէն Եսայիաս ի վախճան այսօրեայ ընթերցուածի իւրում ասէ՝ «Ճանապարհք բարեպաշտից ուղիղ են, դիւրեալք են ճանապարհք աստուածապաշտից» (Ես. ԻԵ. 7):

Բ. Ապաքէն աշխատութեամբ կատարին ընթացք առաքինութեանց, քանզի «Նեղ է ճանապարհն, որ տանի ի կեանս» (Մատթ. է. 14), այլ որ փափաքի ի նպատակ նորա հասանել, դիւրանայ նմա ճանապարհ նեղ: Յակովբ ի գնալ իւր յԱսորիս, կամեցաւ ի մուտս արեւու ի քուն լինել ուրեք, ըստ Սուրբ Գրոյն պատմելոյ՝ «Հառ Յակովբ ի քարանց տեղւոյն եւ եղ ընդ սնարս իւր (Ծննդ. ԻԸ. 11): Եւ ի վերայ քարաշէն բարձի քաղցր ի քուն եմուտ, քաղցր ասեմ, զի ետես Յակովբ անդ ի քուն սանդուղք, որ հասանէր մինչ յերկինս, եւ զհրեշտակս, զի ելանէին եւ իջանէին ընդ այն: Քարինքս, զոր եղ Յակովբ ի սնարս իւր, նշանակէ զաշխատութիւնս, որոց համբերել ունի առաքինին վասն արքայութեան,

քաղցր ի քուն եղեւ Յակովբ ի վերայ քարանցս, քաղցրանան եւ ամենայն աշխատութիւնք առաքինւոյն, որ կամի յերկնային դասաւ ժամանել ի դասս զուարթնոցն:

Զի՞նչ ոչ առնէ վաճառականն վասն մարմնաւոր շահավաճառութեան. ընդ ծով անցանէ անցանէ, յերկիր օտար պանդխտի, քաղցի եւ ծարաւոյ ժուժկալէ: Զի՞նչ ոչ առնէ զօրականն վասն եղծանելի պսակին. նախ առաջին՝ ի զէն ընթանայ, շահատակի ի ճակատ պատերազմի, ընդդէմ ելանէ թշնամւոյն:

Արդ՝ եթէ այսպիսի եւ այդչափ աշխատութիւնք տանելի են վասն առօրեայ շահին եւ վասն անցաւոր փառաց, զի՞նչ անտանելի իցէ վասն արքայութեան եւ վասն անվախճան երկնային փառաց, ապա ուրեմն իրաւամբ ասէ մարգարէն, թէ՝ «Ճանապարհք ամպարշտաց ուղիղք չեն»:

Գ. Այնչափ է զօրութիւն ճանապարհի ամպարշտաց՝ մինչեւ դառն տանջանաց համբերութեամբ տանել: Այսմ օրինակ արեգակն լիցի ձեզ ակն լուսոյ, սա յայտ է, թէ զպայծառութիւն լուսոյ իւրոյ միշտ պահէ անոխակալ, թող ամպեացեն երկինք եւ շանթս արձակեսցեն, այլ նա է միշտ լուսատու եւ գնայ ընդ մէջ փայլատականց զճանապարհ իւր անվեհեր: Այսպէս եւ բարեպաշտք ըստ օրինակի արեգական ի սկսեալ շաւղացն երբէք ոչ խոտորին, յինչ եւ իցէ պատճառաւ, քանզի տանին համբերութեամբ ցաւոց եւ վշտաց, կախարդանաց եւ թշնամեաց, սովու եւ չքաւորութեամբ եւ այլ ամենայն պատահարաց:

Ոչ առանց խորհրդոյ զարեգակն օրինակ բերի բարեպաշտիցդ, զի ինքնին բարեպաշտք իբրեւ զարեգակն ունին ծագել ի հասանել իւրեանց ի նպատակ ճանապարհի ուղղութեանց, ըստ որոց ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս «Յայնժամ արդարն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից» (Մատթ. ԺԳ. 43):

Այլ զի՞ է ինձ օրինակաւ յայտնել զճշմարտութիւն, մինչ ահա նոքին իսկ արդարք առաջի աշաց մերոց են: Ո՞չ քարոտ էր ճանապարհն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, եւ քանի՞ դիւրացաւ նմա, մինչ առ նմին ետես երանելի նպատակն. «Տեսանեմ, ասէ, զՅիսուս, զի կայ ընդ աջմէ Աստուծոյ» (Գործք է. 35): Ո՞չ փշոտ էր ճանապարհն մերոյ Լուսաւորչին եւ խորին ի խոր վիրապի անդ, այլ քանի՞ դիւրացաւ նմա այն՝ զօրհանապազ տեսանելով զհրեշտակ Տեառն: Ահա, տեսէք, թէ քանի՞ դիւրեալք եւ պատրաստեալք են ճանապարհք աստուածապաշտից:

Դ. Իսկ եթէ անտանելի թուիցի ումեք ճանապարհն, ընդ որս գնացին սուրբքն Ստեփաննոս եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր եւ այլ բազում սուրբքն, կան եւս բազում այլ ճանապարհք, ընդ որս որպիսի ոք իցէ՝ կարէ դիւրաւ ընթանալ, եթէ կամեսցի:

Առաջին ճանապարհն ստուգագոյն այն է՝ ճանապարհն ճշմարտութեան⁴, զոր նախամեծար ընտրեաց Դաւիթ. «Զճանապարհ ճշմարտութեան քո ընտրեցի» (Սաղմ. ՃԺԸ. 30):

Երկրորդ՝ կայ ճանապարհն յարգագոյն, այն է՝ ճանապարհն գրութեան, զորմէ ասէ Տէրն մեր. «Զողորմութիւն կամիմ եւ ո՛չ զգոհ» (Մատ. Թ. 13): Կայ նաեւ ճանապարհն ապահովագոյն, այն է՝ ճանապարհն անմեղութեան, ըստ որոյ ասէ Դաւիթ. «Երանեալ են անբիծք ի ճանապարհի, ոյք գնան յօրէնս Տեառն» (Սաղմ. ՃԺԸ. 1):

Երրորդ՝ կայ ճանապարհն համառօտագոյն, որպիսի են ճանապարհն աղփատութեան, զի որ ընդ սա գնայ, նուազ սխալէ քան զայլսն եւ վաղագոյն եւս հասանէ ի դէմ եղեալ տեղին, ըստ այսմ թէ՝ «Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից» (Մատթ. Ե. 3):

Չորրորդ՝ կայ ճանապարհն անդորրագոյն, այն է ճանապարհն սիրոյ, որ ձգի յԱստուած, միանգամայն յընկերն, ի թշնամին որպէս եւ ի բարեկամն: Ուստի արդարեւ արժան է ճանապարհս անդորրս կոչիլ զնա: Եւ զայսմանէ ասէ Տէրն մեր. «Որ սիրեն զիս, սիրեսցի ի Հօրէ իմմէ, եւ ես սիրեցից զնա եւ երեւցուցից զիս նմա» (Յովհ. ԺԴ. 21): Ըստ սոցին են եւ այլք եւս ճանապարհք ուղիղք, ընդ որս գնան բարեպաշտք եւ հասանեն յերանաւէտ կենաց օթեւանեն:

Ե. Սակայն են, որք զայպիսի ուղիղ եւ դիւրին ճանապարհս թողեալ՝ գնան ընդ տաժանելի ճանապարհ եւ անկանին ի խորխորատն դժոխոց: Եւ ո՞յք իցեն նոքա:

Նախ՝ հպարք են, զառիւվեր գնալ ախորժին ընդ ճանապարհն լեռնային: Հարցանիցէք, թէ ո՞ւմ նման իցեն հպարտք. նման են նապաստակի, որ քաջ ընթանայ յեւանելն զառիւվեր, քան յիջանելն ընդ զառիւվայր ձորն, զի առաջոյ սրունք նորա կարճ են քան զյետինսն: Նմանապէս հպարտք ի լեռնէ հպարտութեան դժկամակ իջանեն, այլ ի տեղի աւագութեան քաջութեան ելանեն: Եւ այսմ պէս են առաջոյ սրունք նոցա, զի ախորժակք առ Աստուած կարճ են, քան զյետին սրունքն նոցա, որք են

⁴ Ընդգծումները մերն են՝ Ն. Պ.:

ախորժակը առ աշխարհ: Զինչ ապա, «Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի» (Ղուկ. ԺԸ. 14):

Երկրորդ՝ որք ախորժեն գնալ ընդ տաժանելի ճանապարհն, են ագահք, ըստ որոյ եւ Տէր զմեծութիւն աշխարհի կոչէ: Իսկ ցո՞ր վայր հասուցանէ զագահն այս ճանապարհն փշալից, յայտնի ուսուցանէ զսուրբ առաքեալն յասելն իւրում՝ «Որք կամին մեծանալ, անկանին ի փորձութիւն եւ յորոգայթ եւ ի բազում յանկումն անմիտ եւ վնասակարս, որք ընկղմին զմարդիկ ի սատակումն եւ ի կորուստ» (Ա. Տիմ. Զ. 9):

Կան, որք ախորժին գնալ ընդ ճանապարհն տղմուտ, որպիսիք են խառնագնացք, զորոց ասի՝ «Պիղծք են ճանապարհք նորա ժամենայն ժամ» (Սաղմ. Ժ. 5): Իսկ նպատակ նոցա է, զոր ասէ Սիրաք, թէ՛ որդունք սեպհականացնեն զնա:

Են եւս, որք արխորժեն գնալ ընդ ճանապարհ խաւարին, եւ սոքա են նախանձոտք, որոց եղուկ կարդայ Սողոմոն. «Ո՛հ, ասէ, որոց թողեալ են զճանապարհս ուղիղս եւ գնան ի ճանապարհս խաւարինս եւ ուրախ լինին ընդ չարիս եւ խնդան ընդ խոտորումն չարութեան» (Առակ. Բ. 13): Եւ նպատակ նոցա է բանտ դժոխոց, քանզի գրեալ է՝ «ճանապարհք ամպարշտաց խաւարին. եւ ո՛չ գիտեն, թէ յո՞ր վայր գայթակղին» (Առակ. Դ. 19): Յայտ է, թէ ի խորխորատ դժոխոց: Այլ ճանապարհք բարեպաշտից դիւրեալք են եւ պատրաստեալք եւ անվրէպ հասուցանեն յարքայութիւն երկնից:



ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՀԱԻ

ՊԵՏՐՈՍԱՆԱԶԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պետրոսախաչ (նաեւ՝ Պետրոս, Պետրոսխաչ, Պետրուսախաչ) լեռը (2031 մ) գտնվում է պատմական Սյունյաց աշխարհի Հաբանդ գավառում՝ Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային ճյուղավորությունում՝ ներկայիս ՀՀ Սյունիքի մարզի Տաթեւ գյուղից մոտ 4 կմ հյուսիս-արեւմուտք¹։ Ազգագրագետ Երվանդ Լալայանը, Տաթեւի սահմանները նկարագրելիս, հյուսիսային կողմում նշանավոր է համարում Պետրոսախաչ լեռը²։ Միջնադարում այստեղ է գտնվել Պետրոսկավանք գյուղը, որը Ստեփանոս Օրբելյանի հիշատակած հարկացուցակի համաձայն՝ Տաթեւի վանքին վճարել է 10 միավոր հարկ³։ Ենթագրելի է, որ գյուղում կամ շրջակայքում նաեւ Ս. Պետրոս առաքյալի անունով վանք է եղել, որից էլ գյուղն ու հարեւան լեռը ստացել են իրենց

¹ Տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», կազմ.՝ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, հտ. 4, Երեւան, 1998, էջ 329. նաեւ՝ ՍՏ. ՄԵԼԻՔ-ԲԱՆՇՅԱՆ, Հայոց պաշտամունքային վայրեր, Երեւան, 2009, էջ 336։ Ըստ ծագումով տաթեւացի ուսումնասիրող Սեդրակ Պողոսյանի՝ Տաթեւի տարածքում հիշատակվում են 300-ից ավելի տեղանուններ, որոնցից շատերը դարերի ընթացքում մոռացության են մատնվել։ Այդ տեղանունների շարքում նա հիշատակում է նաեւ Պետրոսախաչը՝ բացատրելով իբրեւ քարե խաչ. Ս. ՊՈՂՈՍՅԱՆ, Տաթեւի համառոտ պատմություն, Երեւան, 2011, էջ 208, 220։

² Տե՛ս ԵՐ. ԼԱԼԱՅԱՆ, Սիսիան. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, ԱՀ, գիրք Գ., 1898, թ. 1, էջ 127։

³ Տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», աշխ.՝ Կ. վրդ. Շահնազարեանցի, Թիֆլիս, 1910, էջ 517 (այսուհետ՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԷԼՅԱՆ, Պատմութիւն նահանգին Սիսական). նաեւ՝ Հ. ՂԵՒՈՆԿ ԱԼԻՇԱՆ, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 255։


անվանումը: Բացառված չէ, որ այս անունը կապված է Տաթևի վանքի գլխավոր Ս. Պողոս-Պետրոս տաճարի հետ: Հայտնի է, որ Տաթևի Կաթողիկեն կառուցվել է 895-906 թթ.⁴ Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսի առաջնորդության շրջանում, տեղի իշխանների մեկենասությամբ⁴: Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ տաճարը մեկ զույգ մուլթով գմբեթավոր կառույց է, որի մուլթերի հիմքերում ամփոփվել են Ս. Պողոս եւ Ս. Պետրոս առաքյալների նշխարներից, ըստ այդմ՝ սյուները կոչվում են նրանց անուններով: Հնարավոր է՝ Ս. Պետրոս առաքյալի նշխարներից ամփոփել են նաեւ վերոհիշյալ լեռան լանջերին, որով եւ սրբացրել են այն: Այդուհանդերձ, սրանք զուտ ենթադրություններ են, ուստի անդրադառնանք Պետրոսախաչ լեռան ներկայիս «կարգավիճակին»:

Տեղացիների ընկալմամբ՝ Պետրոսախաչը նախ եւ առաջ ուխտատեղի է, որտեղ ուղեկցում են Տաթև ժամանած զբոսաշրջիկներին: Երբեմնի միջնադարյան գյուղից ոչինչ չի պահպանվել. նշենք նաեւ, որ գյուղը հետագայում կարող էր ընդարձակվել եւ միանալ Տաթև համայնքին: Նախքան վերելքը դեպի Պետրոսախաչի գագաթ, ճանապարհին խոզաղբյուր կոչվող ջրավազանն է, որտեղ ջուրը վերելից խողովակով իջնում ու երկու մեծ նավերի մեջ է ամբարվում: Այստեղ ընկած է մի խաչքարի բեկոր (վերին կեսը), որը տեղացիներն անձրեւաբեր ծեսի հետ են կապում. երաշտի ժամանակ վրան ջուր են լցնում, աղոթում, որից հետո անձրեւ է գալիս⁵: Այսինքն՝ խաչքարը ձեռք է բերել ծիսական գործառույթ՝ նման «Յասման խաչ» կոչվող կոթողներին, որոնց ավելի ուշ կանդրադառնանք: խոզաղբյուրից վեր՝ լեռան գագաթին, կանգնեցված է այս նույն խաչքարի ստորին կեսը՝ 8 տողից բաղկացած արձանագրությամբ⁶.

⁴ Այս մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում պատմագիր Ստեփանոս Օրբելյանն ու հիշատակում կառուցման արձանագրությունը (ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 224): Արձանագրության գիտական հրատարակությունը տես «Իրվան հայ վիմագրության», պրակ II, Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 13, արձ. 1:

⁵ Պետրոսախաչի եւ խոզաղբյուրի խաչքարերի՝ անձրեւաբեր ծեսերում ունեցած գործառույթի մասին մեզ տրամադրած տեղեկությունների համար շնորհակալություն ենք հայտնում հնաբուսաբան Ռոման Հովսեփյանին, որն իր այցելության ժամանակ պարզել էր, որ խոզաղբյուրի խաչքարն ու Պետրոսախաչը միեւնույն խաչքարի երկու կեսերն են:

⁶ Մեր վիմագրագիտական գործողման ընթացքում (28.07.2018 թ.) Տաթևի բնակիչներ Սաղաթել Իսավերդյանի եւ Վահագն Գեւորգյանի ուղեկցությամբ հաջողվեց բարձրանալ Պետրոսախաչի գագաթ եւ տեղում վերձանել արձանագրությունը:



† ԵՄ ԴԵՂԼՄ, / ԿԱՆԳՆԵՑԻ / ԶԽԱԶՍ ԾՆՈՂ /
ԱՑ ԻՄՈՑ, / ՅԱՌ/ԱԶՆՈՐԴՈՒ/ԹԵԼԱՆՆ ՏՐ
ՈՀԱՆԻՍ/Ի, ՈՐՔ ԵՐԿԻՐ ՊԱԳ/ԷՔ ՅԻՇԵՑԷՔ
Ի ՔՍ:

Մինչ օրս ուշադրության չարժանացած արձանագրության վերծանությունը փոքր-ինչ բարդացնում են քարի բնական ծակոտիների առկայությունն ու ընդհանուր մաշվածությունը, սակայն, տառերի խոշոր փորագրությունն ու կցագրերի գրեթե բացակայությունը նպաստեցին բնագրի ամբողջացմանը, ըստ որի՝ Դեղը, տեր Հովհաննեսի առաջնորդության օրոք, խաչքար է կանգնեցրել ծնողների հիշատակին եւ ընթերցողներին

խնդրում է հիշել վերջիններիս ու իրենց աղոթքներում հայցել Աստծու ողորմածությունը: Վիմագրի առաջին տողում խնդրահարույց կարող է թվալ անձնանունը, որը, չնայած քարի որոշակի վնասվածությանը, Դեղ ենք կարդացել, քանի որ սկզբնատառեր ԴԵ-ն եւ մասամբ Դ-ն որոշակի են: Արական այս անձնանունը (իզական զուգահեռները բացառություններ են), ինչպես նաեւ դրա նույնարմատ բաղադրյալ ձեւերը՝ Խոցադեղ, Հազարդեղ, Սիրադեղ, Հոգիդեղ եւ այլն, միջնադարյան սկզբնաղբյուրներում հաճախ են հիշատակվում՝ ինչպես վիմագրերում, այնպես եւ ձեռագրերի հիշատակարաններում⁷: Սրանց վկայություններին վերջերս հանգամանորեն անդրադարձել է լեզվաբան Խաչիկ Հարությունյանը, որի համոզմամբ՝ ԺԲ. դարի երկրորդ կեսից սկզբնաղբյուրներում արդեն իսկ արձանագրված է դեղ բառի անձնանվանական կիրառությունը⁸: Իբրեւ ստույգ թվական ունեցող վաղագույն օրինակ՝ նա վկայակոչում է ծագումով Իմիրզեկից, բայց ներկայումս Մայր Աթոռ Ս. էջմիածնում գտնվող 1148 թ. խաչքարի վիմագիրը, որտեղ

⁷ Դեղ անձնանունն ու նրանից բաղադրվող անունների մի մասը (Հազարդեղ, Սիրադեղ, Խոցադեղ եւ այլն) ժամանակին արձանագրել է ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը (տես Հ. Բ. ԱճԱՌՅԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ., Երեւան, 1944, էջ 63-64, 547, հտ. Գ., Երեւան, 1946, էջ 10, հտ. Դ., Երեւան, 1948, էջ 528):

⁸ Տես Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Դեղ արմատով բաղադրված անձնանունները վիմագրերում եւ ձեռագրերի հիշատակարաններում, «Մատենադարանի երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ», Երեւան, 2018, էջ 115:

անձնանունը հիշատակված է -ոյ(ն) վերջավորությամբ՝ Դեղոյն⁹։ Պետրոսախաչի կոթողի արձանագրությունը թեպետ անթվակիր է, սակայն խաչքարի քանդակային հարդարանքն ու տառաձեւերի հնագրական ոճը նկատառելով՝ կարող ենք թվագրել ոչ ուշ, քան ԺԱ.-ԺԲ. դդ., այսինքն՝ սա եւս լավագույն մի օրինակ է Դեղ անձնանվան վաղ հիշատակության առումով։ Սակայն, նախքան թվագրության մասին վերջնական տեսակետ հայտնելը, անդրադառնանք նաեւ վիմագրում հիշատակված տեր Հովհաննեսին (Ոհանիս), որի առաջնորդության տարիների հստակեցումը եւս ծառայելու է վիմագրի ստույգ թվագրմանը։ Ենթագրելի է, որ տեր Հովհաննեսը Տաթևի վանքի առաջնորդ-վանահայրերից է։ Այս անվամբ Տաթևի վանքի վանահայրերի եւ Սյունյաց թեմի առաջնորդների գավազանագրքում հիշատակվում են մի քանիսը.

ա. Հովհաննես եպիսկոպոս՝ 853-863 թթ.

բ. Հովհաննես եպիսկոպոս՝ 880-918 թթ., որի օրոք հիմնադրվեց եւ կառուցվեց վանքի Ս. Պողոս-Պետրոս գլխավոր տաճարը.

գ. Հովհաննես եպիսկոպոս՝ 981-987 թթ.

դ. Հովհաննես եպիսկոպոս՝ 1006-1058 թթ., որի օրոք՝ 1043 թ., տաճարի հարավային պատին կից կառուցվեց գավիթ-սրահը, վերակառուցվեց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին.

ե. Հովհաննես եպիսկոպոս՝ 1216-1251 թթ., որի օրոք Սյունյաց թեմը բաժանվեց երկու մասի՝ Նորավանքի ու Տաթևի¹⁰։

Մինչ 1930-ականները Տաթևի վանահայրերի գավազանագրքում հիշատակվում է Հովհաննես անունով եւս 12 առաջնորդ, սակայն խնդրո առարկա արձանագրության թվագրման համար լիովին բավարար է վերը նշված առաջնորդների ժամանակագրական ցանկը, ըստ այդմ՝ վիմագրում հիշատակված միակ հավանական գահակալը ԺԱ. դարի առաջին կեսին գործած Հովհաննես եպիսկոպոսն է, որի անունը Տաթևի վանքի վիմագրերում եւս քանիցս հիշատակված է¹¹։ Նրա մասին գովեստով է

⁹ Տե՛ս անդ, էջ 122։ Խաչքարի արձանագրության վերծանությունը տե՛ս Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վաղարշապատ, վանքերը եւ վիմական արձանագրությունները, Ս. էջմիածին, 2016, էջ 96, արձ. 80։

¹⁰ Սյունյաց եպիսկոպոսական թեմի առաջնորդների ու Տաթևի վանքի վանահայրերի գավազանագրքը կազմել եւ հրատարակել է Ս. էջմիածնի միաբան, Տաթևի վանքի երբեմնի վանահայր (1922-1926 թթ.) Արտակ եպս. Սմբատյանցը. տե՛ս ԱՐՏԱԿ ԵՊՍ. ՍԽԵՆՆԵՆՑ, Համառոտ պատմություն Տաթևի վանքի, «Տաթև» տարեգիրք գրականութեան եւ արուեստի, Զ. տարի, Հալէպ-Սուրիա, 1930, էջ 343-350։

¹¹ Հովհաննես եպիսկոպոսի օրոք իրականացված շինարարական աշխատանքների վերաբերյալ նաեւ վիմագրեր են կազմվել. որոշները մեզ են հասել։ Դրանց գիտական

խոսում պատմագիր Ստեփանոս Օրբելյանը, ըստ որի՝ «բազմերջանիկ» Հովհաննես եպիսկոպոսն աչքի է ընկել իր շինարարական գործունեությամբ, բարելավել է վանքի տնտեսությունը, այն հարստացրել կալվածքներով, եկեղեցական սպասքով, ծաղկեցրել գիտակրթական կյանքը՝ Տաթևը վերստին դարձնելով կրոնական ու մշակութային նշանավոր կենտրոն։ Վերականգնել է նաև մետրոպոլիտական իրավունքները, որոնցից Անանիա Ա. Մոկացի (946-968 թթ.) կաթողիկոսը ժամանակին զրկել էր Սյունյաց Հակոբ Դվինեցի եպիսկոպոսին (918-958 թթ.)¹²։

Ինչպես երևում է՝ բազմաշխատ առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի անվան վիմագրական հիշատակություններից մեկն էլ քննվող խաչքարի վրա է անթեղված, որը հիմք է նաև խաչքարը թվագրելու առումով։ Նկատառելով վկայակոչված բոլոր նախադրյալները՝ Պետրոսախաչի արձանագիր խաչքարը թերեւս կարող ենք թվագրել ԺԱ. դարի առաջին կեսով։

Այժմ անդրադառնանք խաչքարի տեղագրությանը եւ նրա գործառույթին. վերն արդեն նշեցինք, որ այն կանգնեցված է Պետրոսախաչ լեռան գագաթին, մեջտեղից կիսված է, եւ վերին կեսն ընկած է Խոզաղբյուրի նավերի մոտ։ Նախ հասկանանք, թե ինչ նպատակով է խաչքարը կանգնեցվել լեռան գագաթին։ Ուսումնասիրողների հավաստմամբ՝ միջնադարում ընդունված է եղել խաչքարեր կանգնեցնել նաև բնակավայրերից դուրս՝ բլուրների ու սարերի գագաթներին, գյուղերի ու դաշտերի սահմաններին¹³։ Բլուրների վրա կանգնեցված մենավոր խաչքարերը սովորաբար կոչվում են «Յասման խաչ», որոնք տեղագրվում էին երաշտի ժամանակ զոհաբերություն անելու, չար ուժերին հեռացնելու, ավելի ուշ՝ նաև վախ չափելու նպատակով։ Բանագետ Սարգիս Հայկունին նշում է, որ Բագրեւանդ գավառի գյուղերի շրջակայքում հաճախ է

հրատարակությունները տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ II, էջ 19, արձ. 23, էջ 37, արձ. 77, էջ 38, արձ. 84 (այս վերջինը կրկնում է՝ էջ 14, արձ. 4)։

¹² ՄՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 275-276, 314-315։ Տեղագիր Սարգիս արք. Զալալյանցի երկհատոր աշխատության էջերում՝ «Հարուածք վանացն Տաթևու» խորագրի ներքո, համառոտ շարադրված են օտարների հարձակումները Տաթևի վանքի վրա, ինչպես նաև Անանիա կաթողիկոսի բանագրանքը Հակոբ եպիսկոպոսի նկատմամբ, քանի որ վերջինս ցանկացել էր Տաթևի եպիսկոպոսությունը անկախացնել Հայոց հայրապետական աթոռից (ՍԱՐԳԻՍ ԱՐԲ. ԶԱԼԱԼՅԱՆՑ, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., Տփլիս, 1858, էջ 303-304)։

¹³ Տե՛ս [Ա. ՇԱՀԻՆՅԱՆ], Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը, Երևան, 1984, էջ 56, 62. Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 255-257։

տեսել բարձր տեղանքում կանգնեցված խաչարձաններ. «որոց գիւղացիք Սասման խաչ կասեն, որ լինելու է ցասման խաչ, արդէն երբ երաշտ լինի, զոհ կը մատուցանեն եզ, կով, ոչխար եւ այլն»¹⁴: Ազգագրագետ, բանահավաք Գարեգին Սրվանձտյանցը եւս «Յասման խաչերի» տեղագրությունը սահմանում է հիմնականում քաղաքներից դուրս, վանքերին մոտ, բլուրների վրա: Նրա բնորոշմամբ՝ նման խաչքարերը կոչվում են «ցասման», քանի որ՝ «...երբ տարածամ ձիւն կամ կարկուտ տեղայ, բերքերուն վնասէ, երբ մարախն ու թրթուրը բոյսն ու կանանչը գոսացնեն, երբ երաշտութիւն լինի, երբ ցաւ ու մահ պատահին մարդոց եւ անասնոց, երբ երկրաշարժ լինի եւ ինչ վնաս, որ պատահի երկրին, այն, որ մարդոց ըրածը չէ, Աստուծոյ ցասումը կը համարին, եւ այդ ցասման դէմն առնելու համար Քրիստոսի խաչին պատկերը կը բարձրացնեն այսպէս երկնից առջեւ, որ պատուհասիչ հրեշտակը պատկառի խաչէն եւ Աստուած հաշտուի»¹⁵:

Խնդրո առարկա խաչքարի վիմագրի բովանդակությունից դատելով՝ այն կերտվել եւ կանգնեցվել է Դեղի ծնողների հիշատակին, այսինքն՝ ի սկզբանե այն հիշատակի, հոգիների փրկագործման նպատակով է կանգնեցվել: Այստեղից կարելի է հետեւութուն անել, որ խաչքարը, ըստ էութեան, իր նախնական տեղում չէ, բերվել է այլ վայրից, միգրացե՝ Տաթեւի վանքից կամ հենց նույն Պետրոսկավանքից, որի անունով լեռը կոչել են Պետրոսախաչ, այսինքն՝ Պետրոսկավանքի խաչքարի լեռ: Բացի այն, որ խաչքարի կանգնեցումը լեռան գագաթին ձեռք է բերել ծիսական, տվյալ դեպքում՝ «ցասման» խաչերին վերագրվող գործառույթ, Դեղի անվանակիր խաչքարն իր ենթադրյալ «երկրորդ» վայրում ներկայանում է իբրեւ առանձին սրբատեղ՝ բաց երկնքի տակ: Փաստելի է, որ կոթողի շուրջը եւ մերձակայքում այլ շինություններ չեն նշմարվում, որոնց բաղկացուցիչ մասը պետք է լիներ նաեւ այս խաչքարը, հետեւաբար՝ միայնակ կոթողը նաեւ սուրբ է, աղոթատեղ, ինչի մասին են վկայում նրա դիմաց դրված՝ մրից սեւացած ուղղանկյունաձեւ քարի վառված մոմերի մնացորդները: Այս առումով ուշագրավ է հնագետ, մշակութաբան Համլետ Պետրոսյանի մեկնաբանությունն առ այն, որ «յուրաքանչյուր խաչքար իր ներկայությամբ իսկ հանդիսանում էր տեղանքը նշող, սրբացնող

¹⁴ Ս. ՀԱՅԿՈՒՆԻ, Բագրեւանդ ջրաբաշխ գաւառ, մասն Ա., Ս. էջմիածին, 1894, էջ 130, ծան. 2:

¹⁵ Գ. ՍՐՈՒԱՆԶՏԵԱՆՑ, Դրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 118:

եւ պաշտպանող: Յանկացած ոչ սրբազան միջավայրում խաչքարի կանգնեցումն արդեն իսկ կարգավորում-սրբազնացնում էր շրջապատը, այս հիմնարար գործառույթով կարելի է բացատրել խաչքարերի կանգնեցումը խաչմերուկներում եւ ճանապարհների եզրին, տեղանքում գերիշխող դիրք ունեցող բարձունքներին, ժայռազանգվածների վրա կամ աղբյուրների մոտ»¹⁶: Բավական բնորոշիչ այս ձեւակերպումը լիովին հիմնավորում եւ լուսաբանում է նաեւ Պետրոսախաչի գագաթին կանգնեցված խաչքարի ծիսապաշտամունքային բնույթը, որը կրելով ծիսական գործառույթ՝ միաժամանակ ապահովում է նաեւ տեղանքի սրբազնացումը՝ այն դարձնելով յուրօրինակ քրիստոնեական միջավայր:

Ամփոփելով Պետրոսախաչի ԺԱ. դ. կոթողի նորահայտ վիմագրին նվիրված մեր համառոտ ուսումնասիրությունը՝ պետք է արձանագրել, որ այն ուշագրավ է Դեղ անձնանվան վաղագույն վկայության, Տաթևի վանքի առաջնորդ Հովհաննես Եպիսկոպոսի անվան վիմագրական հերթական հիշատակման, ինչպես եւ տեղագրության ու գործառույթի տեսանկյունից, երբ լեռան գագաթին առանձին կանգնեցված խաչքարը կամ նույն «Ցասման խաչը» նաեւ յուրօրինակ սրբավայր է:

РЕЗЮМЕ

Гора Петросахач («Крест Петра», 2031 м над уровнем моря) находится в Сюникской области Армении, примерно в 4-х километрах к северо-западу от села Татев. На склонах горы расположен источник Хозахпюр, рядом с которым находится обломок хачкара (верхняя часть). На вершине горы стоит нижняя половина того же хачкара с высеченной на ней надписью, согласно которой в период правления епархией Ованнесом в память о своих родителях Дег воздвигнул хачкар. Скульптурные детали хачкара, палеографические особенности букв, а также упомянутые даты правления священнослужителя Ованнеса позволяют датировать памятник первой половиной XI века.

Воздвигнутые на горных вершинах хачкары принято называть «Цасман хачер» («Кресты гнева»). Они сооружались для жертвоприношений во время засух, а позже — для заговора от испуга. Монумент из Петросахача, по-видимому, находится не на своем первоначальном месте. Возможно, он был перевезен

¹⁶ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, *խաչքար*, էջ 255:



Նկ. 1բ խաչքարի
վերակազմությունը, ԺԱ. դար



Նկ. 2 Պետրոսախաչ լեռը (ՀՀ Սյունիքի մարզ, Տաթև համայնք)



Նկ. 3 Խոզաղբյուրի նավերը և խաչքարի վերին կեսը



Նկ. 4 Պետրոսախաչ լեռան գագաթը և խաչքարը (շրջանի մեջ)



Նկ. 5 խաչքարի ստորին արձանագիրը կեսը, ԺԱ. դար

из монастыря Татев или его округи, поскольку из содержания памятных надписей следует, что он был установлен как надгробный памятник.

SUMMARY

The mountain of Petrosakhach (“Peter’s cross”, 2031 m.) is located in the Syunik province of the Republic of Armenia, about 4 km. north-west from the village of Tatev. A spring is situated on the slopes of this mountain, which is called “Khozaghyur” where a fragment of a cross-stone is located. A lower part of the same cross-stone with an inscription is situated on the top of the same mountain. According to the inscription, during the Primacy of Bishop Hovhannes, Degh installed the cross-stone in memory of his parents. Judging from the sculptural details of the cross-stone and features of paleography, as well as from the years of Bishop Hovhannes’ Primacy, this monument dates back to the first half of the 11th century.

The cross-stones standing lonely on the tops of mountains are called “Tsasman khacher” (crosses of rage), which were installed with the aim of offering sacrifices during droughts and of releasing fear spell. Probably, the monument taken from Petrosakhach is not located in its preliminary place. It may have been brought from the Monastery of Tatev or its neighborhood, since the contents of the inscriptions indicate that it was installed as a gravestone monument.



ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՊՄՀ, ԳՀՀ, ՍՎԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄԱՆՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՐՋ

Հայկական բնաշխարհը կամ Հայոց աշխարհը աշխարհագրական այն տարածքն է, պատմաաշխարհագրական այն միջավայրը, որի սահմաններում, սկսած Դ. հազ. վերջերից եւ Գ. հազարամյակի սկզբներից առաջացել, կազմավորվել ու հարատեւել է հայ ժողովուրդը, որտեղ բազմադարյա պատմությունը կերտել է իր քաղաքական, տնտեսական եւ մշակութային ինքնատիպ կենսագրությունն ու ստեղծել հայոց պետականությունը:

Հայկական բնաշխարհն ունի պատմական անվանումներ՝ Հայք, Հայոց աշխարհ, Հայոց տուն կամ Հայաստան¹: Այն ունի նաեւ իր աշխարհագրական ձեւակերպումները՝ Հայկական լեռնաշխարհ կամ Հայկական լեռնաստան (հնագույն աղբյուրներում՝ Հայկական լեռներ, Արարատյան լեռներ):

Օտարներն այն անվանել են՝ «Արեւելք», «Արարատի երկիր», «Թորգոմյան տուն» (Աստվածաշնչի եբրայեցերեն եւ լատիներեն բնագրերում), «Կարդու» (Աստվածաշնչի ասուրերեն եւ քաղդեերեն բնագրերում), «Արմենիա» (Աստվածաշնչի հունարեն թարգմանության մեջ), «Հաբեթյան նահանգ» (եբրայեցերեն), «Նահարին» (եգիպտերեն), «Հայասա» (խեթերեն), «Նաիրի», «Արամյան տուն», «Արամյան ազգ», «Ուրաշտու-Ուրարտու» (ասորերեն), «Արմենիկ», «Արմենիա-Արմանիա-Արմինա» (պարսկերեն), «Խար (Հար) Մինայապ», «Հար-Մինի» (էլամերեն),

¹ «Հայաստան» անվանումը՝ որպես միջին դարերի արգասիք, գործածվել է «Հայք» անվանը զուգահեռ եւ պատմաաշխարհագրական տեսանկյունից ունեցել է նույն նշանակությունը: Այն ցույց է տալիս ինչպես էթնիկ պատկանելություն, այնպես եւ պետականություն եւ ֆիզիկաաշխարհագրական տարածաշրջան: «Հայաստան» բառի «տան» կամ «տուն» արմատն ունի ինչպես հին պարսկական (զենդական), այնպես եւ հայկական ծագում ու մեկնաբանություն եւ նշանակում է «երկիր» կամ «ապրելու վայր» (հմմտ. Բեհիստուն-Բիսիտուն, Անգեղտուն, Պարսպատունիք, Ուրարտու(ն), Թորգոմատուն եւ այլն): Մովսես Խորենացին ե. գ. Հայաստան անվանումն գործածում էր՝ ցույց տալով, որ այն Մեծ Հայքն է:

Հարմոնիա², Սոփիսթիա (հարավային խեթեր՝ վրացերեն), «Էմֆենիա» (արաբերեն), «Էմֆենիստան» (թուրքերեն), «Ֆլա» (աշխատող ժողովուրդ՝ քրդերեն), «Յամենիա» (չինարեն), «Վիրմենիա» (ուկրաիներեն) եւ այլ ձեւերով:

Հայկական լեռնաշխարհը գտնվում է Առաջավոր Ասիայի³ հյուսիսարեւմտյան հատվածում եւ կազմում է Ալպյան-հիմալայան գեոսինկլինալային գոտու օղակներից ու Արեւմտյան Ասիայի երեք (Իրանական, Հայկական եւ Անատոլիական) խոշոր բարձրավանդակներից մեկը: Այն տեղակայված է արեւելքում՝ Իրանական⁴, արեւմուտքում՝ Փոքրասիական (Անատոլիական)⁵ լեռնաշխարհ-սարահարթերի միջեւ՝ Առաջավոր Ասիայի երկու՝ իրանական եւ դինարո-տավրոսյան լեռնահամակարգերի հանգույցում (Schaarung)⁶, եւ միավորում է Արեւելքն ու Արեւմուտքը⁷: Հ. Առաքելյանը նկատում է, որ Ասիայի սարահարթերից

² Տե՛ս "Tracking Ladon Gog and the Hebrew Rose", part one, Copyright tribwatch.com, 2006, էջ 80. նաեւ՝ Գ. ՄԱՊՈՅԵԱՆ, Կաղմոս, Հարմոնիա եւ Հայաստան, «Էջմիածին», Գ., 2018, էջ 46-61:

³ Ասիա աշխարհամասի արեւմտյան սարահարթը, որի տարածքը, ըստ էլիզե Ռեկլյուի, կազմում է 6.969525 կմ². տե՛ս է. ՌԷԿԼԻԻ, Ռուսական Հայաստան կամ Արաքսի աւազանը, Ուրմիա լիճը եւ Առաջավոր Ասիա, Կաղարշապատ, 1891, էջ 126: Սահմանները հյուսիսում հասնում են Սեւ ծով, Մեծ Կովկասյան լեռներ, Կասպից ծով եւ Թուրանական տափաստաններ, հարավում՝ Հնդկական օվկիանոս, արեւելքում՝ Հինդու-Քուշ, իսկ արեւմուտքում՝ Կարմիր, Միջերկրական եւ Էգեյան ծովեր: Անատոլիա-իրանական ենթամայրցամաքն ունի մինչեւ 5000 կմ երկարություն եւ 500 կմ լայնություն («Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 13, Երեւան, 1987, էջ 29): Այն բաղկացած է գեոմորֆոլոգիական 6 շրջաններից՝ Փոքրասիական, Հայկական, Իրանական, Աֆղանական, Պակիստանյան եւ Կովկասյան (Ա. ЗОГРАБЯН, Орография Армянского нагорья (опыт орографического анализа морфоструктуры), Ереван, 1979, էջ 8): Ըստ աշխարհի ֆիզիկաաշխարհագրական ատլասի՝ առաջավորասիական բարձրավանդակը բաղկացած է Հայկական եւ Իրանական բարձրավանդակներից, Անատոլիական սարահարթից, Ղրիմ-կովկասյան տարածաշրջանից, Պակիստանյան՝ Հնդկանգեայան ցածրավայրից («Физико-географический атлас мира», Москва, 1964, էջ 16):

⁴ Իրանական բարձրավանդակն ունի 2.7 մլն կմ² տարածք եւ 2500 կմ ձգվածություն: Այն գտնվում է Թուրանի եւ Հարավ-կասպիական դաշտավայրերի, Ինդոս գետի, Պամիրի, Հերմսիրի անապատի, Միջագետքի ու Հայկական բարձրավանդակի միջեւ («Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 4, Երեւան, 1978, էջ 452. նաեւ՝ «Физическая география материков и океанов», Н. Александровская, Зарубежная Азия, Москва, 1962, էջ 104-120):

⁵ Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակն ունի 400 հազ. կմ² տարածք: Այն ողողվում է Սեւ, Մարմարա, Էգեյան, Միջերկրական ծովերի եւ Բոսֆորի ու Դարդանելի նեղուցների ջրերով: Արեւելքից արեւմուտք այն ձգվում է 1000 կմ երկարությամբ, իսկ հյուսիսից հարավ՝ 400-600 կմ լայնությամբ («Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 12, Երեւան, 1986, էջ 370. նաեւ՝ «Физическая география материков и океанов», Н. Александровская, Зарубежная Азия, էջ 93-101):

⁶ Տե՛ս А. ГУКАСОВ, Основные черты строения Армянского нагорья, съ картой, Тифлиси, 1901, էջ 8:

⁷ Տե՛ս Կ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Հայկական բարձրավանդակ եւ Արեւելյան Հայաստան հասկացությունները եւ նրանց ոչ ճիշտ գործածումը մի շարք հեղինակների մոտ, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, թ. 7, 1950, էջ 90:

ամենապտղաբերը եւ մշակության համար պիտանին Հայկական լեռնաշխարհն է, որովհետեւ այն չունի ավազոտ անապատներ եւ խիստ քարոտ տարածքներ⁸:

Ըստ որոշ պատկերացումների երկրաբանական վաղ անցյալում մեր մոլորակի վրա գոյություն են ունեցել երկու խոշոր մայրցամաքներ՝ Լավրասիան եւ Գոնդվանան, որոնց միջեւ ձգվել է Թեոխս օվկիանոսը:

Հայկական լեռնաշխարհը գրանիտային մի լեռնակուտակ է, որն առաջացել է տասնյակ ու հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում՝ երկրակեղևի մագմայի շիթային շարժումների ազդեցությամբ Գոնդվանա մայրցամաքից պոկված, ծագումով հնագույն Արաբա-սիրիական կոշտի ու Հնդկական թերակղզու բեկորի դեպի հյուսիս շարժվելու եւ Լավրասիա մայրցամաքի հետ բախվելու հետեւանքով: Արաբա-սիրիական կոշտը, ճգմելով Թեոխսի հատակում գտնվող Հայկական Տավրոսի գեոսինկլինալը, ծալքավորել է այն, մտել նրա տակ, որը հետագայում դուրս է մղվել՝ ստեղծելով մի բարձր լեռնակուտակ՝ Հայկական լեռնաշխարհը եւ Կովկասյան լեռները: Իսկ Հնդկական պլատֆորմն էլ ճգմել է Պամիրի, Հիմալայների եւ Տիբեթի հատվածն ու ստեղծել մեկ այլ լեռնային կղզի⁹: Փոքրասիական եւ Իրանական սարահարթերում այդպիսի ճնշում չի եղել, քանի որ երկրակեղևն առավել հանգիստ պայմաններում է ձեւավորվել:

Քլեմանս Ռուայերի կարծիքով՝ Հայաստանը նախապատմական ժամանակաշրջանում իրոք եղել է ջրի հատակ եւ 150 մլն. տարի առաջ կազմել է Թեոխս օվկիանոսի մի մասը: Այդ են վկայում աղի ջրերի (Վանա, Ուրմիա լճեր եւ այլն) առկայությունը եւ օվկիանոսային ձկների, խխունջների, մարջանների, կակղամորթների մնացորդները լեռնային բարձր շրջաններում¹⁰:

Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական յուրահատուկ խիստ կտրտված երկրամասը սարավանդաբարձրավանդակային ընդգծված բնույթ է ստացել երկրաբանական Կայնոգոյան դարաշրջանի երրորդական եւ չորրորդական ժամանակաշրջաններում: Թեոխս օվկիանոսի ցամաքելու արդյունքում (7-11 մլն. տարի առաջ), երբ տեկտոնական իջվածքների հետեւանքով առաջացել են Կողքիսը, Մերձկասպյան

⁸ Տէս Հ. Առնոլդսոն, Հանրագիտական բառարան, հտ. 1, Ա-Ն, Թիֆլիս, 1915, էջ 1434:

⁹ Տէս Հ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ, Հայկական լեռնաշխարհ, ուսումնական ձեռնարկ, Երեւան, 2000, էջ 11-12:

¹⁰ Տէս "Bulletin de la Société d'Anthropologie de Bruxelles", Bruxelles, 1888-1889, էջ 486:

ցածրավայրը, Միջագետքն ու ձեւավորվել են Սեւ, Միջերկրական եւ Կասպից ծովերը, վեր է բարձրացել Հայկական լեռնաշխարհը:

Հայկական լեռնաշխարհը համեմատաբար երիտասարդ գոյացում է: Այն լեռնագագաթներով բաժանված լավային սարահարթերի եւ տեկտոնական խորշերի մի ամբողջություն է¹¹: Հրաբխային գործունեության հետեւանքով երկրի մակերեւույթը թաղվել է հրահեղուկ լավայի ծածկույթի տակ, «որը լցրել է անհարթութիւնները եւ կտրացրել մակերեւույթի գծագրութիւնը»¹² եւ ծածկվել է ալիքավոր սարավանդներով ու հրաբխային լեռնագագաթներով (Արարատ, Սավալան¹³, Սիփան, Արագած, Սրմանց)¹⁴: Այն հրաբխային լավայի միջոցով առաջացած ամենամեծ բարձրավանդակն է¹⁵: Մակերեւույթի մեջ հսկայական փոփոխություններ են առաջացրել նաեւ արտաքին ուժերը՝ արեւը, քամին, անձրեւն ու սառցադաշտերը:

Գիտության մեջ երկար ժամանակ տիրում էր այն կարծիքը, թե Հայկական լեռնաշխարհում, չնայած ընդարձակ սարահարթերի առատությանը, որեւէ տեղ չեն պահպանվել չորրորդական դարաշրջանի սառցապատման հետքեր: Սակայն նորագույն հետազոտություններն ապացուցեցին, որ Հայկական լեռնաշխարհում պարզորոշ նշմարվում են սառցադաշտերի շարժման հետեւանքները եւ մորենների (լեռնալանջերից սառույցների պոկած քարաշերտերի) գոյությունը (Գեղամա լեռնավանդակի՝ Գնդասար եւ Սպիտակասար գագաթների լանջերին, Արագածի ու Մասիսների վրա եւ այլն): Ժողովուրդը տակավին վաղ ժամանակներից Հայկական լեռնաշխարհի զանազան կողմերում նկատել է լեռնային ապարների վրա սառցադաշտերի տեղաշարժումից առաջացած խորագծեր եւ դրանք վերագրել է Տորք Անգեղ հսկայի եղունգների վարպետությանը:

Հայկական լեռնաշխարհը հրաբխային, լեռնակազմական եւ տեկտոնական ուժերի հետեւանքով առաջացած երկիր է: Այն տարբեր ժամանակներում բյուրեղյա թերթաքարերից, մեզոզոյան կրաքարերից

¹¹ Сѣу М. БОНДАРСКИЙ, Словарь географических названий, Москва, 1954, էջ 28:

¹² Լ. ԼԻՍԻՑԵԱՆ, Հայաստանը ֆիզիկական տեսակէտով, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա. եւ Բ., Երեւան, 1921-1922, էջ 236:

¹³ Սավալանը (Սաբալանը, Սալավանը, Սարավանը, Շահվարզանը Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթն է՝ 4821 մ բարձրությամբ:

¹⁴ Сѣу С. БАЛЪЯН, Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей, Ереван, 1969, էջ 30. Նաեւ՝ «Физико-географический атлас мира», Москва, 1964, էջ 116:

¹⁵ Сѣу <http://fb.ru/article/231436/armyanskoe-nagore---gornyy-region-na-severe-peredney-azii-drevnee-gosudarstvo-na-territorii-armyanskogo-nagorya>:

ձեւավորված բեկորային եւ ծալքավոր բարձրաբերձ կոշտ լեռների, լեռնադաշտերի, կոնաձեւ ձյունածածկ լեռնագագաթների, ալպիական մարգագետինների, միջլեռնային բարեբեր եւ արգավանդ գոգահովիտների, հրաբխային մեծ ու փոքր սարահարթերի, անդնդախոր կիրճերի, տեկտոնական եւ լճային իջվածքների, լեռնային սառնորակ աղբյուրների, կապուտաշյա լճերի, անտառածածկ լեռնալանջերի, կլիմայական հակադրությունների մի բարդ հանգույց է¹⁶, ֆիզիկաաշխարհագրական ու գեոմորֆոլոգիական մի ուրույն եւ ինքնատիպ շրջան: Հայկական լեռնաշխարհի երկրակեղեւի կտրվածքում առանձնանում են՝ ա. նստվածքահրաբխային ծածկույթը (մինչեւ 8 կմ խորություն), բ. գրանիտային (15-20 կմ), գ. որձաքարային (իմա՝ բազալտային – Ա. Հ., 15-20 կմ) եւ դ. վերածնված գերմաֆիտային (մանթայի կազմում 6-7 կմ)¹⁷ շերտերը:

Մակերեւույթի բնույթի շնորհիվ է, որ հին եւ միջնադարյան Հայաստանի գավառների զգալի մասի անունները բարդված են «ձոր», «փոր» եւ «հովիտ» բառերով (Աղիովիտ, Արգասովիտ, Արճիշահովիտ, Բալահովիտ, Առուենից ձոր, Ազնուաց ձոր, Բերձոր, Կողբոփոր, Ծոբոփոր, Պարտիզացփոր եւ այլն)¹⁸:

Ձնայած Հայկական լեռնաշխարհը շատ նմանություններ ունի Անատոլիական եւ Իրանական բարձրավանդակների հետ, սակայն այն նկարագրով տարբերվում եւ սահմանազատվում է ինչպես հարեւան բարձրավանդակներից, այնպես եւ Անդրկովկասի ու Միջագետքի հարթավայրերից¹⁹: Եթե այն սերտորեն միացած է իրենից արեւելք եւ արեւմուտք ընկած տարածաշրջանների հետ, ապա, ընդհանրապես, խիստ տարբերվում է դեպի հյուսիս ու հարավ ընկած երկրներից՝ Վրաստանից եւ Միջագետքից: Այդ առումով Հ. Լինչը նկատում է. «Եթե Հայաստանը բաժանուած չէ բնական կարեւոր պատուարներով արեւելքից՝ Պարսկաստանից եւ արեւմուտքից՝ Փոքր Ասիայից, ապա հիւսիսակողմը եւ հարավակողմը զատուած է բնական պատուարներով»²⁰:

¹⁶ Տե՛ս А. Исаченко, А. Шляпников, Ландшафты, Москва, 1989, էջ 237:

¹⁷ Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 13, էջ 29:

¹⁸ Տե՛ս Մ. ՎՐԳ. ՔԱՋՈՒՆԻ, Աշխարհագրություն հին եւ նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց համար, Վենետիկ, 1857, էջ 8:

¹⁹ Տե՛ս Ա. ՎԵՀՈՒՆԻ, Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը եւ ընդերքի հարստությունները, Երեւան, 2001, էջ 9:

²⁰ Հ. Ֆ. Պ. ԼԻՆՉ, Հայաստան. ուղեւորություններ եւ ուսումնասիրություններ, Կ. Պոլիս, 1913, էջ 400:

Ներկայացնելով մի անբաժան ամբողջություն՝ Հայկական լեռնաշխարհը հարեւան երկրներից տարբերվում է բազմաթիվ առանձնահատկություններով, որոնք, անգլիացի նշանավոր երկրաբան Ֆելիքս Օսվալդի բնորոշմամբ, մատնանշում են նրա յուրահատուկ բնույթը²¹: Առանձնահատկություններից տարբերակվում են հիմնականում երկուսը՝ ա. այն հարեւան երկրներից առավել բարձրադիր է եւ բ. հարուստ է հրաբխային լեռնաշղթաներով²²: Այն մի լեռնաշխարհ է, որի կենտրոնական մասն առավել բարձր է, իսկ դեպի տարբեր կողմեր գնալով՝ ցածրանում է աստիճան առ աստիճան եւ իջնում սանդուղքաձեւ: Նրա մակերեւույթը կորնթարդ է ու վահանաձեւ, որի ինքնուրույն երկրաբանական բնույթը ժամանակին նկատել է գերմանացի նշանավոր ճանապարհորդ, երկրաբան Ա. Հումբոլտը²³:

Հաշվի առնելով Հայկական լեռնաշխարհի այդ առանձնահատկությունները՝ գերմանացի նշանավոր երկրաբան, Դորպատի համալսարանի 37-ամյա պրոֆեսոր Հերման Աբիխն առաջին անգամ 1843 թ. իր «Über die geologische natur des Armenische Hoshlandes» («Հայկական բարձրավանդակի երկրաբանական առանձնահատկությունների մասին») աշխատության մեջ Հայկական լեռնաշխարհն անվանել է «Plateu Armenien, Armenische Hochland»՝ «Հայկական բարձրավանդակ»²⁴, որը հոմանիշ է Հայկական լեռնաշխարհին²⁵: Ինչո՞ւ հայկական, քանի որ

²¹ Տե՛ս Փ. Օսվալդ, Къ истории тектоническаго развитія Армянскаго нагорья, «Записки Кавказскаго отдела императорскаго Русскаго географическаго общества», книжка XXIX, выпускъ 2-й, Тифлисъ, 1916, էջ 1:

²² Տե՛ս Ա. Աբեղյան, Աշխարհագրութեան դասագիրք, գիրք Դ., «Հայաստան եւ հարեւան երկրամասեր», Թիֆլիս, 1914, էջ 3:

²³ Տե՛ս А. VON HUMBOLDT, Asie Centrale, том I: Recherches sur les Chaines de Montagnes Et la Climatologie Comparee (Classic Reprint), Forgotten books, 2017, էջ 118–127:

²⁴ Հստ Հրաչյա Գաբրիելյանի՝ եթե երկրագունդը դիտում ենք ամբողջականության մեջ, ապա իսկապես որ Հայաստան աշխարհը մի վանդակ է: Բայց երբ երկիրը դիտարկում ենք միջին ու մեծ մասշտաբներով, ապա տեսնում ենք, որ այն բաղկացած է բազմաթիվ վանդակներից: Հետեւաբար՝ Հայկական բարձրավանդակի եզակի լինելն իրեն չի արդարացնում, մանավանդ որ գոյություն ունի նաեւ «Հայկական հրաբխային բարձրավանդակ» հասկացությունը. տե՛ս Հ. Գաբրիելյան, Հայք-Հայաստան-Հայկական լեռնաշխարհ, «Երեկոյան Երեւան», 1989, մարտի 13:

²⁵ Առավել մանրամասն տե՛ս Г. Авихъ, Геологія Армянскаго нагорья, западная часть, орфографическое и геологическое описание, «Записки кавказскаго отдела императорскаго русскаго Географическаго общества», Пятигорскъ, 1899, книжка 21, восточная часть, 1902, книжка 23. А. Гукасов, Основные черты строения Армянскаго нагорья, «Записки кавказскаго отделения Русскаго Географическаго общества», 1901, книжка 22, выпускъ 1. Փ. Օսվալդ, Къ истории тектоническаго развитія Армянскаго нагорья, «Записки кавказскаго отдела Русскаго Географическаго общества», 1916, книжка XXIX, выпускъ 2-й. И. Щукин, А. Щукина, Очерк Армянскаго нагорья, Москва, 1927:

հայերը վաղ ժամանակներից լեռնաշխարհի տեղաբնիկ հիմնական ագգաբնակչությունն էին: Ըստ էության՝ «Հայկական» անվանումը Հ. Աբիխից առաջ եւս գործածվել էր: Աշխարհահռչակ գիտնականն ընդամենն առանձնացրել է հայկական անունով տարածաշրջանի երկրաբանական առանձնահատկությունները:

Իսկ Ռայմոն Ֆլուրոնը Հայկական լեռնաշխարհն անվանել է «Հայկական հովհարածե լեռնապար»²⁶:

«Հայկական բարձրավանդակ»-ը զուտ բնա-աշխարհագրական ըմբռնում է, ինքնուրույն եւ ինքնատիպ միավոր, աշխարհագրական անբաժանելի մի ամբողջություն: Էթնիկական ու քաղաքական շարժունակ հատկանիշների եւ չափանիշների փոխարեն երկրաբանական-գեոմորֆոլոգիական-աշխարհագրական եզրույթի առանձնացման հիմքում դրվել են կայուն եւ հիմնավորված, ժամանակի ընթացքում փոփոխությունների չենթարկվող երկրակեղեւի տվյալ հատվածի ֆիզիկաաշխարհագրական բնութագրիչներն ու մակերեւույթի ծագումնաբանության երկրաբանական առանձնահատկությունները: Ինչպես Հ. Աբիխն է նշում՝ այն ունի «երկրաբանական ինքնուրույն բնույթ»²⁷:

Ուշագրավն այն է, որ էթնիկական հատկանիշը համընկնում է ֆիզիկաաշխարհագրականին: Հայ ժողովուրդն առաջացել ու ձեւավորվել է ֆիզիկաաշխարհագրական իմաստով հենց Հայկական բարձրավանդակի տարածքում: Այդ առնչությամբ Ա. Ալպոյաճյանը նկատում է, որ Հայկական բարձրավանդակ «ճանշցուած երկրին միջնաբերդը առանձին կը ներկայացնէ միութիւն մը, որ ոչ մէկ ուրիշ երկրամասի կրնայ կցուիլ եւ աշխարհագրական Հայաստանն է, որ կայ եւ պիտի մնայ միշտ հայերուն անունով»²⁸: Այլ հատկանիշներն ու չափանիշներն այստեղ իրենց չեն արդարացնում: Հետեւաբար՝ «Հայկական բարձրավանդակ (լեռնաշխարհ)» եզրույթը բացարձակապես գիտական է:

Հ. Աբիխի շնորհիվ շրջանառության մեջ դրված «Հայկական բարձրավանդակ» եզրույթը գործածական դարձավ գիտական աշխարհում: Ժամանակի անվանի աշխարհագրագետներն ու ճանապարհորդներն իրենց

²⁶ Сѣу С. Бальян, Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей, էջ 30:

²⁷ Сѣу Г. Абихъ, Геологія Армянскаго нагорья, западная часть, орографическое и геологическое описаніе, «Записки кавказскаго отдела императорскаго русскаго Географическаго общества», Пятигорскъ, 1899, էջ 1:

²⁸ Ա. Ալպոյաճեան, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 4:

աշխատություններում հստակ գործածել եւ կիրառել են այդ հասկացությունը: Նույնը պետք է ասել նաեւ հանրագիտական բառարանների եւ աշխարհագրական ձեռնարկների հեղինակների մասին: «Հայկական բարձրավանդակ» («Հայկական լեռնաշխարհ») եզրույթը, որպես «Հայաստան»-ին հոմանիշ անվանում, գործածվել է նաեւ Զ. Բրայսի, Ա. Թոյնբրի եւ Ռ. Դե՛ Նոգալեսի կողմից՝ Հայոց ցեղասպանության դրվագները նկարագրելիս²⁹:

Սակայն թուրքական պատմագիտական դպրոցի անմիջական ջանքերով ժամանակի ընթացքում շրջանառությունից մասամբ դուրս բերվեց «Հայկական լեռնաշխարհ» աշխարհագրական անվանումը եւ այն փոխարինվեց «Արեւելյան Անատոլիա» շինծու ու սխալ հորջորջմամբ³⁰, որն ամբողջությամբ յուրացվեց թուրք, ազդեցության³¹ եւ արեւմտյան³² հեղինակների կողմից, նույնիսկ շահարկման առարկա դարձավ խորհրդային որոշ մասնագետների աշխատություններում: Այսպես՝ «The New Encyclopaedia Britannica»-ում նշվում է, որ «Անատոլիա»-ն թուրքիայի ներկայիս հանրապետության ասիական ամբողջ տարածքն է, լեռնային ուղղանկյուն մի երկիր, որը հազարավոր մղոններ երկարությամբ ձգվում է էգեյան ծովից մինչեւ Ռուսական Հայաստան եւ Իրանական Ադրբեջան³³: Ստացվում է, որ Հայկական բարձրավանդակ եզրն արհեստականորեն դուրս է մղվում Անատոլիայի հաշվին:

Նշենք, որ «Անատոլիա»-ն³⁴ հունարեն բառ է, որ նշանակում է «Արեւելք»: Հույներն այդպես էին անվանում իրենցից արեւելք ընկած

²⁹ «Հայկական բարձրավանդակն 2000-3000 կիներ հոս (խոսքը Հալեպի մասին է - Ա. Հ.) բերին քաջառողջ, եւ միայն 40-50 կմախքներ մնացին» (տե՛ս ԴԵՐԿՈՄ Ճ. ՊՐԱՅՍ, Անգղիական կառավարության կապոյտ գիրքը հայկական Մեծ Եղեռնի մասին (1915-1916), Կ. Պոլիս, 1919, էջ 13. նաեւ՝ Բ. ԱԵ ՈՒՂԱԵՍ, Четыре года под помесящем, Москва, 2006):

³⁰ Տե՛ս URAS ESAT, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, էջ 11:

³¹ Տե՛ս https://www.rizvanhuseynov.com/2013/03/blog-post_9.html:

³² Տե՛ս Ա. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ, Մերձավոր Արեւելքի հին քաղաքակրթությունները եւ Հայկական լեռնաշխարհը (մշակութաժագման եւ ազգաժագման հիմնախնդիրների շուրջ), «Քաղաքագիտության հարցեր. 2009». Հասարակություն, պատմություն, քաղաքակրթություն (միջբուհական գիտաժողովի նյութեր), Երեւան, 2010, էջ 207-208: Այսպես՝ անգլիացի նշանավոր գիտնականներ, Լոնդոնի համալսարանի պրոֆեսորներ Դեյվիդ Մ. Լանգը եւ Քրիստոֆեր Զ. Ուոքերն իրենց «Հայերը» աշխատության մեջ նշում են. «Հայոց երկիրը... զբաղեցնում է մի ընդարձակ լեռնային տարածք՝ ներառելով Արեւելյան Անատոլիայի մեծ մասը (տե՛ս Գ. Մ. ԼԱՆԳ, Ք. ՈՒ. ՈՒՈՔԵՐ, Հայերը, Երեւան, 1992, էջ 11):

³³ Տե՛ս «The New Encyclopedia Britannica» in 30 volumes, vol. I, Chicago/London/Toronto/Geneva/Sydney/Tokyo/Manila/Seoul, 1979, էջ 813:

³⁴ Ըստ թուրք աշխարհագետ Բեսիմ Դարկոտի՝ Արեւելյան Անատոլիան գտնվում է Հյուսիս-անատոլիական լեռների (իմա՝ Պոնտական - Ա. Հ.) եւ Հարավ-արեւելյան Տավրոսի (իմա՝ Հայկական Տավրոս - Ա. Հ.) միջեւ (տե՛ս Բ. ԴԱՐԿՈՏ, География Турции, Москва, 1959, էջ 25):

փոքրասիական երկրամասը՝ մինչև համանուն թերակղզու աշխարհագրական վերջավորությունը:

Հակագիտական է այն «տեսակետը», երբ Հայկական բարձրավանդակն անվանում են Արեւելյան Անատոլիա («դողու Անադոլու»)³⁵, Արեւելյան կամ Հայաստանի Յայլաներ («Շարք Յայլարի»՝ *Ermənistan yaylası*)³⁶, Հայ-ֆրդական բարձրավանդակ կամ Անդրկովկաս-Այսրկովկաս³⁷, Կովկասյան Հայաստան, Հարավային Կովկաս³⁸, Ջավախք-Հայկական լեռնաշխարհ³⁹, իսկ Քուրդիստանը դիտարկվում է որպես Հայկական լեռնաշխարհից կտրված աշխարհագրական առանձին միավոր:

Ժիշտ է նկատում աշխարհագրագետ էվալդ Բանզենը, երբ նշում է, որ «աշխարհագրական առանձին բնությամբ մի Քուրդիստան գոյություն չունի»⁴⁰: Այսինքն, ըստ էության, ոչ միայն Այսր, այլ նաեւ Անդրտիգրիսյան լեռնաշխարհը եւս մտնում է Հայկական բարձրավանդակի կազմի մեջ: Իսկ ըստ Վ. Սիվերսի՝ Հայկական լեռնաշխարհի մեջ են մտնում նույնիսկ Թավրիզը, Տրապիզոնը, Բաթումը, Աստարան եւ Լենքորանը⁴¹:

Ողջ Հայկական բարձրավանդակի տարածքը⁴² կազմում է շուրջ 375.000–400.000 կմ²: Այն գտնվում է Գրինվիչի աստղագիտարանի

³⁵ Ռուս աշխարհագրագետ Ս. Մատվեևի կարծիքով՝ Արեւելա-անատոլիական բարձրավանդակ ասելով՝ պետք է հասկանալ Հայկական լեռնաշխարհը (տե՛ս С. МАТВЕЕВ, Турция (Азиатская часть—Анатолия), физико-географическое описание, Москва, 1946, էջ 172):

³⁶ Տե՛ս «Азербайджанская советская энциклопедия», Т. IV, էջ 82:

³⁷ Անդրկովկաս-Այսրկովկաս եզրույթը, որն առաջացել է Ժ. Դ., Խորհրդային տարիներին հասկացվում էր որպես Կովկասյան պարանոցի մի մասը՝ Կովկասյան գլխավոր ջրբաժանից մինչև ԽՍՀՄ պետական սահմանը Թուրքիայի եւ Իրանի հետ՝ 186.1 հազ. կմ² տարածքով (տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 1, Երեւան, 1974, էջ 396): Ըստ Ստ. Լիսիցյանի՝ Անդրկովկասի տարածքը կազմել է 185.128 կմ² (ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆ, ՀԽՍՀ Ֆիզիկական աշխարհագրություն, դեմոգրաֆիայով, Երեւան, 1940, էջ 8): Իրականում Հայկական լեռնաշխարհի այն մասը, որ գտնվում էր ԽՍՀՄ-ում, կոչվում էր Անդրկովկասյան բարձրավանդակ եւ զբաղեցնում էր ՀԽՍՀ տարածքը, Վրացական ԽՍՀ հարավային եւ Ադրբեջանական ԽՍՀ արեւմտյան մասերը («Большая советская энциклопедия», т. 2, третье издание, Москва, 1970, էջ 249):

³⁸ Ըստ Սեն-Մարտենի Հարավային Կովկաս ասելով պետք է հասկանալ Կուրի արեւմտյան ափից՝ Ախալցխայի մոտակայքից մինչև Կուրի արեւելյան շրջաններ ընկած աշխարհագրական տարածքը: Տե՛ս J. A. SAINT-MARTIN, *Memoires historiques et geographiques sur l'Arménie, Suivis du texte Armenien de l'histoire des princes orpheliens*, t. I, 2012, Nabu Press, p. 46:

³⁹ Տե՛ս Н. ГВОЗДЕЦКИЙ, Ю. ГОЛУБЧИКОВ, Горы, Москва, 1987, էջ 114:

⁴⁰ «Հայոց հայրենիքը», ա. տ. եւ թ., էջ 9:

⁴¹ Տե՛ս В. СИВЕРС, Азия (серия «Всемирная география»). Пер. с нем. Г. Г. Генкеля; под ред. А. Н. КРАСНОВА, 1908, СПб, էջ 171:

⁴² Տե՛ս <https://www.britannica.com/place/Armenian-Highland>. ըստ Թ. Հակոբյանի՝ այն կազմում է 320 հազ. կմ² («Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», կազմ.՝ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, հտ. 3 (4-ն), Երեւան, 1991, էջ 336). նաեւ՝

վրայով անցնող սկզբնական միջօրեականից արեւելք՝ արեւելյան երկայնության 37020՝-490-ի (Ֆերոյից հաշված 55 եւ 670-ի միջեւ) եւ հյուսիսային լայնության՝ 36,4՛-420,08՛-ի միջեւ: Հայկական բարձրավանդակի երկարությունն արեւելքից արեւմուտք 120 է կամ, ինչպես Ղ. Ալիշանն է նշում, «ըստ Արարատեանն Մասեաց երկայնութեան 60 ընդ արեւմուտս եւ 60 ընդ արեւելս»⁴³, իսկ լայնությունը հյուսիսից հարավ՝ 60:

Որեւէ բարձրավանդակի բնական սահմանները ամենահատուկ երկրագործում են լեռնաշղթաներն ու գետերը: Սակայն, եթե հյուսիսային եւ հարավային սահմանների վերաբերյալ տարակարծություններ գրեթե չկան, խիստ վիճահարույց է արեւմտյան ու արեւելյան սահմանների հարցը, քանի որ արեւմուտքում եւ արեւելքում Հայկական լեռնաշխարհն աստիճանաբար փոխակերպվում է Փոքրասիական ու Իրանական բարձրավանդակներին⁴⁴:

Աշխարհագրական առումով Հայկական բարձրավանդակի սահմանները հյուսիս-արեւմուտքում հասնում են Սեւ ծովի հարավային ափագիծ, Արեւելա-պոնտական, Մոսքիկյան (Մեսսեթական) եւ Թռեղքի (Թրիալեթի) լեռնաշղթաների հյուսիսային եզերքները, հյուսիսում՝ Կուրի իջույթը, Ռիոնի (Կոխիդայի) գետահովիտը (վրացական կոշտ), Փոքրկովկասյան լեռների հյուսիսային ծայրաշղթաները, հարավում՝ Մալաթիայի լեռների հարավային ստորոտից մինչեւ Հայկական Տավարոս ու Կորդուքի (Հաքիարի) լեռներ, Միջագետքի դաշտ եւ Զագրոսի հյուսիսային հատվածը (մինչեւ Շինակի լեռնանցք), արեւելքում՝ Փոքր Կովկասի համակարգի արեւելյան ստորոտները՝ մինչեւ Կուր-Արաքսյան դաշտավայր (ըստ Պտղոմեոսի, Մովսես Խորենացու, Կ. Ռիտտերի, Վ. Սիվերսի, Լեոյի՝ Կասպից ծով)⁴⁵, հարավ-արեւելքում՝ Ուրմիա լիճ, Նոշիրականի (Միշուդաղի=Միշուդաղի, Սիահ կուհի) հարավային գագաթներ (Սոհունդ (Մեգխենդ) եւ Սավալան հրաբուխների հարավային փեշեր, Թալիշի լեռներ եւ Կասպից ծով)⁴⁶, արեւմուտքում այն հասնում է մինչեւ Անտիտավարոս

«Энциклопедический словарь», под редакцией проф. И. Андреевского, т. II, изд. Ф. Брокгауза (Лейпциг), И. Ефронъ (СПБ), СПб, 1890, էջ 121:

⁴³ Ղ. Ալիշան, *Տեղագիր Հայոց Մեծաց, Ս. Ղազար, 1855, էջ 7:*

⁴⁴ Տէս «Армянское нагорье», «Большая советская энциклопедия», т. 3, Москва, 1950, էջ 108:

⁴⁵ Կուր-արաքսյան դաշտավայրի տեղում գտնվող Վանդամյան կամ Քյուրդամիդյան ցամաքն իջել է, իսկ Փոքրկովկասյան լեռները բարձրացել են. տես Հ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ, Հայկական լեռնաշխարհ, ուսումնական ձեռնարկ, էջ 13:

⁴⁶ Ըստ Հ. Գարրիելյանի՝ Սավալան (Սաբալան) եւ Սոհունդ (Սեխենդ) հրաբուխները Իրանական սարահարթին խորթ են: Սրանք հիմքով կապված են Հայկական հրաբխային օջախի հետ՝ թե՛ ծագումով, թե՛ բարձրությամբ եւ թե՛ մակերեսով ինչպես նաեւ Հայկական

(Մալաթիայի լեռների արեւմուտքով)՝ «Անատոլիայի արեւելյան պատնեշ»⁴⁷, Թեջերի լեռներ, Ուզունյայլայի բարձրավանդակ, Կապադովկիայի տափաստաններ, Ալիս (Կզըլ-Իրմակ) եւ Եփրատ գետերի ջրբաժանով դեպի Գայլ գետն ու Սեւ ծով: Ա. Ղուկասովն այդ սահմանն անց է կացնում 39-րդ միջօրեականով⁴⁸:

Գ. Շիրինյանը ֆիզիկաաշխարհագրական մոդելավորման հիման վրա կատարել է Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական միավորի հետեւյալ սահմանագծումը. հյուսիսում՝ Եշիլըրմակ գետաբերանից Սեւ ծովի ափագծով մինչեւ Ճորոխի գետաբերանը, Փոքր Կովկասի հյուսիսային եւ հյուսիսարեւելյան ստորոտները՝ մինչեւ Կասպից ծով, հարավում՝ Միջագետքի հարթավայրի հյուսիսային եզրով (Արաբական եւ Եւրասիական քարոլորտային սալերի առճակատման գիծը) մինչեւ Լեւանտինյան բեկվածքագիծ (Պազարջիկի գոգավորությունում), արեւելքում՝ Կասպիական ծովափով մինչեւ Սեֆիդրուդի գետաբերանը, վերջինիս գետահովտով՝ մինչեւ նրա ակունքում բարձրացող լեռնահանգույց գագաթը (3173 մ), արեւմուտքում՝ Մարաշի գոգահովտով, Ջահան գետով հոսանքն ի վեր՝ հյուսիսից շրջանցելով Բինբոզա եւ Կիլիկյան Տավրոս լեռնաշղթաները, ապա մտնելով Եշիլըրմակի հովիտ՝ ձգվում է մինչեւ Սեւ ծով⁴⁹:

Առանձին դեպքերում Մեծ Կովկասի հարավային փեշերը, դրանց հարող Կոխիդայի ցածրավայրը, Կուրի իջվածքը, ինչպես նաեւ Թալիշի լեռներն ու Լենքորանի ցածրավայրը, որոնք սովորաբար համարվում են Անդրկովկասյան տարածաշրջան, իրենց տեկտոնական զարգացման եւ կենսակլիմայական պայմանների առանձնահատկություններով

հրաբխային բարձրավանդակին, ուստի դրանք պետք է դիտարկել որպես Հայկական լեռնաշխարհի մեկ ամբողջություն: Ուրմիա լճի ավազան-գոգավորությունը եւս ծագումով ու լանդշաֆտներով նմանություն ունի Արաքսի ավազանի կիսաանապատներին, ուստի հարավարեւելյան սահմանն անցում է Արցախի լեռների ստորոտով՝ դեպի Արաքսի աջակողմյան Սեւ ջուր (Ղարասու) վտակի հովիտը՝ մինչեւ Սավալան հրաբխի հարավային ստորոտը, այնտեղից Բոզգուշ լեռնաշղթայի հարավային ստորոտով մինչեւ Ուրմիա (հնում՝ Կապուտան) լճի հարավային ափերը՝ ընդգրկելով Սոհունգ (Սեխենգ) հրաբուխը՝ մինչեւ Ուրմիայի հարավային ափամերձ գոտի եւ Զաքրոսյան լեռնաշղթայի Շինակի լեռնանցքը (Հ. ԳԱՐԻԲԵՅԱՆ, Հայկական լեռնաշխարհ, էջ 13-14):

⁴⁷ Տե՛ս Խ. ՍԱՄՈՒԷԼՅԱՆ, Հին Հայաստանի կուլտուրան. պատմական ակնարկներ, հտ. Ա., Քարեղար, Երեւան, 1931, էջ 39:

⁴⁸ Տե՛ս А. ГУКАСОВ, Основные черты строения Армянского нагорья, էջ 8-9:

⁴⁹ Տե՛ս Գ. ՇԻՐԻՆՅԱՆ, Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական սահմանների ճշգրտումը, ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր. «Գիտություններ Երկրի մասին», թ. 1-2, Երեւան, 2000, էջ 127:

Հայկական լեռնաշխարհի հետ կարելի է դիտարկել որպես աշխարհագրական մեկ ամբողջություն:

Բազրեւանդը Հայկական լեռնաշխարհի երկրաչափական կենտրոնն է: Հայկական բարձրավանդակը արեւելքից արեւմուտք՝ Մուշ քաղաքով անցնող զուգահեռականով ձգվում է 975–1065 կմ երկարությամբ, իսկ հյուսիսից հարավ՝ Թոնդրակ լեռով անցնող միջօրեականով՝ 525–590 կմ լայնությամբ⁵⁰:

Հայկական լեռնաշխարհը Միջերկրական ծովից հեռու է 195, Կասպից ծովից՝ 80, Պարսից ծոցից՝ 100 կմ⁵¹:

Վարչաքաղաքական առումով հայկական բարձրավանդակի տարածքը հյուսիսում սահմանակից է եղել Վիրքին (Վրաստան), հյուսիս-արեւելքում՝ Աղվանքին, հարավ-արեւելքում՝ Պարսկաստանին, հարավում՝ Միջագետքին (Մեսոպոտամիա), հարավ-արեւմուտքում՝ Ասորիքին (Սիրիա), արեւմուտքում՝ նախ Խեթական թագավորությանը, ապա՝ Կապադովկիային, ավելի ուշ՝ Բյուզանդիային եւ Օսմանյան Թուրքիային, հյուսիս-արեւմուտքում՝ Պոնտական թագավորությանը:

Հստ Ղ. Ինճիճյանի՝ սահմանները հյուսիսում հասնում էին մինչեւ Վիրք, Տրապիզոն եւ Ամասիա, արեւելքում՝ Ատրպատական ու Շիրվան, հարավում՝ Ադանա, Հալեպ, Ուրֆա եւ Մոսուլ, իսկ արեւմուտքում՝ Չորում, Չանկրի, Դըրշեհիր⁵²:

Հայաստանի վարչական սահմանները հաճախ փոփոխության են ենթարկվել՝ երբեմն ընդգրկելով ամբողջ Հայկական բարձրավանդակը, երբեմն սեղմվելով այդ բարձրավանդակի կենտրոնական մասում:

Հայկական բարձրավանդակը վերը նշված բոլոր երկրներից առավել բարձրադիր եւ կարկառուն է: Հայկական բարձրավանդակի միջին բարձրությունը ծովի մակերեւույթից կազմում է 1850–1900 մ (ըստ Ն. Ալեքսանդրովսկայայի՝ 2000 մ⁵³) որը կազմում է տարածքի մոտ 30%-ը, այն դեպքում, երբ Իրանական բարձրավանդակի միջին բարձրությունը 1400 մ է, Փոքրասիական բարձրավանդակի միջին բարձրությունը՝

⁵⁰ Հստ նշյալ հանրագիտական բառարանի՝ 975–1050 կմ երկարություն եւ 525 կմ լայնություն («Энциклопедический словарь», под редакцией проф. И. Андреевского, Т. II, էջ 121):

⁵¹ Տէս Հ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ, Հայկական լեռնաշխարհ, ուսումնական ձեռնարկ, Երեւան, 2000, էջ 10:

⁵² Տէս Ղ. ՎՐԳ. ԻՆՃԻՃԵԱՆ, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ եւ Ամէրիկոյ, մասն Ա., Ասիա, հտ. Ա., Վէնէտիկ, 1806, էջ 14:

⁵³ Տէս «Физическая география материков и океанов», «Зарубежная Азия», էջ 101:

700–1200 մ⁵⁴, Անդրկովկասի իջույթի (Կոլխիդայի եւ Կուր-արաքսյան դաշտավայրերը) ու Միջագետքի դաշտավայրի միջին բարձրությունը՝ 200–ից մինչեւ 800 մ⁵⁵; Այն Առաջավոր Ասիայի ամենաբարձր երկիրն է⁵⁶, եւ նրա բարձրությունը երբեմն արտահայտվում է լեռնալանջերի ու գագաթների, երբեմն՝ լեռնադաշտերի ձեւով:

Հաշվի առնելով այդ առանձնահատկությունը՝ ավստրիացի երկրաբան էդուարդ Զյուսը Հայոց լեռնաշխարհն անվանել է «Լեռնակղզի»՝ «*Berginsel*»⁵⁷, գերմանացի նշանավոր գիտնական, աշխարհագրագետ Կարլ Ռիտտերը Հայկական բարձրավանդակը կոչել է «օղով եւ ջրով հարուստ լեռնային մի գով կղզի»⁵⁸, Գեորգ Մեսրոպյն այն համեմատել է «անհուն տաքածութեամբ բեղափառված»-ի հետ, որը «շրջապատուած է առաւել կամ նուազ բարձրութեամբ պարիսպներով» եւ ունի «հսկայ միջնաբերդ»⁵⁹, իսկ ռուս աշխարհագրագետ Վ. Գուրկո-Կրյաժինն այն համարել է «բնական հսկայական մի միջնաբերդ», «բնական ամրոց», որը վերահսկում է շրջակայքի տարածքները⁶⁰:

Հայկական բարձրավանդակը լեռնային երկիր է (լեռները կազմում են տարածքի մոտ 85%-ը), որի տեկտոնական բարձրացումները տարեկան կազմում են 5–10 մմ (100 հազ. տարում այն կկազմի 500–1000 մ): Լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Մասիսն է, որի բարձրությունը ծովի մակերեւույթից 5165 մ է: Ամենացածր կետերը Դեբեդի հովիտը եւ Մեղրու կիրճն են, որտեղ բարձրությունը ծովի մակերեւույթից կազմում է ընդամենը 390 մ⁶¹: Ծայրագույն ցածր կետը Սեւ ծովի ափամերձ հատվածն է՝ 0 մ բարձրությամբ: Հարաբերական բարձրությունը ներքին շրջաններում հասնում է 3000–4000 մ-ի (Մասիս՝ 4300 մ, Քաջքար՝ 3937 մ, Սիփան՝ 3700 մ, Զիլո՝ 3000 մ):

⁵⁴ Տե՛ս Ս. МАТВЕЕВ, Турция (Азиатская часть-Анатолия), физико-географическое описание, Москва-Ленинград, 1946, էջ 24–27:

⁵⁵ Տե՛ս Ա. ГУКАСОВ, Основные черты строения Армянского нагорья, էջ 10. նաեւ՝ Թ. ՀԱՎՈՐՅԱՆ, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երեւան, 1968, էջ 8:

⁵⁶ Տե՛ս Ա. ГУКАСОВ, Основная черты строения Армянского нагорья, էջ 10:

⁵⁷ Տե՛ս Հ. ՓԱՐՐԻՆՅԱՆ, Հայկական լեռնաշխարհ, էջ 16:

⁵⁸ К. РИТТЕР, Землеведение Азии, Санкт-Петербургъ, 1856, էջ 83:

⁵⁹ Տե՛ս Փ. ՄԵՍՐՈՊ, Հայաստան, աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական եւ մշակութային տեսակետներով, Կ. Պոլիս, 1919, էջ 2:

⁶⁰ Տե՛ս В. Гурко-Кряжин, Прошлое и настоящее советской Армении, «Новый Восток», Москва, 1927, кн. 16–17, էջ 208:

⁶¹ Տե՛ս «Հայկական սովետական սոցիալիստական ռեսպուբլիկայի ատլաս», Երեւան-Մոսկվա, 1961, էջ V:

Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասն զբաղեցնում են բարձրավանդակները, որոնցից խոշորը Հայկական հրաբխային բարձրավանդակն է (100 հազ. քառ. կմ տարածքով): Այն Առաջավոր Ասիայի երեք լեռնահանգույցներից (Պամիր, Հայկական հրաբխային բարձրավանդակ եւ Արեւմտյան Փոքր Ասիա) մեկն է⁶², որի մակերեւույթի գերիշխող ձեւը սարահարթերն են ու դրանց վրա բարձրացող հրաբխային լեռնապարերը⁶³:

Հայկական հրաբխային բարձրավանդակը երկրաբանական առումով բաժանվում է երեք շրջանի՝ 1. հյուսիսային՝ Գուգարքի բարձրավանդակ, որն ընդգրկում է Արսիան-Թրիալեթի եւ Փոքրկովկասյան լեռների միջեւ ընկած տարածքն ու կոչվում է բնալեռնային գոտի, 2. կենտրոնական շրջան, որն ընդգրկում է Փոքրկովկասյան լեռների եւ Հայկական պարի միջեւ ընկած տարածքն ու կոչվում է խնդեղն գոտի, 3. հարավային շրջան, որը ներառում է Հայկական պարի ու Հայկական Տավրոսի միջեւ ընկած տարածքը⁶⁴ եւ հայտնի է ճեղղաբեւ հողերի գոտի անվամբ⁶⁵:

Պատմաաշխարհագրական առումով լեռնաշխարհը բաժանվում է երկու գոտիների՝ 1. կենտրոնական շրջան՝ կենտրոնական հրաբխային բարձրավանդակ կամ Միջնաշխարհ, որը հիմնականում կազմված է երիտասարդ ուշ նեոթեոսյան հրաբխային ապարներից եւ հրաբխային սարահարթերի ու գոգավորությունների մի բարձրավանդակ է (Զավախքի, Կարսի, Բյուրակնի, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի), 2. ծայրաշրջանի տարածք, որը հրաբխային ծալքավոր լեռնաշղթաների մի ամբողջություն է: Հայկական բարձրավանդակի տարածքի մեծ մասն այսօր գտնվում է Թուրքիայի, իսկ առանձին հատվածներ՝ Հայաստանի, Արցախի, Վրաստանի, Իրանի Իսլամական եւ Ադրբեջանի հանրապետությունների կազմում:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Հայկական բարձրավանդակի հյուսիսարեւելյան մասում: Խորհրդային եւ հետխորհրդային գրականության մեջ այն Վրաստանի եւ Ադրբեջանի հետ պայմանականորեն կոչվել է «Անդրկովկասյան բարձրավանդակ»⁶⁶: Հայաստանի Հան-

⁶² Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 6, Երեւան, 1980, էջ 178, 187:

⁶³ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հտ. 1, Երեւան, 1971, էջ 8:

⁶⁴ Տե՛ս С. Бальян, Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей, էջ 17-19:

⁶⁵ Տե՛ս Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Հանրագիտական բառարան, հտ. 1, էջ 1434:

⁶⁶ Տե՛ս «Большая Российская энциклопедия», т. 2, Москва, 2005, էջ 261:

րապետությունը կազմում է Հայկական բարձրավանդակի ողջ տարածքի 1/13 մասը: Ունենալով 350 կմ երկարություն եւ 150 կմ լայնություն⁶⁷՝ այն Սեւ ծովից ուղիղ գծով (Ախուրյանից) հեռու է 163, Կասպից ծովից (Ջանգեզուրից)՝ 193, Միջերկրական ծովից՝ 750, Պարսից ծոցից՝ 1000 կմ⁶⁸:

Հայկական բարձրավանդակը հայ ժողովրդի բնօրրանն է, որի հետ են կապված նրա պատմական անցյալի հիմնական դրվագները: Հայկական բարձրավանդակը առաջավորասիրական արմենոիդ մարդաբանական տեսակի, հնդեւրոպական լեզուների տրոհման ու մարդկային քաղաքակրթության հնագույն ակունքներից է: Այստեղից է կատարվել հնդարիական ժողովուրդների տարածումը դեպի Եւրոպա եւ Ասիա: Նրա տարածքը երկրագործության ծագման, բույսերի աճեցման, մետաղամշակության զարգացման, ձիաբուծության եւ աստղագիտության հնագույն կենտրոններից է:

Հայկական բարձրավանդակի աշխարհագրական դիրքն իր ազդեցությունն է թողել հայ ժողովրդի ազգային հոգեբանության, բնավորության եւ քաղաքակրթության պատմության վրա⁶⁹: Այդ առնչությամբ Խ. Սամվելյանը նկատում է. «Բնական միջավայրն է պայմանաւորում տուեալ ժողովրդի արտագրողական ուժերի բնոյթն եւ զարգացումը, նրա տնտեսական գործունէութեան ամբողջ էութիւնը»⁷⁰:

Մի կողմից այն նպաստել է հայկական տարբեր ցեղերի միավորվելուն եւ մեկ ազգ կազմելուն, մյուս կողմից՝ ազգը բաժանել է զանազան

⁶⁷ Տէն Կ. ՊԱՖՖԵՆՀՈՅ, Հայաստանի եւ Փոքր Կովկասի նրան կից մասերի գեոլոգիական ակնարկը, Երեւան, 1946, էջ 9:

⁶⁸ Տէն Գ. ԱՎԱԳՅԱՆ, Հայաստանը եւ հայերս աշխարհում, Երեւան, 1992, էջ 8-9:

⁶⁹ Հասարակության զարգացման գործում առանձնակի ուշադրություն է պետք դարձնել աշխարհագրական միջավայրի դերին («աշխարհագրական դետերմինիզմ»), երբեւէ չթերագնահատելով կամ չգերագնահատելով այն: Նթե մարդկության պատմության վաղ շրջանում աշխարհագրական գործոնն ունեցել է բացառիկ կարեւոր նշանակություն, ապա հետագայում՝ գիտության եւ տեխնիկայի բուռն զարգացման պայմաններում, այն հետզհետե նվազել է, քանի որ մարդը, վերափոխվելով, փոփոխել է նաեւ իրեն շրջապատող աշխարհագրական միջավայրը: Այս առումով հետաքրքրական են Հայկ Ասատրյանի «Ցեղը եւ հայրենիքը իբր անբանական ուժեր», «Հայկական բարձրաւանդակի ընդհանուր բնութագիրը», «Հայկական բարձրաւանդակի կերպատու գործոնները եւ կերպարանը», «Հայկական բարձրաւանդակի բնական սահմանները», «Հայերը եւ իրենց բարձրաւանդակը», «Հայկական բարձրաւանդակի պայքարը», «Հայկական ոգու ուժականութիւնը» ուսումնասիրությունները. տես Հ.Ասատրեան, Հատընտիր, Երեւան, 2004: Տէն նաեւ Ա. ՍԱՐԳՍԵԱՆ, Աշխարհիմաստութիւնն իբրեւ ինքնութեան ուսումնասիրման եւ կառուցարկման գործոն (Հայկ Ասատրեանի օրինակով). «Էջմիածին», 2018, է., էջ 121-135:

⁷⁰ Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ, Հին Հայաստանի կուլտուրան. պատմական ակնարկներ, հտ. Ա., Քարեղար, էջ 39:

հատվածների ու հիմք դարձել Հայաստանի քաղաքական կյանքի հեղհեղուկ վիճակի, մանր իշխանությունների, անմիաբանության առաջացման համար ու խանգարել միասնական կենտրոնաձիգ ուժեղ պետության ստեղծմանը: Անմատչելի լեռներով պատսպարված տարածքների տեր նախարարներն առավել քիչ են հակված եղել ենթարկվելու կենտրոնական իշխանությանը: Կենտրոնախույս ուժերի առկայությունն իր անցանկալի ազդեցությունն է թողել կենտրոնաձիգ պետության ստեղծման գործում, իսկ ուժեղ պետության բացակայությունն իր հերթին բացասաբար է անդրադարձել երկրի պաշտպանունակության վրա եւ դուռ է բացել արտաքին թշնամիների առջեւ:

Այդուհանդերձ, Հայկական լեռնաշխարհը, ինչպես Դ. Բաբայանն է նկատում, «...մինչ օրս հանդիսանում է ոգեշնչման աղբյուր, որը մշտապես հոգեւոր ուժեր է սնուցում հայությանը, ինչն արդեն հարյուրամյակներ ի վեր մեր ժողովրդին թույլ է տալիս գոյատևել այսքան բարդ շրջապատում, հաղթահարել անհաղթահարելի թվացող խոշրնդոտները: Էներգիայի այդպիսի աղբյուրը ոչ ներդաշնակ շահամիտումներ է առաջ բերում հայ ժողովրդի մոտ, առանց որի պարզապես անհնար է հավասարակշռություն պահպանել... առավել ուժեղ հարեւանների հետ...»⁷¹:

Այսպիսով, Հայկական բարձրավանդակի պատմաաշխարհագրական կարեւոր առանձնահատկություններն են՝ ա. ի հաշիվ բազմաթիվ ծալքերի եւ ներքին լեռնաշղթաների՝ այն ունի առավել հարուստ ու առանձնահատուկ ռելիեֆ, քան հարեւան տարածաշրջանները, բ. նրա մակերեւույթի վրա առկա է հրաբխային գործունեության բավականին մեծ ազդեցություն, որի արդյունքում այն դարձել է հրաբխային լավայի միջոցով առաջացած առաջավորասիական ամենամեծ բարձրավանդակը, գ. այն ունի բավականին ընդգծված բացարձակ բարձրություն, դ. հարուստ է գետերով ու ջրերով եւ ե. աչքի է ընկնում Միջերկրական ծովի ազդեցության որոշակի թուլացմամբ:

⁷¹ Դ. ԲԱԲԱՅԱՆ, Հայկական լեռնաշխարհի տեղն ու դերը Աստվածաշնչյան աշխարհաքաղաքականության մեջ, Երեւան, 2005, էջ 36:

РЕЗЮМЕ

Библейский Восток — армянское отечество, является историко-географическим регионом, на границах которого в конце III — начале IV века зародился и укоренился армянский народ, создав армянскую государственность.

Существует изначальное историческое название — Айк, Айоц Ашхар, Армянский дом или Армения. Аналогичным образом, оно имеет свою географическую формулировку, известную как Армянское нагорье. Армянское нагорье, расположенное в северо-западной части Западной Азии, появилось десятки и сотни миллионов лет назад. Это земля, появившаяся в результате вулканических, горных и тектонических сил, своеобразный гранитный холм. Все Армянское плато составляет около 400000 кв. км. Это самое большое и высокое вулканическое нагорье в Передней Азии.

Историко-географические особенности Армянского нагорья: отличительная рельефность, большое влияние вулканической активности на ее поверхность, достаточно выраженная абсолютная высота, изобилие рек и вод.

Армянское плато — колыбель армянского народа, одно из старейших мест в антропологии древних азиатских арменидов, центр раскола индоевропейских языков и человеческой цивилизации. Его территория является одним из старейших центров в области сельского хозяйства, растениеводства, металлургии, коневодства и астрономии. Географическое положение Армянского нагорья повлияло на историю национальной психологии, характера и цивилизации армянского народа.

Учитывая особенности Армянского нагорья, выдающийся немецкий геолог Герман Абих назвал Армянское нагорье как «Армянским высокогорьем», Раймонд Фьюрон назвал его «Армянской пологой горной грядой», австрийский геолог Эдуард Зюс назвал Армянское нагорье «горным островом», а немецкий географ Карл Риттер назвал его «прохладным горным островом, богатым воздухом и водой».

SUMMARY

The Biblical East — the Land of Armenia is a historical-geographical region, on the borders of which the Armenian people originated, took root and created the

Armenian statehood from the end of the 4th and beginning of the 3rd millennia. Its original historical name is Hayk, Hayots Ashkhar (Land of Armenia or Armenia) and its geographical name is the Armenian Plateau.

The Armenian Plateau, located in the northwestern part of Western Asia, appeared tens and hundreds of millions of years ago. This is the land that appeared as a result of volcanic, mountainous and tectonic forces, a kind of granite hill. The whole Armenian Plateau is about 400000 square km. This is the largest and highest volcanic plateau in Western Asia. Historical and geographical features of the Armenian Plateau are the distinctive relief, large influence of volcanic activity on its surface, absolute height, abundance of rivers and waters.

The Armenian Plateau is the cradle of the Armenian people, one of the oldest places in the anthropology of ancient Asiatic Armenoids, the center of the split of Indo-European languages and human civilization. Its territory is one of the oldest centers in the field of agriculture, plant growing, metallurgy, horse breeding and astronomy. The geographical position of the Armenian Plateau influenced the history of the national psychology, character and civilization of the Armenian people.

Considering the peculiarities of the Armenian Plateau, prominent German geologist Hermann von Abich called the Armenian Plateau “Armenian Highland”, Raymond Furon called it “Armenian sloping mountain range”, Austrian geologist Eduard Suess called the Armenian Highland “mountain island”, and German geographer Carl Ritter called it “a cool mountain island, rich in air and water”.



ԼԻԴԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՀ

ՄԵՐՈՒՆ ԾԱՂԿՈՂԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԱՆԵՐԸ ՄԱՇՏՈՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ 8772 ՁԵՌԱԳՐՈՒՄ

Վասպուրականի մանրանկարչական դպրոցի կարկառուն ներկայացուցիչներից է Մերուն Ծաղկողը, որ ստեղծագործել է ԺԴ.-ԺԵ. դարերում: Նրա արվեստը, Վասպուրականի մանրանկարչական դպրոցի ընդհանուր գեղարվեստական սկզբունքներին հարազատ մնալով հանդերձ, միաժամանակ հեղինակային ձեռագրով տարբերվում է այս դպրոցի նախորդ եւ հետագա շրջանների մանրանկարիչների գործերից: Ասվածի վկայություններից է մեր ուսումնասիրության նյութը հանդիսացող ՄԱՄ 8772 Ավետարանը: Այս հոյակապ ձեռագրին դեռևս ոչ մի համակողմանի անդրադարձ չի եղել, թեև այն իսկապես իրենից մեծ արժեք է ներկայացնում եւ արժանի է առավել մանրակրկիտ ուսումնասիրության: Ներկա հոդվածում կփորձենք ընդհանուր գծերով, սակայն հնարավորինս ամբողջական պատկերացում տալ այս գրչագիր մատյանի մասին՝ միաժամանակ նաեւ ներկայացնելով, առանձնացնելով Մերունի ոճը, բացահայտելով նրա վարպետությունն ու գեղագիտական ճաշակը:

Այսպիսով, 8772 Ավետարանը Մերուն Ծաղկողը նկարագարել է 1391 թվականին՝ Ավետարանի երկրորդ ստացող Սիմեոն քահանայի պատվերով¹: Ձեռագրում պահպանվել են Մերունի ինքնանկարը (թերթ 15բ), եւ պատվիրատու Սիմեոն քահանայի ու նրա որդու՝ Աստվածատուրի դիմանկարը (թերթ 17ա)², չորս ավետարանիչների դիմանկարները (Մարկոս՝ 16բ, Մատթեոս՝ 22բ, Ղուկաս 101բ, Հովհանես՝ 153բ), եւ 10 խորանները (17բ-22ա): Ձեռագիրն ունի 24 սրբապատկեր, որոնք

¹ Տէս Լ. ԽԱՋԻԿՅԱՆ, ԺԴ դ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1950, էջ 595:

² Տէս Հ. ՀԱՎՈՐՅԱՆ, Ծաղկող Մերուն քահանա, «Էջմիածին», Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1974, հտ. 2, էջ 32:

գետեղված են ձեռագրի սկզբում՝ «Դժոխքի ավերումը» (2բ), «Աստվածամոր ննջումը» (3ա), «Աբրահամի զոհաբերությունը» (3բ), «Ավետում» (4ա), «Մոգերի երկրպագությունը» (4բ), «Ծնունդ» (5ա), «Ընծայումն տաճարին» (5բ), «Մկրտություն» (6ա), «Պայծառակերպություն» (6բ), «Հարսանիք Կանայում» (7ա), «Պետրոսի ուրացումը» (7բ), «Անդամալուծի բժշկումը» (8ա), «Դիվահարի բժշկումը» (8բ), «Նկանակի բաշխումը» (9ա), «Ղազարոսի հարությունը» (9բ), «Մուտք Երուսաղեմ» (10ա), «Թացեալ պատառ» (10բ), «Ունելվա» (11ա), «Մատնություն» (11բ), «Պիղատոսը լվանում է ձեռքերը» (12ա), «Խաչելություն» (12բ), «Հարություն» (13ա), «Համբարձում» (13բ), «Մարիամը եւ առաքյալները» (14ա), «Չորեքկերպյան աթոռ» (14բ), «Հոգեգալուստ» (15ա): Ծերունի օրինակով կարող ենք համոզվել, որ Վասպուրականի մանրանկարիչները վերադարձել են Ավետարանների պատկերազարդման նախակիրիկյան համակարգին՝ նվիրելով պատկերներին առաջին տետրը: Ծերունի գործերում, ինչպես եւ Վասպուրականի շատ այլ մանրանկարիչների, բացակայում են բնագրին՝ շարադրանքի հետ համադրված մանրանկարները:

Ամենայն հավանականությամբ, հետագա նորոգումների պատճառով Ավետարանում մանրանկարների դասավորությունը խախտվել է՝ «Աբրահամի զոհաբերությունը» տեսարանի փոխարեն, պատկերների շարքն սկսվում է «Դժոխքի ավերումը» եւ «Աստվածամոր նինջը» տեսարաններով, որոնք սովորաբար պատկերաշարի վերջում են ներկայացվում³: Ավետարանում պահպանվել են նաեւ անվանաթերթ-կիսախորանները՝ 23ա, 102ա, 154ա եւ լուսանցազարդերը: Վերջիններս, սակայն, չեն պատկանում Ծերունի վրձնին⁴: Հետեւաբար մենք չենք անդրադառնա դրանց քննությանը:

Ինչպես նշվեց, Ավետարանական հաջորդական նկարաշարից զատ մեր ձեռագրում հատուկ տեղ են գրավում Ծերունի ինքնանկարը (նկ. 1) եւ պատվիրատու Սիմեոն քահանայի ու նրա որդու՝ Աստվածատուրի դիմանկարը (նկ. 2): Ծերունն այստեղ իրեն ներկայացրել է ավետարանչի պատկերազրույթամբ: Առհասարակ, Վասպուրականի մանրանկարչական դպրոցում առանձին էջով իրենց ավետարանիչների տեսքով են

³ Տե՛ս Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, Վասպուրականի մանրանկարչությունը, հ. Բ, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1982, էջ 55

⁴ Հնարավոր է արվել են մինչեւ Ծերունի պատկերազարդումը, գրչի հետ աշխատող անհայտ նկարչի ձեռքով: Տե՛ս Ա. Գէորգեան, Հայ մանրանկարիչներ, Մատենագիտություն. IX-XIX դդ., Գահիրէ, 1998, էջ 274

նկարել մանրանկարիչներ Մերունը եւ Աստվածատուրը: Մեր ձեռագրում Մերունի ինքնանկարն արված է ոչ միայն ծաղկողին ավետարանչի նմանողությամբ, այլեւ ավելի առաջ է դրված, քան ստացողի եւ նրա որդու նկարը: Մանրանկարչին եւ ավետարանչին զատող միակ հատկանիշը նկարչի գլխանոցն է: Մնացածը երկրորդական տարբերություններ են: Այստեղ, ինչպես նկատել են նաեւ ուսումնասիրողները, հետաքրքիր է կամարամահիկից կախված տախտակը, որի վրա նկարում է նկարիչը, գրում՝ ավետարանիչը⁵:

Անդրադառնալով ավետարանիչների դիմանկարներին, նշենք, որ Քառավետարաններում դրանք հանդես են գալիս իբրեւ հեղինակների նկարներ, որոնք պատկերված են աշխատանքի պահին՝ ներշնչված, գրելիս, խորհելիս, թելադրելիս: Սովորաբար նրանք շրջապատված են գրչին անհրաժեշտ պիտույքներով եւ համապատասխան ճարտարապետությամբ կամ բնապատկերով⁶: Ա. Մ. Ֆրենդը միջնադարյան ավետարանիչների դիմանկարները բաժանում է երկու հիմնական խմբի՝ կանգնած եւ նստած⁷:

Մեր ձեռագրի պարագային նստած են պատկերված Մատթեոսը, Մարկոսը (նկ. 3) եւ Ղուկասը, իսկ Հովհաննեսը հոտնկայա թելադրում իր աշակերտին՝ Պրոքորոսին (նկ. 4): Կարելի է եզրակացնել նաեւ, որ Մարկոս ավետարանչի դիմանկարի էջը եւս տեղաշարժված է: Ինչպես ցույց է տալիս նկարների հաջորդականությունը, այն ներկայացված է Մատթեոսի պատկերից առաջ:

Կամարածեւ մշակված շրջանակների մեջ ներառված ավետարանիչների պատկերները ներկայացված են նստած դիրքով: Նրանք արտաքինապես հանգիստ են: Կերպարներում կա որոշ խոհականություն, որ գալիս է հին շրջանի փիլիսոփաների կերպարներից, որ ավետարանիչների պատկերագրության նախագաղափարներից են: Մերունի պատկերած ավետարանիչների դիմանկարներում հետեւողականորեն պահպանվում են Վասպուրականում ընդունված պատկերատիպերը⁸:

⁵ Տե՛ս Վ. ՂԱԶԱՐՅԱՆ, Ինքնանկարը հայ մանրանկարչության մեջ, «Գիտություն եւ տեխնիկա», Երեւան, 1981, 9, էջ 32-33:

⁶ Տե՛ս A. M. JR. FRIEND, The Portraits of the Evangelists in Greek and Latin manuscripts, Art Studies Medieval, Renaissance and Modern, Cambridge, 1927, Վ. Ղազարյան, Ավետարանիչների պատկերագրությունը 14-րդ դարի Կիլիկյան մանրանկարչության մեջ, Զեկուցումների ժողովածու, 4, Հայ արվեստին նվիրված միջազգային 2-րդ սիմպոզիում, Երեւան, 1978:

⁷ Տե՛ս A. M. JR. FRIEND, նշվ. աշխ., էջ 123-124 :

⁸ Տե՛ս Հ. Հակոբյան, Վասպուրականի մանրանկարչությունը, հտ. Ա, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, նկ. 11, 13, 64, 67:

Ինչ վերաբերվում է խորաններին, ապա ձեւավորման ընդհանուր սկզբունքների առկայությունը հանդերձ, մանրանկարչական տարբեր դպրոցներում եւ տարբեր ժամանակներում փոփոխվել է նրանց կառուցվածքը, համամասները, զարդապատումը: Անդրադառնալով Վասպուրականի ձեռագրերի խորաններին՝ նշենք, որ այստեղ դրանք հաջորդում են բովանդակային նկարաշարին եւ կազմում առանձին պրակ: Նրանք աչքի են ընկնում կառուցվածքային խիստ պարզությամբ եւ նախազարդերի ոչ մեծ քանակությամբ⁹:

Վասպուրականի ծաղկողներն, ըստ երեւոյթին, ամբողջ խորանը կամ, ավելի ճիշտ նրա վերին մասը (կամարները պատկերազարդ երեսներում), ընկալել են որպես սեղան: Իսկապես սեղանը կամ քառանկյունի է պատկերվել կամ բոլորաձեւ, ինչը ցույց են տալիս նաեւ խորանների գլխազարդերը՝ կամարաձեւ (մեկ կամարով կամ կամարների շարքով) կամ ուղղանկյուն: Ասվածն են ապացուցում նաեւ գլխազարդերի ներսում առկա մի քանի մակագրությունները¹⁰, որոնք տեսնում ենք նաեւ Մ. 8772 Ավետարանի որոշ խորաններում (օրինակ՝ «ՍԵՂԱՆ ՔՈՏԷՐ»՝ 18բ, նկ. 5): Փաստորեն էջերի վերնամասերը ներկայացված են խորանի բուն իմաստով՝ որպես եկեղեցու Սբ. Սեղան:

Ձեռագրի խորաններն իրենց ընդհանուր բնույթով նորոյթ չեն Վասպուրականի դպրոցի համար. երեք սյուների վրա հենված կամարներն իրենց հերթին ներառված են քառանկյուն շրջագծերի մեջ, սակայն զարդանախշերում կան նորովի մեկնաբանված ձեւեր ու մանրամասներ, որոնք պայծառ գույների զուգորդությամբ թարմ տպավորություն են հաղորդում: Սյուների խոյակներն ունեն ռճավորված բուսազարդերի տեսք: Աչքի են ընկնում նաեւ խորանների հարեւանությամբ պատկերված բույսերը¹¹:

Ձեռագրում առաջին երկու էջն զբաղեցնող Եւսեբիոսի թղթի եւ կանոնների խորանների հանդիպակաց էջերն ունեն կառուցվածքային ընդհանրություններ: Յուրաքանչյուր զույգ խորանները կրկնվում են գրեթե հայելային արտացոլմամբ:

Խորանների հորինվածքային համեմատաբար ավելի պարզ կառուցվածքի հետ մեկտեղ, այստեղ, այնուամենայնիվ, դրսևորվել է Մերունի,

⁹ Տես Վ. ՂԱԶԱՐԵԱՆ, Մեկնությունը խորանաց. Հետազոտություն եւ բնագրեր, էջմիածին, Մայր Աթոռ Ս. էջմիածնի տպարան, 2004, էջ 66-67:

¹⁰ Տես ն. տ., էջ 41, 67:

¹¹ Տես Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, Վասպուրականի մանրանկարչությունը, հտ. Բ, էջ 56:

որպես մանրանկարիչ-ծաղկողի երեւակայութիւնը: Հատկապես աչքի են ընկնում այս խորանների ճարտարապետական կառուցվածքն ու գույները: Դեղնավուն մակերեսի վրա այդ վառ երանգներն ստեղծում են այնպիսի հնչեղութիւն, որ ներդաշնակ է խորանների հակիրճ ու զուսպ ձեւերին:

Զեռագրի ավետարանական պատկերաշարը, Վասպուրականի մանրանկարչական դպրոցի ավանդույթների համաձայն, բավականին ընդարձակ է եւ, ինչպես նշեցինք, ներկայացված է ձեռագրի սկզբում: Առանց յուրաքանչյուր մանրանկարին առանձին-առանձին անդրադառնալու, խոսենք դրանց պատկերագրական եւ ոճական առանձնահատկութիւնների մասին:

Զեռագրի բոլոր մանրանկարներում հեռանկարն ու խորքը բացակայում են, ընդգծված է հարթապատկերայնութիւնը: Դեղին ուղղանկյուն շրջանակի մեջ ներառված այս տեսարանները բավականին պարզ կառուցվածք ունեն, որտեղ որպես արտահայտման հիմնական միջոց գերիշխում են գիծն ու գույնը: Դրանք փոխադարձաբար լրացնում են միմյանց եւ պայմանավորվում մեկը մյուսով: Տեսարանների հորինվածքները հիմնականում երկու մասի են բաժանվում՝ երբեմն կերպարների դասավորութեան, երբեմն՝ մանրանկարի շրջանակի շնորհիվ: Նկարիչը հնարավորինս կրճատում եւ նվազագույնի է հասցնում ներկայացվող կերպարների թիվը՝ ձգտելով հորինվածքի հավասարակշռութեան եւ ընդհանուր ավարտունութեան: Այն դեպքերում, երբ կերպարների կրճատումը հնարավոր չէ, ինչպես օրինակ, տասներկու առաքյալներին ընդգրկող տեսարաններում, Մերունն առաջին շարքի կերպարներին է ամբողջական պատկերում, իսկ մյուսների ներկայութիւնը հուշում է լուսապսակների կորերի կամ միայն գլուխների պատկերմամբ: Նա երբեմն տեսարանները ոչ թե կրճատում, այլ ընդարձակում է՝ տեղավորելով դրանք երկու հանդիպակաց էջերի վրա: Այդպիսով կիսում է տեսարանը եւ ուղղահայաց, եւ հորիզոնական առանցքներով:

Այստեղ մարդկանց դեմքերն անհատականացված չեն: Սակայն, այդուհանդերձ, իրենց մեջ կրում են տվյալ գործող անձի իրավիճակին համապատասխան արտահայտութիւն: Այդ առումով բնորոշ է «Աբրահամի զոհաբերութեան» պատկերը (նկ. 6), ուր համոզիչ կերպով արտահայտված են երկու կերպարների՝ Աստծու կամքին հնազանդ լինելը: Զեռագրում պատկերված դեմքերը մեծ մասամբ լայն ու

ձվածիր են՝ տրված պարզ գծանկարով: Նրանց նշաձեւ աչքերն ունեն լայն բացվածք: Բիբերը սեւեռուն կերպով ուղղված են խոսակցի կամ կատարվող իրադարձության կողմը: Ի դեպ, միանման այդ դիմագծերը եւս մարդկանց խմբերով պատկերելու ժամանակ շարժուն տպավորություն են ստեղծում: Ներկայացված բոլոր անձանց այտերը պատկերված են կարմիրով:

Ծերունի կերպարներն առավել գրավիչ են իրենց մաքուր, պարզ, գուցե նաեւ՝ միամիտ դիմագծով, ինչը հիմնականում ստեղծված է դեմքերի հենց այսպիսի կառուցման եղանակով եւ պատկերների արտահայտիչ ուրվագծումով, որին կանգնողական մի փոքր ուշ:

Մարդկանց մագերը երկու ձեւով են պատկերվում՝ մի դեպքում դրանք տրվում են ներկի հավասար շերտով, մյուս դեպքում՝ «գծային» սանրվածքով: Իջնելով ցած՝ ուսերի մոտ դրանք վերածվում են կլոր խոպոպիկի: Սա եւս Վասպուրականի նկարիչների ընդունած պատկերման ձեւ է, որի առաջին օրինակները տեսնում ենք Սիմեոն Արճիշեցու արվեստում¹²:

Մանրանկարներում գործող անձանց հագուստները հիմնականում երկու տիպի են՝ առաքյալները, աշակերտները եւ աստվածաշնչյան մյուս կարեւոր կերպարները ներկայացված են մինչեւ ոտնաթաթերը հասնող երկար հանդերձներով եւ թիկնոցով: Նրանք կրում են կարմիր ոտնամաններ: Ի դեպ, գործող անձանց ոտքերը միշտ նույն գծի վրա են պատկերվում, եւ նրանց սրածայր ոտնամանների հաջորդական շարքը շարժման յուրօրինակ պարբերականություն է հաղորդում նկարին: Մյուս կերպարները, օրինակ՝ ժողովրդի ներկայացուցիչները, զինվորները եւ այլն, ավելի կարճ զգեստներով ու երկարաճիտ կոշիկներով են պատկերվում:

Քրիստոսն ու Տիրամայրը, ինչպես ընդունված էր, բոլոր մանրանկարներում ավելի մեծ են պատկերվում, քան մնացածները: Բոլոր պատկերներում Քրիստոս ներկայացվում է դեմքի հանգիստ արտահայտությամբ: Նա կարմրահեր է, «գծային» սանրվածքով եւ երկծայր մորուսով¹³: Զեռագրի բոլոր մանրանկարներում Քրիստոս երկար կապույտ զգեստով՝ քիտոնով է եւ վարդագույն բծերով հարստացված

¹² Տե՛ս Հ. ՀԱՆՈՒՅԱՆ, Վասպուրականի մանրանկարչությունը, հտ. Ա, էջ 61, նկ. 1-12

¹³ Տե՛ս Ю. БОВРОВ, Основы иконографии древнерусской живописи, «Малая история культуры», СПб, 1995, И. Припачкин, Иконография Господа Иисуса Христа, Москва, Паломник, 2001:

սպիտակ թիկնոցով՝ գիմատիոնով: Հետաքրքիր են Նրա լուսապսակի վրա խաչ պատկերող մանրագծերը, որոնք հարստացված են վերելում ու ներքելում, աչ ու ձախ կողմերում զույգ գծիկներով (նկ. 7):

Ձեռագրի մանրանկարներում Տիրամայրն իր ավանդական հագուստով է՝ երկար զգեստով՝ տունիկայով եւ ծածկոցով՝ մաֆորիոնով, որոնց գույները նույնն են, ինչ Քրիստոսի հանդերձներին:

Պատկերները ձեւավորվել են մի ընդհանուր եզրագծով, որի մեջ մանրանկարիչը, փորձելով արտահայտել մարմնի տարբեր մասերը, մի քանի միագույն բծերով արված նոր ուրվագծեր է ստեղծում՝ մեկնաբանելով դրանք որպես հագուստի տարբեր ձեւեր: Ինչպես Աստվածածնի, այնպես եւ նստած ներկայացված մյուս բոլոր կերպարների ոտքերի մոտ հավաքված հագուստն ասես հովհարածեւ բացվելով իջնում է ցած: Գեղեցիկ կորերով տրված հագուստի ծալքերի հետ միավորվելով՝ սա բավականին հետաքրքիր շարժում է հաղորդում տեսարաններին: Ընդհանրապես հագուստների մեկնաբանումն այստեղ գծազարդային է, որը նպաստում է ձեւերի ընդգծմանը եւ կերպարներին շարժում հաղորդելուն: Հագուստների ծալքերի մշակման ժամանակ Մերունը եւս Սիմեոն Արճիշեցու եւ Զաքարիայի նման որոշ դեպքերում մաքուր գունահատվածների վրա հիմնական գծերը ներառում է գունաբծերի մեջ՝ գծերը կատարելով նույն գույնի ավելի մուգ երանգներով:

Մերունը հիմնականում օգտագործում է չորս կամ հինգ գույն՝ կարմիր, կապույտ, կանաչ, դեղին եւ շագանակագույն, որոնք միասնորեն կապվում են պարզ գծանկարի եւ հասարակ ձեւերի հետ: Գույների դասավորության մեջ եւս զգացվում է նկարաշարի փոխադարձ պայմանավորվածության եւ հաջորդականության սկզբունքը: Նշենք, որ մաքուր գույների գործածության հետ մեկտեղ Մերունը չի խուսափում նաեւ բաղադրություններից՝ մասնավորապես սպիտակին խառնելով վարդագույն, որը ստեղծում է հանգիստ ու նուրբ երանգներ, թեեւ նվազում է հակադրությունների ուժը:

Վասպուրականի ընդհանուր գեղարվեստական ավանդույթների համաձայն, այս նկարներում առկա է նաեւ խոսքի կիրառումը՝ որպես տեսարանների գաղափարական բովանդակությունը մեկնաբանող կարեւոր մանրամասն:

Ինչպես կարող ենք համոզվել, Մերունն այն եզակի վարպետներից է, որ նվազագույն միջոցներով կարողացել է հասնել մեծ

արտահայտչականության: Թղթի մաքուր խորքին ուղղահայաց եւ հորիզոնական համաչափ դասավորված եւ նվազագույնի հասցված կերպարների ուրվագծերը, ինչպես նաեւ ամուր գծանկարն ու գուներանգի մաքրությունը, հստակ արտահայտված հարթապատկերայնությունը տեսարանին հաղորդում են ընդգծված պայմանականություն եւ խորհրդանշական մեկնաբանություն: Այս երկերն իրենց պարզությամբ մոտ ու հարազատ են դիտողին: Հենց այստեղ է Ծերունի ստեղծագործության գլխավոր արժանիքը:

ՄԱՄ 8772 ձեռագրի մանրանկարների հորինվածքները շատ պարզ կառուցվածք ունեն, դրանք հագեցած չեն բազմաթիվ խորհրդանշաններով ու գործող անձանցով: Կիրառված չեն բարդ գեղարվեստական հնարքներ: Այս ամենի հետ մեկտեղ նկարազարդումներում առկա են համաչափությունների խախտումներ, հատկապես մերկ մարմինների պատկերման, կերպարների դիմահայաց ներկայացման ժամանակ: Այդուհանդերձ, ամբողջության մեջ, այս ամենը չի խոչընդոտում պատկերի ընդհանուր գեղարվեստական ընկալմանը:

Ինչպես վերը նշվեց, այս պատկերներն առանձնանում են հատկապես պայծառ, անխառն գույներով, դրանց ներդաշնակությամբ: Ծերունի՝ գույնի օգտագործման վարպետությունն իր գագաթնակետին է հասել այս մատյանի խորանների պատկերներում՝ վերածվելով գեղեցիկ զարդանախշի: Ամեն գույնը ներկայացնելով երեք զարդանախշային ձևերով՝ գունային շարժման որոշակի պարբերականություն է ստեղծում պատկերների մեջ: Օրինակ՝ 19-րդ խորանում (նկ. 8) կարմիրը ներկայացված է երեք անգամ՝ մեկ կարմիր զարդանախշ սյունով եւ երկու կարմիր զարդանախշ խոյակներով: Կապույտը ներկայացված է երկու կապույտ զարդանախշ սյուներով եւ երկու կապույտ զարդանախշ խոյակների հիմքով, դեղինը՝ երկու խոյակի զարդանախշ հիմքով եւ մեկ զարդանախշ խոյակով: Նույն սկզբունքը նկատելի է բոլոր խորանների սյունաշարքերում: Դրա շնորհիվ խորաններն իրենց մեջ մեծ ներդաշնակություն են կրում:

Այսպիսով, ՄԱՄ 8772 ձեռագիրը Ծերուն Ծաղկողի գեղարվեստական ժառանգության (9 ձեռագիր, 1 պատառիկ) փայլուն նմուշներից է եւ աչքի է ընկնում իր ձևերի զարդանախշային բնույթով, դրանց դեպի վեր ուղղվածությամբ, սպիտակի գերիշխանությամբ, պատկերների ներքին լուսավորությամբ ու տաք գույների մեկնաբանությամբ:



Նկ. 1 Մերոն Մաղկոյի ինքնանկարը, 15 ր բերք



Նկ. 2. Մ. 8772 ձեռագրի պատվիրատու Սինեոն Բահանայի ու նրա որդու՝ Աստվածատուրի դիմանկարներ՝ 17 ա բերք



Նկ. 3 Մարկոս ավետարանիչ, 16ր բերք




Նկ. 4 Հովհաննես ավետարանիչ և Պրոֆորոն, 153ր բերք



Նկ. 5. հոռան, 18բ քերթ



Նկ. 6 «Աբրահամի զոհաբերությունը», 3բ քերթ



Նկ. 7 «Մկրտություն» 6ա քերթ



Նկ. 8. հոռան, 19բ քերթ

РЕЗЮМЕ

Церун — один из уникальных мастеров, которому удалось добиться большого выражения с минимальными средствами. Четкое очертание и чистота цвета, четко выраженная плоскостность передают его миниатюрам подчеркнутую обусловленность и символическую интерпретацию. Миниатюры рукописи №8772 имеют очень простую структуру, они не наполнены многочисленными символами и действующими лицами, но благодаря этому они гораздо ближе к зрителю. Здесь лица людей не персонализированы. Тем не менее, они несут выражение, соответствующее положению данного персонажа: например, в сцене «Жертвоприношения Авраама». Эти миниатюры особенно отличаются яркими и чистыми цветами, контурным моделированием рисунков, их гармонией, раскрывая эстетический вкус Церуна.

SUMMARY

Tserun is one of the unique masters capable to achieve great expressiveness by minimal means. The firm outlines and purity of the color, clearly expressed flatness present his miniatures in a highlighted conditionality and symbolic interpretation. The miniatures of Gospel N 8772 have a very simple structure: they are not equipped with many symbols, but they are very close and familiar to viewers. Here the faces of people are not personalized. Moreover, they bear the expression corresponding to the situation of the acting person, such as in the “Abraham’s Sacrifice” scene. These miniatures are especially notable for their bright, pure colors, for the outline modeling of drawings, and for their harmony that reveals Tserun’s aesthetic taste.



ՄԵԼԻՔ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԵՊՀ

ՍՓՅՈՒՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵՆ ԵՒ ԻՐԱՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1964-1985 ԹԹ.

Սփյուռքահայություն հետ մշակութային կապի կոմիտեն (այսուհետեւ՝ Կոմիտե), որը հիմնադրվել էր 1964 թ., նպատակ ուներ հաստատել եւ զարգացնել կապերը սփյուռքահայ համայնքների եւ մասնավորապես այնտեղ գործող՝ այսպես կոչված առաջադիմական, դեմոկրատական ու հայրենասիրական կազմակերպությունների, բարեգործական ու մշակութային միությունների հետ¹:

Կոմիտեի աշխատանքներն ըստ համայնքների երբեմն էապես տարբերվել են, քանի որ յուրաքանչյուր սփյուռքահայ համայնք ուներ ուրույն դիմագիծ, հասարակական կազմակերպությունների առանձին կազմ, հայապահպանության հիմնահարցերի տարբերություններ, հայրենիքի հետ կապերի տարբեր մակարդակ: Այս առումով հետաքրքրական է իրաքահայ համայնքի պարագան, որի հետ հարաբերություններում Կոմիտեն դրսևորել է առանձին մոտեցումներ: Կոմիտեի առաջ դրվել էին հետեւյալ հիմնական խնդիրները. հաստատել եւ զարգացնել կապերը իրաքահայ համայնքի հետ, վերջինիս հայությանը ծանոթացնել հայրենիքի կյանքի, ձեռքբերումների, գիտության ու մշակույթի հետ, սերմանել հայրենասիրություն: Այդ առումով անհրաժեշտ էր նաեւ համայնքում տարածել հայրենիքի թերթերը, այնտեղ ուղարկել տարբեր խմբեր, հայրենիք հրավիրել իրաքահայերի պատվիրակություններ, կազմակերպել համայնքի նկարիչների ցուցահանդեսներ Երեւանում եւ այլն²:

¹ Տէս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 1, թ. 1-3:

² Տէս Անդ:

Ի սկզբանե անհրաժեշտ է հիշել, որ Խորհրդային Հայաստանում իրաքահայ համայնքը համարվում էր ազգային գործունեության համար լավագույն պայմաններով օժտված համայնքը: Բաղդադի հայ երկսեռ երիտասարդաց միության հիստորիայակի (1974 թ.) շնորհավորական կոնդակում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա.-ն գրում էր. «Հայ սփիւտֆի տարածֆի վրայ, բախտաւոր է մանաւանդ Իրաֆի բարեխնամ երկրի մէջ բնակող մեր հաւատացեալ ժողովուրդը, որ կը վայելէ ամեն բարենսպաստ պայմաններ՝ շէն ու պայծառ պահելու իր եկեղեցիները, իր կրթական հաստատութիւնները եւ մշակութային ազգային կազմակերպութիւնները»³: Ակնհայտ է, որ Իրաքում հայ համայնքի կենսագործունեության առումով այդ շրջանում առկա էին բոլոր հնարավորությունները: Պատահական չէ, որ այն գտնվում էր Խորհրդահայ իշխանությունների ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ուշադրության կենտրոնում:

Պետք է նշել, որ, որ Կոմիտեի եւ Խորհրդային այլ իրաքահայ համայնքին նվիրված տեղեկանքները հանդիսանում են հայության այդ հատվածի 20-րդ դարի երկրորդ կեսի պատմության կարեւոր սկզբնաղբյուրներ:

1. ԻՐԱՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԸՍՏ ԿՈՄԻՏԵԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ (1960–1980-ական թթ.)

Հայտնի է, որ Կոմիտեն իր գործունեության հիմքում դնում էր համայնքների մանրագնին ուսումնասիրությունը: Իրաքի հայ համայնքի առումով պետք է նշել, որ նման ուսումնասիրության եւ դրա արդյունքում տեղի հայկական համայնքի հետ արդյունավետ կապերի ձեւավորման անհրաժեշտությունը 1968 թ. մի զեկուցագրում բարձրացրել էր Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը՝ ՀԽՍՀ նախարարների Խորհրդին ուղղված մի գրության մեջ: Նա նշում էր, որ կա Իրաքի գաղթօջախի⁴ հետ կապերի ծավալման համար նոր հնարավորություններ փնտրելու անհրաժեշտություն, ուրեմն՝ նաեւ դրանք նախապես խորությամբ ուսումնասիրելու անհրաժեշտություն⁵:

³ «Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Բաղդադի հայ երկսեռ երիտասարդաց միության հիստորիայակի առթիվ». «Էջմիածին», 1974, է.-Ը., էջ 30:

⁴ «Գաղթօջախ»-ը հանդիսանում էր այն հիմնական եզրույթը, որով Կոմիտեն ներկայացուցիչները կոչում էին սփյուռքահայ համայնքները:

⁵ Տե՛ս «Հայրենիք-սփյուռք. կամրջող անուն» Վ. Համազասպյան», Երեւան, 2011, էջ 136:

Հայտնի է Բաղդադի հայ համայնքի վերաբերյալ 1966 թ. Կոմիտեի տեղեկանքը, ըստ որի 1966 թ. Բաղդադում բնակվել է 10 հազար հայ⁶: Մինչև Իրաքում 1958 թ. հուլիսի 14-ի հեղաշրջումը գաղթավայրում գործել են ազգային կուսակցությունները: Զգալի է եղել դաշնակցականների դիրքը, որոնք հրատարակել են «Գոյամարտ» շաբաթաթերթը⁷: Գաղթավայրի ազգային կյանքը մինչև 1961 թ. ղեկավարել է Իրաքի հայոց ընդհանուր կամ գավառական ժողովը, որի կազմում, գաղտնի քվեարկությամբ, ընտրվում էին 28 աշխարհիկ եւ 3 հոգեւոր ներկայացուցիչներ: Ազգային ընդհանուր ժողովը ղեկավարվել է նախագահի եւ համայնքի հոգեւոր առաջնորդի կողմից: Ընդհանուր ժողովը 2 տարի ժամկետով ընտրել է 7 հոգուց բաղկացած գործադիր մարմին, որը կոչվել է քաղաքական կամ թեմական ժողով⁸: Հայտնի է, որ 1963 թ. հաստատվեցին Իրաքի հայ համայնքի մասին օրենքն ու գործունեության կանոնագրերը, որ կիրառվում են մինչ օրս⁹: Ըստ այդ փաստաթղթերի՝ գաղթավայրի ազգային կյանքը ղեկավարում են Առաջնորդարանը եւ ազգային կենտրոնական վարչությունը: Կենտրոնական վարչությունը կազմված է 7 հոգուց, ընտրվում է բաղդադաբնակ հայերից՝ գաղտնի քվեարկությամբ, 4 տարին մեկ անգամ¹⁰: Ընտրությունների ժամանակ ներկա է լինում պետության համապատասխան մարմնի ներկայացուցիչը: Վարչությունն ընտրում է առաջնորդ, որի թեկնածությունը հաստատում են պետությունն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վարչությանը կից գործում են կրթական, տիկնանց՝ աղքատախնամ, եկեղեցու բարեկարգման, ազգային՝ ներքին հաշվեքննիչ եւ ազգային կալվածոց վերահսկիչ հանձնախմբերը, եկեղեցական եւ տնտեսական մարմինները:

Ըստ տեղեկանքի՝ գաղթավայրում գործում էին մի քանի մեծ կազմակերպություններ:

1. Իրաքի հայ տիկնանց մշակութային միությունը (հիմնադրվել է 1961 թ.) մշակութային, պարահանդեսների եւ այլ միջոցառումների

⁶ Տէս ՀԱՍ, ֆ. 875, ց. 14, գ. 197:

⁷ Շաբաթաթերթի համարներին կարելի է ծանոթանալ <http://tert.nla.am/mamul/goyamart/NLA.html> հղումով:

⁸ Տէս ՀԱՍ, ֆ. 875, ց. 14, գ. 197, թ. 1–11:

⁹ Տէս Ս. ՕՀԱՆԵԱՆ, Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն, Երեւան, 2016, էջ 131:

¹⁰ Տեղեկանքում նշված է, որ ընտրությանը մասնակցում են միայն բաղդադաբնակ հայերը (տէս ԱՍ Ֆ 175, ց 14, գ 197, թ 10), մինչդեռ նման իրավունք ունեին 21 տարեկանը բոլորած բոլոր իրաքահայերը: Տէս Ս. Օհանեան, էջ 131:

օգնություններ նյութական հնարավորություններ է ստեղծում կարիքավոր աշակերտների ուսման գործը կազմակերպելու համար:

2. Բաղդադի հայ երիտասարդաց երկսեռ միությունն (հիմնադրվել է 1926 թ.) ունի սեփական ակումբ: Կազմակերպում է համերգներ, ներկայացումներ, երեկոներ: Միությանը կից գործում են գրական, թատերական, մարզական եւ այլ հանձնախմբեր, ինչպես նաեւ «Կոմիտաս» երգչախումբը: Այն հիմնադրվել է իբրեւ անկուսակցական, ոչ քաղաքական հասարակական կազմակերպություն¹¹ եւ որպես այդպիսին խոշորագույնն է իրաքահայ համայնքում¹²: 1974 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն միության 50-ամյակի առիթով հայրապետական մի կոնդակ էր առաքել միության ղեկավարներին՝ նշելով, թե այն «իրաքահայ կեանքի ամենավառ ու ամենակենսունակ արտայայտություններէն մին կը հանդիսանայ, իր հոգեւոր ու ազգային առողջ ոգիով, իր բազմամեայ մշակութային եւ ազգային ծաւալուն գործունէութեամբ»¹³: Համանուն միությունը Բասրայի հայ համայնքային կյանքի հիմնական դերակատարն էր¹⁴:

3. Հայ երիտասարդաց միություն. երկսեռ, մշակութային եւ մարզական միություն է, գործում է վարձու ակումբում: Միությունն ունի սկաուտական, արհեստակցական, գայլիկների խմբեր, ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի եւ սեղանի թենիսի բաժիններ:

4. ՀԲԸՄ մասնաճյուղը (հիմնադրվել է 1960 թ.) գործում է վարձու ակումբում, նրա գործունէությունը ճանաչված է պետության կողմից¹⁵:

5. Բաղդադի Ազգային Սվանյան վարժարանն (հիմնադրվել է 1918 թ.) 1966–1967 թթ. ունեցել է 1355 երկսեռ աշակերտ եւ 68 հոգուց բաղկացած վարչական կազմ: 1969–1970 թթ. վարժարանում սովորել է 1479 աշակերտ: Վարժարանը բաղկացած է մանկապարտեզից, նախակրթարանից, միջնակարգ եւ երկրորդական բաժիններից: 1965 թ. հրատարակվում է «Կայծ» ամսաթերթը եւ «Մաշտոց» տարեգիրքը: Ուսումը վարժարանում տարվում է պետական ծրագրի հիման վրա¹⁶:

¹¹ Տե՛ս «Յուշամատեան Պաղտատի Հայ երկսեռ երիտասարդաց միութեան (1926–1976)», Պէյրուժ, 1976, էջ 18:

¹² Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003, էջ 272:

¹³ «Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Բաղդադի հայ երկսեռ երիտասարդաց միության հիմնամյակի առթիւ», էջ 30:

¹⁴ Տե՛ս Ս. Օշկանեան, նշվ. աշխ., էջ 146:

¹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 14, գ. 197, թ. 1–11:

¹⁶ Տե՛ս «Զարթոնք», 12 ապրիլ, 1967:

Մեկ այլ՝ 1978 թ. Իրաքում ԽՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչի տեղեկանքը «Իրաֆի հայկական համայնքի կառավարման օրգանների եւ նրա հասարակական ակումբների մասին» հաղորդում է հետաքրքրական մանրամասներ իրաքահայ համայնքի մասին՝ 1978 թ. դրությամբ¹⁷։ Հարկ է նշել, որ ինչպես կտեսնենք, այդ տարվա սկզբին իրաքահայ համայնք էր այցելել Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եւ այցի կապակցությամբ հայտնի են համայնքի կյանքին ու վիճակին առնչվող կարեւոր իրողություններ։ Հայ համայնքն Իրաքում կազմում է 18 հազար մարդ։ Ղեկավար մարմին է համարվում Բաղդադի հայերի՝ 7 անձից բաղկացած թեմական խորհուրդը¹⁸, որն ընտրվում է չորս տարին մեկ՝ փակ գաղտնի քվեարկությամբ։ Քննարկում է բազմաբնույթ հարցեր (որ վերաբերում են հայ համայնքի կյանքին եւ գործունեությանը), կայացնում անհրաժեշտ որոշումներ։ Առաքելական Եկեղեցին մեծ դեր է խաղում հայ համայնքի կյանքում, այդ իսկ պատճառով թեմակալ առաջնորդը համարվում է նաեւ համայնքի ղեկավար, սակայն դրա հետ մեկտեղ, որպես եկեղեցու առաջնորդ իր ձայնի իրավունքը չի օգտագործում։ Բոլոր կարեւոր փաստաթղթերը վավերացնում է եկեղեցու առաջնորդը։ Հայ համայնքն ազգային տոներին եւ միջոցառումներին պաշտոնապես Իրաքում ներկայացնում է հայ եկեղեցու եւ խորհրդի պատվիրակները։

1977 թ. նոյեմբերի 11-ին կայացել են խորհրդի ընտրություններ։ Ընտրությունների ժամանակ թեժ պայքար է ընթացել հայկական կազմակերպությունների միջեւ՝ իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում ընդգրկելու նպատակով։

Մեկ այլ տեղեկանքում, որ վերաբերում էր իրաքահայ համայնքին, նշվում է, որ 1981 թ. դրությամբ Իրաքում բնակվում է 12 հզ հայ։ Նրանք հիմնականում զբաղվում են առեւտրով, մանր սեփականատերեր են եւ արհեստավորներ։ Գաղթավայրում զգալի թիվ են կազմում նաեւ բժիշկները, ճարտարագետները, պետական համակարգում եւ արտասահմանյան ներկայացուցչություններում աշխատողները։ Վերջիններս իրենց կրթությունն հիմնականում ստացել են ԱՄՆ-ում, Անգլիայում եւ արեւմտաեվրոպական այլ երկրներում։

¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 36։

¹⁸ Պետք է լինի ազգային կենտրոնական վարչություն։ Ավելացնենք, որ Բասրայում, Մոսուլում, Քերքուքում տեղական հայկական համայնքները ղեկավարվում են Թաղական խորհուրդների կողմից, որոնք ենթակա են Ազգային կենտրոնական վարչությանը։ Տե՛ս Ս. ՕՀԱՆԵԱՆ, նշվ. աշխ., էջ 131։

Ըստ տեղեկանքի՝ սկսած 1970 թ. սկզբներից որոշ իրաքահայ երիտասարդներ իրենց կրթությունը ստացել են Խորհրդային Հայաստանում¹⁹։ Ինչ վերաբերում է գաղթավայրի հոգեւոր կյանքին, ապա այն ղեկավարում է Բաղդադի թեմական խորհուրդը։ Թեմական խորհրդի ընտրություններն անցկացվում են 4 տարին մեկ՝ փակ քվեարկությամբ։ Ընտրություններին կարող են մասնակցել 18 տարին լրացած հայերը։ Քվեարկությանը մասնակցում է Բաղդադի հայության մոտավորապես 40%-ը։ Կենտրոնական վարչությունը հանդիսանում է հայկական գաղթավայրի ներկայացուցիչն Իրաքի կառավարության հետ հարաբերություններում։

Գաղութը ղեկավարում է 7 հոգուց բաղկացած Ազգային Կենտրոնական վարչությունը, իսկ Կենտրոնական խորհուրդը եւ ամբողջ հայկական համայնքը ղեկավարում է թեմական առաջնորդը։ Ազգային Կենտրոնական խորհրդի բոլոր որոշումները կյանքի են կոչվում միայն թեմական առաջնորդի հաստատումից հետո։

1973 թ. հուլիս-օգոստոս ամիսներին կայացած ազգային Կենտրոնական վարչության նոր ընտրություններում Բաղդադում դաշնակցականներն ու նրանց հարողները տարան լուրջ հաղթանակ։ Դաշնակցականներին աջակցում էին որոշ պետական գործիչներ։

Հայկական համայնքի նորընտիր ազգային Կենտրոնական վարչությունը հանդես էր գալիս հետեւյալ ծրագրով.

1. ձեռնարկել միջոցառումներ եկեղեցապատկան հողերն առավել արդյունավետ օգտագործելու համար,

2. ձեռնարկել միջոցառումներ Իրաքում գործող հայկական դպրոցների մակարդակը բարձրացնելու եւ ուսուցիչների վիճակը բարելավելու համար,

3. նյութական օգնություն ցույց տալ հայկական դպրոցներին եւ ապահովել համապատասխան մասնագետներով,

4. թեմի եկեղեցիներն ապահովել անհրաժեշտ քանակության հոգեւորականներով,

5. ապահովել միասնականություն եւ փոխըմբռնում ազգային տարբեր կազմակերպությունների միջեւ։

¹⁹ Իրականում այս տվյալը սխալ է, քանի որ արդեն Կոմիտեի գործունեության առաջին տարեշրջանում (1964–65 ուստարի) խորհրդահայ բուհերն են ընդունվել 8 ուսանող իրաքահայ համայնքից։ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 1։

Հաղթանակից հետո դաշնակցականներն աշխույժ պայքար սկսեցին մղել Բաղդադի հայկական եկեղեցին էջմիածնից անջատելու եւ Անթիլիասին միացնելու ուղղությամբ²⁰:

Համայնքում գործունեություն են իրականացնում մի շարք կազմակերպություններ: «Առաջադիմական» է համարվում ՀԲԸՄ Բաղդադի մասնաճյուղը, որը կազմավորվել է 1960-ին: Ակումբի կանոնադրությամբ արգելվում է կազմակերպել քաղաքական միջոցառումներ, սակայն, տարբեր բարեգործական միջոցառումների տակ ակումբի շուրջն են համախմբվում հայ գաղութի առաջադիմական շրջանակները: Ակումբին կից գործում է կանանց խմբակը: Ակումբն ունի 300 հոգու համար նախատեսված դահլիճ եւ մեծ գրադարան: Անդամների թիվը հասնում է 350-ի:

ՀՅԴ հովանու ներքո գործող Երիտասարդական ակումբն ստեղծվել է 1962 թ. եւ դաշնակցական կադրերի պատրաստման հիմնական դարբնոցն է: Անդամների թիվը հասնում է 450-ի:

Իրաքում չկան հնչակյան եւ ռամկավար կազմակերպությունների անդամներ: Ազգային առաջնորդարանի եւ ազգային կենտրոնական վարչության ենթակա հաստատություններ ու մարմիններ եւս չեն գործում:

Խոսվում է նաեւ Տիկնանց մշակութային միության եւ Հայ երկսեռ երիտասարդաց միության մասին:

Համայնքի մեծագույն կազմակերպություններից է ՀՄԸՄ-ն (Հայ մարմնակրթական ընդհանուր միություն): Միությունը գտնվում է դաշնակցության հովանավորության տակ: Անդամների թիվն հասնում է 700-ի: Միության նախագահն է Հովհաննես Սեմերճյանը, որը վայելում է պետական ճանաչում: ՀՄԸՄ-ն երկսեռ է: ՀՄԸՄ-ն կազմակերպում է տարեկան միջմասնաճյուղային հանդիպումներ որին մասնակցում են Իրաքի այլ քաղաքներում գործող ակումբները: ՀՄԸՄ-ն ոչ մի կապ չունի արտասահմանի մյուս ՀՄԸՄ-ների հետ: Այն գործում է միայն իրաքահայության շրջանում²¹:

Ներկայացված նյութից ակնհայտ է, որ իրաքահայության փառաբանական շերտավորումը չունեւ այն բազմազանությունը, որն առկա էր այլ համայնքներում: ՀՅԴ-ն գործնականում համայնքի միակ փառաբանական ուժն էր: Կապերի հաստատման առումով ՍԴՀԿ եւ ՌԱԿ անդամների բացակայությունը

²⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 175, թ. 1-3:

²¹ Տե՛ս նույն տեղում, ց. 13, գ. 208, թ. 32-36:

համայնքում Կոմիտեի համար էական խնդիրներ էր ստեղծում, որ վերջինիս ներկայացուցիչները փորձում էին լրացնել այլ կառույցների եւ հատկապես ՀԲԸՄ մասնաճյուղի հետ կապերը սերտացնելով:

Իրաքահայերի թվաքանակը. Իրաքահայությունից թվաքանակի վերաբերյալ կան տարբեր տվյալներ: Մասնավորապես 1965 թ. տվյալներով Իրաքում հայերի թիվը 20.000 էր: Իրաքում կար 12 հայկական դպրոց՝ 2260 աշակերտով²²: 1967 թ. մի տեղեկանքի համաձայն՝ իրաքահայության թվաքանակը 25.000 էր²³: Ինչպես տեսանք, Կոմիտեի տեղեկանքներում 1965 թ. դրությամբ նշվում էր 10 հզ, իսկ 1978 թ.՝ 18 հզ իրաքահայերի մասին: Հետաքրքիր է, որ 1978 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցի կապակցությամբ խոսվում է ավելի քան 20 հզ իրաքահայերի մասին²⁴: Արդեն 1981 թ. իրաքահայության թվաքանակը արտագաղթի պատճառով փոխվել էր (հիմնականում ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Անգլիա)²⁵: Այն նախնական 25 հազարից իջել ու հասել էր 12 հազարի (1981 թ. դրությամբ): 1960-ականներին իրաքահայերի մեծ հոսք է եղել դեպի Լիբանան²⁶: 1960-1970-ական թթ. իրաքյան անկայուն իրավիճակի պայմաններում բազմաթիվ իրաքահայեր հեռանում էին երկրից, հաստատվում սկզբում Լիբանանում, իսկ այնուհետեւ ԱՄՆ-ում՝ կենտրոնանալով հիմնականում Գլենդեյլ քաղաքում²⁷: ԱՄՆ տեղափոխված իրաքահայերն հետագայում ստեղծեցին սեփական հայրենակցական միությունը²⁸: 1980-ական թթ. կեսին իրաքահայության մի խումբ հաստատվեց Հունաստանում²⁹:

²² Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 41, թ. 37:

²³ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 9, թ. 1:

²⁴ Տե՛ս Ա. Հատիրտյան, Հայրապետական այցելություն Բաղդադի հայոց տիրախնամ թեմին, «Էջմիածին», 1978, Բ., էջ 8:

²⁵ Այս կապակցությամբ հիշատակելի է, որ իրաքահայերն իրենց զգալի ներդրումն ունեցան Անգլիայի հայկական համայնքի ձեւավորման գործում (1960-1980-ական թթ.). տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 21 դեկտեմբեր, 1984, էջ 3:

²⁶ Տե՛ս Տ. Ղանալանյան, Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին, Երեւան, 2016, էջ 90: Լիբանանում հաստատված տարբեր համայնքների, այդ թվում նաեւ Իրաքի հայ համայնքի ներկայացուցիչներին ԱՄՆ տեղափոխելու հարցով 1960-ական թթ. առաջին կեսին (մինչեւ 1966 թ.) զբաղվում էր «Հայրենագուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտեն» (ANCHA/ԱՆՁԱ). տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 398, թ. 7:

²⁷ Տե՛ս Ժ. Գոսագեան, Լոս Անճելեսի հայ համայնքի ժողովրդագրական պատկերը, Հայերը սեփական եւ այլ ազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, Երեւան, 2014, էջ 123:

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 145:

²⁹ Տե՛ս «The Armenian community of Thessaloniki: History, present situation, and prospects», Thessaloniki, 2005, էջ 27: Տե՛ս Տ. Ղանալանյան, նշվ. աշխ., էջ 20:

Փաստորեն, Իրաքի հայ համայնքի թվաքանակը մեծապես կրճատվել էր՝ 1960-ականների 20–25 հազարից 1980-ական թթ. սկզբին նվազելով մինչև 12 հազարը:

2. ԿՈՄԻՏԵԻ ԿԱՊԵՐՆ ԻՐԱՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Կոմիտեի առաջին եւ կարեւոր խնդիրն իրաքահայ համայնքի կազմակերպությունների եւ անհատ գործիչների հետ կապերի հաստատումն էր: Համայնքի քաղաքական հոսանքները Կոմիտեն բաժանում էր երեք մասի՝

1. առաջադիմական (կոմունիստներ, հնչակյաններ, ռամկավարներ, ՀԲԸՄ-ի անդամներ),

2. ռեակցիոն (դաշնակցականներ),

3. չեզոք (որոնք, ըստ տեղեկանքը կազմողների՝ առավել հակված են դեպի առաջադիմական ուղղությունը)³⁰: Երկրորդ հոսանքի հետ բացառվում էր որեւէ հարաբերություն: Նշված բաժանման համապատկերում նշենք, որ իրաքահայ համայնքում հնչակյանների ու ռամկավարների փաստացի բացակայությունը³¹ մեծապես թուլացնում էր «առաջադիմականների» ճակատը, իսկ վերելում բերված տեղեկանքների տվյալներով «չեզոքները» հարել էին դաշնակցականներին: Հետեւապես կարելի է նշել, որ այս համայնքում Կոմիտեի՝ հայեցակարգային վերոհիշյալ բաժանումը չէր գործում:

Հետաքրքրական է, որ 1964–65 թթ. դրությամբ Կոմիտեն իրաքահայ որեւէ գործընկեր կազմակերպություն դեռեւս չուներ: Համագործակից կազմակերպությունների ցանկում, որոնց հետ կապ է ունեցել Կոմիտեն, նշված է միայն Բաղդադում ԽՍԽՄ դեսպանությունը³²: Նաեւ այդ բացը լրացնելու համար 1965 թ.՝ հայոց ցեղասպանության 50-ամյակի միջոցառումներին մասնակցելու համար ի թիվս այլ հրավիրյալների, եղել է նաեւ

³⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6:

³¹ Պետք է արձանագրել, որ 1971 թ. դրությամբ ՍԴՀ-ն թեեւ կուսակցական կառույց չուներ Իրաքում, սակայն այնտեղ իրականացնում էր մշակութային եւ հայրենակցական բնույթի միջոցառումներ: Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 2008, թիվ 2, էջ 130: Իսկ 1973 թ. Լիբանանում ԽՍՀՄ դեսպանության կցորդի տեղեկանքում նշվում է, որ ԽԱԿ-ը կառույց ունի Իրաքում. տե՛ս ն. տ., էջ 143:

³² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 24:

իրաքահայ ներկայացուցիչը³³։ Այդ քաղաքականությունը մեծ արդյունք չէր տվել, որի պատճառով Կոմիտեի 1968 թ. աշխատանքային ծրագրում առաջարկվում էր ուժեղացնել կապը նոր կազմակերպված, ինչպես նաև փոքր գաղթավայրերի, այդ թվում նաև Իրաքի հայ համայնքի հետ ու Հայաստան հրավիրել իրաքահայ առաջադիմական հասարակական գործիչներից 3 հոգի³⁴։ Ակնհայտ է, որ իրաքահայ համայնքի հետ հարաբերությունների խորացումը Կոմիտեի համար դառնում էր կարեւորագույն հարց։ Համայնքը նաև խորն ուսումնասիրության կարոտ էր, քանի որ մյուս համայնքներից զգալիորեն տարբերվում էր իր հնարավորություններով ու կառուցվածքով։

Այդ առումով կարեւոր է, որ 1969 թ. Մերձավոր Արեւելքի հայկական «առաջադիմական»³⁵ կազմակերպությունների հրավերով Սիրիա, Լիբանան, Եգիպտոս եւ Իրաք են գործուղվել դասախոսների խմբեր³⁶։

Իրաքահայ համայնքը գտնվել է նաև ՀԽՍՀ քաղաքական ղեկավարության ուշադրության կենտրոնում։ 1971 թ. Իրաք (Բաղդադ) են այցելել ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ալեքսան Կիրակոսյանը եւ ՀԿԿ Երեւանի քաղկոմի քարտուղար Կարեն Դեմիրճյանը։ Նրանք հանդիպել են տեղի հայ երիտասարդների հետ, պատմել մայր հայրենիքի մասին³⁷։ Այս այցերի արդյունքում 1972 թ. Կոմիտեն առաջ քաշեց Իրաքի հայերի հետ կապերը զարգացնելու անհրաժեշտությունը՝ առաջարկելով շարունակել իրաքահայ երիտասարդներին սովորելու նպատակով հայրենիք հրավիրելը։ Առաջարկվում էր նաև պարբերաբար Իրաք գործուղել պատվիրակություններ³⁸։

Կոմիտեի 1976 թ. հաշվետվության մեջ ասված էր, որ Մերձավոր Արեւելքում տիրող անբարենպաստ իրավիճակի պատճառով³⁹ ՀԽՍՀ-ից որեւէ խումբ այնտեղ չի ուղարկվել⁴⁰։ Այդ առումով հետաքրքրական է այն, որ 1978 թ. հունվարի 28-ից մինչեւ փետրվարի 9-ը Իրաքի Ազգային կենտրոնական վարչության հրավերով Բաղդադում է հյուրընկալվել

³³ «Հայրենիք-սփյուռք. կամրջող անուն՝ Վ. Համազասպյան», էջ 46-47։

³⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 30, թ. 51։

³⁵ Ձևակերտով օգտագործված է Կոմիտեի գրագրության մեջ կիրառվող եզրույթը։

³⁶ Տե՛ս ՀԱԱ, ց. 4, գ. 20, թ. 6։

³⁷ Տե՛ս Անդ, ց. 4, գ. 70, թ. 7-8։

³⁸ Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 12, թ. 6։

³⁹ Խոսքը արաբա-իսրայելական հակամարտության պատճառով ձեւավորված անբարենպաստ վիճակի մասին է։

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 33, թ. 16-19։

անձամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն: Ըստ այցի վերաբերյալ տեղեկանքի՝ Իրաքում բնակվում էր ավելի քան 20 հզ հայ: Համայնքի հասարակական կյանքը ղեկավարվում էր Ազգային կենտրոնական վարչության կողմից: Իրաքահայությունը բնակվում է Բաղդադում, Մոսուլում, Քերքուքում, Զախոյում, Բասրայում: Վեհափառ Հայրապետն այցելում է Հայկական բարեգործական ընդհանուր միություն, Իրաքի հայ երկսեռ երիտասարդաց միություն, Բաղդադի ազգային ծերանոց ծերանոց, Բաղդադի Կաթողիկե Հայոց առաջնորդարան, ԽՍՀՄ-ի դեսպանատուն, ինչպես նաև պատարագ մատուցում Բաղդադի եկեղեցիներում, որոնցից հնագույնը Մեյդանի Ս. Աստվածածինն էր (կառուցված 1638 թ.)⁴¹:

Իրաքի ներկայացուցիչները մասնակցել են նաև 1980 թ. նոյեմբերի 24–27-ը Կոմիտեի նախաձեռնությամբ եւ «Վերածնված հայրենիք եւ սփյուռք. պայքար հանուն խաղաղության եւ առաջադիմության» նշանաբանով Երեւանում տեղի ունեցած սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների առաջին համահայկական հավաք-համաժողովին⁴²: Հիմնական նպատակը Հայրենիք-սփյուռք կապերի սերտացումն էր ու համագործակցության առավել արդյունավետ եղանակների մշակումը:

Սակայն շուտով իրադրությունն Իրաքում ծայրաստիճան լարվեց: 1980-ական թթ. Իրաք-իրանյան պատերազմի պայմաններում Կոմիտեի ու իրաքահայության կապերը թուլանում են: Դրա հետեւանքով այդ տարիներին գործուղումներ դեպի Իրաք այլևս չկային⁴³:

1970-ական թթ. Կոմիտեի ջանքերով Խորհրդային Հայաստանում իրենց հանգիստն էին անցկացնում բազմաթիվ իրաքահայ երեխաներ: Նախքան այդ, 1960-ական թթ. իրաքահայ համայնքից երեխաներ չէին հրավիրվում⁴⁴: Իրավիճակը փոխվեց 1970-ական թթ. երկրորդ կեսին: Օրինակ՝ 1979 թ. հանգստի համար Հայաստան հրավիրված դպրոցականների (100 երեխա) շարքում Իրաքը ներկայացված էր 7 հոգով⁴⁵: Ցավոք, 1980-ական թթ. այդ գործընթացը, հիմնականում կապված պատերազմական իրադրության հետ, դադարեց⁴⁶:

⁴¹ Տե՛ս Ա. Հատիրտյան, նշվ. աշխ., էջ 6–35:

⁴² Տե՛ս նույն տեղում, ց. 40, գ. 9, թ. 1–2: Տե՛ս նաև «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1980, թիվ 12, էջ 7–34:

⁴³ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 875, ց. 13, գ. 7, թ. 19:

⁴⁴ Տե՛ս Անդ, ց. 2, գ. 17:

⁴⁵ Տե՛ս Անդ, ց. 13, գ. 7, թ. 24:

⁴⁶ Տե՛ս Անդ, ց. 9, գ. 43, թ. 7, ց. 14, գ. 51, թ. 7, ց. 13, գ. 7, թ. 19:

Հայտնի է, որ Կոմիտեն հատկապես կարեւորում էր իրաքահայ երիտասարդներին սովորելու նպատակով հայրենիք հրավիրելը: Մինչ Կոմիտեի հիմնումը՝ խորհրդային Հայաստանի բուհերի սփյուռքահայ շրջանավարտների շարքերում կային նաեւ իրաքահայեր⁴⁷: Կոմիտեի գործունեության շրջանում եւ հատկապես նրա ջանքերի շնորհիվ 1962–1970 թթ. խորհրդային Հայաստանի բուհերի 157 եւ ուսումնարանների 23 սփյուռքահայ շրջանավարտներից 15-ն իրաքահայեր էին⁴⁸:

1958–1980 թթ. ընթացքում Հայկական ՍՍՀ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական հաստատություններում սովորել է 846 սփյուռքահայ, որից 59-ը իրաքահայ⁴⁹: Արդեն Կոմիտեի գործունեության առաջին տարեշրջանում (1964–65 ուստարի) խորհրդահայ բուհերն ընդունվեց իրաքահայ 8 ուսանող⁵⁰: 1965–66 ուսումնական տարում խորհրդային Հայաստանի բուհերն ընդունվեց իրաքահայ 3 ուսանող, 1966–67 թթ.՝ 2, իսկ 1967 թ. իրաքահայ համայնքից խորհրդային Հայաստանի բուհեր ուսանողներ չեն գործուղվել⁵¹: Բարեբախտաբար, շուտով իրավիճակը փոխվեց եւ արդեն 1969 թ. Իրաքից սովորելու համար եկել է 9 հայ ուսանող⁵², իսկ 1970 թ.՝ 8⁵³: Ըստ որում՝ 1970 թ. հրավիրվածներից հինգը սովորել են բուհերում, երկուսը՝ ուսումնարաններում եւ մեկն ստացել է հետբուհական կրթություն⁵⁴:

Խորհրդային Հայաստանի բուհերում սովորելուն չխանգարեց նույնիսկ իրաքյան պատերազմական իրավիճակը: 1979 թ. խորհրդահայ բուհեր է ընդունվել իրաքահայ 3 ուսանող⁵⁵, նույնքան էլ 1981 թ.⁵⁶: 1982 թ. խորհրդահայ բուհեր ընդունվեցին իրաքահայ ուսանողներ⁵⁷:

Կոմիտեի գործունեության մյուս ուղղությունը իրաքահայ դպրոցների ուսուցիչների մասնակցությունը խորհրդային Հայաստանում կազմակերպվող ուսուցիչների վերապատրաստման ամենամյա ծրագրերին ապահովելն

⁴⁷ Տե՛ս Անդ, ֆ. 709, ց. 3, գ. 140, թ. 2–3:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 875, ց. 6, գ. 1, թ. 1–5:

⁴⁹ Տե՛ս «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1980, թիվ 12, էջ 22–23:

⁵⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 1:

⁵¹ Տե՛ս Անդ, գ. 17

⁵² Տե՛ս Անդ, ց. 4, գ. 20, թ. 7:

⁵³ Տե՛ս Անդ, թ. 6:

⁵⁴ Տե՛ս ն. տ.:

⁵⁵ Տե՛ս Անդ, ց. 13, գ. 7, թ. 25:

⁵⁶ Տե՛ս Անդ, ց. 9, գ. 43, թ. 8:

⁵⁷ Տե՛ս Անդ, գ. 53, թ. 74:

էր, թեեւ 1964 թ. վերապատրաստման նպատակով Խորհրդային Հայաստան հրավիրված 20 ուսուցիչների ցանկում Իրաքից ներկայացուցիչ չէր նախատեսվել⁵⁸: Արդեն 1965 թ. հրավիրվել է 35 ուսուցիչ, որոնց թվում մեկը՝ Իրաքից⁵⁹: 1967 թ. Իրաքահայ համայնքից ուսուցիչներ չեն հրավիրվել⁶⁰: 1971 թ. ուսուցիչների վերապատրաստման ծրագրով Իրաքից մեկ հայ ուսուցիչ է հրավիրվել, սակայն չի գործուղվել⁶¹: Սփյուռքահայ ուսուցիչների 1972 թ. վերապատրաստման ծրագրին մասնակցելու համար հրավիրվել է Իրաքահայ մեկ ուսուցիչ⁶², բայց չի ժամանել⁶³: 1979 թ. վերապատրաստման ծրագրին մասնակցել է Իրաքահայ երկու ուսուցիչ⁶⁴, 1981 թ.՝ մեկը⁶⁵:

1980-ական թթ. առաջին կեսին, կապված պատերազմական իրավիճակի հետ, Իրաքահայ ուսուցիչները վերապատրաստման Խորհրդահայ ծրագրերին հիմնականում չեն մասնակցել⁶⁶:

Կոմիտեի գործունեության տարիներին զգալիորեն աշխուժացել են նաեւ հասարակական-մշակութային առնչություններն Իրաքահայ համայնքի հետ: 1969 թ. Կոմիտեի նախաձեռնությամբ Երեւանում է եղել Իրաքահայ նկարիչ Երջան Պողոսյանը: Երեւանում Հայաստանի նկարիչների միության նախաձեռնությամբ կազմակերպվել է նրա ստեղծագործությունների ցուցահանդեսը⁶⁷:

Սփյուռքի կոմիտեի ջանքերով եւ սփյուռքահայ կազմակերպությունների աջակցությամբ ի թիվս այլ երկրների Իրաք են այցելել եւ համայնքի հետ շփումներ ունեցել Խորհրդահայ գիտնականներ, հասարակական-քաղաքական գործիչներ եւ լրագրողներ⁶⁸: Իրաքահայ դպրոցներ են ուղարկվել դասագրքեր, գրականություն եւ Խորհրդահայ թերթեր⁶⁹:

Բաղդադի հայություն կյանքում Կոմիտեի գործունեության տարիներին մեծ կարեւորություն ունեն «Խոսում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն» հաղորդաշարը, ինչպես նաեւ այլ

⁵⁸ Տե՛ս Անդ, ց. 1, գ. 12, թ. 14:

⁵⁹ Տե՛ս «Հայրենիք-սփյուռք. կամրջող անուն՝ Վ. Համազասպյան», էջ 63:

⁶⁰ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 875, ց. 2, գ. 17:

⁶¹ Տե՛ս Անդ, ց. 4, գ. 70, թ. 2–6:

⁶² Տե՛ս Անդ, ց. 5, գ. 11, թ. 9:

⁶³ Տե՛ս Անդ, գ. 12, թ. 38–40:

⁶⁴ Տե՛ս Անդ, ց. 13, գ. 7, թ. 24:

⁶⁵ Տե՛ս Անդ, թ. 58

⁶⁶ Տե՛ս Անդ, ց. 9, գ. 53, թ. 30; ց. 14, գ. 51, թ. 91; ց. 13, գ. 7, թ. 18:

⁶⁷ Տե՛ս Անդ, ց. 2, գ. 35, թ. 10; գ. 43, թ. 16–17:

⁶⁸ Տե՛ս Անդ, ց. 4, գ. 52, թ. 1–100:

⁶⁹ Տե՛ս Անդ, ց. 9, գ. 41, թ. 1–4:

հաղորդումներ: Բաղդադից Օշական քահանա Քլճյանը դրա մասին գրում է. «Սփյուռքահայ կյանքի պայմաններուն մեջ չկա այնքան ուժեղ, հզոր ազդակ մը, որքան Երեւանի ռադիոյի ձայնը, որը մեզ կլիցքավորէ հայրենասիրութեամբ, կբուժէ մեր դեռ արյունոտ վերքերը՝ մեր լուռ ցավերը, կհագեցնէ մեր կարոտի անմար կրակը եւ կբնորոշէ մեր իսկութիւնը իսկ»⁷⁰:

Հայրենիքի հետ կապերի զարգացման համար շատ կարեւոր էր 1980 թ. Կոմիտեի նախագահ Վ. Համազասպանի այցը Մերձավոր Արեւելք, որտեղ նա հանդիպեց «առաջադիմական» կազմակերպութիւնների եւ թերթերի խմբագիրների եւ այլոց հետ⁷¹:

Կոմիտեն իր ավանդն ունեցավ նաեւ շարունակվող հայրենադարձութեան գործընթացում իրաքահայ ներգաղթողների ընդգրկման գործում: Կոմիտեի հիմնադրման նախօրեին ՀԽՍՀ նախարարների խորհուրդը 1962–1965 թթ. ի թիվս այլ երկրներից հայրենադարձվելիք հայերի, նախատեսել էր Իրաքից հայրենադարձնել 2 հազար հայ⁷²: Միայն 1962 թ. որոշվել էր մասնավորապէս Իրաքից հայրենադարձնել 125 ընտանիք՝ 500 մարդ⁷³, թեեւ ի վերջո հայրենադարձների թիվը զգալիորեն պակաս էր⁷⁴: Բանն այն է, որ Իրաքում քաղաքական իրադրութիւնն աննպաստ էր հայրենադարձութիւն իրականացնելու համար⁷⁵, եւ, բացի այդ, Իրաքի իշխանութիւնները ոչ միայն անբարյացակամ էին տրամադրված իրաքահայերի հայրենադարձութեան նկատմամբ, այլ նաեւ խոչընդոտում էին դրան⁷⁶: Այդ պատճառով խնդիրները կարգավորելու համար ի թիվս այլ երկրների՝ որոշվեց նաեւ Իրաք ուղարկել ներգաղթի կոմիտեի ներկայացուցիչներին՝ խնդիրը կարգավորելու նպատակով⁷⁷: Անհատ իրաքահայեր կային նաեւ 1963 թ. հայրենադարձների շարքերում⁷⁸:

Իրավիճակը հաջողվեց զգալիորեն շտկել Կոմիտեի գործունեութեան տարիներին, երբ այն սկսեց աջակցել հայրենադարձութեան գործընթացի կազմակերպմանը: 1965 թ. Իրաքից հայրենադարձվել է 4

⁷⁰ «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1978, թիվ 5, էջ 35:

⁷¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 40, թ. 15:

⁷² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 61, թ. 2–3: Տե՛ս նաեւ Հ. Մելիքսեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը (1920–1980 թթ.), Ե. 1985, էջ էջ 255:

⁷³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 362, ց. 10, գ. 22, թ. 11:

⁷⁴ Տե՛ս Հ. Մելիքսեթյան, նշվ. աշխ., էջ 263:

⁷⁵ Տե՛ս Անդ, էջ 264:

⁷⁶ Տե՛ս Անդ, էջ 279–280:

⁷⁷ Տե՛ս Անդ, էջ 280:

⁷⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 362, ց. 10, գ. 23, թ. 37:

ընտանիք (8 մարդ)⁷⁹, 1966 թ.՝ 3 ընտանիք (8 մարդ), 1968 թ.՝ 4 ընտանիք (14 մարդ)⁸⁰, 1969 թ.՝ 12 ընտանիք (67 մարդ)⁸¹ եւ այլն: Հնդհանուր առմամբ՝ 1962–1982 թթ. Իրաքից Խորհրդային Հայաստան է հայրենադարձվել 75 ընտանիք (291 մարդ)⁸²:

Ամփոփելով կարելի է նշել, որ իրաքահայ համայնքի հետ աշխատանքներում Կոմիտեն հանդիպել է մեծ դժվարությունների, որոնք կապված էին Իրաքում եւ նրա շուրջ պարբերաբար սրվող իրադրություն, ինչպես նաեւ քաղաքական բնույթի սահմանափակումների հետ: Չնայած դրան, Կոմիտեն արել է հնարավորը՝ իրաքահայ համայնքին աջակցելու, նրա խնդիրների լուծմանը նպաստելու եւ մշտական կապը հայրենիքի հետ ապահովելու համար:

РЕЗЮМЕ

Комитет был основан в 1964 году для развития отношений с армянами диаспоры. При нем открылись отделы по связям со всеми группами армян диаспоры во всех регионах и странах мира. Отношения с армянами Ирака поддерживал Отдел восточных стран (Департамент стран Азии и Африки). Основными задачами Комитета являлись: изучение армянской общины Ирака; развитие отношений с армянской общиной в стране; представление армянам Ирака образ жизни родины, ее достижения, науку и культуру; укрепление духа патриотизма в армянской общине; ознакомление граждан Армении с ситуацией в армянской общине Ирака, организациями и механизмами сохранения национальной идентичности, процессом развития отношений между родиной и диаспорой. Для достижения этих целей Комитет должен был сотрудничать с «демократическими» и «патриотическими» организациями, культурными и благотворительными союзами армянской общины Ирака, доставляя газеты из родины, помогая ее деятельности, отправляя группы по разным направлениям культуры и принимая делегации. В течение двух десятилетий Комитет прилагал все усилия для достижения своих основных целей.

⁷⁹ Տե՛ս Անդ, գ. 29, թ. 23:

⁸⁰ Տե՛ս Անդ, գ. 33, թ. 15–16:

⁸¹ Տե՛ս Անդ, գ. 35, թ. 11–13:

⁸² Տե՛ս Հ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 299:

SUMMARY

The Committee was founded in 1964 for activating relations with Diaspora Armenians. The Committee included departments for relations with all groups of Diaspora Armenians in all regions and countries of the world. Relations with the Armenian community of Iraq were kept by the Department of Eastern countries (Department of the countries in Asia and Africa). The main objectives of the Committee were to explore the Armenian community of Iraq; develop relations with the community; introduce the Iraqi Armenians the lifestyle of the Homeland, its achievements, science and culture; spread patriotism in the Armenian community of Iraq; represent the situation in the Armenian community of Iraq, organizations and national identity preservation mechanisms, as well as the process of development of Homeland-Diaspora relations to the citizens of Armenia.

For achieving these objectives the Committee managed to cooperate with “democratic” and “patriotic” organizations, cultural and benevolent unions of the Armenian community of Iraq; deliver newspapers of the Homeland, help the Armenian community of Iraq, send cultural groups and host delegations from the Armenian community of Iraq.

In the course of two decades, the Committee did its best to achieve its main goals.



ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ



ՆԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ

ՈՌԻԲԵՆ ԶԱՐԴԱՐՅԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍ

Ի. դարի արեւմտահայ արձակագիր, թարգմանիչ, հրապարակախոս, հասարակական ու քաղաքական գործիչ Ռ. Զարդարյանը հավատում էր, որ իր սերունդը տառապող մարդկությանը պիտի փոխանցի ազատության ամենից հզոր «սարսուռները»: Այդ էր պատճառը, որ նա ոչ միայն իր գեղարվեստական երկերում էր արծարծում մարդու ազատության եւ երջանկության, քաղաքակիրթ աշխարհի մասին իր ըմբռնումները, այլեւ հրապարակախոսության մեջ: Ուստի պատահական չէր, որ Զարդարյանի ստեղծագործական բուռն վերելքի շրջանում գեղարվեստն ու հրապարակախոսությունը դարձել էին միմյանց ուղղորդող, փոխլրացնող, փոխազդող երեւույթներ:

Նա դեռ երիտասարդ տարիքից է աշխատակցել ժամանակի հայտնի պարբերականներին՝ «Ծաղիկ», «Մասիս», «Արեւելեան մամուլ», «Շիրակ» եւ այլն: Հրապարակագրական գործունեությանը զուգահեռ՝ Մեզրեի Կեդրոնական վարժարանում դասավանդել է հայոց լեզու, գրականություն, պատմություն, ֆրանսերեն: 1903 թ. Զարդարյանը թուրք կառավարության կողմից հեղափոխական գործունեության կասկածով ձերբակալվել է իր ուսուցչի՝ Հ. Թլկատինցու եւ այլ մտավորական գործիչների հետ եւ լուկ մեկ տարի անց է ազատ արձակվել: 1905 թ. նրան կասկածել են Աբգով Համիդի դեմ մահափորձի նախապատրաստության մեջ: Բայց ընկերների հեռատեսության շնորհիվ մեկնել է Բուլղարիա՝ Ֆիլիպե քաղաք: Այնտեղ խմբագրել է ՀՅԴ «Ռազմիկ» եռօրյա թերթը (1905-1908 թթ.): 1908 թ. Թուրքիայում Սահմանադրության հռչակումից հետո

Զարդարյանը ուրիշ մտավորականների պես ընտանիքի հետ վերադարձել է Կ. Պոլիս: Կուսակցական աշխատանքներին զուգահեռ՝ վերսկսել է ուսուցչությունը Կեդրոնական վարժարանում, անդամակցել Ազգային երեսփոխանական ժողովին, թղթակցել «Ժամանակ» օրաթերթին, ապա դարձել ՀՅԴ «Ազատամարտ» (1909–1915 թթ.) պարբերականի գլխավոր խմբագիրը, մինչև իր աքսորը¹, մահը՝ 1915 թ.:

Սեւան Դեյիրմենջյանի աշխատասիրությունյամբ եւ Վահե Թաշճյանի առաջաբանով «Ռուբէն Զարդարեան. Յօդուածներ» գրքում լույս են տեսել այն հոգվածները, որոնք Զարդարյանը գրել է «Ժամանակ» օրաթերթին աշխատակցելու ամիսներին՝ 1908 թ. նոյեմբերից մինչև 1909 թ. ապրիլ: Սա այն ժամանակաշրջանն է, երբ երիտթուրքերը հեղափոխական ճանապարհով տապալեցին Աբդուլ Համիդի բռնապետական վարչակարգը՝ հաստատելով օսմանյան սահմանադրությունը: Այս իրողությունը ոգեւորեց եւ հուսադրեց Զարդարյանին, եւ նա մեծ եռանդով աշխատակցեց «Ժամանակ» օրաթերթին:

Գիրքը նորովի է ներկայացնում ու բացահայտում հրապարակախոս ու քաղաքական գործիչ Ռ. Զարդարյանին: Գրքում զետեղված հոգվածները լույս են սփռում մեզ՝ հայերիս համար չափազանց կարեւոր այդ պատմական, անցումային ժամանակաշրջանի դեպքերի ու իրադարձությունների վրա, նաեւ տվյալ շրջանի քաղաքական հոգեբանության, եւ ստիպում դրանք վերագնահատել, արժեւորել: Նշենք նաեւ, որ գրքում արծարծված շատ նյութեր այսօր եւս՝ հարյուր տասը տարվա հեռավորությունից, շարունակում են արդիական մնալ: Այդ պատճառով գիրքը շահեկան եւ օգտակար ներդրում է ոչ միայն հայ գրականության, այլեւ հայոց պատմության, նաեւ լրագրության համար:

Հոգվածներում ներկայացվում է Օսմանյան կայսրության հետսահմանադրական ընդհանուր մթնոլորտը, ուր հրապարակախոս Զարդարյանը մի կողմից մեծ հավատով ու ոգեւորությամբ է ներկայացնում նոր, ժողովրդավարական ու քաղաքակիրթ պետության իր ըմբռնումները՝ մատնանշելով գործնական ուղիներ դրա կատարելացման համար, մյուս կողմից՝ իրեն բնորոշ խորաթափանցությամբ, յուրատիպ ոճով,

¹ Ռ. Զարդարյանի կենսագրության մասին մանրամասն տե՛ս «ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ», Ռուբեն Զարդարեան, Ամբողջական երկեր, Ա., Փարիզ 1930, նաեւ ԹԷՈԳԻԿԻ՝ «Յուշարձան նահատակ մտաւորականութեան. ապրիլ 24», 1985, Յ. ՕՇԱԿԱՆԻ՝ «Համապատկեր արեւմտահայ գրականութեան», հտ. 7, Անթիլիաս, 1979, Վ. ՓԱՓԱՋՅԱՆԻ՝ «Պատմութիւն հայ գրականութեան», երկրորդ գիրք, Կ. Պոլիս, 1914, գրքերը:

պատկերավորությունը ցույց տալիս տիրող իթթիհատական կուսակցությունների հակասահմանադրական քայլերը, հակասական, դավադիր գործունեությունը, վերածնունդի նոր ուղի բռնած կայսրության ներքին ու արտաքին խոչընդոտները: Դիպուկ է նկատել գրքի առաջաբանի հեղինակ Վահե Թաշճյանը, որ Ռ. Զարգարյանն առաջին հերթին Օսմանյան կայսրության քաղաքացի է՝ «օսմանացի»²: Իսկապես, իբրեւ իր երկրի քաղաքացի՝ Զարգարյանը խորապես ըմբռնում է գիտակցում է կայսրության պետական շահերը՝ զերծ ազգայնամոլությունից, ազգայնական գաղափարներից: Եւ որպես մտավորական՝ ցավ ապրում բռնակալության ոգու ճիրաններում երկար տարիներ տառապող, հալածվող, քայքայվող Օսմանյան հայրենիքի եւ նրա ժողովուրդների ճակատագրի համար: Այդ ապացուցվում է նրանով, որ իր հոգվածներում կարմիր թելի նման ձգվում է ժողովուրդների լուսավորության, իրավահավասարության խնդիրը, որը պետության զարգացման ու առաջադիմության գրավականն է: Լինելով եւրոպական առաջադիմական բարձր գաղափարների տեր՝ ցանկանում է եւ պարտադրում, որ արագ զարգացում ապրող դարում ժողովուրդն ինքը իր սեփական երկրի ու ճակատագրի տերը լինի: Ճիշտ է, թեեւ Սահմանադրության վերահաստատումը շիկացնում էր Զարգարյանի սպասումներն ու հույսերը՝ իբրեւ նոր կյանքի սկիզբ, բայց եւ հավատի մեջ նա զգոն էր. գոց գիտեր թուրք իշխանավորի հոգեբանությունը, ուստի անընդհատ ապրում էր անծանոթ տազնապներ՝ ժողովրդավարության տապալման ու նոր ոճիրների հնարավոր դրսեւորման համար: Այս երկյուղը նկատվում է նրա առաջին իսկ՝ «Տիրապետության ոգին» հոդվածում. «միթէ աւելի անգութ, աւելի եղեռնական միջոցներ ունի սահմանադրությունը՝ իրականությունը սպաննելու կամ զայն իր բնական ընթացքէն շեղեցնելու» (20):

Կատարյալ սահմանադրական պետության կայացման համար Զարգարյանը գտնում էր, որ առաջին հերթին ամբողջովին պետք է բարեփոխել պետական հին համակարգը, արմատախիլ անել բոլոր վտանգներն ու խոչընդոտները: Դրանցից առաջինը եւ ամենավտանգավորը տիրապետության ոգին է, որ հոմանիշն է բռնակալության: Այն միշտ քայքայել է ժողովուրդների կյանքը, իսկ վերջում նաեւ իր տերերին՝ լինեն դրանք ազգ թե դասակարգ: Նա նկատում է, որ կայսրության զարգացման

² «ՌՈՒԻՔԵՆ ԶԱՐԴԱՐՅԱՆ. Յօդուածներ», Իսթանպուլ, 2015, 204 էջ. տե՛ս էջ 7: Հետագա մեջբերումների էջերը կտրվեն շարադրանքում՝ փակագծերով:

իսկական վտանգը թուրք տարրի գերիշխանության սպառնալիքն է. «Բանակային հոգեբանությունն (այս եւ հետագա ընդգծումները մերն են, - Ն. Ս.) է, որ կը խօսի, հիւանդոտ, վտանգաւոր հոգեբանութիւն՝ որ մեծ ցաւն է այս բազմապահանջ երկրին եւ դժբախտութեան աղբիւրը այս պետութեան» (20): Իսկ ռոյն է քաղաքակրթական այն իրավունքը, բարոյական ու ցեղագրական հիմքը, որ պետք է բացառիկ դիրք տա թուրքերին՝ տիրապետելու երկրին, մանավանդ որ թուրք տարրն իր մտքի բարձրութեամբ, իր մշակույթով չունի բնական այդ գերիշխանութիւնը: Բռնակալ ձգտումն է, որ թշվառութիւն, ատելութիւն բերեց, ծնունդ տվեց ժողովրդի թշնամիներին, վտանգավոր մակաբուծներին եւ հենց իրեն՝ թուրքին հետ պահեց առաջագիմութիւնից: Նշենք, որ Զարդարյանը դեմ էր թուրք տարրի գերիշխանութեանը եւ ոչ թե այդ ազգի գոյութեանը: Իսկ ընդհանրապէս դեմ է կայսրութեան որեւէ ազգի գերիշխող դիրքին, նույնիսկ իր՝ հայ ազգի, որ ամենաշատն է տառապել այդ պետութեան մէջ. «Ո՛չ, սահմանադրական երկրի մը մէջ չկայ ոչ մէկ գերիշխող ազգ եւ պէտք չէ գտնուի, {...} իւրաքանչիւր ազգ հաւասարազօր է բնակակից ո՛ր եւ է ուրիշ ցեղի մը հետ, ոչ աւելի, ոչ ալ պակաս» (23): Հարկ է նշել, որ հրապարակագիրը Պողոս առաքյալի խոսքը դարձրել էր աշխարհայացք. ազգերը թվով շատ, բայց մի մարմին են Քրիստոսով:

Առաջ անցնելով նշենք՝ «Իրաւունքի պայքար» հոդվածում Զարդարյանը գտնում է, որ պետք է կարողանալ հավասար իրավունքներ տալ պետութեան բոլոր քաղաքացիներին, հակառակ դեպքում ծայր կառնեն ընդվզումները, որոնք կթուլացնեն երկիրը. «Սկիզբն իմաստութեան՝ Աստուծոյ երկիւղը չէ՛ հիմա, այլ օսմանեան պետութեան մէջ ազգերու իրաւահաւասարութեան պահանջը եւ ներկայ ընտրական սիսթեմին հիմնական փոփոխութիւնը» (33): Ըստ նրա՝ քաղաքական այն ուղղութիւնը, որը հանուն երկրի շահի պաշտպանում են թուրք ազգեցիկ մտավորականները, եւ իբր թե վախենում են, որ հույները, բուլղարները, սերբերը, հայերը կարող են իրենց ընդունակութիւններով դառնալ երկրի ազգեցիկ տարրերը, անհիմն է եւ զուրկ հեռատեսութիւնից: Նրանք կամ պետք է բռնութեամբ ազգերին շղթայեն պետութեանը, որն ընդունելի չէ, կամ օգտվելով ստեղծված իրավիճակից՝ պետք է կարողանան բարոյապէս պարտավորեցնել, «ազատութեան ուժով բռնադատել» նրանց՝ «կամովին եւ ներքին մղումով սիրելու հասարակաց այս հայրենիքը եւ իրենց գոյութեան կռուանը այդ հայրենիքի մէջ հաստատուած տեսնելու» (32):

Հարստահարված, իրավազուրկ հասարակության մեջ արմատական հեղաշրջում առաջ բերելու համար պետք է սկսել նախ դատարանների բարեկարգությունից ու դատական օրենքների բարեփոխությունից: Իսկ որպեսզի դատարանը կարողանա ծառայել իրավունքին, պետք է այն դարձնել բացարձակապես անկախ, հանգամանք, առանց որի չկա ազատություն եւ հավասարություն: Այդ պատճառով պետք է ընտրվեն ամենաարդարասեր ու պարկեշտ քաղաքացիները. «Իրաւասէր դատարան մը գուցէ ամէնէն հզօր պատուարն է բռնակալութեան դէմ եւ անէնէն արի պաշտպանը՝ ժողովուրդի ազատութեան» («Դատաւարաններու վերակազմութիւնը») (45): Կատարյալ սահմանադրական երկրի մյուս կարեւոր պայմանը՝ մամուլի անկախությունն ու անձեռնմխելիությունն է («Մամուլի օրէնք»): Եթե մամուլից խլվի նրա ազատությունը, այն ժամանակ կկործանվի երկրի ազատությունը, որովհետեւ մամուլը ներկայացնում է հանրային կարծիքը, ժողովրդի ձայնը եւ հասարակության խոսքը. «Սահմանադրական երկիրներու մէջ կայ երկու զօրեղ եւ նուիրական հաստատութիւն՝ ժողովուրդին մտածման ու զարգացումներուն իբրեւ բեմ, մէկը՝ խորհրդարանը, {...} միւսը՝ մամուլը», ուստի Սահմանադրությունը պետք է ապահովի նրա ազատությունը: Զարդարյանը չի բացառում նաեւ, որ այդ ազատությունը կարող են շահագործել հենց մամուլի անարժան գործիչները, սակայն այդ զեղծումների դեմ նա իբրեւ հակակշիռ մատնանշում է միայն դատարանի գործառույթը: Իսկ արդեն «Հանրային ուժը» հոդվածում ցավով նկատում է, որ օսմանյան պետության մեջ բազմամիլիոն հասարակության միակ «մտաւորական առաջնորդը» մամուլն է, որը կենտրոնացած է միայն մայրաքաղաքում: Հարկ է, որ մամուլը տարածվի նաեւ գավառների մեջ՝ «կատարելով վերակենդանութեան, զարթոնմի եւ սթափման այն պատմական գործը՝ որը ո՛չ կառավարութիւնը, ո՛չ իշխանութիւնները {...} են ընդունակ կատարելու» (116): Այլ կերպ՝ մամուլի դերը ժողովրդին լուսավորելն ու ինքնագիտակցության բերելն է:

Մյուս խոչընդոտը, որ դանդաղեցնում էր երկրի վերածնության գործը, բազմազգ պետության մեջ ապրող ժողովուրդների բարոյական կապի եւ փոխադարձ հաղորդակցության բացակայությունն էր: Զարդարյանին հուսահատեցնում է այն, որ նույնիսկ նոր սերնդին պատկանող օսմանացիների մեջ չկան ո՛չ զգացումների, ո՛չ քաղաքական համոզումների նույնություն, ներգաշնակություն: Եւ այդ անդրադարձել է պետության

մտավոր ու բարոյական, քաղաքական ու հասարակական կյանքի վրա. «Մտքի, դատողության եւ խորհողության այս ազգային կղզիացման շնորհիւ է, որ փաղափական հակամարտութիւնը այնքան սուր է այսօր. {...} մտաւորական այս կացութիւնն է, որ սնոտի երկիւղով, {...} կասկածով ու անվստահութեամբ կը ծանրացնէ քաղաքական մթնոլորտը ու զայն կը դարձնէ անհանդուրժելի» (40): Խոստովանենք, Ռ. Զարդարյանի դիտարկումները խիստ արդիական են նաեւ մեր օրերում: Զարդարյանը ցանկանում է, որ ստեղծվի օսմանյան ուսանողական միություն, ուր պետք է լինի այնպիսի բարոյական միջավայր, որտեղ նույն երկրին պատկանող տարբեր ազգի զավակներ՝ հայ, հրեա, հույն, թուրք, բուլղար, արաբ պետք է իրար ճանաչեն, իրար մտքի ծանոթանան, բանավիճեն, ջնջեն ազգային եսականությունը, բնազդները, գան ընդհանուր գաղափարի եւ ամենակարեւորը՝ ձգտեն դրանք իրականացնել՝ կյանքին հաղորդելով ուժգին ու թարմ հոսանք:

Պակաս կարեւոր չէր նաեւ նախապաշարված, տնտեսապես աղքատ հասարակության մտավորական զարգացումը եւ հոգեկան ազնվացումը: Այս առումով «Ժողովրդական հանրալսարանների անհրաժեշտութիւնը» հոդվածում Զարդարյանը առաջ է քաշում մի շատ կարեւոր խնդիր. մտավորական մակարդակի անհավասարությունն է ծնունդ տվել ազգային հակամարտության՝ ալեկոծելով պետության կյանքն ու առաջխաղացումը: Այն, որ դժբախտությունը, անհավասարությունը, բռնակալությունը շարունակել եւ շարունակում են իրենց գոյությունը, պատճառը միայն անհատական ազատության գիտակցության պակասն է: Իսկ ժողովրդի լուսավորության համար պետք են հանրալսարաններ, մատենադարաններ, գրադարաններ, որոնք վաղուց են հիմնել զարգացած երկրները՝ Ամերիկան եւ Եւրոպան: Զարդարյանը հավատացած է, որ հասարակությունն իր մեջ պարունակում է բազմաթիվ կենսական ուժեր եւ կարող է կրթության:

Հոգվածներում, ինչպես նկատելի է, Զարդարյանը սուր դիտողականությամբ մատնանշում եւ համակողմանիորեն է վերլուծում սահմանադրական բարեփոխումների կարեւոր հիմնախնդիրները՝ առաջարկելով դրանց լուծման իր դրույթները, հավատալով, որ նոր բացված խորհրդարանը կվերականգնի ազատությունը, կբարեկարգի պետությունը: Սակայն Օսմանյան խորհրդարանի պաշտոնական բացումից հետո բոլոր լատենսությունները տեղի տվեցին դառն մտածողություններին:

Երբ հայտնի է դառնում, որ գահաճառի պատասխանում բարենորոգումների, հարկային դրույթյան մասին կառավարությունը խոսում է շատ վերացական, իսկ ազգերի իրավահավասարության մասին ընդհանրապես խոսք չկա, միայն գործածված եւ շեշտված է «օսմանյան ազգ» հասկացությունը, Զարդարյանի համար արդեն ակնհայտ է դառնում, որ թուրք ղեկավարությունը վարում է ներքին ամենավտանգավոր քաղաքականությունը («Գահաճառի պատասխանը»): Ըստ նրա՝ օսմանյան ազգ չկա, կան միայն օսմանյան ազգեր, եւ մեկ պայման կա պետությունների խաղաղությունն ապահովելու. դա այլազան ազգերի գոհունակության պայմանն է: Եթե սա անտեսեն թուրք ղեկավարները, կրակի հետ կխաղան. «Երբ համագերմանական եւ համառուսական ձգտումները հոչակուեցան ցնորք ու յիմարություն, կը թողունք իմաստուն թուրքերուն խորհիլ թէ՛ համաթուրքական գաղափարը քանի՞ դրուշ պիտի արժէ» (73): Իսկ արդեն «Նեքիմ եւ արտաֆիմ ֆաղափականութիւն» հոդվածում հստակ երեւում է Զարդարյանի համոզումը. նոր ձեւավորված կառավարությունը սահմանադրական ճանապարհով չի ընթանալու: Այն կրկին բռնել է քայքայման ու կործանման ուղին: Դրա պատճառը նա տեսնում է ներքին քաղաքականության մեջ, ինչը չեն կարող նկատել պետության գլուխ կանգնած շահախնդիր ու անբարո ղեկավարները, որովհետեւ նրանց քաղաքական միտքը կույր է. «Դէպքերը եւ դէպքերու շարունակությունը մէկ բան յայտնագործեցին, այն թէ՛ օսմանեան համբաւուած ֆաղափագեւորը ամէնքն աւելի կամ պակաս աստիճանով վարակուած են համիտեան ռեժիմի անբուժելի ոգիովը եւ նշմարապէս սահմանադրական ու ժողովրդանուէր գործունէութիւն մը անհնար է իրենց համար» (129):

Զարդարյանը երկրի ներսում նկատում է մեկ այլ վտանգավոր քաղաքականություն: Դա իշխանության գլուխ անցած նոր ղեկավարության, ի մասնավորի՝ խորհրդարանի նախագահ Ահմեդ Ռեզա Բեյի համիսլամական ձգտումն էր: Այս առումով բավականին ուշագրավ է «Վտանգաւոր ֆաղափականութիւն» հոդվածը: Հեռատես գործիչ Զարդարյանը շատ լավ է պատկերացնում, թե համիսլամական քաղաքականությունը, այդ «հիվանդոտ» ու արկածախնդիր ծրագիրը քրիստոնյաների եւ մահմեդականների խտրական բաժանումներ կստեղծի, աղետ կբերի պետությանը թե՛ ներքին, թե՛ արտաքին տեսանկյունից:

Արտաքին տեսանկյունից աղետաբերն այն կարող էր լինել, որ կրոնական խելագար այդ ծրագիրը ոչ միայն քրիստոնյա գաղութային

պետությունների (Անգլիա, Ֆրանսիա), այլ նույնիսկ մահմեդական պետությունների (Պարսկաստան, Եգիպտոս, Աֆղանստան) շահերին վնասակար, հակառակ ու սպառնական միտում է:

Շրջահայաց գործիչը իրավացիորեն պնդում է, որ կրոնական ոչ մի գաղափար իրավունք չունի քաղաքականության մեջ մտնելու. «Համիսլամության խրատուիլակը կարող է ոգեւորութիւն պատճառել շովինիստ եւ տիրապետութեան, համաշխարհային նուաճումներու ցնորքովը գինովցած թուրքերուն, բայց շատ սուղի նստիլ պետութեան միութեան եւ գոյութեանը» (76): Ուստի, ըստ Զարգարյանի, պետք է զգոն լինեն լուրջ ու խելահաս թուրք քաղաքական պատգամավորները, պահանջեն կառավարությունից՝ հետ կանգնել կրոնական մոլեռանդ ծրագրից, աշխարհակալ ձգտումներից՝ թեկուզ հենց թուրք ժողովրդի քաղաքական շահերի պաշտպանության հեռանկարով:

Շատ շանցած, երբ երկրի ղեկավարությունը ձեռնամուխ է լինում իր ծրագիրն իրականացնելու համար վտանգավոր գաղափարներ հասարակության մեջ տարածելուն, իբր թե պետք է մարտնչել այն մասնավոր ձգտումների դեմ, որոնք կարող են վնասել մեծ հայրենիքի գաղափարին («Մասնական ձգտումների դեմ»): Զարգարյանը շատ լավ է հասկանում, որ նրանք՝ ի դեմս Հիլմի փաշայի, մասնական ձգտում ասելով, առհասարակ նկատի ունեն ազգային ինքնորոշման կենսական հարցերը, եւ ակնարկն ուղղված է բնականաբար ոչ թուրք ժողովուրդներին, որոնք սկզբից եւ եթ համարվել են երկրի խորթ զավակներ, եւ որոնց արդարացի պահանջը մեկնաբանվել է հակառակ ծայրից. «մեկնաբանուած է «անհաւատարմութեամբ», պետական դավադրութեամբ եւ այլ այս կարգի թշնամանքներով» (131): Նա դիպուկ քաղաքական գնահատական է տալիս՝ «Հիմ քացախը՝ նոր տիկիմ մէջ»: Բայց Զարգարյանն շտապում է հանգստացնել փաշայի անհիմն կասկածները. բոլոր ցեղերի ազատ զարգացումը ոչ թե վտանգավոր է «հայրենիքի մեծ գաղափարին», այլեւ օգտակար պետության զարգացմանն ու քաղաքակրթությանը. «Ո՞րն է այն յիմար ազգը՝ որ իր լեզուին, իր գրականութեան, իր ազգային ու մարդկային իրաւունքներուն ապահովութեանը կատարելապէս տիրանալէ ետք՝ պիտի ուզէ այլ տեղ փնտռել ուրիշ առաւելութիւններ» (133): Իսկ ահա «Անվստահութեան օձը» հոդվածում նա փորձում է հասկանալ, թե ինչո՞ւ է թուրք տարրի մի խոշոր մասը, մասնավորապես իթթի-հատական կուսակցությունը, քաղաքական անվստահություն հայտնում

քրիստոնյաների, մասնավորապես հայերի նկատմամբ: Այս հարցի միակ հիմնավոր պատճառը Զարդարյանը գտնում է կրոնների տարբերության մեջ, որն անհավասարակշռություն է ստեղծում. «Կրօնը ապագգայնացման այն ուժեղ գործիքն է եղած, որով հետզհետե, ասկէ առաջ, թուրք տարրը կրցած է իր մէջ ձուլել բազմաթիւ տարրեր» (144): Այս տեսանկյունից կրոնը օսմանյան երկրում եղել է ազատության հոմանիշ եւ դրա համար պահպանել է իր «սուր բնավորությունը»:

Սույն հոդվածում նա համոզվածություն է հայտնում, որ «անվստահության» ազդակները գալիս են դրսից՝ Ռուսաստանից եւ Գերմանիայից: Վերջինս անընդհատ փորձում է Թուրքիայում միշտ վառ պահել «երկպառակության նվիրական հուրը». «Ձէ՞ որ առանց հայկական արիւնին Պաղտատի երկաթուղիին նման մեծարժէք ձեռնարկ մը երազ պիտի ըլլար միայն տոկուն քափիթալին ու Միջագետքի տիրապետութիւնը՝ աւելի քան ցնորք» (145): Նա գտնում է, որ Գերմանիայի տնտեսական շահերի տեսանկյունից այդ «անվստահությունը» շահեկան էր, քանի որ օսմանյան պետության սահմաններից ներս իրենց ստեղծած ազդեցության շրջանակի մեջ «հայ տարրը պիտի ըլլար առեւտրապէս գերման գաղթականներու դէմ զօրաւոր մրցումը կատարողը» (145): Իսկ ահա «Ռուսական փառապաշտութիւն» ուշագրավ հոդվածում քաղաքական գործիչ Զարդարյանը զգուշացնում է ոչ միայն դրսից եկող ազդակների վտանգավորության մասին, այլեւ ցույց տալիս, որ Օսմանյան երկրի իսկական վտանգ ու բնական թշնամիները հենց այդ երկու երկրներն են: Սա պետք է քաջ գիտակցել եւ զգուշանալ:

Նրա համար ակնհայտ էր, որ Ռուսաստանը ձգտում էր իր ազդեցությունը տարածել տարածաշրջանում, ուստի պետք է ցանկացած միջոցներով՝ տնտեսական, ներքին խռովության, ազատագրական շարժումների դեմ արգելքներով, քայքայել սահմանակից պետություններին՝ Զինաստանին, Պարսկաստանին, Օսմանյան պետությանը եւ այլն: Այստեղ դիպուկ է Զարդարյանը. տիրապետելու այսպիսի հոգեբանություն ունեցողները, ինչպիսին համիդյան ռեժիմն էր, բռնապետության մեջ են միայն իրենց գոյության փրկությունը գտնում: Այս մտքով էր, որ Լոբանովը զինեց Եւտզի եղեռնագործ բազուկները՝ Հայաստանը արյան հեղեղով ողողելու համար, այս մտքով էր, որ «նեցուկ ու պաշտպան հանդիսացաւ համիտեան երկրաւեր քաղաքականութեան, եւ այս մտքով ալ կը շարունակէ զբաղիլ հիմա {...} որպէսզի կարելի չըլլայ վերանորոգուած ու

ժողովրդական ազատութեամբ կազդուրուած Թուրքիա մը ունենալ իր քով» (84): Զարդարյանը տարակույս չուներ, որ Ռուսաստանի եւ Գերմանիայի նենգավոր ձեռքերը կարող են հասնել եւ գործել օսմանյան խորհրդարանի մեջ, ազատական թուրքերի մեջ՝ շոյելով նրանց տիրելու բնագոյնները՝ վառ պահելով ազգային ատելութեան կրակը (այս հարցերն արծարծվում են նաեւ մյուս՝ «Ռուս դիւանագիտութեան խաղերը», «Պարսկական յեղափոխութիւն» հոդվածներում):

Ըստ Զարդարյանի՝ այդ է պատճառը, որ նրանք անընդհատ տարածում են, թե հայերը անջատողական են («Անջատողութեան խրատիւլակը»), իբր ձգտում են հայկական թագավորութիւն ստեղծել: Սակայն կար մեկ այլ հարց եւս. այդ մեղադրանքներն իրենց բոլոր ծանրութեամբ ընկնում էին ՀՅԴ կուսակցութեան վրա: Եւ իզուր: Դաշնակ Զարդարյանը նկատում է, որ այստեղ դավադրութիւն կա: Տարիներ շարունակ ՀՅԴ-ն «ազգերի համերաշխութեան» սկզբունքն է պաշտպանել՝ պայքարելով ռուսական, թուրքական եւ հայկական շովինիզմի դեմ, նույնիսկ մինչ այն պահը, երբ կուսակցութեան անձնվերները կախաղան էին բարձրանում Իզմիրի մեջ: Ուստի ոչ մի փաստ չկա իր երկրի եւ Ռուսաստանի մեջ՝ ենթադրել տալու կասկածել դաշնակցականներին անջատողական գաղափարների տարածման մեջ, նաեւ նրա համար, որ ապակենտրոնացված համակարգի կողմնակից են: Զարդարյանը գտնում էր, որ հենց դա է բխում երկրի շահից: Հետեւաբար, անջատողականները կենտրոնացված համակարգ քարոզողներն են. նրանք են պետութեան շահի հակառակորդները:

Զարդարյանը ցավով արձանագրում է, որ դաշնակցականներից բացի, հալածվում էր եւ հայ ժողովուրդը: Ազգային հալածանքները, հարստահարութիւնները սահմանադրութեան հաստատումից հետո կրկին շարունակվում էին Արեւմտեան Հայաստանում: «Փա՛ստ կուզէի, հրամմեցէի» հոդվածում արդեն նա հստակ տեսնում է, որ «հասարակ ոճիրներ ու սովորական չարագործութիւններ չեն՝ ինչ-որ կը կատարուին հայկական գաւառներու մէջ: Ո՛չ. ժողովուրդի մը բնաջնջման եւ կոռուտեան համար նախամտածուած միջոցներ են գործադրուածները, որոնց դէմ ահա այսօրան ուժգնութեամբ եւ զայրոյթով կը բողոքէ մամուլը եւ հայ ժողովուրդը» (114): Տեսնելով ժողովուրդների թշվառութիւնը՝ նա գնալով ավելի ու ավելի է համոզվում, որ կառավարութիւնը չի փոխվելու, չկա ազատութիւն, կան միայն հալածանքներ. գոհ են միայն իշխանավորները.

«Սահմանադրութիւնը միայն ձեւերը փոխեց, ոչ էութիւնները» («Հին գայլերը, հին աղուէսները») (120): Նա համոզված է՝ մինչեւ որ իշխանությունը ներկայացնողները չդառնան ճշմարիտ սահմանադրական, երկրի ու ժողովրդի կյանքը փոփոխություն չի կրի: Եւ ինչպես ինքն էր բնութագրում բազմաշարժար, սակայն հպարտ աշխատավորությանը՝ «Ես եղայ մեծագոյն տառապողը, մարտնչողն ու զոհաբերողը՝ այդ յաղթանակին համար, էս յուսացի, էս հաւատացի, էս դիմադրեցի, ահա իմ պարտականութեանս օրհնեալ արգասիքը» («Ողջո՛յն խորհրդաբանին») (55), նույնը կարող ենք եւ իրեն վերագրել:



ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Բան. գիտ. թեկնածու, էոռնեկյան դպրոց

ՆՈՐ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆ ՂԱՍԱԳԻՐՔ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սեւանի Վազգենյան դպրանոցի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոս, եւ Գավառի պետ. համալսարանի հայ գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Գրիգորյանի հեղինակած «19-րդ դարի հայ գրականության պատմություն» (Ս. էջմիածին, 2018, 384 էջ) դասագիրքը նախատեսված է հոգեւոր կրթարաններում սովորող ուսանողների համար: Դրանում ուսուցանվող գիտելիքները համակարգված բնույթ ունեն, ինչը պարտադիր է դասագրքի համար:

Այն շարադրվել է՝ հաշվի առնելով դասագրքերին ներկայացվող գիտականության, ձեւակերպումների հատկության, շարադրանքի մատչելիության սկզբունքները:

Դասագիրքը կազմելիս հաշվի է առնվել նախորդ փորձը, բայց եւ կատարվել է նորացման, արդիականացման անհրաժեշտ աշխատանք: Վերանայվել են մեր ժամանակի պահանջներին չհամապատասխանող մեկնաբանություններն ու պարզաբանումները, ինչը շատ կարեւոր է գրականության ուսուցման համար:

Վ. Գրիգորյանն անհրաժեշտ կապ է ստեղծում իր կազմած եւ անկախությունից առաջ ստեղծված դասագրքաստեղծման փորձի միջեւ՝ գործադրելով գրական ստեղծագործություններին ավելի մոտ գիտական նյութն ու չափորոշիչները: Սա շատ կարեւոր է բնագրի մեկնության հավաստիության եւ լիարժեք համապատասխանության առումով, քանի որ խորհրդային դասագրքերում գրականության մատուցման հայեցակետը ենթարկվել էր գաղափարախոսական պարտադիր մշակման: Ակնառու էր ստեղծագործությունների առավել աշխարհիկացման, գրողների աշխարհայացքում աթեիստական բնույթի որոնումների հակադրական միտումը:

Նոր գրականության համապատկերը դասագրքում ներկայացվել է սեղմ եւ ամբողջական: Գրապատմական փաստերն ընտրվել են ըստ

նյութի թելադրանքի, տվյալ ժամանակի կարեւորություն: Պահպանվում է գիտական պաշարի հանդեպ պատմական մոտեցումը, որը գիտական համակարգի ձեւավորման հիմքն է: Պատմական մոտեցման հետ մեկտեղ դասագրքում ընդգրկված նյութի հանդեպ կիրառվել են զարգացման աստիճանականությունը բացահայտող եղանակներ: Դա վերաբերում է թե՛ ընդհանուր նյութին եւ թե՛ առանձին հեղինակների ստեղծագործություններին:

Գրականության ընթացքը շաղկապված է պատմական իրադարձություններին: Պատմության առանձին շրջափուլերը ներկայացնելուց հետո առավել ընկալելի են դառնում գրականության մեջ կատարված փոփոխությունները: Բայց Վ. Գրիգորյանը գիտե նաեւ, որ արվեստը, գրականությունը ենթակա են սեփական ներքին զարգացման օրինաչափություններին:

Վ. Գրիգորյանը գրականագիտության տարբեր բաժինների կողմից ուսումնասիրվող փաստական նյութ է ներառել դասագրքում: Իհարկե, հիմնականը պատմագրական փաստանյութի շարադրանքն է եւ որոշակի երկերի վերլուծությունը, բայց եւ ներառված են գրականության տեսությանը վերաբերող առատ տեղեկություններ, որոնց անհրաժեշտությունն առկա է գրականության բոլոր դասագրքերի պարագային:

Վեպը, պոեմը դասագրքում ստացել են գրական-տեսական ժանրային բնութագրեր՝ կապված Աբովյանի, Պռոշյանի, Աղայանի, Ծերենցի, Ռաֆֆու, Շիրվանզադեի, Իսահակյանի ստեղծագործությունների հետ: Ժանրային զարգացումը քննության նյութ է գրապատմական ողջ շարադրանքում: Նույնը պետք է ասել գրականության եւ արվեստի մյուս ճյուղերի, գրականության եւ կրոնի, փիլիսոփայության կապի մասին: Գրականության եւ հասարակական գիտակցության ձեւերի զարգացումը որոշակիորեն փոխհյուսված են:

Դասագրքի հեղինակը հետեւում է գրականության ուսումնասիրման պատմակիրառական սկզբունքին, երբ տեսադաշտում պահվում է գրական երկի ընկալման փոփոխությունները սոցիալ-մշակութային համապատկերում: Դասական երկի արժեւորումը զուգակցվում է դրա արդիական նշանակության գնահատությամբ: Սրա հետ մեկտեղ գլխավորը մնում է իր դարաշրջանին գրական երկի համապատասխանության խնդիրը, որը դասագրքի հեղինակի առաջնահերթ սկզբունքն է:

Դասագրքում հեղինակների ստեղծագործություններն ուսումնասիրվում են՝ գրական ուղղություններին պատկանելու հատկանիշներով: Գրական ուղղությունը շատ բան է որոշում՝ ստեղծագործության ելակետային սկզբունք, կառուցվածքի տեսակ, պոետիկայի առանձնահատկություններ, երբեմն նաեւ աշխարհայացքային պահեր, անգամ՝ ոճ: Վ. Գրիգորյանն ուսումնասիրվող երկը ներկայացնում է համապատասխան գրական ուղղության հիմնականում տվյալներով:

Հետաքրքիր մեկնաբանություն մը են ներկայացված Խաչատուր Աբովյանի գրական գործունեությունն ու «Վերք Հայաստանի» վեպը: Վ. Գրիգորյանը՝ բանաստեղծությունների, գրողի ուսումնառության, անցած ճանապարհի վերլուծության միջոցով ցույց է տվել այն ուղիները, որոնցով գրողն ի վերջո հանգել է իր գլուխգործոցի ստեղծմանը, իսկ վեպի տարբեր շերտերի համակարգված վերլուծությունն առավել ընկալելի է դարձնում այն: Դիտելի է, որ Աբովյանի ապագապաշտությունը (ռոմանտիզմ), հակադրվելով լուսավորական բանապաշտությանը (ռացիոնալիզմ), հոռետեսության որոշակի տարրեր է ուրվագծում: Ազգային անկախության չիրականանալու պատճառով Աբովյանն ասես հուսախաբ է լինում, լուսավոր ապագայի պատրանքները ցրվում են: Սակայն «Վերք Հայաստանի» երկի ազգային ոգին, վիպական տարրերը, պատկերավորման նոր իրողությունը, «ստեղծագործական թռիչքը» վեպը դարձրել են անկաղապար, ազատ ու անկրկնելի, նման Վերածննդի դարաշրջանի առաջին վեպերին: Արդեն «Վերք Հայաստանի» վեպից հետո» հատվածում ներկայացվում են գործեր, որոնք վեպի մեջ եղած նյութերի այլազան դրսևորումներ են: «Առաջին սեր» պատմվածքը վերականգնանցնում է պարսկական ժամանակաշրջանը, այն «Վերքի» փոխակերպված «մանրակերտն» է: Պատմվածքը երգախառն արձակ է, որ բնորոշ է արեւելյան սիրավեպերին: Պատմվածքում կարելու է ընկերային շերտը: Ունեւոր Վանին սիրում է որբ, ընչազուրկ Փարիխանին. սեր, որ արժանի է «ոսկեգրով երկնքում գրվելու»:

Հայ նոր գրականությունը, որն ընդգրկում է 19-րդ դարը եւ հատում Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանը, դասագրքում ներկայացված է գրապատմական ակնարկներով եւ հեղինակների ստեղծագործական ուղու բնութագրմամբ եւ նրանց ակնառու ստեղծագործությունների վերլուծությամբ: Վերլուծությունը հիմնականում պատմագեղագիտական բնույթ ունի:

ժամանակաշրջանը, հասարակական կյանքի ընթացքը, հեղինակի աշխարհայացքը, ստեղծագործության գեղագիտական արժեքը, սրանք են երկի վերլուծության ուղենիշները: Գրիգորյանն ընդլայնել է հեղինակներին ներկայացնելու ձևաչափը: Մ. Թադիսյանի եւ Հ. Ալամդարյանի ստեղծագործությունները, օրինակ, բնութագրվում են բազմակողմ՝ հաշվի առնելով դրանց կարեւորությունը նոր գրականության ձևավորման ասպարեզում:

Դասագրքի հեղինակը «Մ. Նալբանդյանի ստեղծագործությունը» նյութի շարադրանքում ծանրակշիռ տեղ է հատկացրել ազգային հարցի վերաբերյալ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ արտահայտված հայացքներին: Նալբանդյանի հայացքներն ազգային հարցի վերաբերյալ պետք է, այո՛, կենտրոնական տեղ գրավեն հիշյալ թեման ուսումնասիրելիս: Անհրաժեշտ է ընդգծել մեծ ազգասերի հատուկ ուշադրությունը դեպի արեւմտահայերը:

Վ. Գրիգորյանը դասագրքում ընդգրկված բոլոր հեղինակներին ներկայացնում է ըստ պատշաճի՝ ելնելով գրականության զարգացման գործում յուրաքանչյուրի մատուցած ծառայություններից:

Գրականությունը դասագրքում ամբողջական համապատկեր է՝ մեկ-դարյա կտրվածքով: Տեսականորեն հիմնավորվում են հայ նոր գրականության առանձնահատուկ գծերը, գեղագիտական կողմերը, ներկայացվում հասարակական-քաղաքական կյանքի հետ ունեցած անքակտելի կապը:

Դասագրքում հետեւողականությամբ ներկայացվել է ազգային-ազատագրական պայքարը, նրա գաղափարախոսությունը եւ գրականությունը (Աբովյան, Նալբանդյան, Պեշիկթաշլյան, Պատկանյան):

Բարձրարվեստ գրական ստեղծագործությունները ենթարկվել են գեղագիտական վերլուծության: Խոսքը հատկապես Դուրյանի, Թումանյանի, Իսահակյանի պոեզիայի մասին է: Խորն են դրանց վերաբերյալ հոգեբանական դիտարկումները: Հստակ ուշադրություն է հատկացվել արձակագիրների եւ բանաստեղծների պատկերավոր մտածողությանը, այս բնագավառում նրանց բերած նորություններին: Գրական երկերի բարոյագիտական արժեքը դասագրքի հեղինակի ուշադրության կենտրոնում է:

Դասագրքում ներկայացվել են հայ նոր գրականության զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Վերականգնվում է

հատկապես վեպերի ներքին հիերարխիկ կառույցը՝ տարրերի փոխկապակցությամբ:

Քանի որ նյութը բավականաչափ ծավալուն է, ուստի այն հեղինակները, որոնց ստեղծագործության ազդեցությունը մեծ է գրականության զարգացման վրա, ներկայացվում են առանձին գլուխներով, իսկ այն գրողները, որոնց երկերի ազդեցությունը, նախորդների համեմատությամբ «զգալի չէ», նրանց գործերի մասին խոսվում է ներածական մասերում:

Պարզ է, որ առանձին ստեղծագործությունների բովանդակությունն ուղղակի անսպառ է. այն ամբողջությամբ ներկայացնելը, դասագրքի սահմաններում, գրեթե անհնար է, ուստի նյութի բովանդակությունը, սյուժեն վերապատմելու շնորհիվ «տեղ է թողնվում» ինքնուրույն եզրահանգումների, ինչը շատ կարեւոր է:

Ամեն գրողին հատկացված բաժնից հետո տրվում են մատենագիտական բնույթի ցանկեր, որոնք ուսանողների համար կարող են լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման աղբյուր հանդիսանալ:

Դասագիրքը հետամուտ է ազգային գաղափարախոսության՝ գրականության առջեւ ծառացած խնդիրներին:

Նման դասագրքերի տպագրությունը խիստ հրատապ է եւ հույժ կարեւոր:



СОДЕРЖАНИЕ

<i>ОТ РЕДАКЦИИ</i>	5
--------------------------	---

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА ВТОРОГО, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю мероприятия в честь «Объединения набожных женщин Святого Эчмиадзина»	7
Слово ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА ВТОРОГО, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю 100-летия Национального Собрания Армении	10
Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА ВТОРОГО, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН , по случаю праздника Независимости	12

ПРОПОВЕДИ

Проповедь ИЕРОМОНАХА АГАНА ЕРНДЖАКЯНА , произнесенная в Кафедральном Соборе Святого Эчмиадзина в честь праздника рождения Пресвятой Богородицы.	13
Проповедь ЕПИСКОПА МУШЕГА БАБАЯНА , произнесенная в Кафедральном Соборе Святого Эчмиадзина в честь праздника Воздвижения Креста Господня	16
Проповедь ПРОТОАРХИМАНДРИТА ЗАКАРИИ БАГУМЯНА , произнесенная во время Святой Литургии в Кафедральном Соборе Святого Эчмиадзина	20

РЕЛИГИОВЕДЕНИЕ

ДИАКОН ОВАНЕС БАЛАЯН – Церковь: собрание и народ (согласно трудам апостольских отцов).....	25
НЕРСЕС ЛАМБРОНАЦИ – Ода Нерсеса Ламбронати в честь всеблагословенного Успения Богородицы	42
МАРИАННА АПРЕСЯН – Славянские святые в армянских Синаксариях	62
НОРАЙР ПОГОСЯН – «Книга ежегодных проповедей» Карапета Палатечи	72

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

АРСЕН АРУТЮНЯН – Новонайденная надпись на горе Петросахач	80
АВЕТИС АРУТЮНЯН – Об историко-географических особенностях Армянского нагорья.	88
ЛИДА МАНУКЯН – Миниатюры Церуна Цахкоха в рукописях №8772 Матенадарана им. Маштоца	106

СООБЩЕНИЯ

МЕЛИК ОВСЕПЯН – Комитет по культурным связям с армянами диаспоры и армяне Ирака в 1964–1985 гг.	115
---	-----

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

НАРА САРГСЯН – Рубен Зардарян – публицист.	131
НОРАЙР КАЗАРЯН – Новый и актуальный учебник	142

CONTENTS

<i>EDITORIAL</i>	5
------------------------	---

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of an event dedicated to the “Meeting of Devout Women of Holy Etchmiadzin”	7
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the 100 th anniversary of the establishment of the Parliament of the Republic of Armenia	10
Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the Independence Day.	12

SERMONS

Sermon delivered by REV. FR. AGHAN YERNJAKYAN during the Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the feast of the Holy Virgin Mary’s birthday	13
Sermon delivered by H.G. BISHOP MOUSHEGH BABAYAN during the Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the feast of the Exaltation of the Holy Cross	16
Sermon delivered by PROTO-ARCHIMANDRITE ZAKARIA BAGHUMYAN during the Divine Liturgy celebrated at the Cathedral of Holy Etchmiadzin	20

RELIGIOUS STUDIES

DEACON HOVHANNES BALAYAN – Church as assembly and people (according to the writings of Apostolic Fathers)	25
NERSES OF LAMBRON – Panegyric on the Assumption of the Blessed Virgin Mary by Nerses devoted to her by the promise of his parents.	42
MARIANNA APRESEYAN – Slavonic saints in the Armenian Synaxaries	62
NORAYR POGHOSYAN – “Yearbook of Sermons” by Patriarch Karapet Palatetsi	72

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

ARSEN HARUTIUNYAN – Newly-found inscription of “Petrosakhach”	80
AVETIS HARUTIUNYAN – On the historical-geographical features of the Armenian Highland	88
LIDA MANUKYAN – Master Tserun’s miniatures in manuscript N 8772 of Mashtots Matenadaran (manuscript library)	106

ESSAYS

MELIK HOVSEPYAN – The Committee of cultural relations with the Diaspora Armenians and the Iraqi Armenians in 1964–1985	115
---	-----

LITERARY REVIEW

NARA SARGSYAN – Ruben Zardaryan as a publicist	131
NORAYR GHAZARYAN – A new and up-to-date textbook	142

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<i>ԽՄԲԱԳՐԱԿԱՆ</i>	5
-------------------------	---

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը «Սուրբ Էջմիածնի կրօնասեր տիկնանց համախմբումին» նուիրում հանդիսութեան առիթով. . . 7	
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ խօսքը ՀՀ Խորհրդարանի հիմնադրման 100-ամեակի առիթով	10
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ուղերձը Անկախութեան տօնի առիթով	12

ՔԱՐՈՇԽՕՍԱԿԱՆ

Տ. ԱՂԱՆ ԱՐԵՂԱՅ ԵՐՆՋԱԿԵԱՆԻ քարոզը՝ խօսում <i>Ս. Էջմիածնի Մայր Տաճարում</i> <i>Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի ծննդեան տօնի առիթով</i>	13
Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԵԱՆԻ քարոզը՝ խօսում <i>Ս. Էջմիածնի Մայր</i> <i>Տաճարում Խաչվերացի տօնի առիթով</i>	16
Տ. ՉԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄԵԱՆԻ քարոզը՝ խօսում <i>Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցում Ս. Պատարագին</i>	20

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ԲԱԱՅԵԱՆ – Եկեղեցին՝ ժողով եւ ժողովուրդ (ըստ առաքելական հայրերի գրուածքների)	25
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ – Ներբողեան ի վերափոխումն ամենաբնիկեալ Աստուածածնին ասացեալ ի Ներսէսէ, ծնաւուրաց խոստմամբ նմին ընծայեալ ծառայէ.	42
ՄԱՐԻԱՆՆԱՅ ԱՊՐԵՍԵԱՆ – Սլաւոնական սրբերը հայոց «Եայսմաւորք»-ում	62
ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ – Կարապետ պատրիարք Պալատեցու «Տարեկան քարոզգիրքը»	72

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ – Պետրոսախաչի նորայայտ արձանագրութիւնը	80
ԱԲԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ – Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական առանձնայատկութիւնների շուրջ	88
ԼԻԴԱՅ ՄԱՆՈՒԿԵԱՆ – Ծերուն Ծաղկողի մանրանկարները Մաշտոցի մատենադարանի 8772 ձեռագրում	106

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՄԵԼԻԲ ՅՈՎԱԷՓԵԱՆ – Սփիւռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն եւ իրաքահայութիւնը 1964–1985 թթ.	115
---	-----

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՆԱՌԱ ՍԱՐԳՍԵԱՆ – Ռուբեն Չարդարեանը հրապարակախօս	131
ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐԵԱՆ – Նոր եւ արդիական դասագիրք	142

- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազերեան, Գր. Ճելալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՖՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՀ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեանց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմինյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲԵ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարգարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՅՀԶ** - Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Ալգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վէմ» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՄ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, НАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- САН** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրույթեամբ եւ որոշմամբ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ ազգային եւ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանները ձեռնամուխ են եղել «Հայկական գիտատեղեկատուական հանգոյցի» ձեւաւորման աշխատանքներին:

Այս հանգոյցում ի մի են բերում հայագէտների եւ գիտութեան տարբեր բնագաւառների ներկայացուցիչների հրատարակած յօդուածների, գրքերի ընտրանիները: Այս աշխատանքներին իրենց աջակցութիւնն են բերում հայաստանեան եւ Սփիւռքի հայագիտական կենտրոնները, հրատարակչութիւնները, գրադարանները:

Հանգոյցը հասանելի է համացանցային հասցէով:

Բոլոր նիւթերը հասանելի են ազատ դիտման ու ներբեռնման համար:

Ունեցէ՛ք Ձեր ներդրումը համահայկական այս եզակի նախագծում՝ օգտուելով հանգոյցից, տարածելով տեղեկատւութիւն դրա մասին, տրամադրելով թուայնացուած նիւթեր:

ՀՀ Ազգային գրադարան
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարան

Խմբագրութեան հասցէն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Բ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ»

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

Էլ. փոստ՝ etchmiadzinsamsagir@gmail.com

Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am կամ <http://www.flib.sci.am/arm/node/2>

Հեռ. (+374-10) 517-296/174

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.10.2018 թ.



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ